

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

2008

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵԻ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի 2008 թ.)

« Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն »:

«Եւ սրանում երեւաց Աստծու սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի Նրանով կենդանի լինենք»:

(Ա Յովհ. Դ 9)

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Սուրբ Ծնունդեան եւ Աստուածայայտնութեան տիեզերանորոգ անճառելի խորհրդի ուրախութիւնն է վերստին համակել մեր հոգիները: Եւ մենք այսօր աշխարհի բոլոր կողմերում Փրկչին յուսացեալ հոգիների հետ շտապում ենք դէպի մսուր՝ հաւատքով միանալու Բեթղեհէմի խոնարհ այրում Աշխարհի Փրկչին ընծաներ մատուցող իմաստուն մոգերին ու երջանիկ հովիւներին, երկրպագելու Մանկանը, տեսնելու Աստծոյ ողորմութեան լոյսը դէպի երկիր իջնող եւ հրեշտակների հետ փառաբանելու Աստուածորդու Սուրբ Ծնունդը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Որդին է Աստծոյ, Միածինը Հօր, որ իբրեւ սէր աշխարհ եկաւ: Անպարունակ սիրով Նա յաղթեց աշխարհին, փոխեց պատմութեան ընթացքը եւ Աստծուց հեռացող մարդկութեանը պարգեւեց շնորհը փրկութեան ու յաւիտենական կեանքի, շնորհը՝ դէպի Աստուած դառնալու: «Եւ սրանում երեւաց Աստծու սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի Նրանով կենդանի լինենք» (Ա Յովհ. Դ 9):

Երկու հազարամեակ աւետուում է Սուրբ Ծնունդը եւ աստուածային Յայտնութիւնը Փրկչի՝ դէպի մարդու հոգին ճանապարհ հարթելով մարտիրոսների նահատակութեամբ, սրբերի կեանքով, բիւրաւոր մարդկանց մաքուր սրտի անկեղծաւոր հաւատքով, առաքինազարդ գործերով: Վկայուում է Աւետարանը կենարար յոյսի՝ մարդասիրութեան արժէքներով նորոգելով ժողովուրդների կեանքը, ոռոգելով խաղաղութեան, արդարութեան եւ իրաւունքի արահետները: Քրիստոնէական ճանաչողութիւնն ու ըմբռնումները Աստծոյ ներկայութեան ապրումով ծնունդ են տուել հասարակական կեանքի վերափոխման ծրագրերի, մարդու արժեւորման մտածողութեան ու մշակոյթի՝ կոչուած ծառայելու աշխարհի բարօրութեանն ու մարդկանց երջանկութեանը:

Մարդկային կեանքի անդաստանները, սակայն, միշտ չէ, որ արգասաւորւում են Աստծոյ ներկայութեան հաւատով: Ոսկեհունդ բարի հասկերի կողքին բարձրանում է նաեւ չարի որոմը: Այսօր էլ աշխարհը նման է Բեթղեհէմին, որտեղ ծնունդ առած Յիսուս Քրիստոսին երկրպագում են իմաստուններ ու հովիւներ՝ հաւատալով Նրա պարգեւած փրկութեան շնորհին: Բայց աշխարհը նման է նաեւ այն Բեթղեհէմին, որ մերժեց օթեւան տալ Փրկչին, որտեղ կան մանուկներ կոտորող իշխանատենչ հերովդէսներ, անմեղին երեսուն արծաթով մահուան մատնող յուդաներ, անարդարութեան հանդէպ ձեռքերը լուացող պիղատոսներ, նորօրեայ բազմադէմ խաչելութիւններ՝ պատերազմներ, ահաբեկչութիւններ, կեղծիքներ, կարիք եւ անօգնականութիւն: Աստծուց հեռացող այսօրինակ ընթացքներով աշխարհը միշտ պիտի զգայ խաղաղութեան, արդարութեան պակասը, ազնուութեան, խոնարհութեան, գթութեան ու կարեկցութեան պակասը:

Արդարեւ, սիրելիներ, այս չէ կամքը Աստծոյ, այս չէ կոչումն աշխարհի եւ մարդու: Աստծոյ պարգեւը Քրիստոսով նորոգուած կեանքն է, Աստծոյ պարգեւը Քրիստոսով յայտնուած սէրն է, որ մեծ ու սքանչելի Սուրբ Ծնունդով Փրկիչ մեր Տիրոջ այսօր եօթնարփեայ ծիածանել են բեւեռներն աշխարհի: Եվ Բեթղեհէմի խաւարացիր աստղալոյսով աշխարհի տագնապներից, խարդաւանքներից ու անօրինութիւններից վեր յոյսն է շողում երկնահեղ սիրով մարդկանց հոգիների նորոգութեան, «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» հրաւէրով նոր կեանքի կառուցման:

Սուրբ Ծննդեան խորհրդով սիրոյ մեծագոյն պատուիրանն է, որ փոխանցուում է աշխարհին. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց,- ասում է Տէրը,- ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք» (Յովհ. ԺԳ 34): Չկայ աւելի մեծ ուժ մարդկանց, ժողովուրդների, հասարակութիւնների կեանքը վերափոխող, քան սէրը, որ «...չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում, ... իրենը չի փնտրում, ... չար բան չի խորհում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ. ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում» (Ա Կորնթ. ԺԳ 4-8): Այսպէս պիտի ծնունդ առնի այն աշխարհը, ուր խաղաղութիւնն ու արդարութիւնն են թագաւորում, ուր բարին ու բարիքն են արգասաւորուում եղբայրսիրութեամբ, ժողովուրդների համերաշխութեամբ, պետութիւնների գործակցութեամբ: Իրաւամբ, կեանքը բարեփոխելու մարդկային ջանքերը ապարդիւն չեն լինելու ճշմարիտ սիրով եւ աշխարհի մէջ Աստծոյ ներկայութեան հաւատով: Տիրոջ ճանապարհը միշտ նոր կեանքի ճանապարհն է, միշտ դէպի աւելի լաւը, դէպի կատարեալը, որ պիտի իրականանայ մարդկանց հաւատոյ գործերով, Աստծոյ ողորմութեամբ եւ օրհնութեամբ:

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան ուրախարար այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, գոհութիւն ենք մատուցում Տիրոջը, որ փրկութեան Իր շնորհն է պարգել նաեւ մեր ժողովրդին, օրհնել մեր կեանքը յոյսի, հաւատի եւ սիրոյ իմացութեան լոյսով եւ արարումի ոգով: Փրկչին ապաւինած, Նրա սիրոյ պատգամով է, որ մեր հայրերը Հայրենիքում թէ տարագրութեան մէջ կարողացել են դիմակայել դարերի փորձութիւններին, մաքառել սեփական ինքնութիւնն ու ժառանգութիւնը պահպանելու համար եւ վերստին նոր կեանք կառուցել ու շէնացրել: Աշխարհաս-

փիւռ հայ կեանքից ներս խնամք, հոգածութիւն, ջանք եւ նուիրում, սխրանք է դարձել միմեանց հանդէպ սիրով գործելու ոգին: Այդ ոգով այսօր Հայաստանի եւ Արցախի ազատ եզերքներում, ի սփիւռս աշխարհի հոգեւոր եւ ազգային մեր կեանքի վերազարթօնքի հորիզոններում մեր հայրերի յոյսերն ու աղօթքները, մեր ժողովրդի հաւատքն են մարմին առնում՝ որպէս գործեր հայրենանուիրումի ու եկեղեցասիրութեան, որպէս բարի արգասիքներ մեր կեանքի: Նոյն այդ ոգով պիտի շարունակենք ապրել՝ յաղթահարելու համար մեր առջեւ ծառացող հրամայականները, պաշտպանելու համար ազատութեան, արդարութեան եւ իրաւունքի, ազնուութեան ու մարդասիրութեան արժէքները, որոնցով պիտի շարունակի խնամուել աստուածասէր հոգին մեր ժողովրդի, որոնցով պիտի զօրանայ մեր կեանքը ի Հայրենիս եւ ի Սփիւռս: Արդ, առաջ ընթանանք ուխտաւորի աննկուն հաւատքով եւ Աստծոյ օրհնութեան ներքոյ միշտ գործենք սիրով միաբան ու կամքով միասնական, քանզի ճշմարիտ է ասուած, որ միաբանութեամբ փոքրերը մեծանում են, մինչ անմիաբանութեամբ՝ մեծերը փոքրանում:

Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան աւետիսով ողջունում ենք ձեզ, սիրելի հաւատացեալներ, եւ օրհնում ենք ձեզ ամենքիդ: Ի Քրիստոս եղբայրական սիրոյ Մեր ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.U.O.S.S. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ ուխտապահ հոգեւոր դասին:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աղօթենք միասնաբար, որ Փրկչի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան խորհրդով երկնային շնորհի ու սիրոյ պարգեւները առատանան աշխարհում՝ համայն մարդկութեանն առաջնորդելով դէպի բաղձալի ճանապարհները բարու, արդարութեան ու խաղաղութեան:

Աղօթքով եւ Փրկչի օրհնութեան հայցով Միածնաէջ սրբազնասուրբ այս Խորանից, հայոց Մայր Աթոռից կրկին բերում ենք ձեզ հոգենորոգ աւետիսը Սուրբ Ծննդեան.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ Մեզ մեծ աւետիս:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի 2007 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս.

Նոր տարվա սեմին հուսառատ սրտով ողջունում ենք ձեզ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից աստվածային լույս և օրհնություն բերում ձեր հոգիներին, ընտանեկան ձեր հարկերին:

Սուրբ Ծննդյան հոգենորոգ խորհրդով նոր տարի է սկսվում, որը դիմավորում ենք նոր բարի հույսերով՝ մտքով ու աղոթքով լինելով նաև հեռվում գտնվող մեր սիրելիների հետ:

Գոհության մաղթանք ենք բարձրացնում երկինք, որ անցնող տարում Աստծո օրհնությամբ խաղաղության մեջ բարի արդյունքներ արձանագրեցինք հոգևոր և ազգային մեր կյանքում: Հայաստանում և Արցախում շարունակական եղան տնտեսական, ընկերային կյանքի ձեռքբերումներն ու հաջողությունները, հոգևոր-եկեղեցական մեր կյանքի, մշակույթի, կրթության ու գիտության ասպարեզներում դրական զարգացումներն ու առաջընթացը: Պետական ծրագրերով, բարերարների ներդրումներով, մեր ժողովրդի համատեղ ջանքերով վերականգնվեցին բնակավայրեր, կառուցվեցին ու նորոգվեցին եկեղեցիներ, դպրոցներ, առողջապահական, մշակութային հաստատություններ: Անցնող տարում մեր կյանքին քաջալերություն բերեցին նաև Հայրենիքի և Սփյուռքի զորացող կապերը բազմաթիվ ասպարեզներում, որոնք ծառայում են հայապահպանության և մեր ժողովրդի միասնական կյանքը կառուցելու կարևոր նպատակին: Տարին նշանակալի էր ազգային մեր արդար դատի պաշտպանության նախաձեռնություններով և քայլերով: Հավատն ունենք, որ շուտով հաղթանակած պիտի տեսնենք Արցախի ազատ ապրելու իրավունքը, Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչումը, որը կլինի մարդկության կամքի արտահայտությունը՝ կառուցելու բռնություններից զերծ, ապահով ու արդար աշխարհ:

Հիրավի, սիրելի ժողովուրդ, թեև տակավին առկա են հոգսեր, մտահոգություններ, խնդիրներ ու դժվարություններ, լավատեսության ոգով ենք դիմավորում նոր տարին, նաև՝ մեր ազգային նպատակների իրագործման վճռականությամբ: Տիրոջ օրհնությամբ և նվիրյալ ջանքերով աշխարհսփյուռ մեր զավակների պիտի շարունակենք կերտել և շենացնել մեր ժողովրդի բարօր ու պայծառ կյանքը Հայրենիքում և Սփյուռքում՝ որպես վկայություն առ Հայրենին սիրո, մեր հավատքի և աստվածսիրության:

Մեր երկրի զորացման ու առաջընթացի ճանապարհին կարևոր հանգրվան են նախագահական ընտրությունները 2008 թվականին: Առ Աստված ապավինությամբ մասնակցենք առաջիկա ընտրություններին: Ապրենք ու գործենք հավատքով, և առավել բարգավաճ երկիր, բարեբեր ու կենսունակ հասարակական կյանք կառուցելու

մեր հույսերը ավելիով են արդյունավորվելու, քանզի «Տիրոջ օրհնությունն է բարեպաշտների վարձը, և Նրա օրհնությունը խնդություն է տալու նրանց»:

Տարեմուտի այս պահին մեր աղոթքով ու մաղթանքով լինենք նաև նեղյալների ու կարոտյալների, պատերազմների պատճառած վիշտն ու դժվարությունները կրողների հետ, մեր Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի քաջարի մարտիկների հետ, և բոլորի, ովքեր այս պահին տարեմուտը դիմավորում են իրենց ծառայության մեջ: Թող մեր Տիրոջ փրկարար շնորհները արգասավորվեն աշխարհում նոր տարվա հետ, և թող խաղաղությունը, սերն ու ողորմությունն Աստծո լինեն միշտ մեզ հետ և բոլորի: Ամեն:

Շնորհավոր Նոր Տարի:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք□Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՈՒԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն

ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ԴԻԴԻՄՈՍ Ա (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն

ԹԵՈԴՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՌՈՈՒԱՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԹԵՈԿՏԻՍՏ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն

ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՏՈԴՈՒԼՈՍ (Աթենք)

Վարշավայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՍԱՎՎԱ (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարքական փոխանորդ,
Նորին Գերաշնորհություն

ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱԴԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*

* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության նախագահի վսեմաշուք
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ մեծահարգ
ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ մեծահարգ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահ մեծահարգ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ վսեմաշուք
ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ մեծահարգ
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետերից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 6-ին աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության հրաշափառ տոնը:

Նախորդ օրը՝ հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, հանդիսապետությամբ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության ու բարեպաշտ հայորդիների, Միածնաէջ Սուրբ Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Պատարագից հետո կատարվեց նախատոնակ, հավարտ որի Նորին Սրբությունը զանգերի ուրախալի ղողանջների ներքո ավետեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստվածհայտնությունը: Արարողության ավարտից հետո Մայր Աթոռի բակը ողողվեց հարյուրավոր մոմերի լույսերով, որոնք հավատացյալները տանում էին իրենց հետ՝ Տիրոջ Սուրբ Ծննդյան կենարար լույսով լուսավորելու իրենց ընտանեկան հարկերը:

Հունվարի 6-ին հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տոնական մթնոլորտն էր իշխում: Միածնաէջ Մայր Տաճարում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպես առընթերականեր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին և Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանին:

Խաչերով ու խաչվառներով զարդարուն Հայրապետական թափորը Վեհարանից «Խորհուրդ խորին» շարականի երգեցողությամբ և ամպհովանիի ներքո Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Մայր Տաճար՝ Սուրբ Պատարագ մատուցելու հրաշափառ տոնի առիթով:

Ս. Պատարագի ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամը ուղղեց համայն հայությանն ի Հայաստան, յԱրցախ և ի Սփյուռս աշխարհի (տե՛ս էջ 3):

Նորին Սրբությունը շեշտեց, որ ճշմարիտ սիրով և աշխարհի մեջ Աստծո ներկայության հավատով է, որ պիտի ծնունդ առնի այն աշխարհը, ուր խաղաղությունն ու արդարությունն են թագավորում, ուր բարին ու բարիքն են արգասավորվում եղբայրսիրությամբ, ժողովուրդների համերաշխությամբ, պետությունների գործակցությամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Հայրապետը եղբայրական սիրո իր ողջույնները հղեց Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական աթոռների գահակալներին՝ Աբրամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ

արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին:

Հայոց Հայրապետը Հայրապետական իր օրհնությունն ու սերը բերեց նաև Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին և ի սփյուռս աշխարհի համայն հայ ժողովրդին: Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան ավետիսով Հայրապետական իր ողջույնն ուղղեց նաև ՀՀ և ԼՂՀ նախագահներին, հայոց պետական ավագանուն՝ ի դեմս Ս. Պատարագին ներկա ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Հավարտ Ս. Պատարագի Ամենայն Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի Մկրտության: Այս տարի Մայր Տաճարում ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր Հայ Առաքելական Եկեղեցու ամերիկահայ բարերար տիար Հրաչ Թուֆայանը, որի ազնիվ նվիրատվությամբ վերանորոգվել և գործելու է Էջմիածին քաղաքի Հայորդյաց տունը:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության և մշակույթի նվիրյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳՐԵԳ ԵՎ ԷՄՄԱ ՄԵԼԻՔՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱԻԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿՐԷԿ ԵՒ ԷՄՄԱ ՄԵԼԻՔԵԱՆՆԵՐ, ՈՐ ՅԱՐԻՋՈՆԱ, ԱՄՆ

Համայն հայութեան հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքը բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակներիդ։

Մեծարգո Տէր եւ Տիկին Կրէկ եւ Էմմա Մելիքեաններ, անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ օրհնում ենք Ձեր գովարժան վաստակը ազգային-եկեղեցական մեր կեանքում, ի մասնաւորի Արիզոնայի Ծուխի բարգաւաճման գործում։ Բարեպաշտ զաւակներիդ սրտաբուխ բարերարութեան շնորհիւ կառուցուել է «Մելիքեան մշակութային կենտրոնը», որը նոր հնարաւորութիւններ ընձեռեց Ծուխի գործունէութեան առաւել կազմակերպման, հայորդեաց հոգեւոր-եկեղեցական կեանքի զօրացման, ինչպէս նաեւ մշակութային ձեռնարկների իրականացման։ Ուրախութեամբ ենք յիշում 2001 թուականին Հայրապետական այցի ընթացքում Մեր այցելութիւնը «Մելիքեան մշակութային կենտրոն», ուր տեղի ունեցաւ նաեւ ջերմ հանդիպումը համայնքի հաւատացեալ Մեր զաւակների հետ։

Յարգարժան տէր եւ տիկին Մելիքեաններ, Ձեր աշխոյժ մասնակցութիւնը եւ արդիւնաւոր նպաստը ամերիկահայ կեանքի առաջընթացին ծառայասիրութեան բարի

օրինակ է հայորդեաց համար: Գովելի է, որ Ձեր եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը փոխանցել էք նաեւ Ձեր սիրելի զաւակներին, ովքեր նոյնպէս նախանձախնդիր յանձնառութիւններով ծառայութիւն են մատուցում Ծուխի կեանքից ներս՝ մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան եւ ազգային-եկեղեցական կեանքի շինութեան համար:

Բարձր գնահատելով Ձեր եկեղեցասէր ոգին եւ մատուցած օգտաշատ ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու ժողովրդին, սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Մ Ո Ի Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ի Ս Ա Ի Ո Ր Ի Ջ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր աղօթքն է, որ Ամենողորմ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանիքը, պարգեւի քաջառողջ կեանքի արեւշատ տարիներ, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Յունուարի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 455

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հունվար ամսին

«**Ս. Ներսես Շնորհալի**» շքանշանով պարգևատրվել են.
Ալիկ Միրզաբեկյան (Արարատյան հայրապետական թեմ)
Գուրգեն Մելքոնյան (Արմավիրի թեմ)
Մովսես Հակոբյան (Արցախի թեմ)
Գրեգ և Սեդա Զրգոյաններ (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Ստեփան սարկավագ Օվանեսով (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.
Վազգեն ծայրագույն վարդապետ Գարայան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Շնորհք ծայրագույն վարդապետ Գասպարյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Սիփան քահանա Մխսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Շնորհք քահանա Դեմիրճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Գրիգոր Գարակոզյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Արիզոնայի ծխական համայնքին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Սուրբ Պետրոս եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.
Հարություն քահանա Ավագյան (Արարատյան հայրապետական թեմ)
Մխիթար քահանա Ալոյան (Արարատյան հայրապետական թեմ)
Ստեփաննոս քահանա Մելիքյան (Արմավիրի թեմ)

Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.
Թորգոմ քահանա Մարգարյան (Գուգարաց թեմ)
Վրթանես քահանա Բաղալյան (Գուգարաց թեմ)
Ստեփաննոս քահանա Մարգարյան (Գուգարաց թեմ)
Նահապետ քահանա Խաչատրյան (Գուգարաց թեմ)
Մովսես քահանա Աշուրյան (Գուգարաց թեմ)
Ներսես քահանա Ռուշանյան (Արագածոտնի թեմ)
Ղազար քահանա Պետրոսյան (Արարատյան հայրապետական թեմ)
Թաթուլ քահանա Գասպարյան (Արարատյան հայրապետական թեմ)
Առաքել քահանա Ղազարյան (Արցախի թեմ)
Մանուել քահանա Մկրտչյան (Արցախի թեմ)
Մեսրոպ քահանա Մկրտչյան (Արցախի թեմ)
Մատթեոս քահանա Դրավանց (Արցախի թեմ)
Մաշտոց քահանա Ստեփանյան (Արմավիրի թեմ)

Ընծա քահանա Միրզոյան (Սյունյաց թեմ)
Շնորհք քահանա Մաթևոսյան (Կոտայքի թեմ)
Սմբատ քահանա Սարգսյան (Կոտայքի թեմ)
Վարուժան քահանա Տերտերյան (Շիրակի թեմ)

Ավագության պատիվ է տրվել.
Մյուռոն քահանա Ադամյան (Արարատյան հայրապետական թեմ)
Սահակ քահանա Սահակյան (Արարատյան հայրապետական թեմ)
Շիրակ քահանա Առաքելյան (Շիրակի թեմ)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ ԵՎ ՀՈՒՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՔՐԻՍՏՈԴՈՒԼՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է ուղղել Հույն Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի անդամներին, Հունաստանի Հանրապետության նախագահին և Հույն Եկեղեցու բարեպաշտ ժողովրդին՝ Աթենքի և համայն Հունաստանի հոգևոր պետ՝ Նորին Ամենապատվություն Քրիստոդուլոս արքեպիսկոպոսի մահվան առիթով:

Հայոց Հայրապետի ցավակցագրում մասնավորապես ասվում է. *«Խորը վշտով տեղեկացանք, որ սույն թվականի հունվար 28-ին վախճանվեց Աթենքի և Համայն Հունաստանի հոգևոր պետ Նորին Ամենապատվություն Քրիստոդուլոս արքեպիսկոպոսը:*

Հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Գերագույն Հոգևոր Խորհրդի՝ Մեր ցավակցությունն ու սրտակցությունն ենք հայտնում Հույն Ուղղափառ Եկեղեցու Հոգևոր Սինոդին, Հունաստանի Հանրապետության նախագահին և Հույն Եկեղեցու բարեպաշտ ժողովրդին:

Քրիստոդուլոս արքեպիսկոպոսը գահակալության տասը տարիների ընթացքում իրականացրեց միջեկեղեցական բազում ձեռնարկումներ և նպաստեց քույր Եկեղեցիների միջև համագործակցության և փոխըմբռնման ընդլայնմանը, որի համար փառք և գոհություն ենք հայտնում մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Ափսոսում ենք, որ առողջության վատթարացման պատճառով հնարավոր չեղավ Քրիստոդուլոս արքեպիսկոպոսի նախատեսված այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ միասնաբար աղոթելու և առավել զորացնելու սիրո այն համագործակցությունը, որ առկա է Մեր քույր Եկեղեցիների և մեր բարեպաշտ ժողովուրդների միջև»:

Աթենքի և Համայն Հունաստանի հոգևոր պետի հուղարկավորության արարողություններին հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության մասնակցեց Հունաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփակյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԶՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Բանակի օրվա առիթով արդեն ձևավորված ավանդույթի համաձայն, հանդիսապետությամբ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը՝ գլխավորությամբ ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, զինվորներ և բարեպաշտ հավատացյալներ:

Հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու պայծառության և Հայոց բանակի առավել զորացման համար:

Մասնավոր այս աղոթքի արարողությունից առաջ օրվա խորհրդով քարոզ խոսեց Անուշավան Սրբազանը՝ մասնավորապես նշելով. «Մեր բոլոր ձեռքբերումները, նվաճումները, հաղթանակները հաջողությամբ են պսակվել, որովհետև մենք բոլորս զորավոր հավատացել ենք դրանց: Միայն հավատք. հավատք՝ անմահության, հավատք՝ հարության: Հոգևոր զենք, գաղափարական զենք, բարոյական զենք, սակայն զենքերի զենքը հավատքն է, որի դիմաց փշրվում են բոլոր զենքերը: Այդ զենքով է շահված քրիստոնեության հաղթանակը: Հենց այդ զենքով զինված մեր ազգի զավակներն Ավարայրում, Սարդարապատում և Արցախում կանգնեցին մեր անկախությանը և հայրերի հավատքին սպառնացող թշնամու դեմ: ....Մեր ժողովրդի կենաց ծառը, մեր բանակն ավելի հասակ կառնի, կզորանա, եթե մենք ամուր կառչենք մեր արմատներից, որտեղից որ սնունդ ենք առնում: Դարձ դեպի մեր արմատները, դարձ դեպի մեր ինքնությունը, դարձ դեպի մեր արժանապատվությունը, դարձ դեպի մեր արժեքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մերն են՝ մեր արյունին խառնված, մեր հայրերի հոգով կյանք առած, մեր նախնյաց արյունով մկրտված»:

Ս. Պատարագից հետո Հայրապետական թափորը և բանակի սպայական կազմն ուղղվեցին դեպի Վեհարան, ուր տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն: Ընդունելությունը բացվեց ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանի շնորհավորական խոսքով: Այնուհետև Հայոց բանակի բարձրաստիճան սպայական կազմին իր Հայրապետական օրհնությունն ու շնորհավորանքը բերեց Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ու-

րախություն հայտնեց, որ նվիրական այս օրը եկեղեցականաց դասը զորականների հետ համատեղ աղոթքի է կանգնում Մայր Տաճարի Ս. Խորանի առջև և հայց բարձրացնում երկրի խաղաղության համար: Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց ներկաներին՝ աղոթելով, որ Տերը Հայոց բանակի յուրաքանչյուր սպասավորին ապահով պահի խաղաղ ծառայության մեջ և որ հաղթանակները միշտ ուղեկից լինեն Հայոց բանակին:

Այնուհետև ընդունելության համար Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց և բարձրագույն սպայական կազմին շնորհավորեց ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը:

Ընդունելության ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ հանձնեց ՀՀ Պաշտպանության փոխնախարարներ գեներալ-լեյտենանտ Ալիկ Միրզաբեկյանին, գեներալ-լեյտենանտ Գուրգեն Մելքոնյանին և ԼՂՀ Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավորությամբ նշվեց Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Ընծա քահանա Միրզոյանը (Սյունյաց թեմ): Պատարագին ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Հայաստանի և Արցախի թեմերում սպասավորող քահանաներ:

Ս. Պատարագի ընթացքում խոսված իր քարոզում Տեր Հայրը ներկայացրեց տոնի խորհուրդը՝ անդրադառնալով Ղևոնդյանց քահանաների պատգամին: «Ս. Ղևոնդյանց հիշատակն այսօր և միշտ մեզ համար կոչ է և հրավեր՝ հոգեպես սփոփվելու և նորոգվելու: Ղևոնդյանց ոգու կրողն ու ներդրողը մենք ենք այսօր, հոգևոր դաստիարակներն ու առաջնորդներն ենք մեր ժողովրդի, և ոչ միայն խոսքով, այլև մեր ողջ էությամբ, մեր կյանքի օրինակով, մեր առաքինի նկարագրով: Թող Աստված ուժ և կարողություն տա մեզ բոլորիս, որ մեր այդ հոգևոր առաքելությունը միասնաբար տանենք, լինենք միշտ այնպես, որ մարդիկ մեզ նայելով՝ մեր խոսքերի միջով ոչ թե մեզ տեսնեն, այլ՝ Քրիստոսին, Լուսավորչին, Մեսրոպ Մաշտոցին, Ղևոնդ Երեցին և բոլոր այն սրբերին ու հերոսներին, ովքեր չերկնչեցին զոհելու իրենց կյանքը: Չդողացին, չերկյուղեցին, որպեսզի շատերին փրկեն, որպեսզի ազգի կյանքը շարունակվի և միշտ փառավոր լինի: Լինենք Աստծո հավատարիմ մշակներ, Աստծո տաճարներ լինենք, որպեսզի մեր ծառայությամբ ուժեղանա հոգևոր լույսը մեր ժողովրդի կյանքում»,- ասաց Տեր Ընծան իր խոսքում:

Տոնի առիթով Մայր Աթոռում տեղի ունեցավ ավանդույթ դարձած քահանայից ամենամյա հավաք: Ժողովը բացվեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ողջույնի խոսքով: Հընթացս ժողովի ներկայացվեցին զեկուցումներ «Քահանայական փորձառությունը աղանդավորների հետ հովվական աշխատանքում» թեմայի շրջանակում: Բանախոսություններ ներկայացրեցին Տ. Վրթանես քահանա Բաղալյանը (Գուգարաց թեմ), Տ. Կյուրեղ քահանա Տալյանը (Կոտայքի թեմ), Տ. Վարուժան քահանա Տերտերյանը (Շիրակի թեմ), Տ. Գևորգ քահանա Տեր-Բարսեղյանը (Գեղարքունյաց թեմ) և Տ. Ներսես քահանա Ռուշանյանը (Արագածոտնի թեմ), ովքեր անդրադարձան կրոնական տարբեր չարափառ հոսանքների հարող անձանց հետ հովվական աշխատանքի ընթացքին, առնչություններին, արձանագրած հաջողություններին ու դժվարություններին: Այնուհետև տեղի ունեցավ քննարկում այս թեմայով:

Քահանայից հավաքը եզրափակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ հերթական անգամ հոգևո-

րականությանը հնարավորություն է ընձեռվել համախմբվելու Մայր Աթոռում, միասնաբար աղոթելու և վերանորոգելու իրենց ուխտը, ինչպես նաև ունկնդիր լինելու միմյանց մտահոգող խնդիրներին, հաղորդ դառնալու միմյանց փորձառությանը: Անդրադառնալով օրվա նյութին՝ Վեհափառ Հայրապետը ի մասնավորի ասաց. *«Կան կրոնական կազմակերպություններ, որոնք գործում են և իրենց քարոզչությամբ շարունակում են ավեր գործել՝ հեռացնելով մեր զավակներին իրենց ճշմարիտ հավատքից, և մենք, որպես Եկեղեցի, չենք կարող անտարբեր լինել այս երևույթի նկատմամբ՝ անկախ այն բանից, թե որքան է արդյունավետությունը նրանց աշխատանքի և կամ որքանով են նրանք հաջողում իրենց չար նպատակների ու չար գործունեության մեջ: Մենք պետք է շարունակենք մեր առաքելությունը՝ մեր զավակներին պահել Մայր Եկեղեցու հարկի ներքո և հովանու տակ»*:

Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց նաև հովվական առաքելության արդյունավետության մեջ կոչման ու նվիրումի առանցքային դերը. *«Մեր աշխատանքի արդյունավետությունը, մեր գործունեության և առաքելության հաջողությունը կախված է յուրաքանչյուրիս նվիրյալ աշխատանքից, հավատավոր գործից, մեր ծառայության մեջ մեր ներդրած սիրուց: Որքան մենք ջանք ենք ներդնում մեր աշխատանքում, մեր առաքելության մեջ, այդքան էլ արդյունավետություն կունենանք: Հոգևոր սպասավորությունը, հովվական ծառայությունը եթե մենք դիտարկում ենք որպես պարտականություն ու պաշտոն մեր կյանքում, բնականաբար արդյունքն էլ այդպիսին պիտի լինի: Բայց եթե նվիրում է, ամբողջական հանձնառություն է, Աստծո նկատմամբ ստանձնած պարտավորություն է, ուխտ է, բնականաբար ոչ մի դժվարություն չի կարող կասեցնել արդյունավետությունը մեր ծառայության մեջ»*:

Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց, որ տարեցտարի աճում է եկեղեցականների թիվը, թեմերը զորանում են, շենանում են եկեղեցիները, բնակավայրեր, համայնքներ ու քաղաքներ օժտվում են նոր եկեղեցիներով:

Վեհափառն իր գնահատանքը հայտնեց քահանայից դասին, որ նվիրումով ծառայություն է բերում հայ ժողովրդին, որպեսզի նա հավատարիմ մնա հայրերի հավատքին, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերի և ճշմարիտ քրիստոնյայի լիարժեք կյանքով ապրի: Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց թեմակալ առաջնորդներին՝ իրենց նվիրյալ ջանքերի ու հանձնառությունների համար, ինչպես նաև Միքայել Սրբազանին՝ քահանայից հավաքն օգտակար և արդյունավետ ձևով կազմակերպելու համար:

Հավարտ իր խոսքի Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծո օրհնությունն ու օգնականությունը մաղթեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր մշակներին, որ Տիրոջ Աջը մշտապես հովանի լինի ու խանդավառի նրանց իրենց առաքելության մեջ ի փառս Աստծո և ի բարօրություն մեր ժողովրդի:

Վերջում տեղի ունեցավ շնորհաբաշխություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, իրենց հովվական առաքելության մեջ ունեցած վաստակի համար որպես պարգևատրում լանջախաչ ստացան տասնութ, ծաղկյա փիլոն կրելու իրավունք՝ երեք և

ավագ քահանայության պատիվ՝ երեք քահանաներ: Ապա ամենքը մասնակցեցին Երեկոյան ժամերգության:

Հունվարի 30-ին Մայր Աթոռում շարունակվեցին տոնակատարությունները: Վաղ առավոտյան եկեղեցականների հանդիսավոր թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդեց Մայր Տաճար, ուր կատարվեց Արևագալի ժամերգություն: Ապա Նորին Սրբության նախագահությամբ սկսվեցին քահանայից հավաքի երկրորդ օրվա աշխատանքները:

Հընթացս ժողովի զեկուցումներով հանդես եկան Տ. Մեսրոպ քահանա Արամյանը (Արցախի թեմ), Տ. Շմավոն քահանա Ղևոնդյանը (Արարատյան Հայրապետական թեմ), Տ. Շիրակ քահանա Խանոյանը (Սյունյաց թեմ), Տ. Գևորգ քահանա Կրտիկաշյանը (Արմավիրի թեմ): Քահանաներն իրենց բանախոսություններում անդրադարձան Եկեղեցու քարոզչության առավել աշխուժացման անհրաժեշտությանը: Կարևոր նկատվեց ժամանակակից տեխնիկական և լրատվական զանազան միջոցների արդյունավետ գործածությունը քարոզչական գործունեության մեջ:

Քահանայից հավաքի երկրորդ օրն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը հորդորեց եկեղեցականներին Ղևոնդյանց ոգով իրենց ծառայությունը մատուցել մեր ժողովրդին և Հայրենիքին:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 31-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը:

Հավարտ Ս. Պատարագի Վարդանանց խորհրդին անդրադարձավ պատարագիչ Հայր Սուրբը: Նշելով, որ Ավարայրի մարտը ընթանում էր հանուն հայ հավատի ու ոգու պահպանման, Հայր Սուրբն ասաց. «Մեր պատմության ընթացքում մենք բազմիցս կորցրել ենք մեր պետականությունը, սակայն քանի որ կանգուն էր մեր միջնաբերդը՝ Հայ Առաքելական Եկեղեցին, և մեր հավատքը, մենք վերստին կարողացել ենք կերտել մեր ներկան և ապագան»:

Վարդանանց տոնին Հայ Եկեղեցին տոնում է նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության և Նորին Սրբության քաջառողջության ու կենաց արևշատության համար:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ և բարեպաշտ հավատացյալներ:

Ս. Պատարագից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց անմար հիշատակին: Բացման խոսք ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Դավիթ աբեղա Քարամյանը, ապա Վարդանանց նվիրված բանախոսությամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Խաչատուր Վարդանյանը:

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Անդրադառնալով Սրբոց Վարդանանց խորհրդին՝ Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ այն սեր է առ Հայրենին և առ Երկնավոր մեր Տերը, հավատարմություն Հայրենիքին և հավատքին: Այդ խորհրդով դարեր շարունակ կրթվել ու դաստիարակվել է հայ ժողովուրդը, ապրել, արարել, մարտնչել ու պաշտպանել Հայրենին: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այդ խորհրդով ապրելը հրամայական է նաև մեր ժամանակների համար: Նորին Սրբությունը նշեց, որ սերն առ Հայրենին և սերն առ Աստված պիտի լինեն երաշխիքը մեր կյանքի բարօրության և ինչպես դարեր շարունակ, այնպես և այսօր պետք է ապահովեն հայ ժողովրդի լինելիությունը և ընթացքը դեպի նոր հազարամյակներ: Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց ամենքին նմանվել Սրբոց Վարդանանց, սեր դրսևորել աշխատանքում, զորեղ լինել հավատքի մեջ և Վարդանանց պես նոր հաղթանակներ արձանագրել իրենց կյանքում:

Հանդիսության ընթացքում ասմունքով և գեղարվեստական կատարումներով ելույթ ունեցան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներն ու Մայր Աթոռի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Նորքի Հայորդյաց տան «Հայկազունք» համույթը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ԿԱՌԼՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հունվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց տիար Կառլոս Պետրոսյանին՝ բարձր գնահատելով նրա ազգօգուտ և եկեղեցաշեն վաստակը:

Շքանշանի հանձնման արարողությանը բացման խոսք ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Այնուհետև Ս. Գայանե վանքի վանահայր Տ. Մակար աբեղա Հակոբյանը ներկայացրեց տիար Պետրոսյանի կողմից Ս. Գայանե վանքի բարեկարգմանը բերած նպաստը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

Հայրապետական Կոնդակում ի մասնավորի ասվում է. «*....Անձնապես ճանաչում ենք հավատավոր հայորդուդ և ծանոթ ենք Ձեր բարի գործերին: Հատկապես մեր երկրի անկախությունից հետո Դուք կարևոր ավանդ եք բերում Հայաստանի արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ արժանանալով մեր ժողովրդի սիրուն ու հարգանքին: Այսօր առիթ ունենք անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին, որ արտահայտությունն են առ Աստված Ձեր անկեղծ հավատի: Դուք սիրով հանձն առաք Սուրբ Գայանե վանքի բարեզարդման և ջեռուցման համակարգի տեղադրման հովանավորությունը՝ հավերժացնելով Ձեր անունը որպես վաղ միջնադարյան այդ շքեղակառույց վանքի բարերար:*

Գոհունակություն է Մեզ համար, որ գորավոր է մեր ժողովրդի զավակների նախանձախնդրությունը հնագույն մեր սրբավայրերի պահպանության նկատմամբ, որոնք դարեր շարունակ աստվածային օրհնություն են սփռում նվիրական մեր հողին: Ձեր գործերը բարի օրինակ են մեր ժողովրդի զավակաց համար իրենց արդար վաստակը ծառայեցնելու ի նպաստ եկեղեցաշեն ու հայրենաշեն՝ «գրոյ յիշատակի արժանի» գործերի (տե՛ս «Էջմիածին», 2007, Զ-Է, էջ 18):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհակալական խոսքով դիմեց պրն Պետրոսյանը՝ ընդգծելով, որ Վեհափառ Հայրապետի կողմից հանձնված շքանշանն իր համար աշխարհում բարձրագույն պարգևն է, և արտահայտեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն մշտապես ծառայելու իր պատրաստակամությունը:

Արարողությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեծարյալի՝ առ Հայրենին ու մեր Սուրբ Եկեղեցին բերած ծառայություններին, գոհունակություն հայտնեց, որ առիթը ներկայացավ գնահատանք հայտնելու տիար Կառլոս Պետրոսյանին՝ նրա վաստակի հանդեպ: «*Ձեր կուրծքը զարդարում է պարգևը մի հաստատության, որ երկու հազար տարվա պատմություն ունի, որ երկու հազար տարի քայլում է մեր ժողովրդի հետ, առաջնորդում է մեր ժողովրդին և մեր ժողովրդի ինքնության լավագույն արժեքները, լավագույն ավանդները ոչ միայն կրում է, պահպանում, այլ նաև ծնում և արարում: Եվ այդ պարգևն այսօր ներկայացնում է և՛ գնահատականը մեր հայրերի, որոնք երկու հազար տարի տքնել են ի սեր Քրիստոսի և ի սեր մեր Եկեղեցու, իրենց կյանքն են գոհաբերել մեր Եկեղեցու պայծառության ու շինության համար, և՛ գնահատականը գալիք սերնդի: Եկող սերունդն էլ պիտի օրհնությամբ հիշի այսօրվա բարերարներին ու նվիրատուներին, որոնց աշխատանքի ազնիվ վաստակով շեն ու պայծառ է պահպանվում Հայոց երկիրը, Հայոց Եկեղեցին, հայոց կյանքը*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ընգծելով, որ գնահատվում է ոչ թե պարզապես բերված ավանդի նյութական արժեքը, այլ նվիրումի ոգին՝ մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին, մեր Հայրենիքին:

Հանդիսությունը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հընթացս Ս.Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ խոսած իր քարոզում պատարագիչ Հայր Սուրբը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանն ընդգծեց, որ «Հրանտ Դինքը պատկանում էր այն եզակի մարդկանց թվին, ովքեր Թուրքիայում համարձակորեն խոսում են հայ ժողովրդի արդար դատի և Հայոց ցեղասպանության մասին: Հրանտ Դինքը գաղափարի, մտքի, խոսքի և գրչի զինվոր էր, որ պայքարում էր մերժողականության դեմ և որին մեր ժողովուրդն արդարացիորեն դասեց Մեծ եղեռնի զոհերի թվին: Ողբագործ գնդակը լռեցրեց նրա կյանքը, բայց ոչ երբեք հանուն արդարության և հաշտության նրա գաղափարները՝ մեկ անգամ ևս փաստելով, որ հային կարող են սպանել, բայց ոչ երբեք հաղթել»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՓՐԿՉԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 հունվարի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

Սիրելի բարեպաշտ հայորդիք,

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին անցյալ կիրակի մեծ շուքով տոնեց Քրիստոսի հրաշափառ Սուրբ Ծնունդը, որով սկիզբ դրվեցին տարվա հոգևոր տոներն ու ուրախությունները բոլոր հավատացյալների համար: Այսօր, Սուրբ Ծննդյան ութերորդ օրը, Հիսուս Քրիստոսի Անվանակոչության տոնն է: Համաձայն Գաբրիել հրեշտակապետի պատգամի, որը տեղի էր ունեցել Ավետման օրը, Հովսեփին ու Մարիամը նորածին մանկանը՝ խաղաղության իշխանին, տանում են տաճար, հրեական օրենքի համաձայն թլպատում Հովհաննես Մկրտչի հոր՝ Զաքարիայի ձեռքով, և անունն էլ դնում Հիսուս: Հիսուս նշանակում է Փրկիչ, նաև բեկված և կորսված Ադամի բժիշկ: Միևնույն ժամանակ նշանակում է նաև փրկիչ անեծքից, մեղքերից, դժոխքից ու ամեն տեսակ վտանգից, որոնցից էլ մեր Տերը մեզ փրկեց ու խոցոտված մեր խոր վերքերը բուժեց:

Հին Ուխտում ընդունված կարգ էր արու զավակներին թլպատել տալ, որպեսզի նրանք ստանան աբրահամյան սերնդի և աստվածային ուխտի կնիքը: Նույն միջոցին կատարվում էր նրանց անվանակոչությունը: Հրեաների մոտ մանուկներին թլպատում էին նաև այն պատճառով, որ Աբրահամի որդիները զանազանվեին հեթանոսներից, որպեսզի ավելորդ մորթի հատումով ուսուցանվի հատել և դեն գցել մարդկային ավելորդ ցանկությունները, ինչը սրտի թլպատության խորհուրդն ունի, որովհետև սիրտը միայն Աստված է տեսնում: Մանուկ Հիսուսը մեզ համար թլպատվեց, թեև չուներ դրա կարիքը, որովհետև Տերը չունի ո՛չ սկզբնական և ո՛չ էլ ներգործական մեղքեր, այլ անսերմ հղությամբ է կույսի արգանդում մարդացել: Հիսուսի դեպքում ևս այս կարգը կատարվեց հավատքի հոր՝ Աբրահամի Աստծո ուխտի ճշմարտությունը հաստատելու համար, որպեսզի հավաստի սուրբ հայրերի կողմից տրված ավետիսը: Հիսուսի թլպատությունը ոչ թե անհրաժեշտության, այլ հաստատված օրենքը հարգելու և կատարելու համար էր:

Հիսուս հանձն առավ թլպատվել, այդ հին խորհուրդը կատարեց, որպեսզի չբամբասվի որպես օրինազանց, ու չկարծեն, թե հակառակ է Աստծո օրենքներին, ինչպես հրեաներն ու Նրան խաչողներն ասացին. «Այս մարդը Աստծուց չէ, քանի որ շաբաթ օրը չի պահում»:

Այս խորհրդով ցույց տվեց նաև Իր ճշմարիտ մարդանալը կատարյալ մարդեղությամբ, որպեսզի չկարծեն, թե թվացյալ է մարդացել և պետք էր, որ Իր իսկ կարգած օրենքը Ինքը անձամբ կատարեր ու պատվեր, որպեսզի հավատային, որ Նա է օրենքի սահմանողն ու հայրերի Աստվածը: Եվ Նա է ամեն սրբության պատճառը, դրա համար անհրաժեշտ էր, որ սրբությունն Իր անձում կրի: Եվ իրոք, Ինքն է հավատքի հոր՝ Աբրահամի ճշմարիտ որդին, ում միջոցով եղավ թլպատության հրամանն ու օրհնյալ զավակի խոստումը, որպեսզի այսպիսով ցույց տա, որ Աստծու խոստումը Իրենով պիտի կատարվի: Հիսուս, սակայն, կրելով թլպատությունն ու օրենքով սահմանված այլ կարգերը, մեզ ազատեց թլպատությունից ու օրենքի ծառայությունից և սրտի թլպատության ու շնորհով փրկվելու ուղին ցույց տվեց, մեզ ծառայությունից ազատեց և երկնքի արքայությանն արժանանալու խոստումը տվեց: Ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «Քրիստոսն է օրենքի վախճանը: Այսպիսով հինն ամբողջովին կատարեց ու վճարեց և ապա նորի սկիզբը դրեց, այսինքն՝ սրտի թլպատության, մկրտության ու շնորհի, որպեսզի Ինքը լինի սկիզբն ու վախճանը ոչ միայն ըստ աստվածության, այլև մարդկության»: Ինչպես և ասում է Ավետարանը. «Երբ ութ օրերը լրացան, Նա թլպատվեց»:

Սիրելի հավատացյալներ, Հիսուս մեր մկրտությամբ արգելեց մարմնավոր թլպատությունը՝ փոխարենը մեզ շնորհեց հոգևոր թլպատություն: Աստված մարմնավոր թլպտությունը ավանդեց Աբրահամին, իսկ հոգևորը՝ սրտի թլպատությունը՝ ավանդեց Մովսեսին՝ ասելով. «Թլպատեցե՛ք ձեր խստասրտությունը»: Սուրբ Հայրերն ասում են, որ Քրիստոս ոչ միայն օրենքի, այլև հոգևոր թլպատությամբ թլպատվեց, թլպատեց նրան Հայր Աստված ծննդյան ժամանակ ազատության սրով, ապա ութերորդ օրը թլպատվեց օրենքի սրով, այնուհետև Ինքն Իրեն թլպատեց խոնարհության սրով: Եվ, վերջապես, Նրան թլպատեցին չարչարանքներով, իսկ Պիղատոսի զինվորները՝ խաչի սրով:

Աշխարհի թագավորները իշխում են սրով՝ բռնությամբ, բայց այս նոր թագավորը սուր չունի, անմեղ մի մանուկ է: Սիրով ուզում է իշխել մարդկանց սրտերի վրա՝ տալով նրանց հոգևոր թլպատություն: Իր թագավորությունը այս աշխարհից չէ, այլ երկնքից, սակայն մարդիկ երբեմն չեն կարող պատկերացնել մի թագավոր առանց զենքի ու բանակի: Այս նոր թագավորը սիրո թագավոր է, աստվածային թագավորությունն է ցանկանում հաստատել երկրի վրա և մարդկանց հոգիներում Իր Սուրբ Եկեղեցու միջոցով: Աստված ցանկանում է մարդկանց մեջ բնակվել ու ապրել նրանց հետ, նմանվել նրանց արտաքինով, որպեսզի նրանք հողեղեն աչքերով տեսնեն ու շոշափեն Իրեն, լսեն Իր սիրո և հավիտենական կյանքի երջանիկ խոսքերը, հավատան, որ իրենք Աստծո որդեգիր զավակներն են, Աստված իրենց երկնավոր հայրն է: Հիսուս աշխարհ բերեց Աստծու հայրական սիրո և մարդկանց եղբայրասիրության, խաղաղության գաղափարը: Բայց ո՞ւր են այդ աստվածային խաղաղությունը և եղբայրական սերը:

Քսան դարեր են անցել Խաղաղության Իշխանի ծննդից ի վեր, ու տակավին մարդկությունը տառապում է խաղաղության ու պատերազմների խնդիրներով: Պատճառն այն է, որ հրեշտակների ավետիսը շատերը սխալ են հասկացել: Այդ խաղաղությունը,

որ Հիսուս խոստացավ, ու հրեշտակներն ավետեցին, բռնությամբ պարտադրված չէ մարդկությանը, այլ մարդկային ազատ կամքից կախում ունի: Պետք է մարդիկ իրենց ազատ կամքով ու փափագով ընդունեն Տիրոջ ավետիսը, և մարդկանց սրտից պետք է բխի Տիրոջ փափագը: Մինչև որ Խաղաղության Փրկիչը վերստին չծնվի մարդկանց սրտերում, աշխարհը չի կարող տևական խաղաղություն վայելել: Մարդիկ պետք է նայեն Բեթղեհեմի ծննդյան լուսափայլ աստղին և երբ հետևեն նրան, նաև խոնարհվեն մսուրի մանկացյալ Աստծուն, այդ ժամանակ կարող են հոգեկան խաղաղություն գտնել:

Հայ ժողովուրդն իր անցյալի փառավոր պատմության վերջին երկու հազար տարիները իմաստավորեց Քրիստոսով՝ իրեն փոխանցված ճշմարտությամբ աստվածային եզակի շնորհներով: Ճշմարտության տենչով ապրված կյանքը լուսավոր փարոս է, որով մարդն առաջնորդվում է դեպի հավիտենականություն: Հայ Եկեղեցու հավատացյալ ու հավատավոր զավակները Բեթղեհեմյան լուսապայծառ աստղի մեջ տեսան լուսավոր պայծառ ապագան, և իրենց համար այդ աստղը մնաց միշտ վառ Հայաստան աշխարհի երկնակամարի վրա՝ հակառակ մութ ու գորշ ամպերի, փոթորիկների, բազում փորձությունների:

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, ազգովին մոտենանք խորհրդավոր մսուրին, Սուրբ Մանկանը երկրպագելու եկած մոգերի ու հովիվների լույս հավատով ծնկենք երախտագետ սրտով երկնային արքայի առջև ու աղոթենք հրեշտակների հետ սիրո, խաղաղության և հաճության փառաբանական երգով. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Շնորհք եւ սէր Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Մ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՆԵՐԲՈՂ Ի ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

(Ա տարբերակ)

Ի սոյն կարգ դասեալ իբր զմիաշար խորհրդոյ տեսակ ընդ ներբողենի խաչիդ եւ զգովեստ երգոյ Տիրուհոյդ:

Ա. Գումարք խմբից դասու երջանկացն պատուասիրաբար բանակարգ եւ բիւրաբեղուն գովեստիւ զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից ըղձաձայնութեանց, իբր զգայական շնչաշարժ սրտին, տաւղեաւք զգերազանցեալն ի յանմատոյցն ծագումն լուսոյ վերադրուատին, եւ զանճառասքանչն հրաշից ամենաստեղծն էութեան տիրաբանեալ արարչապատմեն՝ պատճառ անկապուտ փառաց իսկութեան Հաստչին զհաստուածոց առեալ գոյութեան:

Եւ արդ, եթէ հրափայլ եւ արագընթացն փառաբանչաւք վերնաթռիչն պատգամաւորաւք հոգիանիւթ եւ անեղծական կենդանեաւքն, որք թէպէտ եւ վեհք բնութեան կայիցս[1] ստորիցս, եւ նշոյլք երկրորդ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ անտեսաբար սպասաւորութեամբ առ բնակութիւն բարի Բանին բարձրելոյն բարեզարդաբար բերկրանաւք բերին. եւ նոքաւք գոհաբանի սուրբն Աստուածութիւն՝ լայնաձիգ հեռաւորութեամբ, ընդարձակ միջոցաւ յաւէտ անջրպետ գոլով ի նոցունց:

Ապա ո՞ր երգ պատկանագիր ի ճահ գովեստից զիպաւորն ազգակից ընտանի հարազատութեամբ զմարմնարանն Անտեսին եւ զճեմարանն Մեծին, զտաղաւարն տիրական եւ զխորանն աստուածական, զխառնարանն ճաշակման անապական խրախճանութեան[2], զսրբարանն մաքրութեան եւ զընդունակն զգաստութեան, զնպատակն կուսութեան եւ զաւրինակն երանութեան, զհարսնարանն անլուծական անժամանակն Փեսայի, զբնակարանն հաճութեան կամաց անեղն Աստուածութեան, զայսքանեաց երանութեանց գտակ պատմել ձեռնարկեսցէ: Վասն զի ոչ միայն ի կշիռս բանի չափոյ բերանոյ ի հիւթոյ հողոյ զանգուածոյ մսեղի մարմնոյ անճառութեամբ փակեալ գտանի, այլեւ ոչ երկնայինք զաւրեն զԱրարչին անհաս տնաւրէնութեան[3] անքնին ծնող արժանապէս վերաքարոզել: Զի եթէ անձնացեալն մարդ, ըստ առաքելական ձայնին Պաւղոսի, ոչ յումեքէ պատմի, ապա որ զլրութիւն Բանին էութեան յղացեալ կրեաց Աստուածութեամբն ի մարմնի՝ զիա՞րդ զննեսցի ի շարժութիւն շրթանց երկրեղէն լեզուի ճանաչիլ: Քանզի եթէ դասք պետութեանց անմահիցն վեհից վերնոյ բնակութեանն եկեղեցեաւս իմաստասիրացն, ապա ուրեմն մեծ են առ նոսին սքանչելիք

Աղբիւրներ

A - Երևանի Մատենադարան, հմր 5558

B - Երևանի Մատենադարան, հմր 5365, ժամանակ՝ ԺԳ դ.

[1] A կայից

[2] A խրախճանութեանն

[3] A տնաւրինութեանն

գործոցս այսոցիկ, քան զստորայնոցս երկրաճնացս բանականաց բնաւից պատմութիւնն:

Եւ արդ, երգեսցէ բանս ընծայութիւն աւրինառաք փառաց տուչութեան ի բաղձանաց փափագման սրտի, որքան զաւրեսցէ, զի եթե երկինք զարդարութիւն Բնակաւղին պատմեն, որպէս նախահաւրն[4] սրբուհւոյն երգեաց, եւ յանդրադարձութիւն տաբագրեցելոյ տոհմին Յուդայի, տեսցեն ժողովք ժողովրդոց ըստ դիմառութեան հոգեզարդ բային զփառս անյաւդին: Իսկ ի յերեւել անձնաւոր Բանին մարմին եղեալ աղամեան կերպին, արժանաբար ըղձականութեամբ հնչեսցէ զձայն բերկրանաց բարբառոյ բանից երկիր տիրակիր՝ լծակցելով ընդ աստուածակիր երկինն վերին, ուստի խրախուսեալ հոգեւորական հրճուանաւք երկուցն դասուց ի մի հաւաքութիւն՝ տաւնեն տենչալի եւ անստուերափայլ մեծ տարեկանաւք ի զգալիսս տեսականաց եւ յիմանալիսն ծածկեցելոց: Արդ, պարեսցուք հոգեպէս տարփմամբ, բանակք բնակութեան խմբի երկնային առագաստին. զհոգեւոր հարսանեացն զիղձս քեզ, ամենասո՛ւրբ եւ արբչընկա՛լ Տիրուհի եւ Աստուածածին:

Վասն զի զանտանելին երկնի բարձրութեան եւ երկրի լայնութեան եւ ծովու խորութեան եւ անդնդային մթութեանն՝ մարմնացեալն ի քէն տէրութիւն, զոր արուեստաբանեալ ի ձեւ առակաց երջանկին Յոբայ, զանբաւութիւն մեծին աճեցոյց: Ասաց զումեմնէ ասել, թէ՝ «Չունիմ», եւ այլ ինչ զայլմէ, թէ՝ «Չէ ընդ ինեւ»: Զոր ազգակցեալ ըստ ստորիներգութեան ըստ սմին մասին ի մեծ Յայտնութեան վեհին Յովհաննու ասէ. «*Փախեաւ երկին եւ երկիր ի մի սասանութիւն ի դիմաց Էին, եւ տեղի ոչ գտաւ*»[ա]. քանզի արդարեւ յաւէտ անձկութեամբ ամփոփիւր երկիր ի բերումն բովանդակութեան հայրական գոյակից եւ արարչական Բանին հանգստեան: Իսկ դու ընտրեալ ի զարմէ եւ ի զանգուածէ մաքուր զաւակէ, սո՛ւրբ Աստուածածին, երկի՛ր անձնական բանական բուսոյն, եւ զգայական անդաստա՛ն կենացն հացի, եւ վառարա՛ն բորբոքման անշէջ կայծականն, եւ վա՛յր դալարաբեր ծոցածին ծաղկին, եւ ծա՛ռ երկնուղէշ անթարշամ խնձորոյն, եւ գործարա՛ն գոյութեան լուսոյ մարգարտին, եւ լեա՛ռն արձանունակ երկրալիր վիմին, եւ ա՛յգ արփիասկիզբն աստեղն առաւաւտին, եւ յա՛րկ դիտապետին բանական հաւտին, եւ արքայարա՛ն լուսակերտ անմահ թագաւորին, եւ մա՛յր կաթնամատոյց բնաւից ստացողին եւ հա՛րսն սրբուհի Հաւրն Քրիստոսի:

Խնդա եւ ուրա՛խ լեր ձայնիւ երգութեան պատրաստաւղաց բան գովութեան քումդ երանութեան: Խրախացի՛ր ձայնիւ ողջունի Գաբրիէլեան աւետեացն, բերկրեա՛լդ ի կանայս, արժանաւոր բնակակի՛ցդ, տնկակցո՛րդ փառացն Աստուածութեան, իւղարա՛նդ աւծելութեան Տեառն Քրիստոսի, քանզի նախ քան զծնելութիւն անձնաւոր Բանին առ ի քէն անթերի[5] լրականութեամբ, տարաբնակ եւ ցայգապահեստ դասուցն հովուաց, ի մերձաւորագունիցն[6] խմբից հրեշտակացն աւետարանեցաւ, յոր աւծեալ, ծնեալ[7] ի քաղաք բնակութեան յարկի աւծելոյն Դաւթի արքայի: Վասն զի իբր հարազատ ժառանգ մեռելոյն անդ թաղեցելոյ ի նմին գուշակեցաւ: Իսկ

[4] Ա նախահաւն

[5] Ա անթերակի

[6] Ա մերձաւորացն դասուցն

[7] Ա ծնաւ

դու, Տիրուհի՛, թէպէտեւ զՄինն յէութենէն ծնար մարմնապէս, այլ կուսութեանդ քո մաքրութիւն Երրորդութեամբն վկայեցաւ, զի երեւեսցի եւ դաւանեսցի յայտնեցեալդ ի քէն Աստուած մարդացեալ: Քանզի. «*Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ*»[ա]՝ Բնակողն մաքրութեան եւ Զաւրութիւն Բարձրելոյն, իբր հասարակաց հայրութեան, անհաղորդ նախակարութեան հովանասցի քեզ, սրբուհի՛, եւ որ յայտնելոցն է, ոչ սկսմամբ ի քոյդ ծնանել ունի զտիրականն յորջորջումն: Այլ «*Տէր է՛ր, ըստ մեծին Դաւթի, անունն սքանչելի*»: Եւ կոչեսցի ըստ Գաբրիէլի ձայնիւ Ղուկասու մարմինն անքակտելի որդի արարչութեան հայրենի ընտանութեանն. «*Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի՝ ըստ մարմնոյ հաւր նորա, եւ թագաւորեսցէ տիրեսցէ մերովս ազգակցաւ այնր քաղաքի*»[գ], որոյ ուղխք փայտաձեւակք զանդէիցն ունէր լուսաշաւեղ գերբընթացութիւնք[8]: Եւ կանգնեսցէ կառուսցէ զխորանն Դաւթեան մարմնոյն եւ կամ զԱդամեան կործանմանն յայլմէ մարգարէէ: Եւ վերստին շինեսցէ եւ արծարծեսցէ ի մի կոչումն միասնական եւ անեղծական նորոգութեան քրիստոսեան ուխտին դաշնաւորութեան, քանզի անդանաւր սկսեալ փրկական խորհրդոյն[9] ազդումն ի նոյն կատարեցաւ:

Արդ, այսպիսեաց բազմաթիւ բարձրագոյն բարեաց ընդունակ եւ մատակարար, միայն[10] սուրբ, մաքուր կուսութեան[11] անաղտ խնկարան: Վասն զի իբր ի ճնշումն խառնութեան խնկոյ զմռսոյ յոքունց ընտրելոյ արձակեցեր զբուրումն անուշահոտ սրբութեան: Վասն որոյ ամենայնիւ առլցեալ վարուք գովութեան խնդա՛ յարակայ, անճառ ծնա՛ւղ անեղդ Աստուծոյ, քանզի ի նմին ստացելոյն ի քէն խնամաւղէ հրաշազարդ փառաւք համբարձար ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս, եւ որպէս ի[12] թեթեւութեան հոգոյ սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր եւ անհասանելի իմացական իշխանական ի բացահայեաց զգայութեան նկատման սրտի զանկապտելի վայելս անտեսիցն անձնապէս հոգիագրկեալ, ունո՛ղ Անեղծին փառաց ճոխութեան:

Ներբողեա՛լ ես, մաքուրդ փայլումն արարչակիր առաքինութեան[13], սո՛ւրբ Աստուածամայր, որ սքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ ի մեզ՝ քեւ յեղանակեցաւ փոխատրեալ ընդ փոքուն զմեծն արգասիս: Վասն զի զանկոչն ի մաւրէ Մանուկ որդեպէս գերագգուեցեր, եւ իբր ըմբռնողաւք ձեռաւք բարձողաւք բազկաւք զանպարագիրն Էակ մարդացեալ ի համբոյր հպելոյ մատուցման շրթանց ողջագուրեցեր, որով եւ յաղագս որոյ Աբբայ երկնաւոր մեր Հայր ժառանգակցապէս որդեգրեալ ի քեզ զԱստուած անուանակոչ քեւ[14] արժանաւորեցաք:

Բարեհամբաւեա՛լ ես, մաքրութեան շաւիղ նախընթաց կուսից, սո՛ւրբ Աստուածածին, որ զամենալրութիւն ունողին գոյից ի քեզ լցուցեր, ցուցեր նկատեալ աչաց մարդկան զանտեսն ի մարմնի:

Երանեա՛լ ես ի լեզուս անբիծս ընտրական շրթանց, սո՛ւրբ Աստուածամայր, որ ի դրութենէ խառնութեան քառից յեղանակել տարերաց՝ անտրոհ ի մասնէ հաղորդակ-

[8] Ա վերընթացութիւնք
[9] Ա խորհրդեացն
[10] Ա միայնակ
[11] Ա կուսութեամբ
[12] Ա ի թեւս
[13] Ա առաքինութեամբ
[14] Ա անունակոչել փխ. անուանակոչ քեւ

ցութեան հողածնաց հասարակականաց սրբապէս քրովբէական[15] անշաղախութեամբ, ոչ բերողական ծանրութեան բնակակիր հոմաստեղծ կարեաց: Ուստի արագ ընթացիւք հետոց ի դէմս յարագեալ՝ անմատոյց արփին վերընծայեցար:

Խրախացի՛ր յաւէտ հրճուանաւք, բերկրեա՛լդ ի կանայս, որ իբր դժուարընդելն խաչի դաստիարակութեամբ վարժողակիրթն կապաւ, զուգասնական կցորդակցութեամբ, միատեւակն[16] ժուժկալութեամբ, մարմնատեսակն կենակցութեամբ զերաշխէպ վշտաց ծնիցելոյդ ի քէն մշտաչարչար մարմնամեռ եւ ոգենորոգ դատման փորձական անձնատոչոր տաւթանակ[17] կենդանախարոյկ բոցով ընտրեցար եւ իբր որոջ անարատ քահանայական նուիրման առաւաւտին կանխութեան ստուերազգոյշ, ասրաբոյս եւ ստեւագիսակ գեղմնաբարձ սպիտակափայլ ճգնաւորական հանդիսի, քան թէ ի սուր սուսերի մատեար: Քանզի. «*Պատարագ Աստուծոյ բեկեալ ոգի*»[ա] մարգարէին նախագրեցաւ:

Խրախացի՛ր համայն տարփանաւք, բերկրեա՛լ Տիրամայր, վասն զի ի կոյս եւ յանարաւր արգանդէ բանականաց մաւր երկրի սերմն առաջնաստեղծ[18] Ադամայ նախնոյ ի բխեցելոյդ ի քէն տնկեցաւ ձեռաց, որով երկեակն երկնային[19] Ադամ հոգեւոր ի կոյս եւ յանփորձ որովայնէ ազատ ի պարտեաց քումդ խորանէ ի քէն մարմնացաւ:

Խրախացի՛ր անբաւ բերկրանաւք, սո՛ւրբ Աստուածածին, որ յաւրէնս հասարակաց զանաւրինակն հաղորդեցեր, եւ զաննմանն նմանեաց մսազանգուած մարդկութեանս ի չափ հասակի վայելչականի ստեղան Լիբանանու ըստ Սողոմոնի սահմանադրեցեր:

Խրախացի՛ր յողջոյն[20] նախընծայ երկնային աւետահնչող պատգամաւորին, սո՛ւրբ Աստուածածին, որ ի լոյս փառաց ցնծութեան շրջապատեցար, եւ երկրաւոր մարմնով երկնային գոլ գովեցար երգով, որով բարբառով, սրտիւ բոլորով, միշտ յիշատակի ի գիրս դրութեան աստուածապատում Աւետարանին, ի քէն վկայեցաւ բազմազնեայ գովեստ ի բանից մատուցեալ շրթանց առ Եղիսաբեթ՝ կարկառեալ զբանն յառակ տեսակի հանրական եկեղեցւոյ՝ ծնողի մաքրութեան ի ջրոյն կենդանութիւն զայլասեռ լեզուս տոհմից եւ ազգաց: Եւ այսքանեաւք յաւետ շատացեալ շնորհաւք յիրաւի երգաբանեցեր հլու լսողի միում բարեկամի ի բ[ազ]մաց կուտելոց ի մի հաւանութիւն. «*Ահա երանիցեն ինձ յայսմհետէ տիեզերք*»[բ]:

Արդ, ըստ բանի աստուածազդեցիկ քումդ բարբառոյ, սկզբնարա՛ր կուսից անարատութեան, ըղձական սրտիւ ի զուարթ լեզուս շրթանց բերկրելոց միշտ երանեսցէ զքեզ Եկեղեցի դասուցն անդրանկաց, որք անտեսականաւք[21] աչովք պշելովք ախորժալուր եւ քաղցրանուագ աւրհնաձայնութեամբք զի՝ քէն զմարմինն ի յանձնաւոր բանին միացեալ անանջրպետելի ի պատիւ Հոգւոյն ընդ Աստուածութեանն Հաւր փառատրեն:

---

[15] Ա քրովբէատեսակ փխ. քրովբէական

[16] Ա միատեսակն փխ. միատեւակն

[17] Ա տաւթունակ փխ. տաւթանակ

[18] Ա առաջնաստեղծն

[19] Ա երկնայինն

[20] Ա ողջոյն

[21] Ա անտեսական

Ուրախացի՛ր անճառ բերկրանաւք ի բերան հոգենորոգ մեծի տեսանողին՝ ճշգրտաճառն պատմողի սրբոյն Զաքարիայ, գովեա՛լ Աստուածածին, որ ի գործս[22] հրաշից բանի սքանչելեաց վեհագոյն շնորհաւք վերապատմեցար[23] եւ ծնար զմիայնակն Անդրանիկն[24] էութեան Աստուածութեանն: Եւ ոչ միայն որդւական խնճոյիւք հարսնապէս սբաւսմամբ ի գուշակ գալստեան յովանակակիր անմահ Փեսային՝ Որդիացելոյն քեզ՝ Նորոգողի Էմմանուէլի հրճուեալ խրախացար, այլ ծնաւղ կաթնաձիր Նորին իսկ՝ Ստեղծողին զքեզ՝ հասարակաց Փրկողի, մայր փոխանակ դստեր դասուցն երջանկաց հաւասարակից Վերնոյն Սիոնի, քան թէ ստորանյնոյս Սաղիմայ լուսապճնեցար:

Երանեա՛լ ես, միա՛յն մաքուր ընտրեալ ի զարմս կանանց կուսից, կա՛ռք անձնաւոր կայից կենդանի կամաց Կենարարին: Վասն զի ոչ ընդ քեզ միայն, այլ ի քեզ, եւ ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլեւ բնակեցաւ տաղաւարեալ, եւ ոչ միայն միացաւ ի զանգուած մարմնոյ, այլեւ մարդացաւ ունողն կերպի ի քէն սկզբնելոյ: Եւ ոչ միայն զուգեցաւ մարդ ի յերկոցունց, այլեւ[25] ընկղմեցաւ թանձրայաւդն ի պարզականումն: Եւ ոչ միայն միջնորդաւք անձին եւ մարմնոյ միաւորեցաւ դիմատեսակեալ, այլ եռամասնեայ խառնութեամբ Աստուածութեամբն շաղկապեցաւ անորոշելի, մի Որդի մերովս ազգակցաւ ի սեփհականումն բնութեամբ ծնունդ, զանհաւասարն հաղորդելով աթոռակից աջական սիրոյ բարձրացեալն Հաւր մշտապաշտեցաւ:

Երանեա՛լ ես, միանգամայն եւ աւրհնեա՛լ, անժամանակն իսկութեան երջանի՛կ ծնող, որ ամենայնիւ զամենայնն յամենեցունց պսակեալ հոգեշունչ երգով ի քեզ ընկալար ոչ ի մասնէ, այլ ի լրութենէ, եւ ոչ հատմամբ, այլ հաստատութեամբ, եւ ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս, եւ ոչ փոխմամբ, այլ փոխատրութեամբ, եւ ոչ ի ծիր սահմանի տեղոյ, այլ ամէնունող[26] եղակաց գոյից՝ զԲերողն բնաւից բերեալ յարգանդի, ոչ միայն ի տես նկատման աչաց նայեցեալ, այլեւ շաւշափեալ, եւ ոչ միայն ողջունեալ զԱնհուպն շրթանց եւ[27] ըմբռնեալ, եւ ոչ միայն զննելեալ[28] զհասարակաշէնն կազմեալ խորան մարմնացեալ Բանին, այլեւ անուանեալ ի կոչումն Յիսուս զՔրիստոսն Աստուծոյ: Եւ զԱնժամանակն աւուրց ընծայեալ աճման հասակի խոստովանեցեր՝ դաւանեալ զԾնիցեալդ ի քէն էութեամբ ընդ Աստուածութեանն ի տեսութենէ իմաստից փակեալ քննութեանց: Ուստի եւ Յակոբայ ի յաւր հանդիպութեան կոչման Իսրայելի խորհրդական մարտիւն հերքեալ ըմբռնեաց զունողն: Եւ ի կարծիս մտաց բերելով ընթացողին հասանել հետոց՝ կասեաւ նահանջեալ, որով եւ ի տարակոյս մտացն անձկութեան զերկայնմտութեան[29] ընկալաւ բարձրագոյն պատիւ: Քանզի ոչ աւտար յընտանութենէ[30] տնաւրինեցելոյդ[31] ի քեզ խորհրդոյ բանն յարմարի:

---

[22] Ա գործ

[23] Ա գերապատմեցար

[24] Ա անդրանիկ

[25] Ա այլ

[26] Ա ամենեցուն ունող փխ. ամէնունող

[27] Ա այլեւ փխ. եւ

[28] Ա զննեալ

[29] Ա զերկայնմտութեանն

[30] Ա յընտրութենէ

Երանեալ ի Տեառնէ եւ քարոզեալ ի մարդկանէ ընտրեա՛լ Տիրամայր, սո՛ւրբ Աստուածածին, որ վերին տեսչութեամբ նախապատուեալ[32] ի վաղնջուց[33] գուշակմանէ ի նիւթս փայլողս հրալոյս մարգարտաց ծովածին քարանց փառաւորեցար անկէտ եւ անկշռական գովութեամբ: Զի եթէ ի գունդս դասու սուրբ մարգարէիցն առածք բանաբարբառ պատգամացն, որ ի խրատականս դատման տանն Իսրայէլի, իբր ծննդոց որովայնից հոգեկիր հղացման երկունք ասացան, իսկ որ զԲանն անձնաւոր հայրենի բնութեանն ի սենեկի քում մաքրականի մարմնապէս բացածանուցեր յակնկալութիւն փրկութեան բարեաց՝ յուսացելոց ի քեզ յայտնելով, դու զո՞րպիսի զարժանաւոր պատիւ քումդ գովութեան վերընդունիցիս:

Որ սքանչելի ծագմամբն արփնաւրէն ծածկութիւ յանմատոյցն կարգեալ մատուցար գեղեցկազարդ գերունակութիւն եւ ի շուք շնորհի հոգեզարդ գեղոյ, քան թէ հանդերձից պարասքողեցար, աւրհնեա՛լ դու ի կանայս ի շրթունս մարգարէաբեր քահանայուհւոյն՝ մաւրն Յովհաննու, ի դասուց բնածնաց հասարակական համազարմն[34] նմանացեղից ցանկալի երգովք ներբողեալ տաղաւաք: Զի եթէ բանականիս բնաւին գոյութիւն պատկեր Աստուծոյ Մովսեսիւ անդուստ կարգեցաւ, զնմանութիւն Էին սկզբնամեղն մարդ տարալքեալ տուաւղին անդրադարձեցոյց, ապա յաւետ առաւել առիթ պատճառի ծառայատիպն մարդակերպաւղի սուրբ Աստուածամայրս ընքեամբ[35] ըստ[36] պատկերին եւ յղացելովն զըստ նմանութեանն բերելով յընքեան[37] զուգասահմանեաց: Ուստի ի լրումն կատարածի այսր խորհրդոյ մարգարէին կտակ հաստատիւր. «*Եղիցի, ասէ, ի վերայ առն ձեռն քո եւ ի վերայ Որդւոյ մարդոյ ի քեզ խրախուսելոյ*»ա: Աջ քո Հայր անսկիզբն, Ծնաւղ էութեան Միածնիդ քո մարդացելոյ ի զաւրացուցանել եւ ի վկայել: Վասն որոյ իմաստնագիր ճառն քարոզչի մեծին Պաւղոսի, յարմարեալ ի սոյն կարգ, նախերգողի լոյս փառաց եւ կերպարան գոյութեան եւ նկարագիր արարչակցութեան[38] Հաւրբ վկայեաց:

Եւ արդ, արդարաբար եւ արժանապէս հոգեշարժ քնարաւ զքեզ համբաւեմք, սո՛ւրբ Աստուածածին, որ բազմամասնեայ երգով միշտ աւրհնաբանիւր մարմնով եւ շնչով շնորհապատում վերանորոգեալ: Ի մարդկային զարմէ հրեշտա՛կ երկնային, յեղծականաց սեռիցս անմահ սերովբէ՛, ի նիւթոյ հողոյ ոսկւոյ մաքրութի՛ւն, ի ծովային բերմանց լուսոյ մարգարի՛տ, ի յԵսսեան բուսոյ[39] պտո՛ւղ քաղցրութեան, ի յաւուրս նախնեացն ճի՛ռ աւրհնութեան, ցաւղոյն հանդարտի ա՛մպ անձրեւաձիր, արեւուն ծագման ա՛կն արփիափայլ, մերկացելոյ այգոյն ա՛ստղ առաւաւտի, գիշերային մթոյն խաւսնա՛կ բերկրանաց, աւրինի ստուերին տա՛ռ ճշմարտաճառ: Սակս որոյ իբր զնիւթ գործաւնեայ այսքանեաց բարեաց, աւրհնեա՛լ ես դու ի կանայս, նախաստեղծին մերկա-

---

[31] Ա տնաւրինելոյդ
[32] Ա նախատպաւորեալ
[33] Ա վաղնջուցն
[34] Ա համազարմ
[35] Ա ինքեամբ
[36] Ա զըստ
[37] Ա յինքեան
[38] Ա արարչակցութեանն
[39] Ա լուսոյ

ցելոյ փա՛ռք անկապտելի, վշտացելոյ երկնաչարչար եւ անիծապարտ մաւրն յանցաւորաց սփոփի՛չ քաւութեան: Եւ արդ, ո՞ր բան բաղդատեսցէ զանհամեմատ[40] քո մեծութիւն գերահռչակել, Արարչի՛ն մայր, Անհասի՛ն ծնող, Անբաւի՛ն գրգարան, Ամենակալի՛ն յանձանձիչ, Հրաշակերտողի՛ն կերակրիչ, Փառազարդողի՛ն զգեցուցիչ[41], Վերաւրինելո՛յ[42] ստացիչ: Ահա այսոքիւք ըստ քումդ բանի յիրաւի անարգել շրթամբք զքեզ երանեսցուք, մա՛յրդ Յիսուսի:

Աննիրհելի դիտմամբ լուսալիր աչաւք նկատեալ տեսա՛կ, կտա՛կ մակագիծ անեղծ պայմանաւ, սահմա՛ն յարակայ, կցո՛րդ մեծութեան, երկեակ այլայլմամբ կա՛պ պատկանակիր, վեհին պատկե՛ր կերպիւ կշռորդեալ, թեթեւ պարզութի՛ւն հիւթիւ բաղկացեալ, տա՛ռ տարբերական ուշիւ ձեւացեալ, տումա՛ր տենչալի անսխալ դրոշմեալ[43], մատեան մեծութի՛ւն[44] շնորհիւ նկարեալ, նամա՛կ ընտրութեան բանիւ բարդեցեալ, արձա՛ն անձնական իմաստիւ զաւդեալ, կնի՛ք մատանւոյ Տերամբ կերպագրեալ[45]: Զգե՛ստ լուսանիւթ երկնից արքային, աւթո՛ց սրբութեան անմահ բնակողին, յա՛րկ վայելչութեան անեղ շինողին, առի՛թ մարդկութեան Վեհի բնակութեան[46], պատճա՛ռ պատշաճից անպատկառ ճգնութեանց, աւրինա՛կ ուղղութեան այլայլակ վրիպութեան, անպակաս աճելութի՛ւն լրման թերութեան, իսկուհի՛ երկնային կենդանեաց աշխարհին, մասնակի՛ց շնորհընկալ հայրական գթութեանն, անպարտակիրն ազգակցութեան երկնի՛չ վերստին, անամանակն արգանդի ծանուցո՛ղ ծննդեանն[47]:

Վասն զի զՀաւրն լուսոյ հարազատ Որդի ի ստորինս կոյս աշխարհի կաթամբ մայրենի ջամբեալ դիեցուցեր, եւ որպէս թեւովք խնամական պահպանութեան զպարուսակողն պարփակեցեր: Եւ ըստ նմանութեան արագման աւդային թռչնոյ ի յանցաւորացս աստի փոխեցար, եւ երեւեցար քարոզեալ ամենեցուն Ունաւղին Ունաւղ, եւ ի հասարակաց մարմին գոյութեան մաքրական ոգի ծանուցար, եւ նմանակից լուսարփի ամպոյ երկնային ցաւղովն լցար: Եւ հողեղէն հաստուած երկրային վերնալուսնեան փաղփաղմամբ փայլեցեր, եւ ի կանանց ազանց կերպակից արուսեկին[48] տեսակաւ տեսար, եւ զննելի բնութեամբ մարդկայնոյ յանճառաշնորհ խորհուրդ ծածկեցար, եւ ի Ստեղծողէն քո եւ ի հրեշտակաց հպատակաւրէն ձեւով պաշտեցար, եւ ի Հաստողէն ծագաց աշխարհի մայրաւրինակ անուամբ ձայնեցար, եւ մեղուցելոյ կնոջն առաջնոյ անյանցական զաւակ գովեցար, եւ ամենայն անբծաց ընտրութեան պսակ սրբութեան միշտ դաւանեցար, եւ իբր անարատ եւ հանդարտ երինջ արարչաւանդ լծոյն մատուցար, եւ իբր յաւանակ կամաց Անբաւին Աստուածութեամբն հետեւեցար, եւ ի խորոց ծովէ աշխարհէ[49] շուշանական շաւղաւք ամբարձար, եւ իբր ի դժնեայ փշոց խստու-

[40] Ա զանհամեմատդ
[41] Ա սփոփիչ փխ. զգեցուցիչ
[42] Ա վերօրհնելոյն
[43] Ա չիք տումար տենչալի անսխալ դրոշմեալ
[44] Ա մեծութեան
[45] Ա կերպադրեալ
[46] Ա Վեհին բնութեան փխ. վեհի բնակութեան
[47] Ա ծննդեան
[48] Ա արաւսեկին
[49] Ա աշխարհի

թեանց ի յաշխարհի զբաղմանց ծաղկեցար, եւ իբր ի դառն արմատոց երկրէ քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար, եւ Երրորդութեանն անտես թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար, եւ ծածկարան հաւաքման Բանին լուսարկու ձորձով ձգեցար, եւ անքակ էին տէրութեան սահման սկսման վերակարգեցար, եւ ի սրբասնեալ միջոց քո ստեանց զանկէտն ի ստաշխին ծրար ծպտեցար[50], եւ ի կուսական քում բարունակէ զանմահարար ողկոյզն աճեցար[51], եւ ի միջնորդ փրկութեան կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար, եւ համոզիչ ի խաղաղութիւն մրրկածուփ շարժմանց կացուցար, եւ խրախակից վերնոցն բարձրութեան անկապտելի անուամբ պատուեցար:

Արդ, յայսքանս եւ ի սոյնպիսիս, եւ յեւս ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես, վսեմական վարուց նախընթաց յառաջաշաւի՛ղ, սո՛ւրբ Աստուածածին: Վասն զի որպէս երեւեալն ի քէն Միածին՝ անդրանիկ բնութեան[52] Հաւր, սկիզբն ասի հետեւմանց խաչունակ մահակիր ճգանց, նոյնպէս[53] երանեալդ եւ բարեբանեալ[54] գերաւրինակ ցուցման տեսակի աստուածակրաւն կարգաց ծագեցար: Քեւ զանմատոյցն հուր կիզանող անապական ծասկմամբ[55] ծախեցաք, քեւ զարագեալն ի թեւս աւդայինս ի քառընթաց կենդանիս տեսաք, քեւ զանկցորդն տեսականաց ի մարդկային կերպի[56] նկատեցաք, քեւ զգովեալն բարձող մեղաց իբրեւ զգառն վայելեցաք, քեւ զդատեալն ի չարագործաց իբրեւ զԱստուած երկրպագեցաք, քեւ զանծանաւթն Հաւր տէրութիւն ազգակցապէս աւրհնաբանեցաք, քեւ զմուրհակ պարտուցն անիծից ի յաւազանին ջուր ընկղմեցաք, քեւ զանտեսիլն աչաց հրեշտակաց տղայական տիրովք զգուեցաք, քեւ զանսահման Բանին բնութիւն ի հասարակածին տիպ համբուրեցաք, քեւ զԱդամն նոր հոգեղէն ի չափ հասակի առաջնոյն տեսաք, քեւ զարեգական արդարութեան կենցաղակից մեզ կցորդեցաք, քեւ զանժամանակ Բանին էութիւն ի Դաւթայ սկզբնաբանեցաք, քեւ զանպարագիր մերոյս պատկերի մեզ նմանակիր հանգունակեցաք: Արդ, այսքանեաց սրբազնականաց մասանց ճառելոց դու միայնակ պատճառ, մաքրութեան տաճար անարատ կուսից, նպատակ կրաւնից Տիրամայր, սո՛ւրբ Աստուածածին:

Քանզի թէ չէր ի քէն աճեցեալ ուղէշն երկնային, չէր պտղաբերեալ զանճաշակելին ի հաղորդ շրթանց. եւ թէ չէր երեւեալ արդարութիւն[57] Հաւր ի յերկնից, չեւ եւս էր բուսեալ սկզբնաւորն ի յանսկզբանն. եւ թէ չէր յղացեալ յանփորձականդ քում արգանդի, չեւ էր մարմնացեալ. եւ թէ չէր յայտնեալ մերով բնութեամբս, չեւ էր շաւշափեալ. եւ թէ չէր ըմբռնեալ անհասն իմաստից, ոչ էր երեւեալ. եւ թէ չէր կրեալ ի գիրկս բարձողաց հողեղէն բազկաց, ոչ էր ծանուցեալ. եւ թէ չէր համբուրեալ երկրաւոր շրթամբք, ոչ էր ճառեցեալ. եւ թէ չէր հետեւեալ ի մարդկան ընթացս, ոչ էր քարոզեալ Էակն ի յէից. եւ թէ չէր թափեալ եւղն անապական ի վեհագունէն, ոչ էր զմեզ աւծեալ. եւ թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. եւ թէ չէր խրախուսեալ մարդն ի յերկնայ-

[50] A ծպտեցեր
[51] A աճեցեր
[52] A բնութեանն
[53] A սոյնպէս փխ. նոյնպէս
[54] A բարեբանեալդ
[55] A ծասքմամբ
[56] A կերպ փխ. կերպի
[57] A արդարութիւնն

նում[58], ոչ եւս էր սրբեալ. եւ թէ չէր խոնարհեալ ի բարձրութենէ ընտանի փառացն, ոչ էր համբարձեալ ի ստորիցս առեալն:

Իսկ մարմնացաւ, որքան մարդացաւ. իսկ յայտնեցաւ, որպէս ծանուցաւ. իսկ աւետարանեցաւ, որպէս փառատրեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որպէս վկայեցաւ. իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդեաց, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեցաւ[59]. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բեւեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որպէս անվտանգ. իսկ սլացաւ, որպէս վերնային. իսկ թռեաւ որպէս հոգեղէն. իսկ ծածկեցաւ, որպէս անքնին. իսկ փախեաւ, որպէս եւ զանհաս. իսկ ի[60] յամպս երկնից եդ զգնացս. իսկ գովեցաւ, որպէս Միածին. իսկ բոսորաբուղխ կայլակաւք ներկաւ, իսկ անկից վիրացն խոցմամբ հարցաքննեցաւ. իսկ ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. իսկ յաղթող մրցման եւ մարտի փառաւորեցաւ. իսկ դատաւոր արդարակշիռ ամենայն ազգաց վերապատմեցաւ: Քանզի ի քէն հիմնադրեաց սկիզբն մարդեղութեան անեղն իսկութիւն, եւ ի քոյդ ընտրութեան[61] անպատումդ շնորհ զայս ամենայն անփոխանորդելի պարգեւականացս ձիրս ընկալաք, եւ քեւ ամենայն այս պատրաստութեամբ[62] բարեբաստութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ:

Արդ, զամենայն փառս երանական լուսոյ նշուլից վերնոց եւ ներքնոց ծածուկ խորհրդոց բազմարուեստ գործոց մեծ յաւրինուածոց նոր արարածոց՝ անճառ շինուածոց սուրբ Եկեղեցւոյ ամենայարմար ձեռն Արարողին ի քէն ծնիցելոյ եւ մարդացելոյ դասուցն[63] երջանկաց, եւ մայր հիմնադրութեան հաստման Եկեղեցւոյ, եւ ծնաւղ անարատ Բանին Աստուծոյ: Վասն որոյ յաւետ աւրհնութեամբ միշտ պսակեսցես զնուիրեալ տեղի սրբութեան յարկի լուսոյ տաճարի քոյոյ խորանի ըստ քումդ կոչման, որով պարգեւեալ սմա՝ մատուսցես ձիրս շնորհաց սրբոյն Սիոնի եւ Բեթղեհեմի, ուստի արժանասցուք ընդունել սովաւ մասն փրկութեան յաւուրն յարութեան մեծի յայտնութեան փառացն անեղծութեան Փրկչին անմահութեան՝ ի քէն ծնիցելոյ եւ մարդացելոյ Միոյ Աստուծոյ՝ Տեառն Յիսուսի: Եւ իբր զպատճառ սկզբնաշաւեղ այսքանեաց բարեաց ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք, անժամանակ Էին բարձրացեա՛լ ծնաւղ:

Գերազանցեա՛լդ ի կշիռ չափոյ երկրածին բնութեանս, եւ անդր քան զքրովբէական նախադասութիւնն վերանորոգեալ, իսկուհի՛ վեհիցն պայծառութեան եւ ի վայելչական պատիւ պաշտեցեալ եւ պարունակեալ իբր զԱրարչի, Նորին մարմնարան եւ տեսաւորի՛չ, վասն մեր, հայցե՛մք, աղաչեա՛ զնա ի քէն Ծնեալդ:

Րոպէից յոգնաթիւ մասանց բերկրութի՛ւն, եւ անստուեր հանդիսի տարեկան

---

[58] A յերկնայնումն

[59] A պատկառեաց

[60] A չիք ի

[61] A ընտրութիւն

[62] A պատրաստութիւն

[63] A մարդացելոյ դասուց... շարունակւում է ըստ կերպի մերոյ սրբոյ միայնոյ... մինչեւ մաքրութիւն կուսից եւ սկզբնաշաւիղ...: Այնուհետեւ սրբոյ միայն ճշմարտի տաղաւար...

տարփման եւ անճառ փառաց ծագմամբ ծածկեցեալ եւ անմահացեալ անորիշ հպմամբ մերձաւո՛ր անմատոյց լուսոյ, խոստման ապառնեացն յուսացելոց ի պարտուց մահու ազատեա՛ զի՝ քեզ յուսացեալքս:

Ի յերկրաւորացն[64] նիւթոց ազգակից անկցորդ վարուց մարդկայնոց, հաղորդ հաւասարութեան կրաւնից հրեշտակաց, որոց անզնին աչաց նկատման քեւ յայտնեցաւ կերպիւ ծառայի: Վասն որոյ տեսին զԱնկէտն սկսեալ եւ երանեցան առաւելապէս, քան ի ծածկեալ դարս ամանակաց[65] լռելոց: Ուստիեւ հայցեմք ի քէն աւգնութիւն կենաց փրկութեան եւ նորոգութեան:

Գլխաւորեալ աստանաւր ի քեզ զիմանալեացն փարթամութիւն. յառաջադրեալ համարձակեցար հասեր ի բարձունս, իբր անընդունակ ապականութեան եւ մահու լուծման եւ ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին, արգահատեա՛ մեզ ողորմութիւն, քաւութիւն[66] մեղաց:

Ունո՛ղ հրճուանաց անթիւ խրախութեանց աստուածային տնկոյ[67] տիրական տնաւրէնութեաննն, անդաստա՛ն աճման, որոյ ստեղունք շառաւիղաց բարձրութեան ոստոցն, զմաքրոցն միտս յընքեան բերելով, բնակեցուցանէ ի վիճակ հանգստեան հայրենի աւթեւանին: Արդ, ողորմեա՛ մեզ՝ դաւանողացս զքեզ, Տիրուհի՛ եւ Աստուածածի՛ն:

Րոտեմք ի քէն, սրբուհի՛, աղերսիւ բանի ի ձեռն կենդանակիս[68] մերոյ գոյութեան, միա՛յն երանեալ եւ բարեբանեալ, Հաւրն հաճութեամբ հովանաւորեալ, Աստուծոյ ծնաւղ եւ Հոգւոյն ըստ կերպի մերոյ Սրբոյ միայնոյ, բարձրեալն Աստուծոյ արարչատեղծեաց: Վասն որոյ երգեսցուք քեզ՝ բերկրեցելոյ, զսովորակի աւրհնութիւնն ընդ կարապետին ընտրեալ ծնաւղի՝ պարկեշտանունն Եղիսաբեթի. «*Աւրհնեա՛լ ես դու ի կանայս*»ա, իբրեւ զգլուխ նոցին պանծանաց եւ պայծառ պսակ:

Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան, պսակ ընտրութեան անփորձ գովութեան, պսակ անեղծութեան լուսոյ նմանութեան, պսակ շնորհանորոգ էին ծնելութեան, պսակ երանական Բանին Հաւր մայրութեան, պսակ սուրբ պանծանաց կենացն բարձրութեան, պսակ պայծառափառ վարուց իմաստութեան, պսակ տիրապատուաստ երկնահանճար[69] գիտութեան, պսակ պիտանական զարդու Եկեղեցւոյ, պսակ պաշտելութեան մանկանց Նոր Սիոնի, պսակ յոքնկար[70] յարփից եւթնից փայլեալ, պսակ ընդունական վերնոցն ազգակցութեան, պսակ ամբծութեան շաւղացն արդարութեան:

Արդ, ամենեցունց վերակարգելոցս բաղձալի եւ երանելի թուոցս այսոցիկ բնակարան եւ ընդունարան ընտրական եւ հաճոյական կամաց Անբաւին զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդք ստորաստեղծակն Աղամայ: Որոց անհամար եւ անթիւ ա-

---

[64] Ա յերկրաւորաց
[65] Ա ամանակացն
[66] Ա քաւութեան
[67] Ա տնկոյն
[68] Ա կենդանականիս
[69] Ա երկնահանճարն
[70] Ա յոքնանկար

զանց ամրական եւ պահպանական պարիսպ կառուցար: Քանզի արժանահայց[71] եւ ամենազաւր բարեխաւսութիւնդ քո միշտ ապաւինիմք խնամեալք եւ հանգուցեալք իբր ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի Տերամբ հաստատելոյ:

Պատուար պճնայաւրինի զանազանից մաքրազարդականաց յարմարեալ, պատուար հրապարփակ անմատոյց հինից ընդդիմացողաց, պատուար բոցանշոյլ անհուպ եւ անհաս մարտուցման դժնեայ դրժողաց, պատուար ամենահրաշ, զոր մեծն Եզեկիէլի[72] ստուերականն աւրինակի աղխեալն մտիւ զքոյդ ճշմարտագրեաց: Պատուար շրջապարիսպ հիմանն անշարժութեան, պատուար ամրակառոյց քաղաքին լուսոյ Ստեղծողին եւ Ստացողին հրեշտակաց: Քանզի զԱստուած ծնար ի մարմնի, որով եւ Սիովն զմարմնաւոր բնութիւնս մեր ի հոգի: Վասն որոյ աւրհնեսցեն զաստուածարարեալդ քո կուսութիւն շրթունք ընտրելոց, որով արդարապէս ի քեզ ընծայեալ զբան պատմողին եղեր մեր աւգնական եւ ի խստութենէ փորձութեանց ուղխից հեղեղաց անձկութեան աւուր՝ տուն ապաւինի: Քանզի ի քէն զմարմինն ընդ Աստուածութեանն միաւորեալ միշտ խոստովանին վերինք եւ ստորինք, եւ ի թեւս պահպանութեան լայնատարած մաղթանաց քոյոց աղաւթից յուսամք փրկիլ:

Եւ արդ, ընկալցի՛ս զբան երգութեան բերանոյ շրթանց մերումս լեզուի քեզ ի հաճութիւն, մաքրութի՛ւն կուսից եւ սկզբնաշաւեղ, սրբոյ միայն ճշմարտի տաղաւա՛ր անաղտ, վերանկարեա՛ զ՝առ ի յաւազանէն անախտ արգանդէ կարդացեալս անուն ի գիր մատենի վերին դպրութեանն եւ զերգագրութիւն սակաւամասնեայ մերս գովեստի անջնջական տառ արձանացո փոխատրեալ մարմնոյս զմրաշարս գիծ, եւ զգայական շնչոյս զբանիս պատկեր, զի իբր ի գոյից երկուց զուգելոց ի մի խառնութիւն միոյ կենդանոյ միշտ փառատրեսցիս սովին աւրհնութեամբ, իբր յանեղծական փառաբանաւղէ, եւ ի ձեռն զաւրեղ քոց խնդրուածոց պարգեւեսցես մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծի եւ ահաւորի սուրբ Դատաւորին: Զի ընտրութեամբ եւ անբիծ վարուք եւ ուղիղ դաւանութեամբ, հաւատոցն հաստատութեամբ գտցուք արժանի եւ անդ հանդիպել քումդ երանութեան՝ ընծայիւք բանից փառաւորելով ընդ քեզ եւ ընդ քոյսն յանդիման դիմաց պաշտելի եւ պսակելի քում աստուածափայլ եւ լուսանշոյլ մեծապայծառութեանդ զէութիւն անքակ եւ անքննելի Սուրբ Երրորդութեանն ի միում Տերութեան եւ արարչութեան, որում վայելչական պատիւ եւ գովեստ անդադար երգոց այժմ եւ միշտ եւ յաւիտեանս[73]. ամէն:

Բարեխաւսութեամբ ծնաւղի եւ մաւր Քո ողորմեա՛ գրողի սորա Յովանիսի եւ հաւրն իմ Մոմեղնի[74]:

---

[71] A յարժանահայց

[72] A Եզեկիէլ ի փխ. Եզեկիէլի

[73] A յաւիտենից յաւիտեանս փխ. յաւիտեանս

[74] A չիք Բարեխաւսութեամբ ծնաւղի եւ մաւր Քո ողորմեա՛ գրողի սորա Յովանիսի եւ հաւրն իմ Մոմեղնի

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՑ ՍՈՐԻՆ ԸՆԾԱՅԱԿԱՆ ԳՐՈՑ ԵՐՋԱՆԻԿ ԵԻ ՇՆՈՐՀԸՆԿԱԼ ՏԵԱՌՆ[75] ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՅԵՐԵՍԱՑ ՆՄԻՆ ՀՈԳԻԱԲՈՒՂԽ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Շնորհակիր էին եւ Հոգւոյ Նորա ընդունակ, ընտրեալ եւ ներանձնացեալդ այցելու, ըստ հայցման հաճութեան բարեսէր կամաց երջանկիդ եւ գրութեան[76] նամակի ձերում պատճենին յաւրինեալ՝ շարադրեցի ի վեհիդ գովեստ հիւսուածս բանից: Եւ նկարեցի մատուցի ի գեղ պատկերի դիմաց սոփեստիդ սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտինիդ, եւ արձանացուցի ի շուրթն գրչիս՝ անշունչ խաւսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողիս, անդուլ պատմողիս եւ անսայթաքելի քարոզչիս զանուն տենչալի ձերումդ կոչման, տէր Ստեփանոս՝ լերինդ Մոկաց հզաւր դիտապետ, մնալ յարակայ ի սոյն համառաւտագիծ մատենի յաւուրս անթիւս եւ յամս հազարաւորս իմով սակաւամասնեայ իմաստիւ: Ես Գրիգոր՝ յետին վարդապետաց եւ կրսեր բանասիրաց, որդի դստեր եղբաւր հաւր[77] Անանիայ հոգեզարդ եւ հմտավարժ փիլիսոփայի, եւ ըստ վարուց[78] մաքրութեան կրաւնից յոյժ հռչակելոյ: Եւ ընծայեցի քումդ եկեղեցեաց զայս նուէր բարեաց բանից ցանկալեաց: Արդ, վայելեա՛ յայսմ բերկրութեան յամեալ եւ յարակայեալ ի հոգեւոր հրճուանս աղաւթից: Եւ ընկալեալ խառնեսցես ի յոքնահամբար զարդս ամենագեղս երկնային գանձուցդ՝ զտարազ տեսակի տառիդ: Եւ յիշատակեսցես զանուն իմ զտրուպ ի գաւիթ սենեկի անձկութեան սրտիդ, եւ նորոգեալ[79] զմերս ի ձերումդ սուրբ խորանի աստուածաբնակի հանդէպ սեղանոյդ արարչընկալի զերկոսին զմեզ ի միում կարգի՝ զիս եւ զեղբայր[80] իմ զանդրանիկ զՅովհաննէս՝ ցանկալի անուն, հանճարեղ գիտական եւ իմաստասէր առաւել, քան զիս, որպէս ընդ Սեբի[81] երգագրի անուն Պամփիլեա: Եւ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ, որպէս եւ քոյդ հոգի միացեալ ընդ մեզ միջնորդաւ բանին Էութեան ի մի հալոց ընտրութեան քրայի, անբաժին տեսմամբ եւ անորիշ շնչով, եւ անայլայլակ խորհրդով, եւ անանջրպետ կամաւք եւ խարսխեալ, հաստատեալ եւ հիմնաւորեալ խորհրդովք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

Այլ քանզի անընդել գոլով տեսութեամբ բաղձալի վայրիցդ եւ սրբոց խորանացդ, զթերին լրութեան եւ զպակասն աճելութեան յարմարման գրութեանդ աղերսեմ շնորհել: Ո՛վ, որք հանդիպիք այսմ գեղապաճոյճ, հոգեզարդ եւ շնորհալի իմաստութեան գրոցս, զեղկելի գրողս եւ զծնողսն իմ եւ զեղբարսն աղաչեմ յիշել ի Տէր վասն սիրոյն Քրիստոսի, որ յոյսն է ամենեցուն[82]:

Հրատարակության պատրաստեց՝
Մարթա Արաբյանը

---

[75] Ա չիք տեառն

[76] Ա դրութեան

[77] Ա հաւրն

[78] Ա չիք վարուց

[79] Ա նորոգեա

[80] Ա զեղբայրն

[81] Ա սերբի

[82] Ա զԹումա կրաւնաւոր եւ զծնողքն իւր եւ զեղբարքն իւր յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ փխ. Ո՛վ, որք հանդիպիք... մինչեւ որ յոյսն է ամենեցուն

Տ. ՀՈՎՀԱՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆ

«ԲԱՆԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԳՐՔԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

«Եւ ուղիղ եւ աստուածաւանդ կրօնիցն մերոց լուսաւորութեամբ նախատել զմեզ յանդգնին պղծալիցն իւրեանց շրթմամբք, կռապաշտս անուանելով տէրունական աղագաւ նշանապաշտութեամբ... »

Ս. Հովհան Օձնեցի,
«Ընդդէմ պաւղիկեանց»

«Բանալի ճշմարտութեան»-ի համառոտ բովանդակությունը.

Ամենայն հավանականությամբ «Բանալի ճշմարտութեանը» պետք է գրված կամ էկլեկտիկ բանաքաղության (կոմպիլյացիայի) ենթարկված լինի ոչ ուշ քան 1782 թ., որով էլ թվագրված է նաև ձեռագիրը: Պետք է նշել, որ ձեռագրի առաջին էջի վրա արախվլեցի աղանդավորները միտումնավոր 1782 թ. ջնջել և գրել են 1832 թ., որը նկատել են նաև հետագա հրատարակողները և շտկել այն[1]: Սրանք հավանաբար չեն հասցրել ջնջել և շտկել նախաբանի Հայոց Մեծ թվականով թվագրությունը (ՌՄԼ՝ 1230+552=1782 թ.) և «Յիշատակարան»-ում պահպանված 1782 Փրկչական թվականը: Մաշտոցյան մատենադարանում և Վենետիկի Մխիթարյանների մոտ պահպանվող ձեռագրերում սույն թղթոնի ամբողջական վերնագիրը հնչում է այսպես. «Գիրք[2], որ կոչի Բանալի ճշմարտութեան, Գրեցաւ ի Թուականիս Փրկչին 1782, իսկ հայոց ՌՄԼ, Եւ ի գաւառն Տարոնոյ»[3]: Հարկ է նշել, որ Մաշտոցյան Մատենադարանում և Մխիթարյանների մոտ պահվող ձեռագրերի միջև տարբերությունները չնչին են, և Ֆ. Կոնիբերի հրատարակած բնագիրը ցայժմ լավագույնն է՝ չնայած իր բոլոր թերություններին:

«Բանալի ճշմարտութեանը» բաղկացած է հետևյալ մուտքից կամ նախաբանից. «Բան առ սիրելի ընթերցօղսդ», 26 գլխից, որոնցից համարակալված են մինչև ԻԲ (22)

---

[1] Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 6710, էջ 2ա, տե՛ս նաև The key of Truth, a manual of the Paulician church of Armenia, **Fred. C.Conybeare,** Oxsford, 1898, The Armenian text, «Բանալի ճշմարտութեան», էջ 1-ի ծանոթագրությունը, որտեղ Կոնիբերը, չգիտես ինչու, շտկված թվականը ներկայացնում է ***1882*** ձևով, որը հավանաբար տպագրական վրիպակ է:

[2] Գիրք բառն, օրինակ, բնագրում գրված է ***ԳՒՐՔ*** ձևով. ընդհանրապես բնագրում այսպիսի տառասխալներ և գրաբարի անհմացության բացահայտ դեպքերի շատ հաճախ ենք հանդիպում, որոնց մի մասը փորձել են շտկել հրատարակիչները: Կոնիբերի հրատարակած բնագրում ևս սպրդել են բազմաթիվ անճշտություններ և վրիպակներ, որոնց մենք չենք անդրադառնում:

[3] «Բանալի ճշմարտութեան», էջ 1:

գլուխը և «Յիշատակարանից»: 24 և 25-րդ գլուխներում ամփոփված է չերեցի հեղինակած «կատեխիզիսը», որոնք համապատասխանաբար նա անվանում է. «Յաղագս քրիստոնեական վարդապետութեան» և «Յաղագս միոյ դատաստանի եւ ոչ երկու»: Որոշ գլուխներ ունեն վերնագիր (օրինակ երկրորդինը՝ «Վասն Սուրբ Մկրտութեան», յոթերորդինը՝ «Յաղագս հակառակի Հօր Աստուծոյ» և այլն), մյուսների վերնագրերը կա՛մ բացակայում են, կա՛մ էլ ջնջված են: Գլուխների մի մասը ձեռագրերում պահպանվել է ամբողջական կամ գոնե քիչ եղծված, իսկ մնացած մասերը չափազանց թերի են, և սրանցից պոկված ու ոչնչացված են բազմաթիվ թերթեր[4]:

Մեր կարծիքով, ոչնչացված թերթերը պարունակում էին Հայոց Եկեղեցու հասցեին Հովհաննես չերեցի հարձակումներն ու բարբաջանքները: Արախվլեցի աղանդավորները, իմանալով վերահաս ձերբակալության մասին, ոչնչացրել էին հատկապես այդ էջերը: Մեր եզրակացության համար հիմք է ծառայում գյուղի ներկա բնակչության շրջանում պահպանված բանավոր ավանդույթը, որը մենք գրի ենք առել մասնավոր զրույցի ժամանակ: Ըստ այդ ավանդության՝ տիրացու Գևորգի ազգականները վկայել են, որ նրա մոտ պահվող «ճշմարտության թղթում» (***ձնակերպումը իրենցն է- Հովնան աբեղա***) խոսվում էր Հայ Եկեղեցու և հոգևորականության կողմից Քրիստոսի ճշմարիտ հավատից շեղման, ավելորդ ու ոչ անհրաժեշտ ծեսերի կատարման և այլ բաների մասին: Ուրեմն պարզ է, որ սույն տիրացուն պետք է փորձեր մեղմել իր հանցանքը՝ վերացնելով Մայր Եկեղեցու հասցեին լուտանքներ պարունակող էջերը: Սրա վառ ապացույցն է այն, որ ձեռագրի բուն տեքստում կամ լուսանցքներում երբ թվարկվում են. «Լատինք և յոյնք և հայք»[5], վերջին բառը մեծ մասամբ ջնջված է կամ անընթեռնելի: Ցավոք գիտական շրջանառության մեջ եղած ձեռագրերի նախնական տեքստը չի պահպանվել և, ինչպես վերը նշեցինք, թերի է: Ամենայն հավանականությամբ 1780-1790-ական թթ. Ղուկաս Կարնեցի հայրապետին ծանոթ է եղել ամբողջական բովանդակությունը, որը չափազանց վրդովեցրել ու զայրացրել է նրան, քանզի դրանում ուղղակի պարսավագիր է արտահայտված Մայր Եկեղեցու հանդեպ:

«Բանալու» համառոտ առաջաբանում արդեն ցայտուն արտահայտված է հեղինակի կեղծ բարեպաշտությունն ու փարիսեցիական կեցվածքը, որը համեմված է ինքնասիրահար ճոռոմ դարձվածքներով: Հոգեորսներին հատուկ կեղծավոր տոնով սա ևս հավատացյալներին ցանկանում է իբր մատուցել «մոռացված ճշմարտությունը»՝ նրանց համար հասկանալի ձևով. «Թէպէտ բազմութիւնք ըսբաղանացս (***պետք լինի ըզբաղանացս-Հովնան աբեղա***) և փորձութիւն ալեկոծմանց աշխարհի և յոգնաղիմի պարաւանդութիւնք յոյժ առ զանազան մրրկութիւնս անցաւոր կենցաղոյս կարի վերակացեալք ի վերա մեր ո՛չ ներէին մեզ բուռն արկանել զայսմանէ հարկաւոր գործոյ, սակայն ստիպումն ճշմարտութեան տեառն մերոյ Յիսուսի Որդւոյն Հօրն երկնաւորի, և թախանձումն հոգւոյն սրբոյ (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***), նաևս ըստ աղաչանաց հաւատացելոց, և մանաւանդ վասն ծայրագոյն հարկաւորութեան՝զամենայն գալիք անցաւոր կենցաղոյս յետս արկի և ո՛չ խնայեցի տալ ձեզ նորածնեալ մանկանցդ (***նկատի ունի իր և իր համախոհների կողմից վերամկրտված աղանդավորներին- Հովնան աբեղա***) սրբոյ Ընդհանրականի և Առաքելականի Եկեղեցւոյն տեառն մերոյ

[4] Պահպանված ձեռագրերում բացակայում են ԺԱ, ԺԲ և ԺԳ գլուխները:

[5] Նույն տեղում, էջ 4-5 և այլն:

Յիսուսի Քրիստոսի զկաթն սուրբ, որով զարդասջիք ի հաւատս»[6]:

Սխեման չափազանց պարզ է, քանզի հետագայում սա պետք է խոսի ինչ-ինչ ուժերի կողմից հրահանգված իր «առաքելության» մասին. «Վասն որոյ ձեռնամուխ արար զմեզ Հոգի Հօրն երկնաւորի (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***) առ ի գրել զայս ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք»[7]: Այս մոտեցումը չափազանց նման է ժամանակակից աղանդների «հոգեփրկիչ» քարոզիչների գործելակերպին, որն իր մեջ ներառում է սնոտիապաշտության, աստղագուշակության (աղթարմայության), հիվանդոտ երևակայության և սնապարծության էկլեկտիկ մի խառնուրդ: Հատկանշական է նաև, որ սրանք անընդհատ բարբաջում են ի վերուստ տրված ինչ-որ շնորհների և իրենց բացառիկ «առաքելության» մասին:

Հաջորդիվ չերեցը փորձում է հիմնավորել ճշմարտության փնտրտուքի իր ցանկությունը. «Զոր ի վաղուց հետէ փակեալ էր ճշմարտութիւն հոգի խաբեութեան... »[8]: Դուրս է գալիս, որ եկել է մի «նոր փրկիչ», Տիրոջ խոսքի «իսկական մեկնիչ», որը հավատացյալների հոգու փրկության և լուսավորության մտահոգությամբ «համառօտաբար և ոչ ճոխաբար» ձգտել է ներկայացնել «զդուզնաքեայ (***ճշմարիտ՝ թուրքերեն-Հովնան աբեղա***) բանս»[9]: Սրան հետևում է չափածո ուղերձ-մաղթանք ընթերցողին՝ նրա հոգու փրկության «դեղատոմսով» հանդերձ.

Զայս համառօտ բանս քննեցէք,
Խորին մտօք որոնեցէք,
Եթէ հաճոյ լիցի ձեզ բանն,
Յայնժամ զարդիջիք ընդ որոտմանն[10]:

Նախաբանում արդեն հստակ նկատվում է «Բանալու» բովանդակության հիմնական մտայնությունը, որը կարմիր թելի նման անցնում է թղթոնի ողջ տեքստով մեկ: Դա մկրտության խորհրդի սեփական «մեկնությունն» է, որից էլ բխում են չերեցի բոլոր «ոստնումները» Ուղղափառ կանոնիկ Եկեղեցիների և ի մասնավորի՝ Մայր Եկեղեցու դեմ: Ահա թե ինչի մասին է ուզում գրել ինքը. «Յաղագս սուրբ մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ վասն հաւատացելոց և ապաշխարողաց աւանդեցաւ և ո՛չ երեխայից, անապաշխարողաց և թերահաւատից և ո՛չ անմաքրից... »[11]:

Առաջին գլուխը չնայած չի վերնագրված, բայց Մատթեոսի Ավետարանից բերված բնաբանի խոսքերից երևում է, որ այն նվիրված է ապաշխարության խորհրդին: Չերեցն այստեղ փորձում է յուրովի մեկնաբանել Ս. Հովհաննես Մկրտչի հնչեցրած ապաշխարության կոչը: Գլխի շարադրանքն սկսվում է հեղինակին հատուկ մեծամիտ ձևակերպումով. «Արդ բանք Սրբոյ Աւետարանին ոչ են ծածկեալ առ մեզ, այլ վասն այնորիկ ճշմարիտ հաւաքաբանութեամբ յայտնեաց Հայր Տեառն մերոյ Յիսուսի

[6] Նույն տեղում, էջ 1-2:
[7] Նույն տեղում, էջ 2:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում:

Քրիստոսի Որդւոյ Իւրում սիրելոյ»[12]: Այնուհետև Մարկոսի Ավետարանից մեջ է բերում Հիսուսի խոսքերն՝ ուղղված սեղանի շուրջ նստած Տասնմեկին. «Գնացե՛ք, ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցեք Ավետարանը բոլոր մարդկանց: Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկոս ԺԶ 15-16): Այս անուսում չերեցն իր հերթական աճպարարությունն է կատարում՝ հայտարարելով. «Վասն որոյ և Տէրն մեր նախ զհաւատ խնդրէր և ապայ զբժշկութիւնս շնորհէր և յետ այնորիկ զմկրտութիւն սուրբ պարգևէր հաւատացելոց և ***ո՛չ անհաւատ երեխայից*** (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***)»[13]:

Վերը մեջբերված Յիսուսի խոսքում ***ո՛չ անհաւատ երեխայից*** արտահայտությունը բնականաբար բացակայում է և չէր էլ կարող լինել: Բոլոր ժամանակների, տեսակների և գույների աղանդավորներին հատուկ խոտելի գործելակերպ է սա, քանզի սեփական բարբաջանքն ու սուտ մտավարժանքը մատուցելու համար անհրաժեշտ էր խեղաթյուրել և ցանկալին ներկայացնել իրական: Տիրոջ խոսքն իրեն ցանկալի ձևով մատուցելով՝ սա մեծամտաբար հայտարարում է, թե իրերի դրությունը այսպիսին էր և Յիսուսի հիմնած Սուրբ Եկեղեցին հենվում էր Հովհաննես Մկրտչի ավանդներին. «... մինչև ցարձակումն սատանայի»[14]: Թե չերեցն ում և ինչ նկատի ունի արձակված սատանայի անվան տակ, հասկանալի է դառնում հետագա տողերից: Սուրբ Հոգով «լուսավորված և արտոնված»՝ չերեցն իր ընթերցողներին մատուցում է ճշմարտության «բռնադատման» պատճառներն ու մեղավորներին: Վերջիններս իբր չընկալելով Տիրոջ և սուրբ առաքյալների խոսքը՝ ճշմարիտ ուղուց շեղեցին Ընդհանրական Եկեղեցին և հավատացյալներին. «Ա՛րդ, յորժամ արձակեցաւ սատանայ ի կապից իւրոց, յայնժամ սկսաւ բառնալ զճշմարտութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սրբազան առաքելոցն և էմոյծ զխաբեական հաւաքաբանութիւն իւր ի մէջ վարդապետաց, զորս կարողութեամբ Հօրն երկնաւորին զփակեալ դուռն ճշմարտութեան բացցուք Բանալեօքն ճշմարտութեան»[15]:

Արդ եկել է ինքը և պատրաստ է դևերի կապանքներից ազատել Եկեղեցին և հավատացյալներին: Այս կապանքները դրվել էին վաղուց և արդյունք էին մեր մոլորյալ նախնիների սկզբնավորած մեղքերի: Զեռագրի լուսանցքում արված ընդմիջարկումից հասկանալի է դառնում, թե ովքեր են դևերի կապանքներում պահում մոլորյալ հոգիներին, ով է չարն այն, որ չի թողնում մոլորյալներին մերձենալ Տիրոջ պատգամներին. «Ո՛չ թողոյր չարն այն զմերձենալն նոցա: Այսպէս ***զլատինս, զյոյնս և զհայս ո՛չ թողու*** (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***)»[16]:

Բնականաբար, ինքը իբրև թե պատրաստ է այնպես, ինչպես և Հիսուսը Իսրայելի զավակներին. «Այսպէս և մեք պարտիմք զբանականս ի հաւատս ածել և զանկատարս ի կատարելութիւնս բերել, և զանբանս բանիւն Յիսուսի Քրիստոսի լցուցանել և քարացեալ սիրտս նոցա կակղացուցանել և զմթերեալ մախցս դառնութեան, զոր ի հին աւուրց պահեալ կան, զնոսա զզուանօք փսխել տամք մատամբն Աստուծոյ, և ապայ

[12] Նույն տեղում, էջ 3:
[13] Նույն տեղում, էջ 4:
[14] Նույն տեղում:
[15] Նույն տեղում:
[16] Նույն տեղում:

տամք նոցա զդեղս մեղաց, թէ սկզբնականի և թէ ներգործականի» և լուսանցքում ավելացնում է. «Եւ ո՛չ անհաւատ երեխայս, որք են անբան»[17]:

Պարզվում է, որ սույն նորաթուխ «մարգարեն» պատրաստ է հետևել Հովհաննես Մկրտչի օրինակին. «Այսպէս և մեք պարտիմք հետևիլ ըստ այսմ ճշմարտութեան և ո՛չ խաբէական հաւաքաբանութեան աւանդութեան այլոց, որք են ամենևին սուտ և խաբեութիւն դիւական և ո՛չ աստուածական, զորս ըստ կարողութեամբ Սուրբ Հոգւոյն ասացուք»՝ լուսանցքում ավելացնելով հերթական ստաբանությունը. «Լատինք և յոյնք և /հայք/ խաբէական հաւաքաբանութեամբ առնեն զերիս խորհուրդըս աստուածութեան, որպէս յայտ է ի գործս նոցա»[18]:

Երկրորդ գլուխն ունի հետևյալ վերնագիրը՝ «Վասն սուրբ Մկրտութեան. Յաղագս Յիսուսի Քրիստոսի թէ որպես կանոն և պատուէր ետ այնպէս առնեմք աստուծով»: Նախ, չերեցը նորից շեշտում է Հիսուսի 30 տարեկանում մկրտվելու հանգամանքը, այնուհետև առատորեն քաղվածքներ է բերում Ս. ավետարանիչներից և Գործք Առաքելոցից: Հանրահայտ ճշմարտությունները (Հիսուսի թագավոր երկնավորաց և երկրավորաց կարգվելը և այլն) մեջբերելուց հետո, նորից խոսք է բացում մկրտության ժամանակի ու հանգամանքների մասին. «... Տէրն ուսեալ ի Հօրէ և ապա մեզ ուսոյց առնել զսուրբ մկրտութիւն և զայլ ամենայն պատուէրս Իւր ի կատարեալ ժամանակի ո՛չ այլ ժամու»[19]:

Հաջորդող տողերը կարծես վերցված լինեն բապտիստների (մկրտչականների) բողոքական «վարդապետությունից» և հերթական պարսավագիրն է պարունակում Եկեղեցու սուրբ հայրերի հասցեին, որոնք մեղադրվում են Քրիստոսի սուրբ հավատից շեղվելու մեջ. «Արդ լուարու՛ք (***գուցե՞ նկատի ունի ջրով մաքրագործումը - Հովնան աբեղա***) և ի միտ առէք զանքակտելի վճիռ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր ոմանք հակառակեալ ընդդէմ կանոնաց տեառն մերոյ Յիսուսի՝ քակեցին զսուրբ պատուական կանոնս, զոր ի Հօրէ աւանդեցաւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և կոխան արարին դիւական վարդապետութեամբ իւրեանց. որք սոքա միշտ և հանապազ ընդդիմանան ընդդէմ ճշմարտութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... որք են անբան մկրտեն և զանհաւատս հաղորդեն: Սոքա ամենեքեանս կան արգելեալ ի տեառնէ և ի սրբոց առաքելոցն...»[20]: Այստեղ նույն ձեռագրով լուսանցքում արված է հետևյալ ընդմիջարկումը. «Ժողովս արիւնահեղս նոցա, նաևս ի սուտ գիրս լատինացւոց որ և Կլէմէս ասի»[21]:

Հավանաբար նկատի ունի ԺԷ դարում ապրած կաթոլիկ միսիոներ և հայկական միջավայրին քաջածանոթ Կղեմես Գալանոս Սորենտացուն, որը հայտնի է իր տրամաբանության դասագրքով և հայոց լեզվի և Հայ Եկեղեցու դավանանքի մասին մտացածին քերականական մտավարժանքներով (Կղեմեսի հորինաբանությունները հայտնի են «Հայկական սխալներ» անվամբ): Որ խոսքը այս Կղեմեսին և ոչ թե Բ - Գ դարերում ապրած Կղեմես Ալեքսանդրացուն կամ Կղեմես անվամբ որևէ պապի է վե-

[17] Նույն տեղում, էջ 5:

[18] Նույն տեղում:

[19] Նույն տեղում, էջ 6:

[20] Նույն տեղում, էջ 6-7:

[21] Նույն տեղում, էջ 7:

րաբերվում, պարզ է դառնում լուսանցքում արված մյուս ընդմիջարկումից. «Այնք, որ խաբեական հաւաքաբանութեամբ առնեն, որդիք սատանային են»[22]: Հավաքաբանությունը տրամաբանություն (լոգիկա) եզրույթի հայերեն հոմանիշներից է, իսկ Կղեմեսը, ինչպես ասեցինք վերը, այս գիտության մասին հայերեն դասագրքի հեղինակն է[23]: Մատթեոսի Ավետարանից մեջբերելով Քրիստոսի խոսքերը՝ «Մի՛ տվեք սրբությունը շներին. և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք... » (Մատթ. Է, 6) կեղծավոր զարմանքով ինքն իրեն հարց է տալիս. «Ուստի ոչ ուստի ո՛չ գիտեմք, թէ սոքա որո՞վ իշխանութեամբ առնեն զայսոսիկ և կամ ո՞վ է ուսուցիչ սոցա»[24]:

Տիեզերական Եկեղեցու հայրապետների և ժողովների սրբագործված կանոնները տրամաբանությունից զուրկ են և ըստ չերեցի՝ չեն բխում սուրբգրային ավանդությունից: Սույն կիսագրագետ բախտախնդիրը Սուրբ հայրապետներին քննադատելով միայն չի հանգստանում և վերը բերված լուսանցքագրում նրանց բացահայտ անվանում է «որդիք սատանայի», իսկ նրանց հաստատած կանոնները՝ անտրամաբանական: Չերեցը «ճանաչողության» դասեր է տալիս ընթերցողին, քանզի ինքն արդեն «հասկացել» է «կեղծ վարդապետների» (***իմա՝ սուրբ հայրապետներին - Հովնան աբեղա***) արդյունքը, որը սատանայական է և ոչ աստվածահաճո: Բայց ինքը մեծահոգաբար պատրաստ է փրկելու մոլորյալների հոգիները և թողություն տալու «սատանայի որդուց» մեղքերին. «Ուր և տէր և բարեխօսն մեր Յիսուս այնպիսեաց զդարձ պարգևեսցէ և զայսպիսին ի սուտ վարժապետէն ազատեցէ»[25]:

Երրորդ գլուխն անվերնագիր է, սակայն բովանդակությունից պարզ է, որ այն ապաշխարության խորհրդի առաջնայնության մասին է: Այստեղ ևս չերեցը խառնիխուռն ճամարտակություններ է անում ապաշխարության, մկրտության և հաղորդության մասին և փորձում է ցույց տալ, թե որքա՛ն է ինքը «հավատարիմ» Տիրոջ նախասկզբնական խորհրդին և ինչքան են հեռացել գործող եկեղեցիները Տիրոջից: Եվ նորից հետևում է հին երգը. «Արդ խոնարհեսցուք և մեք սրբոյ եկեղեցւոյ ընդհանրականին և հետևեսցուք գործոց նոցա, որք միախոհ և միակրօն առնէին և մեզ ուսուցին»[26]: Իսկ ինքը «ճիշտ վարդապետությունն» է բերելու, քանզի հետևում է Տիրոջ խոսքին և Ընդհանրական Եկեղեցու ուսմունքին. «Այժմ առնումք ի հարկաւոր ժամանակի զսուրբ և զպատուական խորհուրդս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Հօրն երկնաւորի. ի ժամանակ ապաշխարութեան և հաւատոյ, որպէս ի տեառնէ ընդհանրական և առաքելական Եկեղեցւոյ ուսեալ՝ այնպես առնեմք և կատարեալ հաւատով հաստատեմք զայնոսիկ, որք ո՛չ ունին զսուրբ մկրտութիւն, նա ևս ո՛չ ճաշակեալ են զմարմին և արբեալ են զսուրբ Արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[27]:

Չխախտելով իր իսկ հիմնած «ավանդույթը», չերեցն այստեղ ևս լուսանցքում ներմուծում է հերթական «պարզաբանող» պարսավագիրը. «Այսինքն զլատինս, զհոյնս և

---

[22] Նույն տեղում:

[23] **Կղէմէս Գաղանոս,** Դրունք փիլիսոփայութեան ասացեալ ըստ յունաց, և լատինացւոց լօճիգայ և ըստ հայոց թարգմանի տրամաբանութիւն կամ հաւաքաբանութիւն, Կ.Պոլիս, 1645:

[24] Բանալի ճշմարտութեան, էջ 7:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում, էջ 7:

[27] Նույն տեղում, էջ 7-8:

զհայս, որք ո՛չ են մկրտեալ»[28]: Ուրեմն, չերեցի պնդումը հետևյալն է. սկզբում հարկավոր է «յապաշխարանս մուծանել» և հավատի բերել, ապա նոր մկրտել, ինչպես արեց Փիլիպոսը. «Բայց երբ հավատացին Փիլիպոսին, որն Աստծու արքայության և Հիսուս Քրիստոսի անվան մասին էր ավետարանում, բոլորը մկրտվեցին» (Գործք Է 12): Դուրս է գալիս, որ պետք է հավատալով մկրտվեն, այլ ոչ «անհասկանալիին» մկրտեն: Այս ախտարմայի լուտանքի հաջորդ զոհը հարկավ պետք է դառնար մկրտության արարողակարգի գլխավոր դեմքերից մեկը՝ կնքահայրը, որն իբր խախտում է Աստծո «Մի՛ սուտ վկայիր» պատվիրանը. «Իսկ ոմանք, վիժեալք յաւետարանէն և յեկեղեցւոյ նորին հակառակութեամբ հարցանեն ի յանհաւատ կնքահօրէ, որ է սուտ վկայ անդ կացեալ իբրև զաւանակ, ասելով ցնա. թէ երեխայս զի՞նչ խնդրէ ո՞վ ... (սուտ) վկայ: Եվ նորա պատասխանի տուեալ ասէ. զհաւատ, զյոյս, զսէր և մկրտութիւն: Արդ՝ ո՞վ ... (սուտ)[29] ընթերցող, զիա՞րդ ո՛չ ամաչես, կամ զիա՞րդ ո՛չ պատկառես և ամենևին ցասացեալդ և զհարցմունս քո ո՛չ մտածես, թէ զինչ ելանէ ի բերանոյ քումմէ, որ է ճշմարիտ ... հավաքաբանութիւն, եթէ պատասխանի ... (սուտ) վկային և եթէ հարցումն քոյ վասն երեխային ցկնքահայրն»[30]: Չերեցն այս դեպքում էլ պատրաստ է «մեկնել» Յիսուսի ճշմարիտ խոսքը, հասցնել այն մոլորյալներին, բացել նրանց միտքը և ցույց տալ, թե իսկապես ովքե՛ր են Տիրոջ խոսքերից շեղված վարդապետներն ու ուսուցիչները (***իմա՝ լատին, հույն և հայ եկեղեցիների հայրերը - Հովնան աբեղա***):

Չորրորդ գլուխն ունի հետևյալ երկարաշունչ և վերամբարձ վերնագիրը՝ «Յաղագս յայտնութեան և ցուցման զՀայր և զուսուցիչն այնց, որք հաւատացեալ են և զգործս նորա մեծաւ սիրով կատարեն, և գիտեն թէ գործ Աստուծոյ է: Զոր և ... (քաւ) լիցի այնպիսի գործոց կամ կանոնաց հաւատալ և ի միտս մեր բերել»[31]: Չերեցի պիղծ մտքի թելն ու փուչ տրամաբանությունը հանգում են հերթական աճպարարությանը: Հոհաննու ավետարանի Ը գլխից մեջ բերելով Հիսուսի և հրեաների վեճը ազատարար ճշմարտության շուրջ, սույն չերեցը կեղծ ճշմարտության պատմուճան հագցնելով իր սատանայական կերպարին՝ մեղադրում է Ուղղափառ Եկեղեցու հայրերին հրեաների պես ճշմարտությունից շեղվելու և առասպելաբանությանը հավատալու մեջ. «Արդ է աշակերտքն նորին՝ եկա՛յք և դուք դատ արարէք ճշմարտապէս զարարեալ սուտ մկրտութիւն մեր, որք են ամենևին առասպել և արտաքոյ Սրբոյ Աւետարանին ընդհանրական և առաքելական սրբոյ եկեղեցոյ. որ ո՛չ գտանի բնաւ ի սուրբ և պատուական Գործս Առաքելոց և կամ ի Սուրբ Աւետարանս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բարեխօսին»[32]:

Ինչպես և մեղավոր ու մարդասպան էր հրեաների հայրը, պնդում է չերեցը, այնպես և մարդասպան ու Տիրոջ խոսքից շեղված են Եկեղեցու այն հայրերը, որոնք հե-

---

[28] Նույն տեղում, էջ 8:

[29] Բազմակետերը ցույց են տալիս, որ բնագրում բառերը ջնջված են և ըստ հնարավորինս վերականգնել ենք բառն ըստ հավանական իմաստի:

[30] «Բանալի ճշմարտութեան», էջ 8-9: Հարկ է նշել, որ այս բարբաջանքը «հիացմունքի» է արժանացել խորհրդային անաստված պատմափիլիսոփայական գրականության մեջ:

[31] Նույն տեղում, էջ 9:

[32] Նույն տեղում:

ռացել են ճշմարտությունից. «Այլ արդ՝ այժմ բարձաւ կարծիք ճշմարտապէս ի մտաց մերոց թէ, հայրն ձեր ուսուցեալ է ձեզ ի վաղուց հետէ և կապեալ է զձեզ առ իւր Աւետարան ... (սուտ)»[33]: Եվ իր հորինած ճշմարտությունը ավելի ամրապնդելու համար Հովհաննես Չերեցը հետահայաց է կատարում դեպի Ադամի ու Եվայի նախասկզբնական մեղքը: «Ինչպես և նախահայր Ադամն անսաց Աստծո խորհրդին և սատանայի դրդմամբ մեղք գործեց, - բարբաջում է չերեցը,- այնպես էլ Եկեղեցու հայրերը շեղվեցին ճշմարիտ հավատից և իրենց սուտ վարդապետությամբ մեղքերի մեջ գցեցին միամիտ հավատացյալներին»:

Ավելի ուշ սրանց չերեցը պետք է անվանի սատանայի աշակերտներ և կամակատարներ («Բանալի», Գլուխ Թ): Չիք քահանան այստեղ ևս պատրաստ է իր «ծառայությունը մատուցել մոլորյալներին. «Եւ այսպէս գիտելով (***այստեղ մերձենալ իմաստով - Հովնան աբեղա***) տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ցոյց ետ հերձուածողաց, անհաւատից, անբարշտաց, ստաց, սուտ օրինաց, սուտ վարդապետաց և սուտ քահանայից, որք յամենայն ժամ ուսանին և երբէք ի գիտութիւն ճշմարտութեան ո՛չ հասանեն և այլն»[34]: Պիղծ երեցը պատրաստ է նաև մոլորյալներին «փրկել» սատանայի լարած նոր ծուղակից՝ պայմանով, որ վերը հիշվածները հետևեն իր «վարդապետությանը»: Ինքը պատրաստ է թոթափել բոլոր տարակույսները և հոգու խռովությունները «մինչև ի ժամ փորձութեան»[35]:

Հինգերորդ գլուխը չերեցը վերնագրել է հետևյալ կերպ՝ «Յաղագս քառասնօրեայ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ եմուտ առ ... (Արարիչն) Իւր և խօսեցաւ ընդ Նմա խորհրդաբար և ընկալաւ զպատուիրանս Հօր Իւրոյ, նա ևս յաղթեաց զբելիարն զօրօքն իւրօք»[36]: Այստեղ անտրամաբանական հաջորդականությամբ, չերեցն իր ընթերցողներին փորձում է «լուսավորել» սատանայի (***բնագրում՝ բելիար-սատանան այս անվամբ հիշատակվում է միայն Կորնթացիք Բ գլ. Զ 15 - Հովնան աբեղա***) նկատմամբ Հիսուսի հաղթանակի մասին Ավետարանից քաղվածքներով:

Հաջորդ գլուխը նույնպես երկարաշունչ վերնագրից հետո («Յաղագս խաբեութեան չարին այն, զոր յետ փորձութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սկսեալ մինչև զկրկնակի գալուստ տեառն մերոյ և փրկչին Յիսուս Քրիստոսի առնէ»[37]) այլ հետաքրքիր նյութ չի պարունակում, և կրկնվում է նախորդի անտրամաբանական ընթացքը:

Յոթերորդ գլխի վերնագիրն է՝ «Յաղագս հակառակի Հօր Աստուծոյ Նա ևս ասացուք. յասմանէ բազումք յաշակերտաց նորա չոգան յետս և ոչ ևս շրջէին ընդ Նմա»[38]: Իսկ ի՞նչն է «անհանգստացնում» Չերեցին, որի «մշտարթուն» միտքը պատրաստ է անջրպետել և սատար կանգնել մոլորյալներին՝ ընդդեմ սատանայի խարդավանքների: Մեջբերելով Պետրոս առաքյալի առաջին ընդհանրական թուղթը՝ «Արթու՛ն եղեք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոսոխը՝ Սատանան, մռնչում է առիւծի պես, շրջում և

[33] Նույն տեղում:

[34] Նույն տեղում, էջ 10:

[35] Նույն տեղում, էջ 11:

[36] Նույն տեղում, էջ 12:

[37] Նույն տեղում, էջ 13:

[38] Նույն տեղում, էջ 15:

փնտրում է, թե ու՛մ կուլ տա» (Պետրոս Ա, գլ. Ե 8)՝ չիք քահանան արթուն և զգոն լինելու կոչ է անում իր հետևորդներին. «Ըստ այսմ սարասի և մեզ պարտ է արթուն լինիլ և ո՛չ ի քուն մեղաց: Զոր ոմանք ծանրացեալք մեղօք հետևեցան նոյն հակառակին, որպէս յայտ է ի պատմութիւնս և ի յարարողութիւնս իւրեանց, զորս յայտնեսցուք ըստ կարողութեամբ Սուրբ Հոգւոյն»[39]:

Հաջորդ՝ ութերորդ գլխի վերնագիրն ամենահավակնոտն ու վերամբարձն է եղածների մեջ՝ «Յաղագս սատանայի, թէ որով կերպարանաւ երևեցաւ նոցա, որք խաբեցան և եղեն նորա ծառայ, յայտնեսցուք»[40]: Չերեցն այստեղ «հայտնագործություններ» և «բացահայտումներ» է կատարում՝ թվելով սատանայի կերպարանափոխություններն ըստ իր մթագնած երևակայության և խառնելով իրականն ու ստեղծաբանությունը. «Նախ՝ դրունք դժոխոցն այն (***այստեղ նկատի ունի սատանային-Հովնան աբեղա***) կերպարանեցաւ ի կերպ օձի, երկրորդ՝ ի կերպս ագռաւոյ, երրորդ՝ ի կերպ յորդո, չորրորդ՝ ի կերպս գազանաց, հինգերորդ՝ ի կերպս լուսոյ, վեցերորդ՝ ի կանանց, եօթներորդ՝ ի կերպս մարդկանց, ութերորդ՝ ի կերպս կրօնաւորաց, իններորդ՝ ի կերպս վարժապետաց (***երևի վարդապետա՞ց- Հովնան աբեղա***), Ժ-երորդ՝ ի կերպս Առաքելոց, ԺԱ-երորդ՝ ի եպիսկոպոսաց, ԺԲ-երորդ՝ ի կերպս ճգնաւորաց: Եւ այլ ամենայն կերպս մտանէ և կերպարանի և նոյն կեպարանօքն զսիրելիսն և զհաճոյսն իւր կնքեալ և դրոշմեալ պահէ առ ինքն մինչև ի կատարածի»[41]: Քանզի ինքը «նոր փրկիչ է», ուստի վերը հիշյալ փորձություններից ազատվելու համար խորհուրդ է տալիս իր հնարաբար աղոթքն ասել:

Իններորդ գլխում՝ «Յաղագս կերպարանողին ասասցուք», չերեցը փորձում է մանրամասնել նախորդ գլխում սատանայի՝իր թվարկած կերպարանափոխությունները. «Արդ ուսուցիչ և հայրն հերձուածողաց և հերետիկոսացս ի բազում կերպարանս կերպարանի»[42]: Որպեսզի չձանձրացնի իր «սիրելի ընթերցողներին», չերեցը սատանայի միայն տասներկու կերպարներն է ներկայացնում, բայց դա էլ հերիք է նրան՝ ցույց տալու, թե հատկապես որտեղ են դյուրությամբ դրսևորվում հիշյալ կերպարանափոխությունները: «Խորագետ» օձի, դիակեր ագռավի, պատկեր «պատառող» գազանների և այլ սատանայական կերպարանափոխությունների մասին խոսելուց հետո չերեցը վերջապես հասնում է իր կանխորոշած թիրախին. «Ը-երորդ՝ ի կերպս կրօնաւորաց, զի նոքա զկեղծաբարոյ վարս ունին, Թ-երորդ՝ ի կերպս վարժապետաց, զի նոքա են ուսուցիչք ամենեցուն: Ժ-երորդ՝ ի կերպս առաքելոց, զի նոքա են բժիշկ հոգւոց և մարմնոց: ԺԱ-երորդ՝ ի կերպս եպիսկոպոսաց և կաթուղիկոսաց, զի նոքա հպարդ և բարձրամիտ են, և մանաւանդ վաճառողք իշխանութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նա ևս են տնօրինողք սուտ օրինաց, և ևս են ագահ և սուտ հանճարօղք: Իսկ արդ կերպարանին ի կերպս ճգնաւորաց, զի նոքա հանապազ զբանջարս և զխոտեղենս սիրեն, նաևս ... և զծոմապահս պահեն, քանզի և կերակուրք նոցա հանապազ ի գիճային տեղիս բուսանի: Վասն այսորիկ և բնակութիւնք նոցա լինի,

[39] Նույն տեղում, էջ 15:

[40] Նույն տեղում, էջ 16:

[41] Նույն տեղում:

[42] Նույն տեղում, էջ 17:

քանզի յոյժ սիրեն զնա»[43]: Փաստորեն սույն ամբարիշտ չերեցն իր հայհոյախառն մաղձը թափում է եկեղեցու սպասավորների և առհասարակ հոգևոր դասի վրա: Հարկավ նրանք են այն վտանգավոր անձինք, որոնց պախարակելն ու սատանայածին անվանելն է այն գերխնդիրներից մեկը, որին կուզենար իր թղթոնով հասնել չիք քահանան:

Տասներորդ գլուխը («Յաղագս վկայութեանց սրբոց Առաքելոց և արտագոյ եղեալ գրեանց թէ է՛ ճշմարիտ կերպարանիլն... չարին») թերի է և ձեռագիր օրինակներում պահպանվել է մի քանի տողով: Այստեղ նորից խոսք է գնում սուտ առաքյալների, մշակների, սատանայի և նրա պաշտոնյաների կերպարանափոխությունների մասին:

Ինչպես 34-րդ էջի ծանոթագրությունում ասել էինք, ձեռքի տակ եղած ձեռագրերում բացակայում են ԺԱ, ԺԲ, ԺԳ գլուխները և ԺԴ գլխի սկիզբը: Ամենայն հավանականությամբ, սրանց բովանդակությունն այնքան լեցուն է եղել ուղղակի լուտանքներով և ցնորամիտ բարբաջանքով Հայոց Եկեղեցուն հասցեագրված, որ ինչպես արդեն ասել ենք վերը, վախեցած աղանդավորները ոչնչացրել են բազմաթիվ էջեր (Ֆ. Կոնիբերի հաշվարկներով 24 էջ)[44]: Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրում պակասող թերթերի թիվը 26-ն է, ուստի Ֆ. Կոնիբերի հրատարակած տարբերակն առավել ամբողջական է:

ԺԴ գլխի պահպանված հատվածում չերեցը նորից վերադառնում է ի շրջանս յուր և սատանայի որդիներ է փնտրում. «Տեսա՛յք. ով կոյրք, թէ որպես տէրն մեր զառնելն ձեր սուտ և ունայն համարէ, և զձեզ ուրացողս իսկ ասէ և որդի սատանայի կոչէ, որպես ի վեր անդր գրեցաւ»[45]: Մեղադրանքներից և պարսավանքից նա անցնում է հոխորտանքի և սպառնալիքի. «Ահա՛ այժմ իմանայք դուք բարեպէս զսուտ հայրն ձեր, իմանա՛յք արդեօք զհոգին ձեր, իմանա՛յք ևս զաստուածն ձեր, նա ևս իմանա՛յք զուսուցիչն ձեր, և ևս ***իմանա՛յք զփափն, զկաթուղիկոսն և զառաջնորդն ձեր, և իմանա՛յք զդերայբրիստոսն ձեր***) և այլն»[46]:

Չերեցը պնդում է, թե Ընդհանրական Եկեղեցին դեռևս հնում է «քակվել»՝ «շնորհիվ» անձնասիրության, հպարտության և այլ ախտերից կուրացած մարդկանց ջանքերի. «Նա եւս հաւանիք գործոց ձերոց և ուրացեալ եք զսուրբ գործս տեառն մերոյ Յիսուսի և սրբազան առաքելոցն և էք հետևող հօրն ձերոյ չարին, զոր ետ ձեզ զօրէն իւր, այսինքն զանհաւատս մկրտել, զպատկերս պաշտել, զարծաթ և զոսկի ի ձեւ պատկերի... (պիղծ) առնել և երկրպագանել... »[47]: Իսկ արդյոք սրանք իրավունք ունե՞ն մեղքերի թողություն պարգևելու. «... զմեղս արանց և կանանց քննել, իմանալ և թողութիւն շնորհել, զոր տէրն մեր հրամայէ ասելով. թէ, ով կարէ թողուլ զմեղս մեր, եթէ ոչ մի Աստուած»[48]:

ԺԵ գլխից պահպանվել է միայն վերնագիրը («Յաղագս մկրտութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ընտրեալ սրբազան աշակերտացն նորին, թէ որպես

[43] Նույն տեղում, էջ 17:

[44] Տե՛ս Ֆ.Կոնիբերի ծանոթագրությունը, էջ 18:

[45] «Բանալի», էջ 18:

[46] Նույն տեղում:

[47] Նույն տեղում, էջ 19:

[48] Նույն տեղում:

մկրտէին»)[49] և մի քանի ոչինչ չասող տող:

Հաջորդ՝ ԺԶ գլխի վերնագիրը թերի է, բայց բովանդակությունը՝ ամբողջական: Հերթական անգամ իբրև Տիրոջից բխող ճշմարտություն մատուցելով իր բարբաջանքը՝ մկրտվելուց առաջ ապաշխարելու և հաղորդության խորհրդի մասին, չերեցը հետևություն է անում. «Նա ևս ոչ գիտեն զուրախութիւն և զտրտմութիւն, զհայրն կամ զմայր իւրեանց, ***և են իբրև զպղինձ որք հնչեն և իբրև զծնծղայս, որք ղօղանջեն*** (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***)[50] և այլն»[51]: Հետայսու չիք քահանան «խորհուրդ» է տալիս, թե ինչ պետք է անել երեխայի ծնունդից հետո և ինչպես պետք է դաստիարակել նրան: Ինքը «գիտի», թե ի՞նչ «կերակուր» պետք է տալ երեխային, դա Քրիստոսի վարդապետության կաթն է, որը, հարկավ, հենց չերեցն է «ջամբել տղայոցն»[52]: Ծնողներն սկզբում պետք է երեխային անվանակոչեն, հետո ուսման տան և դաստիարակեն բարի գործերով: Այնուհետև կեղծ մարգարեն ֆիզիոլոգիական «հայտնագործություն» է անում. «... զի արուն յուշ ճանաչէ զսկզբնական ցանկութիւն իւր, իսկ աղջիկն փութով. զոր յայտէ խաբելն Եւայի և Ադամայ. զի նախ Եւայ տարբացեալ և ապա զմիտն Ադամայ զարթոյց»[53]:

ԺԷ գլուխն ունի երկու ենթավերնագիր՝ «Յաղագս մկրտութեան» և «Յաղագս անուանադրութեան երեխային»[54]: Երկրորդ ենթավերնագրի տակ նկարագրվում է երեխայի անվանադրության աղանդավորական «ծեսը», որի մեջ առկա են նաև ժողովրդական մանկատածության որոշ տարրեր՝ բնականաբար չերեցյան խեղաթյուրված մեկնաբանությամբ: Քանզի հայոց մեջ պահպանված մանկան անվանադրության ժողովրդական տոնածիսական կարգն անպայման նկատի ունի մկրտության խորհուրդը, որը հասկանալի պատճառներով չպետք է ընդուներ կամ հիշատակեր չերեցը: Հայ պատմաազգագրական գրականության մեջ բազմաթիվ վկայություններ կան նորածնի վաղ մկրտության պարտադիր լինելու և կնունքի ժամանակ երեխայի անվանադրության մասին: Անվանի ազգագրագետ Ե. Լալայանն այս առումով բերում է ջավախահայության (***սրանց մեծ մասը 1830 թ. գաղթել էր Էրզրումի փաշայությունից- Հովնան աբեղա***) մեջ տարածված մի բնորոշ օրինակ. «Հավատալով, թե չարերն անկնունք երեխաներին փոխում են իրենց նիհար որդիների հետ, որոնք մկրտությունից հետո շատ քիչ են ապրում, ինչպես Կարծախում, իբր, երկուսը պատահել էր, աշխատում են կնունքը կարելվույն չափ շուտ կատարել»[55]:

Ինչպես ծննդյան ութերորդ օրը թլպատեցին և անվանակոչեցին Յիսուսին, այնպես էլ չերեցն իր աղանդակիցներին սովորեցնում է գալ նորածնի տուն և միաբերան ասել իր հնարած աղոթքը. «Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աղաչեմք և խնդրեմք ի

---

[49] Նույն տեղում:

[50] Չերեցի սոփեստության այս դրսևորումն ամեն կերպ գովերգվում է խորհրդահայ պատմափիլիսոփայական գրականության մեջ և ներկայացվում է իբր անձի և նրա կամքի ազատության ըմբռնստ դրսևորում:

[51] «Բանալի», էջ 20:

[52] Նույն տեղում, էջ 21:

[53] Նույն տեղում:

[54] Նույն տեղում, էջ 23:

[55] **Ե. Լալայան,** Ջավախք, Երկեր, հ. 1, էջ 170:

Քէն պահեա՛ զերեխայս զայս ի չարէ և դի՛ր զաջ Քո սուրբ ի վերայ երեխային և պահեա՛ զսա ամենայն փորձութենէ աշխարհի: Եւ տու՛ր սմա կեանս ընդ կամաց քոց, զի անցուսցէ զժամանակս իւր տղայութեան և եղիցի քեզ որդոյդ և Սուրբ Հոգւոյդ հաճելի. և հաստ՛ զսա ի սուրբ մկրտութիւն. և կոչեա՛ զսա ընդ հովանեաւ թեւոց Որդոյդ Քում սիրելոյ: Եւս օրհնեա՛յ, տէր իմ և Աստուած, զերեխայս միջնորդութեամբ Յիսուսի, Որդւոյդ Քո սիրելւոյդ. սրբեա՛յ զաղտս մարմնոյ սորա. և օր ըստ օրէ զարթացո՛յ զսա շնորօքն Քո, և ա՛ծ զսա ի չափ ժամանակի սուրբ մկրտութեան...»[56]: Չերեցն իր այս հնարած անվանակոչության «ծեսը» ավարտում է մեկ այլ աղոթքով, որի իմաստը նույնպես հանգում է թախանձանքին առ Քրիստոս՝ պահպանելու նորածնին մինչ հասնելն արժանանալու «ի սուրբ ծնունդ աւազանին», այսինքն՝ երեսուն տարին լրանալը:

ԺԸ գլխի վերնագիրը հետևյալն է՝ «Խրատ վասն մկրտողաց, թէ զորպիսին պարտ է նոցա մկրտել»: Չերեցը կամաց-կամաց վերացական «յաղագս» ձևից անցում է կատարում միանգամայն գործնական-հրամայական «խրատի»՝ ուղղված իր հետևորդներին և ապագայում իր ցանցն ընկնելիք մոլորյալներին: Այստեղ և հաջորդիվ Ավետարանի «ապաշխարող մեկնիչն» իր տեղը զիջում է առարկություն չընդունող բռնապետ աղանդապետին, որն ինքն է որոշում, թե ովքեր են մեղավորները և անմեղները և թե ովքեր են արժանավորներն այն, որ մկրտելու իրավունք են վաստակել: Գաղափարապես իրեն առավել մոտ կանգնած բապտիստներից ավելի արմատական է սույն կեղծ մարգարեն և ի տարբերություն մկրտչականների՝ ինքը նեղացնում է մկրտության խորհուրդն իրականացնելու իրավունք վաստակածների շրջանակը: Բնականաբար, այս «ընտրյալների» մեջ չեն մտնում Ուղղադավան Եկեղեցիների և ի մասնավորի Հայոց Սուրբ Եկեղեցու բոլոր դասերի ներկայացուցիչները: Պիղծ քահանայի «խրատը» բխում է նախորդ գլուխներում խորհուրդների՝ նրա կողմից առաջ քաշած հերթականությունից. «Զի նախ ուսուցանէին, երկրորդ՝զհաւատս խնդրէին, երրորդ՝յապաշխարանս մուծանէին, և ապա զսուրբ մկրտութիւն շնորհէին այնոցիկ, որք էին կատարէալ և մանաւանդ ճանաչէին զմեղս զսկզբնական»[57]: Եվ պետք է զգուշանալ փորձություն չանցած մարդկանցից՝ լինեն դրանք այր թե կին, քահանա թե վարդապետ: Այսպիսիք, ըստ երեցի, չեն կարող լինել ընտրյալներ, այսինքն՝ մկրտողներ:

ԺԹ գլուխը պակաս է. բացակայում է չորս էջ և վերաբերում է մկրտողների և մկրտվողների պարտականություններին: Ահավասիկ՝ ի՞նչ պայմաններ է դնում սրանց առաջ չիք քահանան. «Յաղագս մկրտելոցն, թէ որպես պարտ է նոցա գալ ի սուրբ մկրտութիւն և թէ զի՞նչ է նոցա հարկ կամ զինչ է նոցա պտուղ ցուցման, զի տեսցուք և հաւատասցուք նոցա, որպես տէրն մեր կանոնէ զմեզ ասելով, թէ ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»[58]: Իսկ ի՞նչ պարտադիր պայմաններ է դնում մկրտվողների առջև չիք քահանան. «Մկրտելոցն պարտ և պատշաճ է ունիլ զդառն արտասուս, որպէս զՊետրոսն, որպէս զՊօղոսն, որպէս զպօռնիկ Մարիամ ... զի սոքա մեծաւ զղջմամբ ընկալան զփառս և զպատիւս Յիսուսէ Քրիստոսէ փրկչէն մերմէ... զի նոցա

[56] «Բանալի», էջ 24:

[57] Նույն տեղում, էջ 25:

[58] Նույն տեղում, էջ 26:

(***իմա՝ մկրտվողներին-Հովնան աբեղա***) պարտ է գալ հեզութեամբ, խոնարհութեամբ առ ընտրեալն (***իմա՝ մկրտողին-Հովնան աբեղա***), հայցել ի նմանէ զարձակումն դիւաց և ծառայել տեառն մերոյ Յիսուսի և սրբազան եկեղեցւոյն»[59]:

Աղանդավորներն այս գլխի տեքստից ոչնչացրել են այն թղթերը, որոնք հավանաբար պարունակել են չերեցի հնարած մկրտության արարողության կարգի երկխոսության հատվածը, որում ուղղակի հրաժարումներ են եղել Հայոց և ընդհանրապես Ուղղափառ Եկեղեցիների նույնական կարգից: Այս եզրահանգումը բխում է տեքստում կիսատ մնացած մտքից, որտեղ խոսվում է, թե մկրտողն (ընտրյալն) ու մկրտվողը (կամ մկրտվողները) ինչ պետք է անեն կամ ասեն: Բնագրի քննությունից կարող ենք եզրակացնել, որ փոխադարձ և խմբակային մկրտությունները, որոնց մասին հետաքննիչներին վկայություն էին տվել արախվլցի աղանդավորները[60], չերեցի հորինաբանության հիմնական սկզբունքներն էին: Խմբակային «մկրտության ծեսերը» հատուկ էին բողոքական բազմաթիվ աղանդների՝ անաբապտիստներին և նրանցից սերված ցվինգլիականներին, մենոնիտներին[61] և այսպես կոչված «ազգային» աղանդներին (օր. ռուսական պրիգուններին և մոլոկաններին)[62]: Այս նմանություններն ու տարբերությունները մենք կքննարկենք իրենց տեղում:

Վերադառնալով մեր նյութին՝ նշենք, որ չերեցը շինծու բարեպաշտությամբ և համեստությամբ դիմում է ընթերցողներին իր գործը ճշմարիտ քննելու խնդրանքով, քանզի ինքը, ի տարբերություն «սատանայի կապանքներում» գտնվողների, չի շեղվել Ավետարանից: Գլուխը եզրափակվում է չերեցի բանաստեղծական հերթական «գոհարով».

Եկա՛ք որդիք նոր Սիօնի,
Առէ՛ք զպսակն Յիսուսի,
Պահէ՛ք ի ձեզ զոր ինչ խօսի,
Դասի՛ք ի դասս յաջակողմի,
Եթէ լսէք եկեղեցւոյն (sic),
Փրկէ զձեզ Աստուած անհուն...
Սովաւ հոգիքն յոյժ փրկեցան.
Եւ պատրանօք դիւացն կորեան[63]:

Նորից սույն չերեցն իր ընթերցողներին փորձում է համոզել, որ ինքն է ճշմարիտ մեկնիչը, քանզի Ընդհանրական Եկեղեցու հայրերի ցուցակը «շտկելով»՝ փորձում է փրկել մոլորյալների հոգիները դևերի կապանքներից, այսինքն՝ մկրտության կամ վերամկրտության իր հնարած կարգը՝ «սատանայից արձակման» միակ ուղին է (***թե ովքեր են դևերն ըստ այս դիվամոլի, մենք արդեն պարզել ենք վերը***):

Քսաներորդ գլուխը ևս ունի երկարաշունչ մի վերնագիր՝ «Յաղագս թէ զինչ է ևս

---

[59] Նույն տեղում:

[60] **Աղ. Երիցեանց,** Թոնդրակեցի հայք մեր օրերում, էջ 109:

[61] **Payne E.A.,** The anabaptists on the 16-century and their influence in the modern world, London, 1949, p. 24.

[62] **Ерицов А.,** О секте тондракских армян, стр. 114-115.

[63] «Բանալի», էջ 27-28:

պարտ ընտրելոյն խօսիլ կամ ասել տայ նոցա: Այս ինչ դաւանութիւն ևս պարտ է ընտրելոյն տայ նոցա այսպէս»[64]: Այստեղ չերեցն աղանդավորական հավատաքննության իսկական տեսարան է նկարագրում, որին պետք է ենթարկվեր մկրտության համար պատրաստ անձը (կամ անձինք): Վայ քահանան չի մոռանում «խրատ» տալ, թե ում պետք է հավատալ և ում՝ ոչ. «Դարձեալ հաւատա՛յք դուք զբարեխօսութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ո՛չ այլոց: Հաւատա՛յք դուք զսուրբ առաքեալսն և զամենեսեան, որք են ընդհանրական կաթուղիկէ եկեղեցի, և ո՛չ են լատինք, յոյնք կամ հայք...»[65]: Հավատաքննությունից հետո ընտրվածին հարկ էր ասել չերեցի հնարած բարբաջանքը, որին ինքն աղոթք է անվանում: Նա չի զլանում մի առ մի մեջ բերել այն բոլոր բարեմասնությունները, որոնք պետք է ունենան մկրտողն ու մկրտվողը:

Քսանմեկերորդ գլխում («Յաղագս մկրտելոցն, թէ որպէս պարտ է նոցա գալ առ ընտրեալն և մկրտիլ նմանէ»)[66] ներկայացված է աղանդավորական մկրտության «ծեսի» ընթացքն իր մանրամասներով՝ ընտրյալի և մկրտվողի (կամ մկրտվողների) դերերն ու «աղոթքները», սուրբգրային այն հատվածները, որոնք պետք է այս կամ այն արարողությունից հետո կարդացվեն և այլն. «Արդ ասեմք առ այս, և դուք լերուք հեզօրէն և ունկնդիր կանոնացս, թէ որպես պարտ է գալ և դիմել առ ընտրեալն նորընծայն այն. քանզի հեզութեամբ և խոնարհութեամբ, որպէս տերն մեր Յիսուս Քրիստոս հեզութեամբ և խոնարհութեամբ կացեալ առ սուրբն Յոհաննէս Մկրտիչն: Այսպէս և նորաբոյս ծաղիկն այն այնպէս պարտ է գալ առ ընտրեալն»[67]:

Մկրտությանը «պատրաստ» ապաշխարած և «զղջացեալ» անձը պետք է ընտրյալին թախանձագին խնդրի իրեն ազատել «ի կապից սատանայից»: Չերեցի կամ նրա ուսուցիչների հնարած «ծեսում» ապահովված է «հրապարակայնությունը». «Առ հրապարակս ասել պարտ է» կամ «Վկայութեամբ ժողովրդեան, զոր կան աստ» և այլն:

Ընդհանրապես բողոքականությունից սերված և հիդրայի գլխի պես աճող բոլոր աղանդներին են հատուկ ցուցադրական (մենոնիտներ, հոգեգալստականներ) և ծպտյալ (պրիգուններ, մոլոկաններ, կրտադավաններ) հանրայնությունն ու շինծու ժողովրդավարական կամ ամբոխավարական հնարանքները: Սրանք իրենց զանգվածային կեղծ հավասարությունն իբր հակադրում էին Ուղղադավան Եկեղեցու փակ, հիերարխիկ կառուցվածքին: Պատահական չէ, որ մկրտության հնարովի ծեսի ամեն փուլից հետո չերեցն անընդհատ կրկնում է. «վկայութեամբ ժողովրդեան» (կարծես ավանդական եկեղեցիներն այն կատարում էին գաղտնի կամ առանց վկաների): Սա ևս ճարպիկ ուրացողի հնարքներից մեկն է, որն իսկական թակարդ է մութ և մոլորյալ հոգիների համար:

Արդ ի՞նչ է անում «զղջացեալ» և «կատարեալ հաւատս ուսեալ» մկրտվողը և ի՞նչ է անում ու ասում ընտրյալը կամ մկրտողը: Սույն կարճամիտ չերեցը, խճճվելով սուրբգրային տարբեր վկայությունների մեջ, փորձում է իբր վերականգնել մկրտության խորհրդի «նախնական» և «իսկական» ընթացքը՝ ընտրյալին (միայն ոչ քահանա-

[64] Նույն տեղում:

[65] Նույն տեղում, էջ 29:

[66] Նույն տեղում, էջ 31:

[67] Նույն տեղում:

յին և հոգևոր դասի օծյալ որևէ ներկայացուցչին) վերագրելով Ս. Հովհաննես Մկրտչի «գործառույթները», իսկ մկրտվողին՝ դևերի բոլոր փորձությունները հաղթահարած (բնականաբար երեսուն տարին լրացած) Հիսուսի «դերը»: «Մկրտության» ողջ ընթացքը հար և նման է բողոքական մյուս աղանդների որդեգրած թատերականացված «ծեսին» և կարծես արտագրված կամ թարգմանված է դրանց արարողակարգից: Սա ևս մի անգամ հաստատում է վերը մեր արտահայտած այն միտքը, որ չերեցի «ուսուցիչներին» պետք է փնտրել ոչ թե թոնդրակեցիների և առավել ևս պավլիկյանների՝ այլ եվրոպական ծագում ունեցող հոգեորսների շրջանում:

Այս գլխում ևս որպես «համեմունք»՝ չերեցը մատուցում է իր հորինաբան-ցնդաբան «աղոթքները»: Ահավասիկ, մի հատված այդ բարբաջանքից. «... զի մի՛ գուցէ թէ պիղծ հոգին մերձեսցի՝ ի հաւատացեալս Միածնին Որդի Հօրն երկնաւորի...»[68] Նույն հիվանդոտ երևակայության և դիվամոլության արտահայտության նմուշներ են նաև մյուս «աղոթքները» չերեցի մատուցմամբ:

Հաջորդ՝ ԻԲ գլխում («Եւ յաղագս խրատոյ ձեռնադրութեան»)[69] աղանդապետը պարզաբանում է, թե ինչպե՛ս պետք է ընտրել և ձեռնադրել ընտրյալին: Բնական է, որ խոսքը գնում է աղանդավորական համայնքի ղեկավարի (որոշ աղանդավորական հոսանքներում՝ պրեսբիտերների) ձեռնադրման կարգի մասին: Այստեղ, ինչպես և նախորդ դեպքում, չերեցը երկար-բարակ ճամարտակում է ընտրյալ առաջնորդին ներկայացվող պարտադիր պահանջների, նրա բարոյական բարձր կերպարի, մտավոր և ընդհանրապես հոգևոր առաքինությունների վերաբերյալ («ժուժկալութիւն, համբերութիւն, աղքատասիրութիւն, բարեգործութիւն և այլն»)՝ իր խոսքը տեղի թե անտեղի «ամրապնդելով» Ավետարանից մեջբերումներով, որոնցից շատերը ուղղակի կրկնաբանության և էկլեկտիկ կոմպիլյացիայի են վերածում:

Այս երկարաշունչ և ճապաղ շարադրանքից եթե դուրս հանենք Ավետարանից հղումները, ապա կմնան նախորդ գլուխներում արդեն մի քանի անգամ ասված «ճշմարտությունները»: Բայց չերեցի երկարաշունչ հորդորների նպատակն ու մտահանգման նշանակետն այլ է. դա ի վերուստ տրված իշխանության խնդիրն է, որը մեկն է ու միակը: Նա պետք է անպայման փորձի աղանդավորական կեղծ հավասարարության իր սկզբունքը քարոզել՝ ժխտելով հոգևոր դասերը և դրանց անհրաժեշտությունը. «Դարձեալ եկեսցուք՝ ի կարգս խրատոյն, զոր նախ ասացաւ թէ պարտ է անարատ լինել առն այնորիկ (***իմա՝ ընտրյալը-Հովնան աբեղա***) յամենայն կողմանց, և ապա տալ նմա զիշխանութիւն քահանայութեան, եպիսկոպոսութեան, վարդապետութեան, առաքելութեան, առաջնորդութեան և ընտրելութեան. որ սոքա ամենեքեան մի և նոյն գործ են և ո՛չ են սոքայ մեծ կամ փոքր՝ի վերայ միմեանց, այլ են հարթ հաւասար, որպէս և բարեխօսն մեր Յիսուս պատուիրեաց սրբազան ընտրելոցն»[70]: Այստեղից էլ բխում է չերեցի «թեզը» թողության մեկ աղբյուրի մասին, որը ինչպես և իշխանությունը և Սուրբ Հոգին մեկն է և ոչ բազում: Այս պարագայում արդեն սույն աճպարարին «օգնության» ձեռք են մեկնում նույնիսկ իր կողմից «դիւաց, սատանայեաց որջ» անվանվող եկեղեցիները. «Արդ այսպէս եթէ լատինք, եթէ յոյնք և եթէ

[68] Նույն տեղում, էջ 36:

[69] Նույն տեղում, էջ 37:

[70] Նույն տեղում, էջ 42:

զհայքս ի ժամ արձակմանս իւրեանց ասեն. եթէ կաթողիկոսք և եթէ եպիսկոպոսք, եթէ վարդապետք և եթէ քահանայքն նոցա ասէ. ըստ ժամանակի, և ևս կարգիւս քահանայական իշխանութեամբ արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց, և այլն: Տեսա՛յք սիրելիք մեր, զի նոքա ևս վկայեն զմի լինելն իշխանութեան և ո՛չ մեծ կամ փոքր...»[71]:

Ի վերջո ե՞րբ է պատրաստ ընտրյալը, որն անցել էր չերեցի նկարագրած ձեռնադրության ողջ ընթացքը, անցնել առաջնորդի իր պարտականությունների կատարմանը. «Եթէ սրբութեամբ Խ /40/ օր ընթեռնու զՍուրբ Աւետարանն և կտակարան նոր ընտրեալն իսկապէս ***առնու զՀոգին Սուրբ*** (***ընդգծումը մերն է- Հովնան աբեղա***)»[72]: Ուրեմն ընտրյալ կոչեցյալի վրա, որը նույն աղանդապետն է, Սուրբ Հոգին է իջել և նա միայն ունի իրավունք Տիրոջ անունից թողութին տալու, չնայած մի քանի գլուխ վերը նույն չերեցը պնդում է, թե միայն Տերը մեր ունի իրավունքն այդ: Սա ևս մեկ ապացույց է չերեցի արտահայտած «մտքերի» անտրամաբանական, անհետևողական ընթացքի և նրա տգիտության:

Քսաներեքերորդ գլխում չերեցը խոստանում է «լուծումներ և մեկնություններ» տալ Հիսուս Քրիստոսի «հարկաւոր բանից»: Իսկ որո՞նք են այդ «հարկաւոր բանքս», որոնց մասին կուզեր խոսել իր ընթերցողների հետ և «խրատել» նրանց պիղծ աղանդապետը:

Առաջինը Աստվածամոր անարատ հղության և կուսության հարցի «պարզաբանումն» է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառախաղի և բառիմաստի համատեքստից անջատում և սեփական պիղծ մտքերի հիմնավորում՝ իբր Ավետարանիչների գործերից բերվող օրինակներով: Բերենք սրանցից մի քանիսը. «Վասն այսորիկ սուրբ աւետարանիչք և սրբազան առաքեալքն, նա ևս տէրն մեր Յիսուս Քրիստոս նախ քան զծնունդն Մարիամու կոյս ասեն և յետ ծննդեանն կին կոչեն, զկուսութիւն նորա ի բաց բառնան»,[73] կամ «Այսպէս՝ նախ քան զծնանիլն Մարիամու զնորաստեղծն Ադամ՝ Գաբրիէլ հրեշտակապետն կոյս ասէ և ողջունէ զնա, բայց յետ ծննդեն նոյն հրեշտակն ո՛չ կոյս ասէ»[74]: Կարծում ենք՝ հարկ չկա ապացուցելու, որ «նորօրյա մարգարեի» մտքերի ստահոդությունը և մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

Երկրորդը Աստծո կողմից Ադամի և Հիսուս Քրիստոսի «ստեղծման» միջև զուգահեռների փնտրումն է, որի նպատակը պարզից էլ պարզ է: Դա Հիսուս Քրիստոսի երկու բնության կամ մարդեղենության մասին Քաղկեդոնում առաջ քաշված «թեզի» ապացուցումն է. «... թէ մարդով եղև մահ և մարդով յարութիւն»: Այստեղ չերեցը Պողոս առաքյալի խոսքերից հարություն բառից հետո պոկել է կամ միտումնավոր չի մեջբերել «մեռելոց» բառը՝ եղծելով նախասկիզբ միտքը, որն հնչում է այսպես. «Բայց արդ, մեռելներից հարություն է առել Քրիստոս՝ ննջեցյալների առաջին պտուղը. քանզի մի մարդով մահ եղավ և մի մարդով ***մեռելների*** (***ընդգծումը մերն է-Հովնան աբեղա***) հարություն: Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և քրիստոսով ամենքը պիտի կենդանան» (Կորնթ. Ա, գլ ԺԵ, 20, 21, 22):

---

[71] Նույն տեղում, էջ 43:

[72] Նույն տեղում, էջ 47, լուսանցքի ընդմիջարկում:

[73] Նույն տեղում, էջ 51:

[74] Նույն տեղում, էջ 52:

Երրորդը սրբերի և սրբագործված առարկաների մերժումն է. «Յաղագս բարեխոսութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ո՛չ այլ սրբոց կամ մեռելոց և կամ քարից և փայտից և պատկերաց. զոր ոմանք ուրացեալ են զպատուական միջնորդութիւն և բարեխօսութիւն սիրելի Որդոյն Աստուծոյ, և հետևեալ են մեռելոց և մանաւանդ պատկերաց, քարից, փայտից, ջրոց, ծառոց, աղբերաց և այլ ամենայն յունայն իրաց, որպէս ասեն և երկիր պագանեն, զխունկս և զմոմս ընծայեն և զզոհս մատուցանեն, որք սոքա ամենեքեան հակառակ աստուածութեան»[75]:

Չորրորդն իր «նորաբոյս հավատացելաներին» «յաւելորդ բանից» հեռու պահելն ու «ճշմարտության» խրատը հասցնելն է: Այստեղ չերեցը դիմում է նոր հնարքի՝ բանավեճի է կանչում «ուրացյալներին» և Տիրոջ ճշմարտությունը եղծողներին. «Դարձեալ հարցանեմ՝ ձեզ ուրացող փափիցդ և հետևողացդ ձերոց. թէ դուք որք զերեխայսն որք՝ ի յարգանդ մարցն իւրեանց պէս պէս հնարիւք. որք ո՛չ ևս են եկեալ յաշխարհ. և կամ ծնեալ են մեռեալ. զոմանս՝ի յորովայնս մկրտէք և զոմանս՝ի մեռելութեան թէական մկրտէք, որք են սոքա ամենևին դիւական և ո՛չ աստուածական... Ուստի յայտ է՝ ի ձերոց գործոց, զոր երբեմն բռնադատիք՝ ի ճշմարտութենէ ճշմարիտն խօսիք ասելով. մի՛ ոք երեխայից և մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յանապաշխարողաց և յանմաքրից. չէ արժան մերձենալ ի սուրբ աստուածային խորհուրդս... Եւ դարձեալ հարցանեմ ձեզ կարգազուրկացդ, թէ յերեխայն այն որ կայ առ ձեզ յորու/մ ժամու խնդրեաց, կամ յորու/մ տեղի աղաչեաց ի սուտ վկայէ անտի. թէ ես ի քեն խնդրեմ զհաւատ, զյոյս, զսէր և զայլ ամենայն բարեգործութիւնս ի սուտ վկայէ անտի: Զի եթէ երեխայն ի յաւանակէ ամտի խնդրէ, ապա ընդէ/ր ի ձենջ կարգազուրկացդ ո՛չ խնդրէ»[76]: Եվ այստեղ նորից չերեցը պետք է «լուսավորի» իր «նազելի զավակներին» և բերի Հիսուսի արեգակի պես ճշմարիտ խոսքն ընդդեմ «ուրացողների դիվական ստի»:

Վերջինը վայ քահանան «Խրատ Քրիստոնեական» է մատուցելու, որպեսզի նախապատրաստի իր հետևորդներին իր կամ իր ուսուցիչների հնարած Կատեխիզիսի ընթերցմանը. «Եթէ ոք կամի, որդեակք իմ, զուղղափառ դաւանութիւն ստանալ, նախ նոցա պարտ է լիակատար զհարկաւոր հարցմունս և զդաւանութիւնս ուսանիլ»[77]:

Քսանչորս և քսանհինգերորդ գլուխներն ամբողջովին ընդգրկում են «Կատեխիզիսը» և համապատասխանաբար ունեն հետևյալ վերնագրերը՝ «Յաղագս քրիստոնեականի վարդապետութեան» և «Յաղագս միոյ դատաստանի և ոչ երկու»: Սրանք իրենցից ներկայացնում են չերեցի կեղծ վարդապետության համառոտ շարադրանքը: Հարց ու պատասխանի սկզբում չերեցը փորձում է ձևակերպել, թե ի՞նչ ասել է քրիստոնյա, ապա թվարկում է Հիսուսի պատվիրաններն իր սեփական մեկնությամբ. «Հարց. Քանի՞ են պատուիրանք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Պատասխան. Թէ այսքան են. նախ յուսումն, երկրորդ ապաշխարութիւն, երրորդ հաւատ, չորրորդ մկրտութիւն, հինգերորդ հաղորդութիւն, և վեցերորդ սէր, որ է գլուխ ամենեցուն»[78]:

Այնուհետև հատուկ երևակվում են «Բանալու» հեղինակի ***ադոպսիոնիստական***

[75] Նույն տեղում, էջ 53-54:

[76] Նույն տեղում, էջ 55-56:

[77] Նույն տեղում, էջ 56:

[78] Նույն տեղում, էջ 56-57:

հայացքները Հիսուսի աստվածեղության վերաբերյալ: Հակառակ ուղղափառ աստվածաբանության՝ աղանդապետը չի հավատում, որ Քրիստոս Աստված և Հայր Աստծուն հավասար ծնված լինի. ըստ նրա՝ մարդ (բայց առանց մեղքի) ծնված Հիսուսը՝ Քրիստոս է դարձել Հովհաննես Մկրտչի կողմից մկրտվելուց հետո միայն: Այստեղից էլ բխում են չերեցի հետագա եզրահանգումներն ու երեխաների մկրտության խորհրդի ժխտումը. «Հարց. Արդ և նոքա որք զերեխայսն մկրտեն մկրտութիւնն նոցա ճշմարի՞տ է և թէ ունայն: Պատասխան. Թէ են ունայն և խաբէութիւն, քանզի երեխայքն ոչ ունին զապաշխարութիւն, ոչ ունին զուսումն և ոչ ունին զհաւատս սուրբ, վասն այնորիք ո՛չ է ճշմարիտ մկրտութիւն նոցա և ո՛չ փրկութիւն»[79]: Շարունակելով իր միտքը՝ չերեցը ճամարտակում է նախասկզբնական ու ներգործական մեղքերի մասին և ինչպես նախորդ գլուխներում, մեկնաբանություններ է անում՝ վկայակոչելով Սուրբ Ավետարանը:

Հարցերի մյուս շարքը չերեցն այսպես է ձևակերպում. «Հարց. Քանի՞ք էին որդեակ իմ, որք պահեցին զքառասուն տիւս և զքառասուն գիշերս, մինչև ցՔրիստոս Որդի Աստուծոյ. Պատասխան. Չորք էին պահողք. այսինքն Ենովք և Եղիայ, որք պահելով յերկինս վերացան, ... Աբրահամ, որ ընկալաւ զաւետիսն Սահակայ . . և մեծն Մովսես պահելով էառ զտասաբանեայ պատուիրանս»[80]: Իսկ այն հարցին, թե ինչո՞ւ Հայր Աստված հիշյալներից որևէ մեկին «ո՛չ արար թագաւոր և գլուխ ամենեցուն», պատասխանում է հետևյալ կերպ. «Թէպէտ նոքա պահեցին, բայց ոչ էին... (***այստեղ բնագրում մեկ բառ է եղծված, սակայն շարադրանքի տրամաբանությունից երևում է, որ պետք է լիներ անմեղ- Հովնան աբեղա***) որպէս զտէրն մեր Յիսուս Քրիստոս: Այլ նոքա հղացեալ եղեն ըսկզբնական մեղօք, նոքա ունէին զմեղս ըսկզբնական և ներգործական...»[81]: Սա ևս մի վկայություն բողոքական ադոպսիոնզմի, որի արմատները անշուշտ գնում են դեպի կաթարոս ալբիգոյականներն ու հատուկ են անաբապտիզմի վարդապետությանը:

Աղանդապետի չարափառության գագաթնակետը, մեր կարծիքով, «Կատեխիզիսի» հարցերի խմբի այն շարքում է, որտեղ թվարկվում են փրկության ուղիները. «Հարց. Քանի՞ են բանք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զմարդս փրկէ: Պատասխան. Թէ չորք են որ մարդս փրկէ: Նախ՝ապաշխարութիւն, երկրորդ՝ ուղիղ դաւանութիւն, երրորդ՝սուրբ մկրտութիւն և չորրորդ՝սուրբ պատուական մարմին և արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[82]: Հաջորդ հարցն արդեն պարզեցնում է չերեցի բուն դիվային նպատակը, այն է ժխտել Ուղղափառ Եկեղեցու աստվածաբանության հետևյալ հիմնասյուները՝ դրոշմը, քահանայության կարգը, վերջին օծումն ու պսակը: «Ապա դրոշմ, կարգ քահանայութեան, վերջին օծում և պսակն ոչ են փրկութիւն հոգւոց մերոց. այլ են անհարկ և ոչ հարկաւորք: Որպէս զսուրբ եկեղեցին Քրիստոսի ասէ. եթէ ոք ամուսնացուցանէ զկոյսն իւր բարուք առնէ, և եթէ որք ոչ ամուսնացուցանէ լաւ ևս առնեն: Այսպէս իմա՛յ զդրոշմն, զկարգ քահանայութեան և զվերջին օծում,

[79] Նույն տեղում, էջ 57:

[80] Նույն տեղում, էջ 58:

[81] Նույն տեղում:

[82] Նույն տեղում, էջ 59:

որք ո՛չ են հարկաւորք և դուռն փրկութեան»[83]: Հարկ է նշել, որ Ֆ. Կոնիբերի կողմից հրատարակված «Բանալու» տարբերակում այս հատվածը գնում է հարցի տակ, սակայն ձեռագրում հարցը ջնջված է և սա անշուշտ պատասխան է[84]:

Մեկ անգամ ևս անդրադառնալով Հիսուսի մարդեղենության իր պիղծ գաղափարին՝ չերեցը հետևյալ միտքն է զարգացնում, թե ինչո՞ւ «Աստուածն ամենայնի զնոր Ադամ սիրելին իւր քանի՞ բանի համար աշխարհս առաքեաց: Պատասխան. Չորս հարկաւոր իրաց. այսինքն նախ՝վասն ըսկզբնական մեղաց պատճառի, երկրորդ՝ վասն ներգործական մեղաց, երրորդ՝վասն միջնորդութեան, հաշտութեան և բարեխօսութեան, զոր այժմ է. չորրորդ՝վասն կատարածի աշխարհի առաքէ զմիածին որդին իւր հայրն ամենակալ և դատել տայ զկենդանիս և զմեռեալս»[85]:

Չերեցն այնուհետև չափազանց հավակնոտ կարծիքներ է ներկայացնում հանդեպ սրբոց և ժխտում հավատացյալների համար նրանց բարեխոսություն ստանալու անհրաժեշտությունը: Նա մերժում է Սուրբ Պատարագի խորհուրդը և իրեն հատուկ մոլագարությամբ խոսում այս առթիվ: Իսկ ի՞նչն է պատճառը, որ չի կարելի ստանալ կամ ունենալ սրբերի բարեխոսությունը, ինչու նրանք չունեն փրկություն և ապաշխարություն պարգևելու զորություն: Այս հարցերին «Բանալու» հեղինակն ունի իր պատասխանը. «Թէ ո՛չ է արժան և հարկ բարեխօսութիւնս նոցա ունիմք. ***քանզի նոքա կարօտ են վասն կենդանաց բարեխօսութեան և ո՛չ կենդանիք նոցա*** (***ընդգծումը մերն է -Հովնան աբեղա***) որպես յայտ է՝ ի խորհրդարանս հերետիկոսաց և հերձուածողաց, զոր՝ի ժամ պատարագի ասեն անդ զուղիղ, թէ քահանայք, թե սարկաւագունք, եթէ դպիրքն, այսինքն Առաքելոց, սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձաց և ամենայն սրբոց եղիցի յիշատակ՝ի սուրբ պատարագս աղաչեմք...»[86]: Այս պարագայում ևս չերեցը դիմում է իր նախասիրած հնարքին՝ Ավետարանից մեջբերելով որևէ նախադասություն՝ պոկում է այն հիմնական մտքից և իր «նազելի աշակերտներին» մատուցում որպես սուրբգրային ճշմարտություն: Այստեղ, օրինակ, անհարկի մեջբերված է փարավոնի կողմից Հովսեփի բանտարկվելու հանգամանքը և նրա տեսիլքը, որը ոչ մի առնչություն չունի սրբոց բարեխոսությունն ունենալու կամ էլ Աստծու արքայությանն արժանանալու հետ:

Սա ևս մեր խոսքի ապացույցներից է, որ «Բանալու» ամբողջ շարադրանքը վայրիվերո մի բարբաջանք է, որում միահյուսված են մինչ այդ գոյություն ունեցած աղանդների «ուսմունքներից» հատվածներ: «Բանալու» հեղինակի նպատակը ոչ այնքան «սեփական ուսմունքը» քարոզելն է, որքան Ուղղափառ Եկեղեցու աստվածաբանության հերքումը: Եթե առաջին խնդիրն իրագործելիս չերեցը չի ցուցաբերում ո՛չ կուռ

---

[83] Նույն տեղում:

[84] Այսպիսի վրիպումներ օքսֆորդյան հրատարակության մեջ շատ կան և Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանում պահվող օրինակի լուսանցքներում, որն ի դեպ պատկանել է Ֆ. Կոնիբերին Ս. Էջմիածնում օժանդակած Կ. Տեր-Մկրտչյանին, կան բազմաթիվ նշումներ: Վրիպումները նկատել է նաև նշանավոր ֆրանսիացի հայագետ Անտուան Մեյեն Կոնիբերի երկասիրությանը նվիրված իր գրախոսական հոդվածում:

[85] «Բանալի ճշմարտութեան», էջ 59:

[86] Նույն տեղում, էջ 59-60:

տրամաբանություն, ո՛չ ինչ-որ նորահայտ միտք կամ գաղափար, որոնք գոնե հայտնի չէին մինչ իր հայտնվելը աղանդավորական «ճակատում», ապա երկրորդ դեպքում նա չափազանց հետևողական է, քանզի խնդիր ունի քայքայել, պառակտել ու նսեմացնել կոնկրետ ու շոշափելի մի կառույց՝ Ուղղափառ Եկեղեցին՝ հանձին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Վերն արդեն նշել ենք, որ Չերեցը, մեղմ ասած, չէր փայլում լայն մտահորիզոնով, աստվածաբանական կրթությամբ ու գիտելիքներով, և նրա հեղինակած թղթոնը պարունակում է բազում տարրական սխալներ: «Բանալիում» առկա են կրկնաբանություններ, որոնք տեղի-անտեղի մեջբերումների տպավորություն են թողնում միայն: Իրեն երևակայելով քրիստոնյա վարդապետության գիտակ և ուսուցիչ՝ սույն ախթարման տգիտության և անտեղյակության բազմաթիվ օրինակներ է մատուցում՝ համեմելով դրանք երկար-բարակ, անտեղի ու անիմաստ մեկնություններով: Ինչպես և բողոքականությունից ծնված բազմաթիվ աղանդավորները, սա ևս մոլագարին հատուկ համառությամբ անընդհատ կրկնում է միևնույն միտքը՝ վերադառնալով ի շրջանս յուր: Խոսքը հատկապես վերաբերվում է մկրտության խորհրդին, որի սեփական մեկնությունը կարմիր թելի նման անընդհատ անցնում է թե՛ «Բանալու» ողջ տեքստում և թե՛ չերեցի կոնկրետ աղանդավորական գործունեության միջով: Ակնհայտ է, որ չերեցը ոչ միայն անընդհատ կապկում է երեխաներին մկրտելու իբր պիղծ վարմունքը, այլև գործով իրականացնում է «նախասկիզբ և ներգործական մեղք ունեցող հասուն մարդկանց» մկրտելու իր դիվային գաղափարը: Արախվլեցի աղանդավորների ցուցմունքներից պարզվում է, որ նույնիսկ չերեցի սատակելուց հետո էլ, աղանդի անդամները միմյանց մկրտել են իրենց «ուսուցչի» հաստատած «ծեսով»[87]:

«Կատեխիզիսի» երկրորդ մասն ընդգրկում է ԻԵ գլուխը և վերնագրված է. «Յաղագս միոյ դատաստանի և ոչ երկու»: Այստեղ «Բանալու» հեղինակը դատողություններ է անում առանձին և ընդհանրական կամ երկու դատաստանի, թե մեկի գոյության ճշմարտացիության շուրջ: Մեղադրում է Կաթոլիկ Եկեղեցուն նախսկզբնական Եկեղեցու ուսմունքից շեղվելու և քավարանի գոյության անհիրաժեշտությունը ընդունելու մեջ և այլն: Սակայն դատողությունների թիրախը լրիվ այլ է: Գիտե՞ր արդյոք մարդ ծնված Հիսուսը դատաստանի օրը, թե ոչ. «Պատասխան. Զի Հայրն Երկնաւոր, Աստուած ճշմարիտ, ո՛չ յայտնեաց զօրն այն Որդւոյն Իւրում սիրելոյ, որպէս և ասէ վասն կատարածի թէ ո՛չ ոք գիտէ, ո՛չ հրեշտակք յերկինս և ո՛չ Որդի, բայց միայն Հայր. այլ ևս ասէ Ես յանձնէ Իմմէ ո՛չ խօսիմ, այլ զոր ինչ պատուեր ետ Ինձ Հայր Իմ զայն խօսիմ: Տեսե՛ր նազելի իմ թէ Քրիստոս Որդին Աստուծոյ յանձնէ Իւրմէ ոչ ինչ կարեր ասել, եթէ ոչ Հայր Նորա յայտնէր Նմա»:

«Կատեխիզիսի» վերջին հարցն ու պատասխանը ևս վերաբերվում են առանձնական դատաստանին և քավարանին. «Հարց... զիա՞րդ ոմանք ուրացողք ասեն հակառակ ընդդեմ ճշմարտութեան Որդւոյն Աստուծոյ թէ գոյ առանձնական դատաստան և քաւարան վասն մեղաւորաց: Պատասխան. Զի նախ ասացի քեզ թէ նոքա են ժառանգ հօրն խաբեութեան, զոր հոգովն նոյն չարին միշտ և հանապազ զսուտ օրէնս և զսուտ պատուիրանս կարգեն: Տե՛ս սիրելի իմ ***զվարժապետն նոցա, որ կերպարանեցաւ ի***

[87] **Աղ. Երցեանց,** Թոնդրակեցի հայք..., էջ109-110:

կերպ կրօնաւորի և քարոզէր նոցա զտանջանս դժոխոց, առ ի որսալ զհոգիս նոցա (***ընդծումը մերն է-Հովնան աբեղա***)»:

«Կատեխիզիսից» հետո վերջին՝ ԻԶ գլխում, որ վերնագրված է՝ «Յաղագս սրբագործութեան մարմնոյ և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բարեխօսին», «Բանալու» հեղինակը փորձում է մեկնել հաղորդության խորհուրդը («Մեկնութիւն սրբոյ խորհրդոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի») և դատափետում է կաթոլիկներին ջրով հաղորդվելու համար. «... գիտէր միջնորդ և բարեխօսն մեր Յիսուս Քրիստոս, թէ ***գալոց են առաւտ փափք և փոխարկելոց են ըստ կամաց իւրեանց*** (***ընդգծումը մերն - Հովնան աբեղա***), որք լոկ հացիւ խափեն զամենեսեան և առնեն զայն մարմին և արիւնն իւրեանց, և ո՛չ թէ քրիստոսի, վասն այսորիկ և տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ. Այս է մարմին Իմ: Նա ևս զայս կամի ասել թէ ով ոք զջուր ինչ, զլոկ հաց ինչ և կամ զթացեալ պատառ ինչ առնէ և բաշխէ խաբեութեամբ զմիամիտ ժողովուրդսն, նոցա է մարմին և արիւն և ո՛չ Քրիստոսի»[88]:

«Բանալի ճշմարտութեանն» ավարտվում է Հիշատակարանով, որից բազմաթիվ թերթեր են բացակայում: Այստեղ նորից են երևակվում ինքնասիրահար հեղինակի մեծամիտ նկրտումները, քանզի ինքը Սուրբ Հոգուց ստացած իր «շնորքը» չէր կարող թաքցնել և չմատուցել որպես ճշնարիտ մեկնություն Տիրոջ խոսքի: Բոլոր ժամանակների ու ազգերի աղանդավորներին հատուկ մտածելակերպ է սա, որը վառ ապացույցն է հեղինակի անհավասարակշիռ և խեղված հոգեկերտվածք ունեցող անձնավորություն լինելու:

Ամփոփելով փաստենք, որ «Բանալու» քննությունը ցույց է տալիս, որ ով էլ լինի սույն թղթոնի հեղինակը՝ Հովհաննես չերեցը, թե մեկ ուրիշը, գործ ունենք էկլեկտիկ, կցմցված մի տեքստի հետ, որտեղ դատողություններ կան քրիստոնեական վարդապետության տարբեր բնագավառների մասին: Դատողություններ, որոնցում նորություն կամ ինչ-որ այլ, մինչ այդ ոչ հայտնի տեսություններ չկան, որոնք այս կամ այն ժամանակաշրջանում կամ էլ այս ու այն աղանդավորական շարժման մեջ չեն արծարծվել: Դեռևս իր ժամանակին ֆրանսիացի մեծ հայագետ Անտուան Մեյեն էր նկատել, որ «Բանալու» հրատարակիչ Ֆ. Կոնիբերը չափազանց շատ էր ոգևորվել դրանում առաջ քաշված գաղափարներով, որոնք նորություն չէին պարունակում և կապ չունեին թոնդրակյանների և առավել ևս պավլիկյանների հետ[89]:

---

[88] «Բանալի ճշմարտութեան», էջ 64:

[89] **Անտուան Մեյե,** Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 571-572:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՉԱՆՇԱՆ ՊԱՏԿԵՐՈՎ ԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Խաչանշան պատկերներով սասանյան կնիքների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի V-VII դդ. պատմության, մշակույթի, կրոնա-դավանաբանական և շատ այլ խնդիրների լուսաբանման համար:



Նկ. 1

Սասանյան մշակույթի հետազոտությամբ զբաղվող գիտնականները քննության ենթակա կնիքներին անդրադարձել են մեծ մասամբ արձանագրություններն ընթերցելու առիթով, և գիտական շրջանառության մեջ գտնվող մեծաթիվ ուսումնասիրություններում հայկական հնագիտական նյութն ու մատենագրական աղբյուրների հարուստ տեղեկություններն անտեսված են: Արդյունքում պատմա-աշխարհագրական միևնույն միջավայրում ապրող ժողովուրդների կերտած մշակութային արժեքների գնահատականը լիարժեք չէ:

Հայաստանի տարածքից մեզ հայտնի խաչանշաններով կնիքները սակավաթիվ են, բայց կարևոր այն իմաստով, որ հայտնաբերված են որոշակի հուշարձանների պեղումներից և շերտագրական թվագրված հորիզոններից (V-VII դդ.):

Դվինից և Էլառից հայտնի երկու կնիքներին վերջերս ավելացավ Երևանի տարածքից պատահաբար գտնված երրորդ օրինակը (նկ. 1)[1]:

Վերջինս մեծ կարևորություն ունի ոչ միայն իբրև արվեստի գործ, այլև հայկական վաղ շրջանի արձանագրություններն ուսումնասիրելու տեսանկյունից:

Դվինի սիստեմատիկ պեղումներից հայտնաբերված շուրջ տասը խաչապատկերներով կնքադրոշմների հավաքածոն[2] (նկ. 2) ամբողջացնում է առ այսօր Հայաստա-



Նկ. 2

[1] ***Э. Хуршудян, Н. Акопян***, Сасанидский золотой перстень с геммой на древнеармянском V-VII вв., Сб. Страны и народы Ближнего и Среднего Востока, т. XVIII, с. 182-187, Ер., 1999.

[2] ***А. Калантарян,*** Раннесредневековые буллы Двина, табл. I, III, V, Ер., 1982.

նից հայտնի քննության ենթակա կնիքների գյուտերը:

Դվինի կնիքի[3] վրա փորագրված է սասանյան կնքագիտության, քանդակագործության, դրամագիտության և արվեստի այլ բնագավառներում հայտնի nišan- «***նշան***» սիմվոլը՝ կիսալուսնի ու փոքրիկ խաչի լրացուցիչ հարդարանքով:

Անտարակույս, կնիքը պաշտոնական է, որովհետև պատկերին ուղեկցում է պահլավերեն սասանյան պաշտոնական կնիքներին բնորոշ «Արդարություն» արձանագրությունը: Ամենայն հավանականությամբ, այս սասանյան կնիքը հետագայում անցնելով քրիստոնյայի ձեռքը, նոր միջավայրի համապատասխան պահանջներից ելնելով, շարունակել է իր գործառույթը (նկ. 3) [4]:



Նկ. 3

Էլառի պեղումների ժամանակ վաղ միջնադարյան դամբարաններից մեկում հայտնաբերվել է սպիտակավուն ոչ թափանցիկ ապակե զանգվածից (օնի՞քս) մի գաբոշոն (կեղծ մատանի) (ՀՊՊԹ 2246/105) 1x1 սմ չափերի (նկ. 4), որի տափակ մակերեսի կենտրոնում խաչապատկերի պարզունակ փորագրությունը երկու կողմից հարդարված է հասկաձև շարունակական գծերից կազմված զարդագոտիներով[5]:



Նկ. 4

Էլառը հանրահայտ է որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն հուշարձաններից մեկը: Հնագիտական և մատենագիտական նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ այն բնակեցված էր նաև վաղ և զարգացած միջնադարում: Տեղում բացվել է վաղմիջնադարյան մի շինության ավերակներ ու Դանիելն առյուծների գբում քանդակներով հարդարված երկու խոյակ[6]: Ինչ վերաբերում է մատենագրական նյութին, ապա Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Կոտայքի սահմանների մեջ ամփոփված Էլառը ժամանակին պատկանել է Զաքարյաններին. «***Յետ որոյ հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լիպարտի անանցանական գրով գՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն գԷլառն և այլ գիւղս յոլով***»[7]:

Եթե ավելացնենք Ավանի հայտնի արձանագրությունը.

«***Ի թուիս ՉԼԴ (1285) յաշխարակալութեան արքայից արքային Արղութեան ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դիմէտրէի ես Դաւիթ, որդի Դէմէտրէ թագաւորին թոռն յաւտարաց տէր լինի Աւանայ և գհաստատեալ գիրս մեր խափանել ջանայ և***

---

[3] ***Ա. Քալանթարյան,*** Դվինի 1978-79 թթ. պեղումները, ԼՀԳ, 1982, էջ 64, թիվ 2, նկ. 2/2:

[4] Տես՝ Das Kitab al-Wafura, wa-l-kuttub al Gahsiyari, Hrsg, von Mzig, Bibliothek arabischer Historiker und Geographen, t. 1, Leipzig, 1926, s. 3.

[5] ***Է. Խանզադյան,*** Էլառ-Դարանի, Եր., 1979, էջ 136, նկ. 147:

[6] ***Է. Խանզադյան,*** նշվ. աշխ., էջ 137, նկ. 148 ա, բ:

[7] ***Ստեփանոս Օրբելեան,*** Պատմութիւն նահանգին Սիսական, Թբիլիսի, 1910, էջ 397:

զշարէտ առնու կամ..., որն, ըստ պրոֆ. Ղաֆադարյանի[8] մեկնաբանության, եթե Զաքարյան Իվանեի, վրաց արքայազն Դավիթ Խութլուբուղայի և Ավանի բնակիչների կապը հաստատող քաղկեդոնական դավանանք էր, ապա միանգամայն պարզ կդառնա, որ 630-ական թվականներից Եզրի կողմից ընդունած քաղկեդոնական դավանանքը, որն ունի ոչ միայն գրավոր հիշատակություն, այլև նյութական մշակույթի հարուստ մնացորդներ, շարունակաբար պահպանվել է մինչև զարգացած միջնադար:

Տրամաբանական է մտածել, որ Կոտայքի սահմաններում ապրող Էլառի բնակչության որոշ մասը, ելնելով տեղի և ժամանակի կրոնա-դավանաբանական իրողությունից, հարել է քաղկեդոնականությանը:

Խորանալով մանրամասների մեջ, նկատելի է, որ Կոտայքի տարածաշրջանի մեջ ընդգրկված Արամուս գյուղում էլ տիրապետող էր քաղկեդոնությունը: Այդ մասին են պատմիչի հետևյալ տողերը. «***Սա ետես նուազեալ զճշմարտութիւնն և քայքայեալ զաթոռ Սրբոյն Գրիգորի և մերձ ի բաժանումն, քանզի երկու կողմանք Յունացն և Պարսիցն զհակառակութեանն բերէին զվէճ առ միմեանս և կամէին Յոնյք հակառակաթոռ նստեցուցանել զոր և արարին յետ սակաւուց. զի Մովսէս նստաւ յաթոռ Սրբոյն Գրիգորի ի Դվին, և Յովհան ոմն Թէոդուպօլիս եղև կաթողիկոս և եկեալ եդ աթոռ ի Կոտայսն, յԱրամօնս գիւղ, զոր յետոյ միապետեաց Աբրահամ կաթողիկոս***»[9]:

Անդրադառնալով կնիքին՝ խաչի պատկերագրական առանձնահատկությամբ, դժվար է որոշել կրողի դավանաբանական պատկանելությունը, քանի որ, ըստ մասնագետների, մինչև VII դարը խաչի ձևերի տարբերությունները շոշափելի չեն եղել[10]:

Սակայն, ելնելով Կոտայքի տարածաշրջանում տիրապետող դավանական իրողությունից, կարելի է մտածել անձի քաղկեդոնական դավանանքի պատկանելությունը:

Խաչանշաններով հարդարված կնիքների վերաբերյալ հայկական մատենագրական աղբյուրների հիշատակությունները շատ հարուստ են:

Հայ հոգևոր դասը հիերարխիկ առանձնահատկությունների նկատառումով տարբեր մատանիներ է կրել: Այսպես, օրինակ, կաթողիկոսական կնքամատանիներն անվանվել են «հայրապետական», և նրանց գործառության շրջանակը եղել է հոգևոր կյանքի վերաբերող կարևոր փաստաթղթերի կնքումը: «***Եւ Բաբգէն Հայոց կաթողիկոս և ամենայն եպիսկոպոսունք... գրեցաք հայերեն և պարսկերեն և կնքեցաւ մերով մատանեաւ***»[11]:

Ղազար Փարպեցու վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորչի մատանին ուներ խաչի նշան «***Եւ դիր զմատանին զգծած խաչի քո***»[12]:

Հատկանշական է արքեպիսկոպոսների կնքամատանիների վերաբերյալ Ստեփա-

---

[8] ***Կ. Ղաֆադարյան,*** Ավանի երկլեզվյան արձանագրությունը, Եր., 1945, էջ 20:

[9] ***Մտեփանոս Օրբելեան,*** նշվ. աշխ., էջ 90-91:

[10] Ըստ հոգևոր սպասքի մասնագետ ***Ն.Հակոբյանի*** բանավոր հաղորդման:

[11] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1910, էջ 47:

[12] ***Ղազարայ Փարպեցւոյ*** Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, ԼԲ, էջ 121-122:

նոս Օրբելյանի հիշատակությունը. «***Ես նուաստս ծառայ Աստուծոյ և Աղվանից արքեպիսկոպոս Տէր Միմեոն, վկա եմ այսմ վճռիս և իմով մատանեաւ կնքեցի զսա***»[13]:

Ն. Ակինյանը Ս. Հռիփսիմեի նշխարները Աղվանից աշխարհ տեղափոխելու շարժառիթով գոյություն ունեցող տեսակետներին ավելացնում է իրենը. «***Մատթե երեցն Դարահաջո, չէր կարող պատմական անձնավորություն համարվել: 618 թվականին, երբ Կոմիտաս կաթողիկոս բացավ Ս. Հռիփսիմեի դամբարանը, գտավ նշխարները կնքված Ս. Գրիգորի և Ս. Սահակի կնիքներով: Ավելցուց անոնց վրա իր ալ կնիքը***»[14]:

Մովսես Խորենացին Հայոց թագավոր Խոսրովին նախարարների հղած թղթի առիթով նույնպես խաչանշան կնիքի վերաբերյալ ունի կարևոր հիշատակություն. «***...Երկրորդ՝ զի դարձուսցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր որ ի մասինդ Պարսից, զոր նստէր յարքունիս. Երրորդ հնարել թափել զմեզ ի կայսերք զի մի վրդովեսցես զբնակութիւնս մեր որք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի: Եւ զայս պայման ուխտի գրեալ և խաչ հաստատեալ կնքեսցես զորս և տեսեալ՝ փութասցուք ի ծառայութիւն Ձեր: Ողջ լերուք մեր***»[15]:

Դժբախտաբար, մատենագրական հարուստ նյութից բացի (չհաշված Երևանի տարածքից հայտնաբերված խաչանշան կնքամատանին) Հայաստանի սահմաններից հայտնի չէ հոգևոր բարձրաստիճան դասին պատկանող արձանագրությամբ որևէ կնքամատանի:

Բրիտանական թանգարանի ֆոնդերում և անհատական հավաքածոներում կան կրոնա-դավանաբանական տարբեր խմբավորումների պատկանող կնքամատանիներ, որոնցից մեկի՝ Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվող կնիքի առանձին ուսումնասիրությանն ենք անդրադառնում: VI-VII դդ. թվագրվող «Աղվանքի և Բաղասականի մեծ կաթողիկոսն» պահլավերեն արձանագրության շնորհիվ (b'n Wblsg'nk'tlsg'nk'tlkws – Alban und Balasagan Katolikos) կնիքն արժանացել է գիտական աշխարհի ուշադրությանը[16]:

Կնիքի մակերեսին պատկերված է քրիստոնեական խաչ, ստորին մասում՝ օղակ, կիսալուսին և աստղ: Կասկածից դուրս է կնիքի սասանյան պատկանելությունը, միայն կաթողիկոսի անվան բացակայությունը մտորումների տեղիք է տալիս: Ահա այդ խնդրին փորձել ենք անդրադառնալ՝ մանրամասնելով Աղվանքի, ապա Բաղասականի իրավա-քաղաքական իրավիճակը VI-VII դդ.՝ քաջ գիտակցելով կրոնա-դավանաբանական սկզբունքների անմիջական արձագանքները ժամանակի տիրող քաղաքական իրականության շրջանակներում:

Հիշատակելի է, որ Աղվանքի բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչը մինչև 552 թվականը, երբ կաթողիկոսանիստ կենտրոնը Կապաղակից փոխադրվեց Պարտավ,

---

[13] ***Ստեփանոս Օրբելեան,*** նշվ. աշխ., էջ 234:

[14] ***Ն. Ակինեան,*** Մովսես Դաշխուրանցի կոչուած Կաղանկատուացի և իր Պատմութիւնն Աղուանից, «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 55:

[15] ***Մովսիսի Խորենացւոյ*** Պատմութիւն Հայոց, Եր., 1981, ԽԸ, էջ 391:

[16] PH. Gignoux, Sceaux chretiéns d'époque sasanide, Pl. I/1, (Iranica Antiqua, vol XV, Gent, 1980.

հիշատակվում է իբրև արքեպիսկոպոս: Անգամ Հովհաննես Գաբեղյանի թղթում Աբասն անվանվում է եպիսկոպոս[17], այլ ոչ կաթողիկոս, ինչպես Կաղանկատվացին է նշում: Վերջինս իր երկրի վարկը բարձրացնելու նպատակով գրում է. «***Թուղթ Յովհաննիսի՝ Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս Աղուանից կաթողիկոս սակս հաւատոյ հաստատութեան***»[18]:

Խնդրին խորամուխ գիտնականներից ոմանց կարծիքով[19], որոնց հետ միանգամայն համամիտ ենք, մինչև 428 թվականը (մինչ մարզպանական ժամանակաշրջանը), Կապաղակն եղել է Աղվանքի հոգևոր կենտրոնը: Այն քրիստոնեական սկզբունքների ընկալման համար ավելի նպաստավոր միջավայր է, քան Չողան: Վայրի խայտաբղետ ցեղերին ընդունելի չէր քրիստոնեությունը և փաստ է, որ նրանք էլ Գրիգոր Լուսավորչին խոշտանգեցին Վատյան դաշտում: Մյուս կողմից, ադրբեջանցի հնագետների՝ Կապաղակում իրականացրած պեղումների շնորհիվ ի հայտ են եկել վաղ քրիստոնեական շատ հուշարձաններ, որոնք հաստատում են Կապաղակի՝ կրոնական կենտրոն լինելու փաստը[20]:

Հավանաբար, երբ Պերոզի կողմից 459 թ. կառուցվեց Պարտավը, ուր Չողայից փոխադրվեց արքունական պալատը, նպատակահարմար էր հոգևոր կենտրոնն էլ Կապաղակից տեղափոխել այնտեղ:

Թե քաղաքական ինչպիսի անցուդարձեր եղան այնուհետև, թվելը դժվար է՝ բյուզանդական արշավանքներ, խազարական հարձակումներ և այլ իրադարձություններ, որոնք, անշուշտ, ազդեցին կրոնա-դավանաբանական խնդիրների վրա: Բայց որ Հայ Առաքելական Եկեղեցուն հավատարիմ մնաց աջակողմյան Քուռի բնակչությունը և հոգևոր դասը, դա փաստ է:

Իսկ ինչպիսին էր Բաղասական աշխարհի իրավիճակը, որի մասին հիշատակվում է կնիքի վրա: Պատմաբանների կողմից այդ երկիրն իր Փայտակարան կենտրոնով պատմականորեն աղավաղված բացատրությունների է ենթարկվել: Երբեմն 387 թվականի Հայաստանի առաջին բաժանումով այն միացնում են Աղվանքին[21], հաճախ էլ 428 թվականի երկրորդ բաժանումով այն կապում են Ատրպատականի հետ[22]:

VII դարի Աշխարհացույցի 591-563 թ. քարտեզում Բաղասականը ներկայացվում է իբրև Ատրպատականի մի քուստակ[23]:

Ատրպատականի կազմում Բաղասական երկրի (Փայտակարան կենտրոնով) հայտնվելու վերաբերյալ մեզ համար կարևորագույն կռվանը Սեբեոսի վկայությունն է 572 թ. դեպքերի կապակցությամբ. «***Յայնժամ յառաջ քան զայս*** (խոսքը 570-71 թթ.

---

[17] Գիրք թղթոց, էջ 81-84:

[18] ***Մովսեսի Կաղանկատուացւոյ***, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 94-98:

[19] ***А. Акопян***, Албания-Алуанк в греколатинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 127.

[20] ***Р. Вандов, В. Фоненко***, Средневековый храм в Мингечауре МКА, т. II, Баку, 1951, с. 80-100. ***С. М. Казиев***, Историко археологические обследование городища Кабалы, МКА, т. V, Баку, 1964, табл. XVI.

[21] ***Ф. Мамедова***, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 126.

[22] ***Н. Адонц,*** Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, с. 230.

[23] ***U. Տ.Երեմյան***, Հայաստանն ըստ Աշխարհացույցի, փորձ 7-րդ դ. հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա, Եր., 1963, էջ 26, 88, 93:

ապստամբության մասին է) ***ի բաց եկաց ի Հայոց անուանեալ ապստամբեալ Վահան իշխան աշխարհին Միւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Միւնեաց ի Դբլնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահիմար Ատրպատականի...***»[24]:

Սակայն տակավին Ն. Ք. II դարից հայացած այս տարածքը պահպանեց իր դիմագիծը և VI դարում: Կորյունի վկայության համաձայն, երբ Մեսրոպ Մաշտոցը շրջում էր Աղվանքի Արսվաղեն թագավորի ուղեկցությամբ, նա Բաղասականի Մուշեղ և Երեմիա եպիսկոպոսների ջանքերով կարողանում է հիմնել դպրոցներ և գիր ու գրականություն տարածել այդ աշխարհամասում[25]:

Թե որքան կարևոր է եղել Բաղասականի եպիսկոպոսության նշանակությունը, երևում է նրանից, որ V դ. Գարդմանի, Կապաղակի եպիսկոպոսությունների կողքին երրորդ տեղում հիշատակվում է Բաղասականը:

Եվ ի վերջո, Զաքարիա հռետորի վկայությամբ հյուսիսի հինգ հավատացյալ ազգերի մեջ հիշատակվում է Բաղասական երկիրը: «***Այս հյուսիսային երկրում կան հինգ հավատացյալ ժողովուրդ, որոնք ունեն 24 եպիսկոպոս, նրանց կաթողիկոսը նստում է Դվինում Պարսկահայաստանի կենտրոնում: Նրանց առաջին կաթողիկոսի անունը Գրիգոր է***»: Այդ հինգ երկրներն են Հայաստան, Վրաստան, Աղվանք, Սիսական և Բազկան (Բաղասական) [26]:

VI-VII դդ. Աղվանքի և Բաղասականի պատմությունը հարուստ է քաղաքական անցուդարձերով, որին ուղեկցում էին նաև կրոնա-դավանաբանական հակասությունները: Դրանցից մեկը, որը մեր կարծիքով առնչվում է ուսումնասիրվող կնիքի պատկանելության հետ, նեստորականությունն էր:

VI դարում նեստորական դավանանքի տարածման վտանգը սպառնում էր ոչ միայն Հայաստանին, այլև Վրաստանին և Աղվանքին:

Հայ Առաքելական Եկեղեցին իր բացասական վերաբերմունքն նեստորականության հանդեպ բացահայտորեն արտահայտում էր ոչ միայն բուն Հայաստանում մղվող պայքարով, այլև ակտիվորեն միջամտում էր Աղվանքի, Վրաստանի և Բաղասականի տարածաշրջանից նրանց վտարելու համար:

Հայտնի է Հովհաննես կաթողիկոս Գաբեղյանի նամակն ուղղված Աղվանքի կաթողիկոս Աբասին, որի առթիվ այն քննարկելու համար հատուկ հավաք կազմակերպեց «***Թուղթ, զոր Տէր Յովհաննես Հայոց կաթողիկոսն և այլ եպիսկոպոսունք առ Աղուանից եպիսկոպոսունս արարին***»[27]: Գիրք Թղթոցում տեղ գտած նամակում հիշատակվում են նաև Աղվանքում հավաքված բոլոր եպիսկոպոսների անունները՝ Բախալարի Մովսես եպիսկոպոսը, Կապաղակի Գրիգոր եպիսկոպոսը, Ամարասի Խորոմաք եպիսկոպոսը, Շաքիի Ամբակում եպիսկոպոսը, Գարդմանի Հովանիկ եպիսկոպոսը, Մեծ Կողմանցի Ղևոնդը և վերջապես Բաղասականի Թիմոթե եպիսկոպոսը:

---

[24] Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Զ, էջ 27:

[25] Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, էջ 70:

[26] ***И. В. Пигулевская,*** Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941, с. 89, 165.

[27] Գիրք թղթոց, էջ 81-84:

Ժողովում քննարկվեց Հայոց կաթողիկոսի նամակը, և նեստորականության դեմ պայքարելու միջոցառումներ մշակվեցին:

VI դարում Սասանյան աշխարհում խառնաշփոթ կրոնա-դավանաբանական վեճերը համահարթեցնելու համար Խոսրով Նուշիրվանը (531-579), որը հայտնի էր քրիստոնեության հանդեպ իր հանդուրժողական քաղաքականությամբ, արքունիքում հրավիրում է «Եպիսկոպոսաց կողմանց Արևելից և Ասորեստանեաց ի դուռն Արքունի»[28] անունով մի ժողով՝ նույնիսկ հետապնդելով նեստորականության դեմ պայքարի միջոցառումը:

Ստեփանոս Տարոնեցին հիշատակում է, որ այդ ժամանակ Աղվանից կաթողիկոսը նստում էր Փայտակարանում. «***Իսկ որք զՔաղկեդոնին, Իվերիոյ և Աղուանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից, որոց զչափաքարն իսկ հրամայեաց տալ***»[29]:

Նույն աղբյուրի ուսումնասիրությամբ դրամագետ Պախոմովը վերահաստատում է Աղվանից արքունիքի և քաղկեդոնությանը հարած Աղվանից կաթողիկոսի՝ Փայտակարանում գտնվելու փաստը[30]:

Միաժամանակ ասորական աղբյուրներից մեկում հիշատակվում է, որ VI դարում Փայտակարանում գոյություն է ունեցել նաև նեստորական եպիսկոպոսություն և նույնիսկ հիշատակվում են երկու եպիսկոպոսների անունները՝ Հովհաննես (536-552) և Հակոբ (544-554)[31]:

Պետք է ավելացնել, որ չնայած մղվող հետևողական պայքարին, նեստորականությունը շարունակեց իր քարոզչական գործունեությունը՝ պահպանելով կենսունակությունը մինչև X դարը: Անանիա Մոկացու (946-968) մասին պահպանված մի հիշատակությունից տեղեկանում ենք, որ գալով Աղվանք, նա իր շուրջն է հավաքում հոգևոր առաջնորդներին՝ նպատակ ունենալով քննարկել նեստորականության դեմ պայքարելու անհրաժեշտությունը[32]:

Ինչպես տեսանք, կնիքի վրա դրոշմած VI-VII դդ. թվագրվող արձանագրության լեզուն պահլավերենն է: Բայց այդ ժանակաշրջանում Աղվանքում տարածված լեզուն հայերենն ու աղվաներենն էր: Վերջինս, ինչպես մասնագետներն են գտնում, լայն կիրառություն չստանալով, աստիճանաբար մարել է:[33]

Մեր կարծիքով կնիքը պատկանել է օրենքից դուրս հայտարարված պարսկալեզու նեստորական ինքնակոչ մի եպիսկոպոսի, որն իր տիտղոսն արձանագրել է, բայց անունն անհայտ թողել կնիքի վրա:

---

[28] ***Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն,*** Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 93:

[29] *Նույն տեղում*, էջ 96:

[30] Материалы и исследования по археологии № 67, с. 17.

[31] J. B. Shabot, Sinodison Orientale ou recueil de synodes nestorriens, Noticas et extraits des manuscripts de la Biblioteques National et autres biblioteques, t. 37, Paris, 1902, p. 345, № 9.

[32] « Արարատ », 1897, էջ 135:

[33] ***Ա. Акопян***, նշվ. աշխ., էջ 136-137:

ԲԱԴԱԼՅԱՆ ՀԱՄՄԻԿ
Պատմական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՌԱՅՈՒ ՕՐԻՆԱԿԱԾ «ՏՕՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

13-րդ դարի 60-ական թվականներին թաթար-մոնղոլական, լենկթեմուրյան բռնակալների պատերազմների ու ավերվածությունների պայմաններում էլ Արևելյան Հայաստանում կազմակերպվում, բարգավաճում և մեծ համբավի են արժանանում Սաղմոսավանքի, Թեղենյաց մենաստանի և, հատկապես, Խոր Վիրապի բարձրագույն տիպի դպրոցները: Ինչպես նկատել է Գարեգին Հովսեփյանը, «…առաջին հերթին դպրոցը վարդապետի անձի հետ էր կապված»[1]:

Վերոհիշյալ երեք դպրոցների հիմնադրումը կապված է միջնադարյան հայ մատենագրության և մշակույթի ականավոր ներկայացուցիչ, հասարակական գործիչ, պատմիչ և մեկնիչ Վարդան Արևելցու անվան հետ, որն իր ծավալած գիտական ու մանկավարժական գործունեությամբ լայն ճանաչում է վայելել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս[2]: Նրա հիմնադրած դպրոցներն աչքի են ընկել կրթական բարձր մակարդակով: Հատկապես առանձնացել է Խոր Վիրապի դպրոցը, որը 60-ական թվականներին համարվել է «տիեզերահռչակ, որտեղ ինքն (Վ. Արևելցին) իբրև զարեգակն փայլէր»[3]:

Հայ միջնադարյան բարձրագույն տիպի դպրոցներում ուսանել են վարդապետական ծրագրով[4]: Այն Վարդան Արևելցին առավել հարստացրել, լրացրել է ուսուցողական նպատակով շարադրված իր քերականական աշխատություններով, մեկնություններով, «Աշխարհացոյցով» և այլ գործերով:

Բարձրագույն տիպի դպրոցում սովորողը պետք է գիտակ լիներ նաև եկեղեցական տոների խորհրդին վերաբերող ճառերին: Այս նպատակով էլ Վարդան Արևելցին ձեռնարկել է «Տօնապատճառ» ժողովածուի վերախմբավորումն ու վերակազմումը[5]: Կարևորելով դասագրքի նշանակությունը, հավանաբար Վարդան Արևելցու հանձնարարությամբ իր աշակերտները կատարել են ընդօրինակություններ: Ուսման մեջ կատարելագործվելու համար Վարդան Արևելցու դպրոցում 6-7 տարի ուսումնառել է

---

[1] **Հովսեփյան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 254:

[2] **Անթափյան Փ.**, Վարդան Արևելցի, հ. 1, 2, Երեւան, 1987:

[3] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 477ա:

[4] Դպրոցում սովորել են սկզբնական կրթություն ստացած պատանիներ, որոնք ավարտել են ուսումը (6-7 տարի), և ստացել հիմնավոր աստվածաբանական և փիլիսոփայական կրթություն, նաև վարդապետական աստիճան: Տե՛ս **Մովսեսյան Ա.,** Ուրվագծեր հայ դպրոցների և մանկավարժության պատմության (10-15-րդ դդ.), Երևան,1958, էջ 444): Դասավանդվել են «եռյակ» և «քառյակ» գիտությունները, «7 ազատ արվեստները»՝ աստվածաբանական և փիլիսոփայական գիտությունների վերաբերյալ առարկաները: Տե՛ս **Մաթևոսյան Ա.,** Հայոց միջնադարյան համալսարանը, Երևան, 1984 թ: **Խաչերյան Լ.**, Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները, «Երևանի համալսարանի գիտ. աշխատություններ», Երևան, 1956:

[5] «Տօնապատճառ» ժողովածուները մեզ են հասել տարբեր խմբագրությամբ, ընդ որում վերջին խմբագրողը Վարդան Արևելցին է: Տե՛ս **Անթափյան Փ.**, նշվ. աշխ., հ. 1, էջ 32, 118:

նաև Կիլիկյան Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններից մեկի՝ Սկևռա վանքի գրչական դպրոցի մեծագույն ներկայացուցիչ Գևորգ վարդապետ Սկևռացին:

Վարդան Արևելցու ուսուցչապետության տարիներին կատարված նման ընդօրինակումներից է Մաշտոցյան Մատենադարանի հմր 3082 գրչագիրը, որի գլխավոր հիշատակարանը պարզում է Գևորգ Սկևռացու ուսումնառության այս շրջանի որոշ մանրամասներ:

Հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը գրվել է 1267 թ. «Ի ձեռն տաբաշխարհիկ պատանւոյ ումեմն թարմատար գրչի Գէորգեա, ի Կիղիկեան նահանգէն յանմատչելի ամրոցէն Ղամբրաւն կոչեցելոյ…, որ ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարհեստ գրչութեան հանձնապաստան…համարձակութեամբ ձեռնամուխ եղև ի գործ, որ ի վեր էր քան զկար նորա այլ… զխարիսխ յուսոյն յԱստուած ընկենլով՝ ձեռն ի գործ արկեալ՝ սատարութեամբ նժդհակցի պանդխտութեանն իւրոյ և դաստիարակի անկատարութեան Յովհաննու քահանայի»[6]:

Վերոհիշյալ գրիչը Գևորգ Լամբրոնացին է, որն իր ուսուցչի՝ Վարդան Արևելցու մասին հիշատակարանում գրել է. «Ի մէծ վարդապետէն և յաստուածազգեաց առնէն Վարդանայ, որ ընդ այն ժամանակս, ի վերա ամենայն մասացն բարեաց՝ որով բոլորն կատարի առաքինութիւն և զուսուցչապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկեալսն յաստուածային ուղղէր ճանապարհ»[7]:

«Տօնապատճառի» ընդօրինակումը Գևորգ Սկևռացին սկսել է «ի տիեզերահռչակ սուրբ ուխտն Վիրապին», Սաղմոսավանքում ավարտել է «զառաջին հատոր սրբոյ մատենիս», իսկ ժողովածուի մնացած մասը վերջացրել է «ի մեծահռչակ, հրեշտակակրաւն աստուածաբնակ սուրբ ուխտս Թեղենեաց»: Պարզվում է, որ Վարդան Արևելցին «ի գործ բարւոք ուսուցչապետութեան» շարունակ մի վայրում չի մնացել, այլ գնացել է տարբեր վանքեր: Այս տեղափոխությունը հետևանք էր նաև քաղաքական իրադարձությունների: Մոնղոլական տիրապետության ժամանակ դժվար էր ապահովել «ժամանակն խաղաղութեան» և «տեղիքն անապատ և անդորր»: Այդ պատճառով է, որ Վարդան Արևելցին իր աշակերտների հետ Խոր Վիրապից տեղափոխվում է «առ մեծ իշխանն Քուրդ»՝ նրա մոտ գտնելով համեմատաբար ապահով վիճակ[8]:

Գևորգ Սկևռացու ինքնագիր հիշատակարանը պարզում է, որ այս ձեռագրի պատվիրատուն «սրբազան քահանա», «սպասաւոր բանի», «բանիբուն ճարտարն», «քաջահանճար հռետոր» Գրիգոր վարդապետն է՝ Վարդան Արևելցու հարազատ եղբայրը, «երկուսն էլ հոգևոր որդիք Գրիգոր եպիսկոպոսի Բջնոյ»[9], «որում յոքնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջ հռետորն….աստուածայնոց տառից՝ սրբազան քահանայն Գրիգոր սպասաւոր բանի, որոյ ներկրդրեալ կամացն բարեսէր յաւժարութեամբ հոգեշուք ալեաւք ծաղկեալ սուրբ ծերունին աստուածապատուեալ արքեպիսկոպոսն տէր Գրիգոր,[10] ընդ նմին և զհամապատիւ ինքեան ձեռնասուն որդեակս իւր հոգևոր զտէր

---

[6] Մ.Մ. 3082, 476ա:

[7] Նույնը, թ. 477ա:

[8] **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 253:

[9] **Ամառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, 1942, էջ 86:

[10] Գ. Հովսեփյանը Գրիգոր վարդապետի մասին գրում է. «Բջնեցի մականունով յայտնի է ձեռագրերի

Վարդան հարազատ եղբարբ իւրով նախահիշեցեալն Գրիգորիւ… որոյ կամաւք և յօժարութեամբ յանկ ելեալ կատարեցաւ պատճառ նամակս տաւնից ի լրումն բաղձանացն Գրիգորի վարդապետի››[11]:

Ձեռագրի տարբեր էջերում կան փոքրիկ հիշատակագրություններ, ուր գրիչը ընթերցողին խնդրում է հիշել ստացողին, որոնցից երևում է, որ Վարդան Արևելցու եղբայրը սովորական անձնավորություն չի եղել[12]: Վերը հիշատակված արքեպիսկոպոսը՝ Տեր Գրիգորը, Բջնիի Գրիգոր եպիսկոպոսն է, ‹‹որ ունէր զվերատեսչութիւն այցելականն դիտման՝ քահանայական դասու կատարող պետութեան Արարատեան նահանգին, ներակայան ունելով զամուրն Բջնի, որ ի նուաղեալ ժամանակիս առինքնասէր վարուք պայծառացեալ իբրև զարեգական փայլէ յաշխարհի››[13]:

Հիշատակարանի վերջնամասում հեղինակը հիշատակում է Գրիգոր վարդապետին՝ ‹‹զհոմանուն սորին›› Գրիգոր քահանային, որը ‹‹ժամանակաց քրտնաջան վաստակաւք և տքնութեամբ›› կրթվել է ‹‹առ ոտս սուրբ և արդիւնական վարդապետին մեծի Վարդանայ…›› հասնելով ‹‹կատարման գիտութեան աստուածային գրոց››[14]: Վերոհիշյալ Գրիգոր քահանան կա՛մ Գրիգոր Բալուեցին է, կա՛մ Գրիգոր Բջնեցին[15]: Հիշատակարանները վկայում են, որ երկուսն էլ կրթվել են Խոր Վիրապի դպրոցում՝ աշակերտելով Վարդան Արևելցուն: Մադենադարանի հմր 1216 ձեռագրի ինքնագիր հիշատակարանում Գրիգոր Բջնեցին իր մասին գրում է. ‹‹…Ես Գրիգոր սպասաւոր բանի…ազգաւ Տամբատեցի, որ և մակադրեալ կոչեցայ Բջնեցի, սնեալ և վարժեալ առ ոտս տիեզերալոյս սուրբ և երանաշնորհ րաբունապետին Վարդանայ››[16]:

Ձեռագրի գրիչը նույնպես վկայում է. ‹‹…րաբունի վարդապետն Գրիգոր մականուն Բջնեցի, բարի անուն, լեալ աշակերտ մեծ վարդապետին Վարդանայ››:[17] Գրիգոր Բալուեցին իր մասին հիշատակում է. ‹‹Եւ գնացեալ դադարէր յարևելս՝ յԱրարատեան գաւառն ի վանքն Վիրապի առ հռչակաւոր իմաստասէր Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նորա Խ (40) աշակերտաւք››[18]: Գևորգ Սկևռացու հիշատակած Գրիգորը հավանական է, որ Գրիգոր Բջնեցին է: Ձեռագրի 360բ-361բ թերթերում գրված ‹‹Յաղագս Տարեմտին ի Վանական վարդապետին ասացեալ›› հատվածի ընդօրինակումը կատարվել է Գրիգոր Բջնեցու ձեռքով: Այս փաստը ապացուցվում է ձեռագրական համեմատությունների միջոցով:

Մեծ է հիշատակարանի պատմական արժեքը: Այն հարուստ է ժամանակի քաղա-

---

սպացող – մասնակից Սրբեփանոս Օրբելյանի գլխավորությամբ ընդդեմ Ամավարզեցու գումարած ժողովին››, **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 260: **Անթափյան Փ.,** նշվ. աշխ., էջ 44:

[11] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 476ա:

[12] ‹‹Զսրբազան վարդապետն Գրիգոր՝ զսպացող սուրբ մպտենիս – զԳէորգ անարհեսպ գրիչ յիշել ի բարի մաղթեմ (470ա): ‹‹Զերջանիկ – զսրբազան արքեպիսկոպոսն զտէր Գրիգոր – նորին ձեռնասուն քահանայ Գրիգոր՝ սպասաւոր բանի յիշել աղաչեմ ի Տէր›› (100ա): ‹‹Զթարմապար գրիչս – զիւր ըղձալի փենչաւք սպացիչն այսր շարագրածութեան զԳրիգոր քաջահանճար հռետոր յիշման բարւոյ ի հանդիպելոցդ մաղթեմ արժանի լինել›› (108բ): Նման հիշատակագրություններ կան նա– 109բ ,198բ, 340 բ , 398ա թերթերում:

[13] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 476ա:

[14] Նույնը, թ. 477բ:

[15] Տե՛ս **Հովսեփյան Գ.,** Ջագավանից ժողովը, ‹‹Շողակաթ››, Վաղարշապատ, 1913, էջ 46:

[16] **Մաթևոսյան Ա.**, ԺԳ դարի հիշատակարաններ, Երևան, 1989, էջ 533-534:

[17] Նույնը, էջ 534:

[18] **Մանանդյան Հ., Աճառյան Հր.,** Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 45:

քական իրադարձությունների արձանագրմամբ, պատմական կարևոր դեպքերի գրանցմամբ. «Ի շրջագայութեան ամենակաց թուաբերութեան Հայկականս ազին տաւմարի, յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ թուով վեցեկաւ ընդ տասնեկի շարամանելոյ /1267/ ի բռնակալութեան կողմանցն արևելից բաժնին Ասիոյ, ի վերա յոլովից տիրեալ ազգաց՝ խուժադուժ և բարբարոս ազգին նետողաց, ընդ որոյ գրաւեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան ևս առաւել Տունս Հայոց»[19]:

Գրիչը վավերացնում է երկրում տիրող իրավիճակը՝ արտահայտելով այդ ամենի նկատմամբ իր վերաբերմունքը: Պատկերավոր նկարագրություններով ներկայացնում է այն վշտալի իրողությունները, որ կատարվել են Կիլիկիայում և հատկապես Մսրա Սուլթանի արշավանքը. «Բազմաձեռն զաւրու պատրաստութեամբ մահմետական սպայիւ իբր ի ցասմանէ Աստուծոյ ածեալ՝ եմուտ յերկիրն Կիլիկիոյ, որում ոչ կարեցեալ ցդէմ ունել զաւրքն Հայոց, անդէն վաղվաղակի թիկունս դարձուցեալ, պարտեալ, յաղթեալ, լքեալ, վայրավատնեալ, ցրուեալ լինէին», ինչպես նաև Հեթում թագավորի երկու որդիներից Թորոսի սպանությունը՝ «կրտսերն սրախողխող եղեալ», Լևոնի գերությունը՝ «զերեցն գերի վարէին… և ընդ ցրուեալ զաւրացն, զի և թագաւորն ևս ոչ եղև պատահեալ յերկրին»:

Այնուհետև գրիչը մեծ դառնությամբ պատմում է բազում ավերածությունների և բռնությունների, բնակավայրերի հրդեհման, եկեղեցիների ավերման, ձեռագիր մատյանների հրի մատնելու, Սիս մայրաքաղաքի այրման՝ «գեղեցկաշէն ապարանաւք և մեծափառ եկեղեցական Սրբովն Սոփեաւ», ժողովրդի գերեվարության, նրա կրած անասելի զրկանքների ու տանջանքների և ավարառության մասին: Այս դեպքերը գրիչը ներկայացնում է որպես նախորդ տարի կատարված իրադարձություններ. «Ջի յանցելում ամի ներգրութեան այսր մատենի»: Հիշվում է նաև Կոստանդին կաթողիկոսի մահը՝ «մաւտ ի լնուլ ամին»:

Համատարած բռնությունների ու անիրավությունների, անվերջ պատերազմների հետևանքով աստանդական էր դառնում ոչ միայն ժողովուրդը: Հափշտակվում, կորստյան էին մատնվում արվեստի և մշակույթի թանկարժեք իրեր: Ավարի մաս էին կազմում և տարվում գերի նաև գրչագրերը՝ «ցանկալի և պատուական աւանդ հնութեան ի նախնեաց առ մեզ հասած փափաքելի և հետազօտելի նշխարքները»[20]:

Նման ճակատագիր ունի և Գևորգ Սկևռացու օրինակած «Տօնապատճառը»: Ձեռագրում պահպանվել է ձեռագրի գերության մասին Թումայի հիշատակարանը[21]: Այն գրվել է 1410 թվին: Հիշատակարանից տեղեկանում ենք, որ «յորժամ եկ Թամուրի որդին Ամիրզայն» Բաղեշի վրա, թալանի ժամանակ ձեռագիրը տարվել է գերի «ի Թաւրէժ»: Ինչպես երևում է, գրիչը այն մարդկանցից է եղել, որոնք գիտակցել են գրքի հարգը: Կորցնելով այն՝ Թուման շատ է տանջվել. «Ամենայն ժամ լալոտ աչաւք կացի և աղեխարշեալ ընդդեմ սմա»,- գրում է Թուման: Սակայն իր նվիրական մատյանը փրկելու, ազատելու ոչ մի հնար չի գտել: Ի ուրախություն Թումայի 1410 թվին գիրքը ազատվել է «գերությունից» և վերադարձվել տիրոջը:

Գրչագիրը գերեվարության ժամանակ շատ է վնասվել և տուժել. «Թուլացեալ և

[19] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 276բ:

[20] **Զարբհանալյան Գ.,** Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 69:

[21] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 260բ:

բրդացեալ են կրունք գրոցս,- նշում է գրիչը,- կտրատեալ և խաւարեալ»: Չնայած ձեռագրի այսպիսի անմխիթար վիճակին, Թումա գրիչը գոհունակությամբ է ընդունում իր թանկարժեք մատյանը՝ «Գիրքս եկաւ»՝ առաջնորդվելով այն համոզմամբ, թե ամեն ինչ անցավոր է, միայն Բանն է հավերժական:

Ձեռագրի 478 էջում զետեղված է ուշ շրջանի մի հիշատակարան: Այն վկայում է, որ ձեռագիրը նորոգվել է 1631-ին «ձեռամբ փծուն գրչի, նուաստ քահանայի»: Գրիչը չի հիշատակում իր անունը: Գրչագիրը ստացել է Բարսեղ վարդապետը՝ «վերադիտող Համիթ մայրաքաղաքի»՝ «ի հալալ արդեանց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ և հոգևոր ծնաւղն իւրոյ և ուսուցիչն տէր Սրապիոն վարդապետին, որ եղև կաթողիկոս և անվանեցաւ Գրիգոր»: Ձեռագիրը որպես հիշատակ դրվել է «ի դուռն Ս. Առաքելոցն»: Գրիչը, իմանալով ձեռագրի արժեքը, նզովքներ է ուղղում այն մարդկանց, ովքեր կհանդգնեն հանել «զսա ի դրանէ Սուրբ Առաքելոցն ծախելով կամ գողանալով կամ գրաւ դնելով ոչ ի մերոց և ոչ յաւտարաց, և թէ ոք յանդգնի՝ զմասն Կայենի և Յուդայի և խաչ հանոցն առցէ»[22]:

Ձեռագրում շատ պարզ երևում են նորոգման հետքերը, որոնք կատարվել են բավական վարպետությամբ, խնամքով և հոգատարությամբ: Նորոգողը վնասված մասերը վերականգնելով՝ լրացրել է աղճատված բառերն ու նախադասությունները: Երբեմն թղթի պատռված մասն այնպես է նորոգվել, որ տեղը հազիվ է նշմարվում: Ձեռագիրը նորոգվել է երկու անգամ՝ 1631-ին և 20-րդ դարում: Ձեռագրին հետագայում հանդիպում ենք Կարապետ արքեպիսկոպոսի ձեռագրերի ընդհանուր ցուցակում, որը հետագայում մտել է Գևորգյան հավաքածուի մեջ:

Ձեռագիրը կազմված է 20,3-10 մեծության թղթե 478 թերթերից[23]: Այն բավական տուժել է. 1-23 թերթերի գրադաշտից պահպանվել է միայն մի փոքրիկ հատված, որը մինչև 163 թերթը աստիճանաբար մեծանում է: 169 թերթի ձեռագիրը պահպանված է ամբողջությամբ՝ մասնակի նորոգումներով:

Գեղեցկագիր է Գևորգ Սկևռացին: Նա լիարժեք տիրապետել է «արուեստ գրոյն»: Ձեռագիրը գրված է հստակ, վարժ, անկաշկանդ գրչությամբ: Գրիչը միաժամանակ օգտագործել է հայերեն գեղեցիկ բոլորգրի հետ հին աղյուսակագիրը, ինչպես նաև երկաթագիրը: Ձեռագիրը գրված է սև թանաքով: Հիմնականում վերնագրերը ուղղագիծ երկաթագիր են և գրված են կարմիր թանաքով: Կարմիր բոլորգրով գրված են նաև ենթավերնագրերը: Գրիչը որոշ հատվածների սկզբում և վերջում գրում է հունարեն[24]: Ձեռագրի 360բ-378բ, 420բ-429բ թերթերը գրվել են այլ գրչի ձեռքով: 378բ էջի հիշատակությունը հայտնում է, որ այդ նյութերի ընդօրինակումը կատարվել է Մանվել գրչի կողմից. «Եւ ի վերայ այսր ամենայնի զՄանվել գրիչս յիշեցէք»: Ձեռագրական համեմատությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ 360բ-361բ թերթերի ընդօ-

---

[22] Նույնը, թ. 478ա

[23] Ձեռագրի արտաքին նկարագրությունը հետևյալն է. մեծություն՝ 20,3-10, նյութը՝ թուղթ, գրությունը՝ միասյուն, տողերի քանակը՝ 32, կազմը՝ մուգ շագանակագույն դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ սրճագույն կտավ, սկզբից և վերջից ունի մագաղաթյա պահպանակ՝ բոլորգիծ, երկաթագիր, Ավետարան: Պրակ՝ Ա-ԼԸ, (ԼԱ պրականիշը կրկնված է): Ա-ԼԱ պրակներից 10-ական թերթ ունեն Գ, ԺԵ, ԺԶ, ԼԱ, ԼԲ-ն՝ 11, ԼԴ՝ 8, ԽԱ, Լ, ԼԳ, ԼԴ՝ 7,ԺԲ, ԻԳ՝ 4: Մնացած պրակները բաղկացած են 12-ական թերթերից: 4-ական թերթերից կազմված պրակը թերի չդիտվելու համար գրիչը ԺԲ պրակի ստորին լուսանցքում զգուշացնում է. «Այս տետրս Դ թուղթ է»:

[24] Նման նշումներ կան 138 ա,143ա, 167 ա,131ա,143ա թերթերում:

րինակումը, հավանաբար, Գևորգ Սկևռացու ինքնագիր հիշատակարանի վերջում հիշատակված Գրիգորն է կատարել՝ Գրիգոր Բջնեցին:

Բացի «Տօնապատճառ» ժողովածուից, ձեռագրում ընդօրինակվել են Հովհաննես Սարկավագի «Յաղագս մեծ թուականին» (386բ-368բ), Ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ խոստովանութեան» (420բ-431ա), Անանիա Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից» (451բ-475ա), ինչպես նաև «Պատճէնք տոմարաց հայոց և հռոմացեցւոյ» (379ա-386բ) և «Յանկ Յայսմաւուրաց» (389ա-420բ) նյութերը: 474բ թերթում գրիչը ավանդել է իր մորեղբորը՝ Գրիգոր Սկևռացուն նվիրված մի բանաստեղծություն, որի տների սկզբնատառերով շարահարվում է «Գևորգ պատանին է գրեաց», իսկ վերջին տողերով՝ «Գրիգորի վարդապետին»:

Գրիգոր Սկևռացին թեև լավագույնս էր տիրապետում գրչության արվեստին, սակայն խնդրում է անմեղադիր լինել անգամ աննշան թվացող գրչական թերություններին համար: 111ա թերթի տողատակում Գևորգը նուրբ շղագրով գրում է. «Մակար իմ աչքս ելեալ էր քան այսմ հանդիպել, բայց իմ աներկեղութենէ չէր, գիտէ Քրիստոս»: Գրիչը նկատի ունի անզգուշաբար թափված թանաքը, որը վնասել էր բնագրից մի փոքր հատված: Ընթեռնելի լինելու համար գրիչը թափված թանաքի տեղում գրել է կարմրով, ապա վրայից՝ սևով:

Ձեռագրում հանդիպում ենք նաև գրչության գործիքի հիշատակության: Գևորգ Սկևռացու գրիչը պատրաստված է եղել կաղնու փայտից: Գևորգ պատանին ափսոսանքով նշում է. «Տակաւին կաղնի է գրիչս, աւաղ թշվառութեանս»[25]: Հմուտ վարպետի ձեռագրով ավանդված և մեզ հասած այս բնագիրը գրչության արվեստի կարևոր և գեղեցիկ հուշարձաններից է:

«Տօնապատճառ» ժողովածուի և ՄՄ 2771 ձեռագրի բնագրագիտական համեմատությունը հնարավորություն տվեց վերականգնել ինչպես գրչագրի վնասված էջերի բովանդակությունը, այնպես էլ ժողովածուի մեջ ընդգրկված նյութերի ցանկը, որը ժողովածուի բովանդակության և կառուցվածքի մասին հստակ պատկերացում է տալիս:

1. Վասն Դաւթի և Յակոբայ – Սկիզբն տօնից և հոգևոր ուրախութեանց… 11ա-17բ
2. Ի յիշատակի Նախավկային - Ասուածազարդ շուք տօնիս… 17բ-23բ
3. Պետրոսին և Պաւղոսին - Յաստուածաբար սքանչելացն բազումք են… 23բ-8բ
4. Յովնանու և Յակովբի - Աստուածահրաման պատուէր ունէր Իսրայէլ՝ զսկիզբն տաւնին… 28բ-33բ
5. Յաղագս Յայտնութեան ճրագալուցին – Ըստ արարչագործ նորոյ արարչութեան… 33բ-8բ
6. Պատճառ աւուրց արարչութեան – 38բ-70բ
7. Պատճառ Եբրայեցւոց թղթոյն, Սրբոյն Եփրեմի պատճառ թղթոյն – Ի սկզբանէ իսկ թղթոյս ծուփ և խնդիր անկաւ… 70բ-5ա
8. Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառին - Աստուածայայտնութեան խորհուրդ… 75ա-83ա

[25] ՄՄ թ. 3082 ձեռ., թ. 295ա

9. Պատճառ Առաջաւոր պահոց – Յոլովք են բանք վասն այսր պահոց… 83ա-4ա
10. Խորհուրդ Տեառնընդառաջի Քառասնաւրեայ գալստեանն – Փետրուարի ամսոյ, որ աւր չորեքտասան է… 84ա-9բ
11. Յաղագս Բուն Բարեկենդանին – Վասն բարեկենդանին յետին կիւրակէի… – 89բ-100բ
12. Պատճառ Երկրորդ կիւրակէին - Արդ զոր ինչ ընթերցմունք են այսր աւուր… 100բ-2բ
13. Պատճառ Երրորդ կիւրակէին – Սքանչելահրաշ են խորհուրդք միաշաբաթու աղուհացիցն… 102բ-6ա
14. Պատճառ Չորրորդ կիւրակէին - Սքանչելահրաշ համեմատութեամբ կապեալ… 106բ-9ա
15. Պատճառ Հինգերորդ կիւրակէին - Ահաւոր և մեծ է խորհրդոյն Աստուծոյ զօրութիւն… 109ա-115ա
16. Տեսութիւն առաւօտս աւետարանին – Ի Մարկոսի աւետարան ասացեալ… 110ա-11ա
17. Տեսութիւն առաքելոցն - Այսուհետև եղբարք իմ… 111ա-3ա
18. Տեսութիւն ճաշոց աւետարանին – Իբրև հարցաւ ի փարիսեցւոցն… 113ա-5ա
19. Պատճառ Վեցերորդ կիւրակէին - Այն որ նախքան զսա… 115ա-9ա
20. Կարգ և խորհուրդ Յարութեանն Ղազարու - Այս տաւն, զոր կատարէ եկեղեցի… 119ա-23ա
21. Խորհուրդ գալստեան Տեառն յԵրուսաղէմ յաւուր Ողոգոմենին - Զսուրբ արմաւենեացս աւր… 123ա-34ա
22. Խորհուրդ գալստեան Տեառն ծառզարդարի – 130ա-3բ
23. Կանոն Մեծի Երկշաբաթին - Այսր շաբաթու պահք մեծի պասքն… 134ա-6ա
24. Մեծի աւուր Երկշաբաթին – Ըստ կարգի առաջնոյն… 136ա-8ա
25. Մեծի Չորեքշաբաթին խորհուրդ - Եւ երևեցաւ Աստուած Աբրաամա… 138ա-9բ
26. Մեծի աւուր Հինգշաբաթին - Այսմ աւուր սահմանեալ կանոնս… 139բ-44բ
27. Յաւուր Մեծի Ուրբաթին – Որպես զի մեծ են գործք… 145ա-56ա
28. Յաղագս ճրագալուցին խորհրդոց [սաղմոսաց և բովանդակ պահոց] - Զի որպէս սգալի արարածք յաւելուածով հասին… 156ա-9բ
29. Ըստ Յովհաննու Աւետարանին – Յետ այսորիկ աղաչեաց… 160ա-7ա
30. Վասն Զատկին քեզ վայել է աւրհնութիւն – Իսկ կիւրակէին առաւաւտուն ժողովին… 167ա-8բ
31. Պատճառ տաւնի Աշխարհամատրան-Ի շինելն Կոստանդիանոսի… 168բ-9բ
32. Յաղագս վերացման Տեառն ի Ղուկայ աւետարանէն – Մինչդեռ ամենայն տաւնի… 170ա-4ա
33. Յովհաննու Ոսկեբերանի ի գործոյն Մեկնութիւնէ սկիզբն - Բազմացն գիտելի է մատեանս… 174ա-9ա
34. Երկրորդ գալստեանն պատճառ - Եղիցին գաւտիք ձեր պնդեալք… 179ա-81ա
35. Յաղագս իջման Սուրբ Հոգւոյն - Բարի է Աստուած… 181ա-5ա
36. Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Հաւատամքի- Հայր ամենակալ… 185ա-6բ
37. Յաղագս Տապանակին խորհրդոյ - Եւ արար Բեսէղիէղ զտապանակն… 186բ-

91ա
38. Յաղագս տաւնի Վարդավառին-Երևելի արեգակն է ծագելէ Իւրում…191ա-8ա
39. Յաղագս Շողակաթին սուղ ինչ պատճառ բանից-Անդրդուելի հիմնահաստատութեան… 198բ-203ա
40. Ի ննջումն Աստուածամաւր կուսին – Ի գերազանց լուսոյն… 203ա-9ա
41. Վարդանայ Վարդապետի Յաղագս Նաւակատեաց եկեղեցոյ ի բանն առաքելոց տեսութեան յայն, որ ասէ Քրիստոս եկէք – Ի գերազանց լուսոյն… 209ա-15ա
42. Ի խորհուրդ Սուրբ Եկեղեցւոյ - Բարեբանեցէք զԱստուած յեկեղեցիս… 215ա-22ա
43. Յաղագս Սրբոյ եկեղեցւոց ի տաւնին որ ի Տրէ ամսեան կատարի – Ի բազմաց զանազան կարգեաց… 222բ-4բ
44. Յաղագս սրբոյ եկեղեցոյ յԱռակացն Սողոմոնի-Աստուածային իմաստութեամբն… 224բ-30բ
45. Ի մեծի տաւնի Սրբոյ Խաչին զոր Խաչավերաց ասեմք – Ի ժամանակս մեծին Կոստանդիանոսի… 230բ-36ա
46. Յաղագս հիմնարկութեան եկեղեցւոյ – Ժողովէ աստուածային քահանայապետն ի տեղին նուիրեալ… 236ա-7բ
47. Յաղագս Նաւակատեաց եկեղեցւոյ – Մտանեն երեկոյին ի հսկումն յեկեղեցին… 237բ-41ա
48. Պատճառ սրբոց մարտիրոսաց – Յորժամ լուսաւորին հարք հոգևորք… 241ա-3բ
49. Վասն սրբոյ նախահարց – Նախահարք ասին Աբրաամ և որք զկնի նորա են… 244ա,բ
50. Ի խորհուրդ մեծի ուրբաթուն կամաւոր և փրկագործ չարչարանաց և մահու Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի բանն Եսայեայ, որ ասէ Տէր ո հաւատաց լրոյ մերոյ՝ Տեսութիւն սրբոյ հաւրն և մեծ հռետորին Գրիգորի Սկևռացւոյ, զոր արարեալ է ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Կոստանդեայ տեառն Ղամբրաւնի - Աստուածային խորհրդոցն հազարապետն զարմանալին… 245ա-60բ
51. Բացայայտութիւն առաջին քարոզին գիշերոյ – Ընդ Աստուծոյ և վասն Աստուծոյ… 261ա-71ա
52. Աղաւթք երկրորդ քարոզ մեկնութեան - Զքեն գոհանամք Տէր Աստուած մեր… 264բ-70բ
53. Երրորդ քարոզին մեկնութեան – Վասն գիշերի և ի տուընջեան… 270բ-9բ
54. Չորրորդ քարոզ մեկնութեան – Վասն ուղղելոյ զգնացս մերք ճանապարհս… 279ա-81ա
55. Քարոզ վասն գտանելոյ մեզ շնորհս և ողորմութիւն - Բազում անգամ յայտարարի… 281-4ա
56. Յուդայ զքեզ աւրհնեն եղբարք քո… 284ա-92բ
57. Աւրհնեալ ես Աստուածազարդ Քրիստոսապսակեալ փայտ սուրբ… 292բ-9ա
58. Բացայայտութիւն երկիր և ի նմանէ ելցէ հաց… 299ա-302ա
59. Արմատ և սկիզբն ամենայն բարեաց է իմաստութիւն Աստուծոյ… 302ա-13ա
60. Խորհուրդ Վարդավառին – Խորհուրդ աւուրս յանուանէն… 313ա-22բ

61. Յաղագս խաչի- Դարձեալ թև նա ոք ելեալ… 322բ-7բ
62. Դաւթի քահանայի ի բանն մարգարէական որ ի Մաղաքիայ է եթէ որդի փառաւոր առնէ զհայր և ծառայ երկնչի ի Տեառնէ իւրմէ - Ամենայն մարգարէքն… 327բ-9ա
63. Նախադրութիւն թղթոյն Յակոբա… 329ա-35ա
64. Նախադրութիւն առաջին թղթոյն Պետրոսի – Պետրոս ինքնին գրեաց… 335ա-8ա
65. Նախադրութիւն առաջին թղթոյն Յովհաննու – Յովաննէս, որ զաւետարանն գրեաց… 338ա-41ա
66. Որդեակ աճեցեալ Յովսեփ, որդեակ իմ նախանձելի… 341ա-8ա
67. Նայեցարուք երկինք և լուիցէ երկիր… 348ա-56ա
68. Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ Իմմէ… 356ա-60բ
69. Յաղագս Տարեմտին Վանական վարդապետէն ասացեալ… 360բ-6ա
70. Պատճառ Նոր կիրակէի և աւետարանաց կարդացման – Ոմն յիմաստնացն ասացեալ է… 366ա-8ա
71. Աստուածասգեաց Իգնատիոսի Յաղագս կարգաց եկեղեցւոյ - Աստուածապետական առաջնորդն մեր լուսաւոր… 368ա-9բ
72. Դրուատ ասացւածոյ ի բանս Եսաեայ որ ասէ- Վասն այսորիկ այսպէս ասէ… 369բ-7ա
73. Խորհուրդ պատարագի – 377բ-9ա
74. Ամիսք Հայոց, քանիք կրկնակ, կիսակ…-379բ-88բ
75. Տաւնք սրբոց վկայից, զոր կատարէ եկեղեցի որ քանակութեամբ Հայոց և Հռոմոց ամսովք… 389ա-98բ
76. Ստեփանոս այր լի շնորհաւք և զաւրութեամբ առնէր արուեստս…398բ-420ա
77. Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեաց Եկեղեցւոյ գրեալ ի Ներսիսէ հայոց կաթողիկոսէ- Խոստովանիմք զամենասուրբ… 420բ-4ա
78. Ոսկեբերանի պատճառք թղթին Գաղատեաց - Բազում ցասմամբ լի է սկիզբն բանիս… 424բ-6բ
79. Սրբոյ Եփրեմի պատճառք Գաղատացոց թղթին-Գաղատացիքն աշակերտաց… 424ա
80. Գրիգոր Երուսաղէմացոյ Սահմանք զանազանք- Զինչ Աստուած…431ա-7բ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԻ ԴՐՎԱԳ ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՊԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(XIV դարի առաջին տասնամյակ)

Դարեր շարունակ Հայ Եկեղեցին կարևոր դեր է խաղացել ոչ միայն ժողովրդի հոգևոր կյանքում, այլ նաև քաղաքական հարցերում: Եկեղեցու դերը ավելի ուժեղացավ այն ժամանակ, երբ պետականության բացակայության պայմաններում նա փորձեց իր վրա վերցնել նաև **կառավարման** որոշ գործառույթներ: Եկեղեցին էր նաև այն հզոր ուժը, որն առաջնորդում էր ժողովրդին ազատագրական պայքարում՝ ընդդեմ թշնամիների: XIV դ. առաջին տասնամյակում դեռևս պատմության թատերաբեմում էր գտնվում Կիլիկիայի հայկական թագավորությունը, որի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում Հայ Եկեղեցին: Սա կարևոր է ոչ միայն հայոց պատմության, այլ նաև Հայ Եկեղեցու պատմության ուսումնասիրման համար: Մասնավորապես առանձնահատուկ ուշադրության է արժանի այս շրջանում Հայ Եկեղեցու հարաբերությունները Հռոմեական Եկեղեցու հետ: Մինչև օրս էլ երկկողմ եկեղեցական հարաբերությունները շատ քիչ են ուսումնասիրված և մի շարք հարցերին տրված չեն սպառիչ պատասխաններ: Հայտնի է, որ դեռևս 1149 թ. Գրիգոր Գ. Պահլավունին Եփրատ գետի ափին[1] գտնվող կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Հռոմկլա բերդը. «Փոխեաց զաթոռն հայրապետական ի բերդն, որ կոչի Հռոմկլայ»[2]:

Ինչ վերաբերում է հայ-հռոմեական եկեղեցական հարաբերություններին, ապա ինչպես նշում է հետազոտող Ա. Զամինյանը, դրանք սկսվել են դեռևս XI դարի վերջերին, երբ Արևմուտքի խաչակիրները մտան Մերձավոր Արևելք՝ Սուրբ Գերեզմանն անհավատներից ազատելու համար[3]: Հայերը բավականին սերտ հարաբերություններ հաստատեցին խաչակիրների հետ, և քանի որ Արևմտյան Եվրոպայում իշխանությունը Հռոմի պապերի ձեռքին էր, ուստի նրանց հետ ևս սկսեցին հարաբերություններ հաստատել՝ թղթակցությամբ և պատգամավորությամբ: Այդ հարաբերությունների արդյունքում էլ հրապարակ իջավ Հայ և Լատին Եկեղեցիների միության խնդիրը: Հայ կաթողիկոսներն ու իշխանները, պապերից քաղաքական օգնություն ստանալու ակնկալիքով, որոշակի զիջումների գնալու պատրաստակամություն հայտնեցին, որն էլ, անշուշտ, պետք է որոշակի դժգոհություններ առաջ բերեր ինչ-

[1] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 108: Այդ մասին տե՛ս նաև **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 174: Տե՛ս նաև **Ա. Զամինյան**, Հայ Եկեղեցու պատմություն, Երևան, 1992, էջ 100, **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 373, **F. Tournebize**, Historie politique et reliqieuse de L'Armenie, Paris, 1910, p. 238:

[2] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 108:

[3] **Ա. Զամինյան**, նշվ. աշխ., էջ 92-93:

պես պատմական Հայաստանում, այնպես էլ բուն Կիլիկիայում:

Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերություններն ավելի ջերմացան XIV դ. սկզբներին, երբ Արևելքում վերացան խաչակրաց պետությունները[4], իսկ Կիլիկիայի դաշնակից մոնղոլներն էլ թուլացան: Նման պայմաններում հայոց արքունիքն իր հայացքը հառեց դեպի Արևմուտք, մասնավորապես Հռոմ՝ Պապի միջոցով ցանկալի օգնություն ստանալու համար: Նման փորձեր կատարվել էին նաև նախկինում՝ XIII դարում՝ 1274 թ., 1288 թ. և այլ թվականներին[5]: XIV դ. սկզբին Կիլիկյան Հայաստանը շարունակում էր իր գոյամարտը շրջակա իսլամադավան տերությունների ոտնձգությունների դեմ, և պետության ղեկավարների մի մասը ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ էր փնտրում, որոնցից մեկն օգնություն ստանալու ակնկալիքն էր Արևմուտքից:

Կիպրոսը և Կիլիկյան Հայաստանը շարունակում էին մնալ Արևմուտքի քրիստոնեական երկու հենարաններն Արևելքում: Եվ Կիլիկյան Հայաստանով էր, որ անցնում էին դեսպանները, քարոզիչները և այլն[6]: Բացի այդ, հայ իշխաններից շատերը և արքաների մի մասը կապված էին Արևմուտքի հետ խնամիական կապերով[7]: Կիլիկիայի հայկական թագավորության և Մերձավոր Արևելքի իսլամադավան պետությունների հակամարտությունը Արևմուտքում ընկալվում էր որպես քրիստոնեության և իսլամի պայքար՝ «սրբազան պատերազմ», իսկ Կիլիկյան Հայաստանը համարվում էր ոչ միայն քրիստոնեության պաշտպանության, այլև դեպի Արևելք նրա տարածման առաջին ամրոցը[8]: Կիլիկյան Հայաստանի վերնախավը, հասկանալով, որ ավելի վտանգավոր են դառնում Եգիպտոսի սուլթանության և նրա դաշնակիցների հարձակումները, փորձ կատարեց համաձայնվել Պապի առաջարկի հետ և ընդունել կաթոլիկություն[9]: Հռոմի Պապը, հասկանալով, որ Իրանի մոնղոլների մոտ կաթոլիկության տարածումը տապալվեց (նրանք 1295 թ. իսլամ ընդունեցին)[10], իր ողջ ուշադրությու-

---

[4] Bibliotheque des Croisades, t. IV, Paris, 1829. p. 505-507, **F.Gabrieli**, Arab historians of the Crusades, London, 1978, p.308, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դարերի, հ.II, Երևան 1956, էջ 78, **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 442, **Makrizi**, Histoire des Sultans Mamelouks, Paris, 1837, t. II, part III, p.120-125: Այդ մասին տե՛ս նաև **R. Rohricht**, Geschichte des Konigreichs Jerusalem, (1100-1291), Amsterdam, 1966, p.1002, **М. Заборов**, Крестовые походы, М. 1980, с.267.

[5] **S. Runciman**, A history of the Crusades, vol. III, p. 341, **A. Atiya**, The Crusade in the Latter Middle Ages, London, 1970, p.37, **Ս. Բուռնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 34:

[6] **Ժ. Ռիշար**, Ավինյոնի պապությունը և Հայաստանը, ՊԲՀ, 2001, N1, էջ 152, **Հ. Բարթիկյան**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Հ. Ա., Երևան, 2002, էջ 124:

[7] **W. Roud-Collenberg**, The Rupenides, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician Dynasties, Paris, 1963, p. 13,15, **R. Grousset**, L'Empire du Levant, Paris, 1946 թ. 407, **Մ. Դավիթ-Բեկ**, Լուսինեանք, Վիեննա, 1900, էջ 13: **Արտավազդ արքեպիսկոպոս**, Հայ-լատին հարաբերությունները հույն-լատին հարաբերությանց լույսով, Էջմիածին, 1945, Ա-Բ, էջ 22:

[8] **Գ. Հարությունյան**, Քրիստոնեական եկեղեցիների համընդհանրության գաղափարը Սսի 1307 թ. ժողովում, Հայկազեան հայագիտական հանդես, Պէյրութ, 1994, Հ. ԺԴ, էջ 148:

[9] **Г. Микаелян**, История Киликийского армянского государство, Ереван, 1952, с. 441-442.

[10] **K. E. Lupprian**, Die Bezichungen Der papste zu islamichen und mongolischen Herrschern im, Vaticana, 1981, p.56-58, **B. Spuler**, The Muslim World, Part II, Leiden, 1960. p. 35, Encyclopaedia Iranica, vol V, California, 1992,

նը կենտրոնացրեց հայկական թագավորության վրա, քանի որ Կղմես Ե-ն Կիպրոսը և Կիլիկյան Հայաստանը համարում էր իր դաշնակիցը և առավել հարմար պատնեշը:

Ահա այս ժամանակաշրջանում էլ սկսվեց և մինչև Կիլիկյան Հայաստանի անկումը շարունակվեց պայքարը կաթոլիկության ընդունման համար: Նման պայմաններում Հայ Եկեղեցու ներսում առաջացան քաղաքական երկու հակադիր խմբավորումներ, որոնք կատաղի պայքար սկսեցին միմյանց դեմ[11]: Նրանց մի մասը ցանկանում էր ընդունել կաթոլիկությունը (միութենասեր) և օգնություն ստանալ Արևմուտքից, իսկ մյուս մասը դեմ էր դրան (միութենամերժ): Վերջիններս դեմ չէին եկեղեցիների միությանը, սակայն դեմ էին հրաժարվելու Հայ Եկեղեցու դավանաբանական ու ծիսական ավանդույթից[12]:

1306 թ. գարնանը Լևոն Դ-ի դեսպանները Նեապոլի վրայով ուղևորվեցին Հռոմ և Փարիզ: Կղեմես Ե Պապը, օգնություն խոստանալով, պահանջեց, որ Կիլիկիայի Հայ Եկեղեցին ընդունի Կաթոլիկ Եկեղեցու ծիսակատարություններն ու դավանաբանական սկզբունքները[13]: Փաստորեն, դիվանագիտական հարաբերությունները շոշափեցին նաև դավանաբանական խնդիրներ, ինչը վկայում է այն մասին, որ սոցիալ-քաղաքական շահերից բացի մեծ կարևորություն էին ներկայացնում նաև հոգևոր, մասնավորապես կրոնական հետաքրքրությունները: Լատինական արևմուտքի և Բյուզանդիայի հետ մշակվող քաղաքական հարաբերություններում որոշիչ դեր էին խաղում նաև կրոնական հարցերը: Արքունիքներից բացի դեսպանները հաճախ թակում էին պատրիարքական ու պապական նվիրապետությունների դռները: Դավանաբանական զիջումների ճանապարհով արևմտյան Եվրոպայից և Բյուզանդիայից օգնություն ստանալու քաղաքական ծրագրի կենսագործման ճանապարհին կարևոր փուլ էր 1307 թ. Սսի եկեղեցական ժողովը: Հայտնի է, որ XIII դարի վերջին և XIV դարի սկզբներին Կիլիկիայի Հայկական Եկեղեցին գլխավորում էր Գրիգոր Է Անավարզեցին (կթղ. 1293-1306/07): Ինչպես նշում է Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ այս կաթողիկոսն ընդհանուր քրիստոնեական եկեղեցիների միության գաղափարով տարված մի անձնավորություն էր, որը այդ նպատակի համար պատրաստ էր զոհել Հայ Եկեղեցու որոշ ավանդություններ[14]:

Հետազոտողի այդ տեսակետը պաշտպանում է նաև Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանցը[15]: Խոսելով Գրիգոր Է Անավարզեցու մասին՝ պետք է նշել նաև, որ նրա օրոք հայոց կաթողիկոսությունը Հռոմկլայից տեղափոխվեց մայրաքաղաք Սիս[16]: Բացի այդ, կաթողիկոսը փորձեց փոփոխություններ մտցնել մի շարք ծիսա-

---

p.134, The Cambridge history of Iran, vol V, Cambridge, 1968, p. 380-382, Encyclopaedia of Islam, vol II, London, 1965, p. 1043, **К. Босворт**, Мусульманские династии, Москва, 1971, с. 201, **И. Пигулевская**, История Ирана с древнейших времен до конца XV века, Москва, 1977, с. 199-200.

[11] **Գ. Միքաելյան**, նշվ աշխ., p. 441:

[12] **Եզնիկ վրդ. Պետրոսյան**, Հայ Եկեղեցու պատմություն, Ս. Էջմիածին, 1995, էջ 136:

[13] **A. S. Atiya**, The Crusade in the later Middle Ages, London, 1938, p.62-63, **J. Richard**, Les Arménians. a Avignon au XIV e siecle, Revue des Etudes Arméniens, t. XIII, Paris, 1992, p. 253-254:

[14] **Եզնիկ վրդ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 156:

[15] **Վ. վրդ. Մուրատեանց**, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Ցերուսաղէմ, 1872, էջ 474:

[16] **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1895, էջ 165:

կան հարցերում: Նա պատվիրեց ճրագալույցներին պահք չլուծել, հիվանդների համար ձեթ օրհնել, Ս. բաժակի մեջ ջուր խառնել և այլն: Միաժամանակ կաթողիկոսը հույներից պահանջեց, որ իբրև փոխհատուցում, Անտիոքի պատրիարքական աթոռը ենթարկվի հայոց կաթողիկոսությանը[17]: Անշուշտ Գրիգոր Անավարզեցու փոփոխությունները լուրջ դժգոհություն առաջացրին պատմական Հայաստանում: Այդ է վկայում նաև Ստեփանոս Օրբելյանը՝ նշելով, որ Սյունյաց միտրոպոլիտի նախագահությամբ մի ժողով գումարվեց և մի նամակով կաթողիկոսին զգուշացրեցին, որպեսզի Հայ Եկեղեցու ավանդույթների մեջ փոփոխություններ չմտցնի[18]: Հավանաբար հայոց կաթողիկոսի նման դիրքորոշունը բացատրվում էր այն հանգամանքով, որ վերջինս փորձում էր օգնություն ստանալու նպատակով ինչ-ինչ փոփոխություններ կատարելով, ստանալ Հռոմի Պապի և եվրոպական տերությունների աջակցությունը: Կաթողիկոսը պատրաստվում էր նաև փոփոխություններ մտցնել Հայ Եկեղեցու ծիսակարգում և այդ նպատակի համար առանձին շարականներ գրեց՝ Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոների համար՝ ծրագրելով այդ տոները միմյանցից բաժանել, սակայն տեսնելով, որ օգնություն չի կարողանում ստանալ, նա ավելորդ համարեց այլևս եկեղեցիների միության խնդրով զբաղվել: Պետք է նաև նշել, որ այս շրջանում Արևմուտքի հետ հարաբերությունների զարգացման օգտին էին գործում նաև Հեթում թագավորահայրը և Լևոն Դ արքան (1301-1307):

Ա. Սուքիասյանը նշում է, որ Հեթում Բ-ն դեռևս իր հոր կենդանության ժամանակ կաթոլիկություն ընդունեց և դարձավ ֆրանցիսկյան միաբանության անդամ[19]: Թագավորահայրը գլխավորեց երկրի լատինասերների հոսանքը և պահանջեց, որ հայերը կաթոլիկություն ընդունեն և միավորվեն Կաթոլիկ Եկեղեցու հետ[20]: Իբրև քաղաքական գործիչ՝ Հեթում Բ-ն, լինելով հոգևոր եղբայրության անդամ, չէր բաժանվում սրից և վանականի գավազանից: Նա չթագադրված միապետ էր, խոստովանահայր, խնամակալ, ‹‹արտավանքային›› վանական: Աչքի էր ընկնում անկայունությամբ և մեկ ծայրահեղությունից մյուսն էր ընկնում. գործում էր ըստ իրադրության, սխալ կերպով կարծում էր, թե հայկական պետությունը կարող է հույսը դնել պապի օգնության վրա[21]:

Կաթողիկոսը արքայի ու Հեթում Բ-ի պահանջով իր մատուցած Պատարագներին հաղորդության բաժակի մեջ ջուր էր խառնում և, այդպիսով, օրինակ դառնում նաև ուրիշների համար: Այնուհետև, թագավորահայրը և արքան կաթողիկոսից պահանջեցին երկու Եկեղեցիների միջև կատարյալ միություն հաստատել: Կաթողիկոսը մերժեց այդ պահանջը, որի պատճառով էլ գահընկեց արվեց և աքսորվեց, որտեղ էլ մահացավ 1306 թ.[22]: Մատենագիրները հաղորդում են, որ մահվան անկողնում նա հայտարարել է. ‹‹Հայ եմ և հայ մեռանիմ››: Փաստորեն, վերլուծելով Լևոն Դ-ի և Հեթում թագավորահոր գործունեությունը, կարելի է եզրակացնել, որ նրանք ավելի մեծ

[17] **Եզնիկ վրդ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 156:

[18] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 197-210:

[19] **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 90:

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում:

[22] **Սամվել Անեցի**, նշվ. աշխ., էջ164:

մասնակցություն են ունեցել կաթոլիկության ընդունմանը, քան կաթողիկոսը: Բացառված չէ նաև այն հանգամանքը, որ հայոց կաթողիկոսը հարկադրված էր արևմտամետ շատ գործեր և փոփոխություններ կատարել՝ չկարողանալով մերժել արևմտամետ այդ երկու գործիչների պահանջները:

Վերադառնալով 1307 թ. եկեղեցական ժողովին՝ պետք է նշել նաև, որ այն ընթացել է չափազանց լարված պայմաններում, քանի որ ինչպես նշում է Ա. Տեր-Միքելյանը, 1307 թ սկսած առաջ եկան եկեղեցական տարաձայնություններ, որոնց մեջ գործող գլխավոր դերը պատկանում էր թագավորներին[23]:

1307 թ. Սիսում տեղի ունեցած եկեղեցական ժողովի օրակարգում դրված էր երկու հիմնական հարց.

1. Նոր կաթողիկոսի ընտրություն,
2. Կաթոլիկության ընդունում:

Նախ՝ ժողովն ընտրեց նոր կաթողիկոս՝ Կոստանդին Գ Կեսարացուն (կթղ. 1307-1322)[24]: Այնուհետև քննարկվեց երկրորդ կարևոր խնդիրը՝ կաթոլիկության ընդունման հարցը: Հետազոտող Եզնիկ վրդ. Պետրոսյանի վկայությամբ՝ ժողովին մասնակցում էին Կիլիկիայի հայկական թագավորության 43 եպիսկոպոսներ և իշխաններ[25]: Ի տարբերություն նրա՝ Մ. Չամչյանը և Ա. Միխիթարյանցը[26] նշում են ժողովական 41 մասնակիցների: Առավել հավանական ենք համարում 41-ը, քանի որ Մ. Չամչյանը իր աշխատության մեջ հիշատակում է բոլոր մասնակիցների անունները: Սակայն չի կարելի բացառել նաև այն տարբերակը, որ երկու վերլուծաբանների տեսակետներն էլ նույնն են: Պարզապես Մ. Չամչյանը Լևոն արքային և Հեթում թագավորահորը չի նշել, իսկ Եզնիկ եպս. Պետրոսյանը նրանց նույնպես մասնակիցների թվին է գումարել: Հայոց արքան ժողովին ներկայացրել է մի նամակ, որն իբրև թե գրված է եղել Գրիգոր Անավարզեցու կողմից: Այն կառուցված էր 9 գլխից և հիմնականում բովանդակում էր հետևյալ դավանաբանական ու ծիսական փոփոխությունները՝

1. Ս. բաժակի մեջ ջուր խառնել,
2. Ընդունել 7 տիեզերական ժողովների որոշումները,
3. Քրիստոսի մեջ խոստովանել 2 բնություն, 2 կամք, 2 ներգործություն,
4. Տերունական տոները տոնել հույների և լատինների հետ, Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, Ավետումը՝ մարտի 25-ին, Տեառնընդառաջը՝ փետրվարի 2-ին և այլն,
5. Ս. Ծննդյան և Ս. Հարության ճրագալույցները լուծել միայն ձեթով և ձկով:
6. «Ս. Աստուած»-ը երգել «Քրիստոս» բառի հավելումով... «Քրիստոս, որ խաչեցար»:

Հիշատակումներ են պահպանվել նաև այն մասին, որ ժողովականները, բացա-

---

[23] **Ա. Տեր-Միքելյան**, Եկեղեցական աղմուկները ԺԴ դարի սկզբում, «Արարատ», Վաղարշապատ, 1839, էջ 507:

[24] **Աբել արքեպիսկոպոս Միխիթարեանց**, Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդերձ կանոնագրությամբ, Էջմիածին, 1874, էջ 132-133, **Հ. Մովսիսյան**, նշվ. աշխ., էջ 221, **Մ. վրդ. Մուրադյանց**, նշվ. աշխ., էջ 474, **Մ. Օրմանյան**, Հայոց Եկեղեցին..., Երևան, 1993, էջ 93:

[25] **Եզնիկ վրդ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 158:

[26] **Մ. Չամչյան**, նշվ. աշխ., էջ 309, **Ա. Միխիթարյանց**, նշվ. աշխ., է 132-133:

ռությամբ 5 եպիսկոպոսների, ընդունեցին առաջարկվող փոփոխությունները[27]:

Միջնադարյան պատմիչներից Ս. Անեցու երկը շարունակողներից մեկը հետևյալ տեղեկություններն է մեզ տրամադրում վերոհիշյալ դեպքերի կապակցությամբ. «ՌՅԹ (ՉԾՋ) արար ժողով աւագ Պարոնն Հեթում և միաբանեցան ընդ եկեղեցին Հռոմայ և հաւանեցին առնել զգօն ծննդեան Քրիստոսի Դեկտեմբերի ԻԵ. և զամենայն տօնս սրբոց՝ յիւրաքանչիւր տեղիս ուր և դիպեսցի: Այլև արկանել ջուր ի սուրբ խորհուրդն. և այս գործեցաւ ի թիվն ՉԾՋ ի Սուրբ Զատիկն»[28]:

Հետազոտողներից Մ. Օրմանյանը[29] և Ա. Սուքիասյանը[30] միահամուռ կերպով պնդում են, որ վերոնշյալ ժողովը տեղի է ունեցել 1307 թ. մարտի 19-ին: Ու թեև ժողովը առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ որոշում ընդունեց, այնուամենայնիվ լուրջ ընդդիմություն առաջ բերեց ինչպես Կիլիկիայի հայկական թագավորությունում, այնպես էլ պատմական Հայաստանում:

Խնդիրն այն է, որ թե՛ ժողովուրդը և թե՛ իշխանների ու հոգևորականության մեծագույն մասը դեմ էին Սսի ժողովի ընդունած որոշմանը և ամենևին էլ չէին պատրաստվում դրանք կիրառել գործնականում: Պետք է նկատել նաև, որ Սսի 1307 թ. ժողովից հետո Կիլիկիայի հայկական թագավորությունում խիստ սրվեց ներքաղաքական իրադրությունը: Այս կապակցությամբ Մ. Չամչյանը նշում է հետևյալը. «Սսոյ ժողովին ամենաջերմ պաշտպաններն ալ կը խոստովանին, թէ եպիսկոպոսներ չհամարձակեցան ամեն տեղ գործադրութեան մտցնել անոր կանոնները... Եւ Սսոյ կանոնները ունեցան խափանումն գործածութեան...»[31]:

Սսի եկեղեցական ժողովի որոշումը ունեցավ այն հետևանքը, որ երկրում առաջացան իրարամերժ խմբավորումներ՝ ունիթորներ և հակաունիթորներ, որով էլ ավելի թուլացավ երկրի քաղաքական միասնությունը: Բացի այդ պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ ավելի սրվեցին Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունները շրջապատող իսլամադավան պետությունների հետ: Վերջիններս այդ որոշումը դիտում էին, որպես խաչակիրներին Արևելք հրավիրելու նոր փորձ[32]:

1308 թ. Կիլիկյան Հայոց գահին բազմեց Օշին արքան (1308-1320թթ.), որի օրոք ևս փորձեր կատարվեցին արմատավորել Սսի 1307 թ. ժողովական որոշումը: Ի պատասխան դրա 1308 թ. և 1309 թ. տեղի ունեցան հակակառավարական ցույցեր, որոնց մասնակցեցին ժողովրդական զանգվածները և մեծաթիվ հոգևորականներ[33]: Օշին արքան արյունալի դատաստան տեսավ ապստամբների հետ: Նրանցից շատերը մահապատժի ենթարկվեցին, վարդապետները բանտ նետվեցին կամ արտաքսվեցին Կիպրոս կղզի: Այդ ամենն էլ հիմք են տալիս վստահաբար պնդելու, որ միայն արքունիքն ու կաթողիկոսարանն էին կողմնակից Եկեղեցիների միավորմանը: Սակայն պետական հալածանքները չկարողացան վերջնականապես ճնշել ժողովրդին: Թա-

---

[27] **Եզնիկ վրդ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 158:

[28] **Սամվել Անեցի**, նշվ. աշխ., էջ 155:

[29] **Մաղաքիա արք. Օրմանյան**, նշվ. աշխ., այուն 2107:

[30] **Ա. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 90:

[31] **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 309:

[32] Հայ ժողովրդի պատմություն, հ. III էջ 766:

[33] **Ա. Մխիթարեանց**, նշվ. աշխ., էջ 135:

գավորի քաղաքականությանը կողմ էին հատկապես Կիլիկիայում բնակություն հաստատած լատինական տարրերը, բարձրաստիճան որոշ հոգևորականներ և արքունիքի առանձին հեղինակավոր ծառայողներ: Հենց նրանք էլ հարում էին այսպես կոչված միարարական հոսանքին, այսինքն՝ համաձայն էին, որ Հայ Եկեղեցին ենթարկվի Հռոմի Պապին: Ի հակակշիռ դրա՝ Կիլիկիայի բնակչության և հոգևորականության մեծ մասը (հատկապես հոգևորականության ստորին շերտերը), խոշոր հողատերերի զգալի մասը, աշխատավորական զանգվածները դեմ էին միությանը և կազմում էին հակամիարարական հոսանքը:

Փաստորեն պետք է նշել, որ XIV դ. առաջին տասնամյակում հայ-հռոմեական ակտիվացած հարաբերություններն այն արդյունքն ունեցան, որ երկրում ներքին քաղաքական իրադրությունը սրվեց, իսկ միարարության վերաբերյալ Սսի 1307 թ. եկեղեցական ժողովի որոշումը ավելի գրգռեց Կիլիկիայի գլխավոր թշնամու՝ Եգիպտոսի սուլթանության զայրույթը: Ինչ վերաբերում է Հռոմի Պապին, ապա նա իր խոստացած օգնությունը չուղարկեց Կիլիկյան Հայաստան:

Ահա այսպիսին էին Հայ Եկեղեցու հարաբերությունները Հռոմի պապական աթոռի հետ և նրա հետևանքները XIV դարի առաջին տասնամյակում:

ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ

ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ, ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ ՄԻՆՉԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Այս ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում ներկայացնել ‹‹Բարեկամավանի դամբարան›› կոչվող հուշարձանը՝ լրացնելով և ամբողջացնելով մինչ այս եղած հրապարակումները, որոնց մասին ավելի հանգամանորեն կխոսվի ստորև, առաջին անգամ հանրության և, մասնավորապես, մասնագետների դատին հանձնել այս եզակի կառույցի ներկայիս վիճակը, որը այն ստացել է ‹‹վերակառուցումից›› հետո:

Բարեկամավան գյուղը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի հյուսիսարևելյան մասում: Այն տեղաբաշխված է երկու ոչ մեծ բլուրների միջնամասում ստեղծված հարթության վրա: Գյուղը սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը[1]:



Նկար 1. Բարեկամավանի հուշարձանը վերակառուցումից առաջ

Գյուղից մոտ 3.5 կմ դեպի արևմուտք՝ շրջակայքի ամենաբարձր սարի գագաթին է կառուցված Բարեկամավանի դամբարան կոչվող հուշարձանը, որը տեսանելի է ոչ միայն գյուղից, այլ մի քանի կիլոմետրից: Դեպի հուշարձան տանող ճանապարհը սկսվում է գյուղի արևմտյան ծայրից և ոլորապտույտ ճանապարհով շրջանցելով փոքր բլուրները՝ սարալանջով մոտենում է հուշարձանին: Սարալանջը և հուշարձանի շրջակայքը պատված են ոչ շատ խիտ անտառաշերտով: Այս կառույցը շրջակա բնակչության համար ծառայում է որպես ուխտատեղի և կոչվում է ‹‹Բարձրելի խաչ›› կամ ‹‹Բացրելի խաչ››: Անվանումը ակներևաբար բխում է Բարձրեալ բառից, որը և նշանակում է վերին, ամենաբարձր[2]:

Մասնագետների ուշադրությունը Բարեկամավանի դամբարանը գրավել է միայն

[1] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I., Ե., 1986, էջ 623:

[2] **Էդ. Աղայան.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Ե., 1976, էջ 180:

1980-ական թվականներին (նկ. 1) և չնայած մոտ 20 տարի այս հուշարձանը գտնվում է գիտական շրջանառությունում, մասնագետների (և ոչ միայն) մեծ մասի մոտ առկա է ոչ ճիշտ պատկերացում նրա մասին, ինչը արդյունք է մինչև օրս կատարված հրատարակումների: 1987 թ. այն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել մի խումբ հնագետների կողմից[3]: Չնայած այս անդրանիկ հրատարակումը ունի բազում բացթողումներ և անճշտություններ, այնուամենայնիվ այն հիմք հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար: 1988 թ. Գ. Կարախանյանը այս հուշարձանի մասին պատմող նյութով ելույթ է ունեցել հայ արվեստին նվիրված 5-րդ միջազգային սիմպոզիումում (Վենետիկ), որտեղ ևս առկա էին վերը նշված թերությունները[4]:

1988-89 թթ. կատարվել են հուշարձանի ինչպես ներսի, այնպես էլ շրջակայքի պեղման-մաքրման աշխատանքներ՝ ճարտարապետ Ռ. Դավթյանի ղեկավարությամբ: Վերջինս 1990 թ. նախկին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության նախագծային ինստիտուտին (այժմ՝«Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն) է ներկայացրել իր կատարած չափագրությունները և վերակառուցման նախագիծը[5]: Այդտեղից տեղեկանում ենք, որ 1928 թ. կոմերիտական շարժման ժամանակ վկայարանը (այս անվամբ է հայտնի Բարեկամավանի դամբարանը ճարտարապետների նեղ շրջանակներում) վերջնականապես քանդվել է: Ծավալատարածական առումով տեղում պահպանված է հուշարձանի 1/2-ը: Պատերի 15 նիստերից պահպանված են տասը, գմբեթարդի ամբողջական ծավալի՝ 1/3-ը: Կիսականգուն պատերը դեֆորմացված են, իրենց մեջ ունեն բացված ճեղքեր: Համապատասխան նախագծի՝ վերականգնվում են պատերի 5 նիստերը, որոնք գտնվում են հուշարձանի հարավային կողմում: Այս նիստերի հորիզոնական չափսերը ստացվել են գետնախարիսխների վրա պահպանված հետքերից և տեղում պահպանված 10 նիստերի ուսումնասիրություններից: Վերականգնվում է գմբեթարդի 2/3-ը՝ օգտվելով 1/3 ծավալով պահպանված գմբեթարդի կորությունից, որտեղ ստացվում է եռակենտրոն գմբեթարդ: Վերականգնման նախագծում օգտագործվել են հայտնաբերված այն ճարտարապետական բեկորները, որոնք կառուցվածքային տեսակետից բավարար կայունություն ունեն պատերի վերականգնման աշխատանքներում: Ըստ նախագծի՝ պատկերաքանդակ քիվերի բացակայող հատվածներում նախատեսվում է տաշել քիվերը առանց պատկերների՝ պահպանելով բոլոր ելուստները: Հուշարձանի վերականգնման համար նախատեսվում է հետազոտել Նոյեմբերյանի դեղնասպիտակավուն ֆելզիտ քարը՝ բացառությամբ հատակի սալերից, որոնք իրականացվելու էին բազալտից:

---

[3] **Գ. Կարախանյան, Ս. Միրզոյան, Հ. Մելքոնյան,** Հնագույն գմբեթավոր հուշարձան, «Գրական թերթ», 1987, Երևան, Ե 30:

[4] ANCIENT ARMENIAN CUPOLA MEMORIAL", (Grigor Karakhanyan) "ATTI DEL QUINTO SIMPOSIO INTERNAZIONAL DI ARTE ARMENA", 1991 San Lazzaro- Venezia, p. 225-227.

[5] ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության նախագծային ինստիտուտ, Հայնախագիծ ռեստավրացիա, Նոյեմբերյանի շրջան, գյուղ Բարեկամավան, Ե., 1990:

Այս նախագիծը փորձաքննության է ենթարկել ճարտարապետ Մ. Դանիելյանը: Այն իրականացնելու համար 1990-ականների սկզբներին հուշարձանը քանդվել է և վերակառուցվել միայն 2004 թ. ամռանը, այն էլ ոչ ամբողջությամբ. գմբեթը ընդհանրապես բացակայում է: Վերակառուցման ժամանակ նաև չեն պահպանվել որոշ քարերի նախկին տեղադրությունները, ինչը պարզորոշ կարելի է նկատել՝ համեմատելով հին լուսանկարները ներկայիս վիճակի հետ (նմանօրինակ եզրահանգումներ կատարելու համար հիմք է ծառայել 2006 թ. մայիսին կատարած այցելությունը): Ռ. Դավթյանի աշխատանքը չի հրատարակվել: Մեր աշխատությունում առկա բոլոր մինչ վերակառուցումը եղած չափագրական տվյալները վերցված են Ռ. Դավթյանի չափագրություններից:

Բարեկամավանի հուշարձանին անդրադարձել են Ս. Միրզոյանը[6], Մ. Հասրաթյանը[7], Զ. Սարգսյանը[8]: Հուշարձանի ուսումնասիրությունը իր տեղն է գտել «Հայկական ճարտարապետության պատմություն» հատորյակում[9]: Այս աշխատությունները, բացառությամբ Ս. Միրզոյանի, որը ոչ մասնագիտական ձեռնարկ է և նվիրված է հիմնականում Բարեկամավան գյուղին, չնայած այստեղ ևս կան անճշտություններ, բացարձակապես հիմնված են Գ. Կարախանյանի ուսումնասիրության վրա, և բացի այդ չեն էլ համընկնում վերջինիս տվյալների հետ. այդ աշխատություններում որոշ թվային տվյալներ կարծես կլորացված լինեն, կամ էլ հանդիսանում են հնարված: Չենք խուսափում այս նշումը կատարելուց, քանի որ դրանց հրատարակման ժամանակ հուշարձանը եղել է կա՛մ քանդված, կա՛մ էլ վերակառուցման ընթացքում:



Նկար 2. Բարեկամավանի հուշարձանը վերակառուցումից հետո

Անտառապատ լեռներով պարուրված հնավայրում հաստատված ճարտարապետական, քանդակագործական, ինքնատիպ մտքի արգասիք հանդիսացող այս հուշարձանը այժմ, ինչպես արդեն նշվել է, գտնվում է կիսավերակառուցված վիճակում (նկ. 2): Վերակառուցված մասը ունի մոտավորապես 4.40 մ բարձրություն, իսկ վերակառուցման ավարտից հետո այն կստանա իր սկզբնական բարձրությունը, որը կազ-

---

[6] **Ս. Միրզոյան,** ՀՀ բնակավայրերը մատենաշար, գիրք V, Բարեկամավան, Ե., 1999, էջ 17-30:

[7] **Մ. Հասրաթյան,** Армянсая архитектура раннего христианства, М., 2000, стр. 40, 171, 391-393:

[8] **Մ. Հասրաթյան, Զ. Սարգսյան**, Հայաստան. քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին, Ե., 2001, էջ 40-41:

[9] Հայկական ճարտարապետության պատմություն, հ. III, Ե., 2004, էջ 211-212:

մում է 7.73 մ: Կաթնագույն կրաքարի սրբատաշ քարով կառուցված հուշարձանի աշտարակաձև ծավալը հիմքում իրենից ներկայացրել է արտաքինից բազմանիստ, ներքուստ շրջանաձև, եկեղեցու գմբեթին նմանեցվող ծածկ ունեցող մի կառույց, որտեղ վեղարը իրականացված է եղել ոչ թե ծածկասալերով, այլ երկկոր տաշված մեծածավալ քարերով: Գմբեթը և պատերը շարված են եղել միդիս շարվածքով: Վերակառուցման ընթացքում ավելի քան 0,40 մ մեծացել է գետնախարսխի տրամագիծը, որը նախկինում կազմել է 6,25 մ: Պատերը ունեցել են 92 սմ հաստություն, ինչը առկա է նաև այժմ: Միակ մուտքը հյուսիսային կողմում է՝ 1.76 մ բարձրությամբ և 0.78 մ լայնությամբ: Վերջին տվյալները չեն խախտվել վերակառուցման ժամանակ, սակայն դռան բացվածքի շեղությունը չի պահպանվել, որը առկա է Ռ. Դավթյանի նախագծում: Հուշարձանը արևելյան կողմում 1,91 մ բարձրությունից սկսվող մի լուսամուտ ունի (0,47x0,76 մ), որը վերևում ավարտվում է սեգմենտաձև կորով: Հետագայում լուսամուտին ագուցվել է վերին ու ներքին երկար և կողային կարճ թևերով խաչաձև բացվածքով սալ, որը ունի 0,63 մ հաստություն: Վերջինիս տեղադրությունը չի խախտվել վերակառուցման ժամանակ: Ռ. Դավթյանի ղեկավարությամբ կատարված մաքրման աշխատանքների ժամանակ գտնվել է բարավորը (0.90x0.375 մ), որը այժմ դրված է իր սկզբնական տեղում: Ներքուստ դամբարանի շրջանաձև հատակագծի 3.66 մ պահպանվել է նաև վերակառուցման ժամանակ:

Աշտարակաձև մոնումենտալ այս կառույցի 15 նիստերից մինչ վերակառուցումը պահպանվել էին 10 նիստերը: Քանդված է եղել հուշարձանի հարավարևմտյան մասը: Նիստերի համամասնությունները տատանվել են 1.05-1.23 մ միջակայքում[10]: Այս 15 նիստերը իրենց վրա կրել են գմբեթը. արտաքինից պատերը գմբեթարդից բաժանվել են կենդանիների պատկերներով և բուսական քանդակներով զարդարված մեծածավալ քիվով: Ներքուստ պատերը կորագիծ են և գմբեթարդից բաժանված են եղել ելուստավոր պարզ պրոֆիլավոր քիվով: Թե՛ արտաքին և թե՛ ներքին քիվերով էլ այժմ ավարտվում է հուշարձանը: Հուշարձանը պսակված է եղել եռակենտրոն գմբեթարդով, որը վերնամասում ավարտվել է գլանաձև հենքով՝ հատած կոնաձև մանրամասով: Գմբեթն ունեցել է ուշագրավ մանրամասներ՝ 0.16x0.08x0.07 մ և 0.12x0.08x0.07 մ չափերի ուղղանկյուն, ողորկ ելուստներ, որոնք չեն ունեցել որոշակի դասավորվածություն կամ հերթականություն: Դրանցից մի քանիսին ականատես եղանք հուշարձանի մոտ՝ գմբեթի մյուս բեկորների շարքում:

Բարեկամավանի դամբարանը ունի բավականին հարուստ հարդարանք, թեև այն մեզ է հասել ոչ ամբողջական վիճակում՝ մասամբ վնասված և տեղ-տեղ անգամ բացակայում են քանդակազարդ մանրամասները, այդուհանդերձ այն չի կորցրել իր գրավչությունը: Բարեկամավանի դամբարանի արտաքին հարդարանքում քանդակազարդումները տեղ են գտել բարավորի վրա, միակ լուսամուտի պարակալին և մի փոքր բարձր, հորիզոնական կարճ գոտիով, ամբողջ քիվով մեկ և քիվի տակի շարի

[10] Այժմ բերենք նիստերի ճշգրիտ լայնությունները ըստ Ռ. Դավթյանի չափագրությունների՝ սկսելով այն նիստից, որտեղ գտնվում է դռան բացվածքը և շարժվելով ժամացույցի սլաքի ուղղությամբ. 1.21մ, 1.05մ, 1.18մ, 1.11 մ, 1.23 մ, 1.10 մ, 1.23 մ, 1.11 մ, 1.23 մ, 1.10 մ, 1.20 մ, 1.11 մ, 1.05 մ, 1.20 մ և 1.07 մ: Այս տվյալներին չնչին շեղումներով ականատես եղանք մեր այցելության ժամանակ:

ամբողջ երկայնքում, ինչպես նաև պահպանվել են երկու քանդակազարդված սալ ինտերյերում:

Դամբարանի բարավորրի կենտրոնական մասում քանդակված է ութաթև աստղ հիշեցնող մի զարդանախշ, որի չորս թևերը սրածայր են, իսկ մյուս թևերը՝ ավելի ոճավորված են: Այս աստղը կրկնող քանդակազարդ մի սալ կար նաև դեռևս չօգտագործված բեկորների շարքում՝ մասամբ վնասված, որի նախկին տեղադրության մասին դժվարանում ենք որևէ կարծիք հայտնել: Նմանատիպ զարդանախշ հանդիպում է Թալինի Կաթողիկեում (7-րդ դար)՝ հարավային ճակատի լուսամուտներից մեկի հոնքաձև պարակալի վրա: Ութաթև աստղ հիշեցնող, սակայն բարավորի քանդակին ոչ այնքան մոտ մեկ այլ փորագրաքանդակ կա դամբարանի ներսում: Նման երկու փորագրաքանդակներ կան Փարպիի Թարգմանչաց եկեղեցու հյուսիսային ճակատի բարավորին (7-րդ դար): Այս ութաթև աստղերի զանազան տարատեսակներ կարելի է տեսնել նաև հայկական խաչքարերի վրա: Ինտերյերում՝ մուտքից աջ գտնվող քարերից մեկի վրա պահպանվել է նաև երկու զուգահեռ շարքով՝ քարի միջին մասով և ամբողջ երկարությամբ ձգվող փոքրիկ եռանկյունների խորաքանդակ գոտի:

Բարեկամավանի դամբարանի լուսամուտի հոնքաձև պարակալը ունի խաղողի հնգաթև տերևների քանդակներից բաղկացած շղթա: Նմանօրինակ խաղողի հնգաթև տերևներով պարակալ կարելի է տեսնել Եղվարդի Ջորավոր եկեղեցու հյուսիսային ճակատին (7-րդ դար): Խաղողի տերևների բազմաթիվ տարատեսակներ (որդազալարներով, խաղողի ողկույզներով, տարբեր զարդանախշերի հետ համադրություններով) իրենց կայուն տեղն ունեն հայկական միջնադարյան ճարտարապետությունում (Պտղնավանք (6-7րդ դ), Զվարթնոցի տաճար (7-րդ դար), Սիսավանի տաճար (7-րդ դար), Արուճի Ս. Գրիգոր եկեղեցի (7-րդ դար) և այլն):

Բարեկամավանի դամբարանի լուսամուտի պարակալի վերևում քանդակված է պայտաձև կամարիկներով հորիզոնական գոտի: Հայկական ճարտարապետությունում նման կամարիկներով մշակվել են հիմնականում եկեղեցիների քիվերը, նաև հանդիպում է պարակալներին (Պտղնի (7-րդ դար), Օձուն (7-րդ դար), Մաստարա (7-րդ դար), Գառնահովիտ (7-րդ դարի երկրորդ կես), Մրեն (7-րդ դար), Պեմզաշեն (6-7-րդ դար), Թալինի Կաթողիկե (7-րդ դար), Կուրդոնի Ս. Գրիգոր եկեղեցի (6-րդ դար), և այլն): Պայտաձև կամարիկներով գոտի, որը ոչ թե որպես քիվ կամ պարակալի զարդանախշ է կիրառվել, այլ Բարեկամավանի դամբարանի պես կարճ հատվածով զուտ զարդագոտի է օգտագործվել, հանդիպում է միայն 6-7-րդ դարերի Ս. Զորադիր եկեղեցու ինտերյերում՝ անկյունային տրոմպերի վերևում քանդակված:

Բարեկամավանի դամբարանը մասնավորապես գեղեցկանում է քանդակազարդ քիվով, որը գտնվում է 3.65-4.01 մ բարձրության վրա: Քիվը կառուցված է ավելի խոշոր քարերից: Քարերի խոշորության շնորհիվ բարձրաքանդակները բազմանիստ հուշարձանի պատերի մակերևույթից դուրս են ելած (0.42 մ): Քանդակների գոտին գտնվում է պարանահյուս զարդանախշի վերևում և կարճ, ոչ այնքան խորը կամարաշարի ներքևում: Պարանահյուս զարդանախշը հանդիպում է Գառնիի սրահատիպ եկեղեցու (4-րդ դար), Ցրվիզի Մորո Ջորո Աստվածածին եկեղեցու (5-6-րդ դար), Թալինի Կաթողիկեի (7-րդ դար) և այլ եկեղեցիների արտաքին հարդարանքներում: Կամա-

րաշար գոտին հանդիպում է Տեկորի տաճարի (5-րդ դար) մուտքի բարավորին և կամարին, նաև Ս. Թադեի վանքի 12-17-րդ դդ. գլխավոր եկեղեցու շքամուտքին: Քիվի ներքևի մասում՝ պատի ամբողջ երկարությամբ անցնում է լայն և երկար կամարաշար գոտի, որը զուգահեռներ չունի հայկական ճարտարապետության քանդակազարդումներում: Քանդակազարդ քիվը բաղկացած է կենդանիների գլուխների բարձրաքանդակներից, որոնք միմյանցից տարանջատված են պարանահյուս շղթայով եզերված ականթի տերևներով կամ խխունջի խեցիներ հիշեցնող զարդաքանդակներով:

Քանդակազարդ քիվի վրա տեղ են գտել 4 կենդանու բարձրաքանդակներ (ցուլ, շուն, խոյ, արջ), որոնց մեջ գերակշռում է ցլի պատկերը. պահպանված 29 գլխաքանդակներից 24-ը պատկերում են ցուլ, երկուսը՝ շուն և մեկական արջ ու խոյ: Բացակայող հատվածները ընդհանուր առմամբ կազմում են 3-4 գծմ, և վերաշարվել են սրբատաշ քարից: Մեր կարծիքով վերակառուցման ընթացքում խախտվել է նաև քանդակազարդ քիվի մաս կազմող քարերի հերթականությունը, քանի որ այժմ կարելի է երկու գլխաքանդակ կամ երկու ականթի տերև հիշեցնող զարդաքանդակ տեսնել անմիջական հարևանությամբ, մինչդեռ հին լուսանկարներում պարզորոշ երևում է համաչափ դասավորվածությունը:

Քանդակագործը տվել է ցլի գլխի անատոմիական բնութագրերը: Ցլի աչքերը, ականջները, կոտոշները, քթանցքները և անգամ ճակատի հերափունջը քանդակված են չափի հիասքանչ զգացողությամբ: Կոտոշները և ականջները քանդակված են ծավալայնորեն, մինչդեռ մնացած մասերը համեմատաբար գրաֆիկական բնույթի են, միևնույն ժամանակ՝ ոչ սխեմատիկ: Արջի, շների և խոյի գլխաքանդակները տեխնիկապես նույնատիպ են ցլի քանդակներին: Խոյի քանդակը առանձնանում է իր նրբագեղ համամասնություններով, պլաստիկայով և ամբողջականությամբ: Խոյի այս միակ քանդակը տեսանելի է բոլոր կողմերից շնորհիվ իր դիրքի: Մանրակրկիտորեն են արված հատկապես խոյի կոտոշների ծալքագոտիները, որոնք յուրօրինակ ռիթմի մեջ են մտնում պարանահյուս զարդանախշերի հետ: Խոյի աջ և ձախ կողմերում գտնվող շների ականջները ևս ունեն ծավալային լուծում. դրանք դեպի դուրս սրանում են: Դրանց մռութները, ի համեմատ ցլերի և խոյի գլխաքանդակների, ավելի ուղղված են ներքև: Շները բավականին նման են միմյանց և ունեն մի փոքր սրացող դնչեր: Քանդակազարդ քիվում տեղ գտած միակ գիշատչի՝ արջի գլխաքանդակը, ի տարբերություն մյուսների, պատկերված է բաց երախով. կարելի է տեսնել նույնիսկ ատամները և լեզուն: Նրա ականջները ևս ունեն ծավալային լուծում:

Այս պատկերաքանդակներով քիվը չունի զուգահեռներ ոչ միայն հայկական ճարտարապետության մեջ, այլև Անդրկովկասի և ընդհանրապես Հայաստանի մերձակա երկրների արվեստում: Նմանատիպ քանդակազարդումների կարելի է հանդիպել հունահռոմեական նախաքրիստոնեական հուշարձաններում, որոնցից Բարեկամավանի դամբարանի քանդակազարդ քիվին առավել մոտ է կանգնած հռոմեական Սիբիլայի տաճարի քանդակազարդ քիվը[11]: Այն կառուցվել է Ն. Ք. 72 - Ք.Հ. 14 թթ. ընկած ժամանակահատվածում և իրենից ներկայացնում է շրջանաձև հատակագծով ֆորոս

[11] Այս տաճարը նախկինում՝ մինչև 20-րդ դարի կեսերը, համարվել է Վեստայի տաճար (В.И.И. том I. М., 1956, стр. 301):

տիպի տաճար՝ 18 կորնթական սյուներով: Նրա քիվը բաղկացած է ցլերի գլխաքանդակներից, որոնց պոզերից կապված պտուղներից բաղկացած դրասանգները հիշեցնում են Բարեկամավանի դամբարանի քիվի գլխաքանդակների միջև գտնվող պարանահյուս նախշազարդը: Սիբիլայի տաճարի քիվի դրասանգների վերևում կան վարդյակների հիասքանչ բարձաքանդակներ, որոնք, ի տարբերություն Բարեկամավանի դամբարանի, ականթի տերև հիշեցնող զարդաքանդակների փոքր չափսերի են[12]:

Բարեկամավանի դամբարանի քիվում տեղ գտած կենդանիներն իրենց տեղն ու նշանակությունն են ունեցել հայ ժողովրդի կրոնական պատկերացումներում հեթանոսական շրջանում: Դրանք նաև իրենց կայուն տեղն են գտել քրիստոնեական դավանանքում: Ցուլը, որի պատկերներն ամենաշատն են քիվի քանդակազարդ գոտիում, հեթանոսական շրջանում կապված է եղել երկնային ուժերի հետ. ցլի գլուխը ինքնին հանդիսացել է ամպրոպի և որոտի մարմնավորում[13] և հանդիսացել է Վահագնի՝ ամպրոպի աստծո խորհրդանիշերից մեկը[14]: Քրիստոնեական շրջանում ցուլը հանդիսանում է չորս ավետարանիչներից մեկի՝ Ղուկասի խորհրդանիշը:

Խոյը ևս մեծ տեղ է զբաղեցրել հին հավատալիքներում և կապվել է արևի պաշտամունքի հետ, ինչի վկայություններն են խոյի տարբեր չափսերի արձանիկները և նրա պատկերները խեցեղենի վրա: Խոյը քրիստոնեական շրջանում հանդես է գալիս որպես Հիսուս Քրիստոսի խորհրդանիշը (Deus Agnus) և առհասարակ խորհրդանշում է հավատացյալներին: Շունը հեթանոսական շրջանում հանդիսացել է գլխավոր աստծո՝ Հայկի (Հին դիցարան) միջնորդը. Հայկը որսի և պայքարի է դուրս ելել երկու հավատարիմ շների հետ: Շունը հազվադեպ է հիշատակվում Աստվածաշնչում, այն էլ բացասական իմաստով[15]:

Արջը հեթանոսական շրջանում եղել է մեռնող և հարություն առնող բնության աստվածություն, անտառի, այգիների, կենդանիների արարիչը և տիրակալը: Նրա բարեհաճությունից է կախված եղել բնակչության գյուղատնտեսական գործունեությունը: Իսկ էգ արջը հանդես է եկել երիտասարդ կանանց ինչպես հովանավոր, այնպես էլ՝ կործանարար[16]: Արջի պաշտամունքը երկար ժամանակ մնացել է ժողովրդի մեջ անգամ քրիստոնեության ընդունումից հետո: Արջի հետ պայքարի տեսարաններ կարելի է հանդիպել քրիստոնեական ճարտարապետության հարդարանքներում (օրինակ՝ Բոլնիսի Սիոնի ներքին հարդարանքում, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու որթագալարի գոտում):

Այսպիսով, ինչպես երևում է վերը նշվածից, կենդանիները, որոնք տեղ են գտել Բարեկամավանի դամբարանի քանդակազարդ քիվի վրա պատահականության արդյունք չեն. դրանք դեռևս հեթանոսական շրջանում հայ ժողովրդի հավատալիքներում

---

[12] Избранные архитектурные увражи, серия “Рим”, выпуск 3, “Храм Весты”, М., 1939.

[13] **Հ. Իսրաելյան**, Պաշտամունքն ու հավատալիքն ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1979, էջ 30-33:

[14] **Բ. Առաքելյան**, Հայկական պատկերաքանդակները..., էջ 87-89:

[15] **Дж. Холл,** Словарь сюжетов и символов в искусстве, М., 1999.

[16] **Ф. Тер-Мартиросов**, Медвежонок и другие персонажи армянской мифологии, Е., 1996.

իրենց հաստատուն տեղը գտած «էակներ» են, որոնք անցել են նաև քրիստոնեական միջավայր՝ կրելով էական փոփոխություններ:

Բարեկամավանի հուշարձանի թե՛ հատակագծային ու ծավալատարածական հորինվածքը, թե՛ պատկերաքանդակներով քիվը իրենց նմանակը չունեն ոչ միայն հայկական ճարտարապետության մեջ, այլև Անդրկովկասի և ընդհանրապես Հայաստանի մերձակա երկրների արվեստում: Այն հայկական միջնադարյան շինարվեստում զուգահեռ չունեցող միակ մոնումենտալ կառույցն է, որի գմբեթը իրականացված է շրջանաձև հիմքի վրա: Մինչդեռ մեր ուսումնասիրության նյութին առնչվող հուշարձանների հսկայական շարք կարելի է գտնել Հռոմեական արվեստում: I-II դարերում Հռոմում դամբարանների կառուցման ժամանակ հաճախ օգտագործվել է դարերի ընթացքում ամրացած քառանկյուն հիմքի վրա բարձրացող գլանաձև կառույցը՝ պսակված կոնաձև ծածկով: Միաժամանակ նկատվում է նաև այս տիպի կառույցների զարգացում: Ամենից առաջ փոփոխության են ենթարկվում դամբարանի հիմնական ծավալի ձևերը (օրինակ, գլանաձև կառույցը փոխարինվում է ութանկյունով՝ մեկական սյուն անկյուններով, կամ ցածր գետախարիսխը կրում է տասներկուանկյունը՝ մեկական քառանկյուն, հարթ որմնասյուն անկյուններում, և այլն)[17]:

Շրջանաձև հատակագծով և կիսագնդաձև գմբեթով համեստ չափսերի մատուռ-եկեղեցու մի եզակի օրինակ էլ կա հեռավոր Կապադովկիայում, որը թվագրվում է 4-5-րդ դարերով: Այն, ինչպես Բարեկամավանի դամբարանը, կառուցված է խոշոր քարերից, սակայն ի տարբերություն վերջինիս՝ Կապադովկիայի օրինակը ունի կամարաձև բացվածքներ՝ պատի ամբողջ շրջանագծով ձգվող, որոնք որպես մուտք են ծառայել, և ընդհանրապես զուրկ է հարդարանքից[18]: Այս առումով կարևոր է դառնում Բարեկամավանի հուշարձանի թվագրության և ֆունկցիոնալ նշանակության խնդիրը: Նախաքրիստոնեական՝ ուշ հելլենիստական, հուշարձանների բացակայությունը Հայաստանում ավելի է բարդացնում թվագրության խնդիրը: Մասնագիտական գրականությունում այն թվագրվում է 5-7-րդ դարերի սահմաններում. մասնագետների այս եզրակացությունները շատ ընդհանրական են և այս խնդիրը կարիք ունի խոր ուսումնասիրության:

Ինչ վերաբերում է հուշարձանի գործառնական նշանակությանը, ապա անտիկ դամբարանների հետ ունեցած հորինվածքային առնչությամբ կարելի է ենթադրել, որ այն եղել է դամբարան, չնայած թաղում չի գտնվել, որը հետագայում վերափոխվել և վերածվել է մատուռ-ուխտատեղիի: Ֆունկցիոնալ այս փոփոխությունն երևում է նույն այդ միակ լուսամուտի ձևափոխման շնորհիվ. միջնադարում դրա մեջ ագուցվել է խաչաձև բացվածքով ամբողջական քարե սալ: Հետագայում նաև ներսում որպես բեմի սեղան խաչքարի բեկոր է կանգնեցվել[19]: Այդ խաչքարի բեկորը մենք տեսանք հուշարձանի կողքին գտնվող դեռևս վերակառուցման մեջ չօգտագործված քարերի շար-

[17] **В. И. А**. том Ii, M. 1973, стр. 647...648, 661, 681-684:

[18] **N. Thierry,** La Cappadoce l'Antiquite´ au Moyen-Age (Bibliotheque de l'Antiquite tardive 4), Paris, 2002:

[19] **Մ. Հասրաթյան, Ջ. Սարգսյան,** Հայաստան, Քրիստոնեական...: Գ. Կարախանյանի մոտ բացակայում է այս նշումը, բայց զրույցի ժամանակ պարզեցինք, որ նա ևս տեսել է այդ խաչքարի բեկորը, սակայն դրա վրա ուշադրություն չի դարձրել, քանի որ այն համարել է ուշ շրջանի:

քում: Հետագայում ներսում բացվել են նաև լուսամուտի 2 կողքերին գրեթե հավասար հեռավորությունների վրա գտնվող խորշեր, որոնք ունեն գրեթե միևնույն չափսերը՝ 0.04x0.30x0.35 մ և 0.40x0.27x0.35 մ: Այս խորշերը պահպանվել են նաև վերակառուցման ժամանակ և ներկայումս այնտեղ կիսասյրված մոմերի առկայությունը վկայում է, որ այն շարունակում է մնալ ուխտատեղի տեղի բնակչության համար: Քանի որ խորշերը գտնվում են բավականին բարձր, վերակառուցման ժամանակ խորշերի անմիջապես ներքևում կառուցվել են յուրօրինակ երկաստիճան փոքրիկ հարթակներ, որպեսզի այցելուները կարողանան հեշտությամբ հասնել խորշերին: Այսօր էլ Բարեկամավանի և հարևան գյուղերի բնակիչներն ուխտագնացության ժամանակ հուշարձանի մոտ մատաղ են կատարում:

Այսպիսով, ինչպես երևում է վերը շարադրվածից, Բարեկամավանի Բարձրեալ խաչ դամբարանը մասնակի վերակառուցումից հետո, մասամբ թերություններով և նախագծից շեղումներով, կրկին վեր է խոյացել իր տեղում, չնայած ըստ իս՝ այն կորցրել է իր սկզբնական տեսքը և այժմ այդքան էլ գրավիչ տեսք չունի: Այդուամենայնիվ տեղի բնակչությունը այն ընդունել է սիրով և այսօր էլ շարունակում է այցելել դարեր առաջ ուխտատեղիի վերափոխված այս դամբարանը:

ՌՈՒԲԻԿ ԷԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԸՆԴԴԵՄ «ԿԱՐԳ ՄԸ ՊՋՏԻԿ ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ»

Ֆեոդալական ինքնակալության միահեծան տիրապետության դեմ ուղղված երիտթուրքական շարժումն ավարտվեց սահմանադրական հեղաշրջմամբ: Զգալով, որ սահմանադրության գործադրման հետագա ձգձգումը կարող է կործանարար լինել իր գահի համար, Աբդուլ Համիդը 1908 թ. հուլիսի 24-ին սուլթանական «իրադե» հրապարակեց՝ սահմանադրությունը վերականգնելու և խորհրդարանի պալատի առաջիկա գումարման մասին: Ահա այսպես, գրեթե խաղաղ ու անարյուն ճանապարհով, թուրք բուրժուազիան ձեռք բերեց ռեալ իշխանություն և հնարավորություն ստացավ մասնակցելու երկրի քաղաքական-տնտեսական կյանքի ղեկավարմանը:

Երիտթուրքերը գոհ էին ձեռք բերածով և մտադրություն չունեին շարունակելու հեղափոխական պայքարը՝ հիմնահատակ խորտակելու կայսրության ֆեոդալական կարգերի հիմքերը: Ուստի «հուրիեթի» հռչակումից հետո նրանք հրաժարվեցին բարձրագոչ հեղափոխական ճառերից և սկսեցին ջանադրաբար պաշտպանել օսմանյան գահի անձեռնմխելիության գաղափարը:

Երիտթուրքերի համոզմամբ հեղափոխությունը լիակատար հաղթանակ էր տարել և այն խորացնելու հետագա բոլոր գործողությունները ձեռնտու կլինեին միայն ոչ մուսուլման տարրերի համար, որոնք, կայսրության թուլացումից օգտվելով, կձգտեին քաղաքական անկախություն ձեռք բերել: Իսկ դա հակասում էր թուրք բուրժուազիայի քաղաքական-տնտեսական շահերին: Այդ պատճառով էլ նրանք, բավարարվելով հեղափոխության կիսահաղթությամբ, սկսեցին ջանադրաբար պայքար մղել հանուն օսմանյան հայրենիքի ամբողջականության պահպանման:

Կայսրության անսասանությունն ապահովող ամենազորեղ միջոցը երիտթուրքերը համարում էին սուլթանական կարգերի գոյությունը, ուստի դավաճանություն էին համարում նրա անհրաժեշտությունը կասկածի տակ դնող ամեն մի մտայնություն: Հեղափոխության հենց սկզբնական շրջանում իթթիհատի պարագլուխ Ահմեդ Ռիզան հայտարարում էր, որ իր սերը հայրենիքի հանդեպ իրեն ստիպում է չկասկածել սուլթանի բարեխղճության վրա:

Այսպիսով, դեպքերի զարգացման ընթացքում պարզ էր դառնում, որ երիտթուրքական հեղափոխությունը բնավ էլ ժողովրդական-դեմոկրատական նպատակներ չէր հետապնդում: Վարպետորեն քողարկված այդ «քաղաքական կատակերգությամբ» թուրք բուրժուազիան ձգտում էր միայն չափավոր ռեֆորմների և բավարարվեց նրանով, որ սուլթանին ստիպեց հրաժարվել երկրի քաղաքական կյանքը տնօրինելու միահեծան իշխանությունից:

Չնայած երիտթուրքական հեղափոխությունը կանգ առավ կես ճանապարհին, բուրժուական հեղաշրջումից չվերաճեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխության, այնուամենայնիվ, ձեռք բերված սահմանադրական արտոնություններն էլ զգալի նվա-

ճում էին «զուլումի» ժամանակաշրջանի համեմատությամբ: Ժողովուրդը ցնծության մեջ էր: Առանձնապես ոգևորված էին ազգային փոքրամասնությունները՝ հայերը, հույները, արաբները և այլն, որոնք մեծ հույսեր էին կապել հեղափոխության հաղթանակի հետ: Ամենուրեք տեղի էին ունենում ցույցեր ու միտինգներ: Եղբայրաբար ողջագուրվում էին հայերն ու թուրքերը, մուսուլմաններն ու ոչ մուսուլմանները: Մարդիկ խանդավառությամբ էին դիմավորում երիտասարդ թուրքերին՝ ոգևորված օսմանյան կայսրության պայծառ ապագայի հեռանկարով:

Համատարած ոգևորության այդ օրերին էլ տասներկու տարվա բացակայությունից հետո տարագիր հայ մտավորականներից շատերի հետ Պոլիս է վերադառնում նաև Երվանդ Օտյանը: Սկսվում է երգիծաբանի գրական գործունեության ամենաբեղուն և արգասաբեր շրջանը (1909-1915): Այդ տարիներին նա գրում է իր լավագույն վեպերն ու վիպակները՝ ստեղծագործության նյութ դարձնելով ժամանակի սոցիալ-քաղաքական ու կենցաղային հրատապ հարցերն ու խնդիրները: Գեղարվեստին զուգահեռ Օտյանը եռանդուն գործունեություն է ծավալում նաև հրապարակախոսության բնագավառում: Խմբագրում ու հրատարակում է «Խարազան», «Կառափնատ», «Սև կատու» և «Մանանա» երգիծաթերթերը, աշխատակցում է «Հայրենիքին», «Արևելքին», «Ժամանակին», «Բյուզանդիոնին», «Ազատամարտին», «Շիրակին» և պոլսահայ մյուս պարբերականներին: Գրական-հրապարակախոսական գործունեությանը զուգահեռ թարգմանություններ է կատարում Դոստոևսկուց, Զոլայից, Տոլստոյից և այլն:

Սահմանադրական հեղաշրջումից հետո Պոլիս վերադառնալով հանդերձ՝ Օտյանը հավատ չէր տածում երիտթուրքերի և նրանց ստեղծած սահմանադրական կառավարության նկատմամբ:

«Այս սահմանադրությունը,- գրում է երգիծաբանը,- շատ խախուտ կը թվեր ինծի և բնավ վստահություն չէր ներշնչեր»[1]:

Տարագրության շրջանում Օտյանը շփվել էր բազմաթիվ թուրք հեղափոխականների հետ, որոնց եռանդն ու վճռականությունը սրճարաններում ճառելուց ու սուլթանի հասցեին «բարձրագոչ լուտանքներ տեղալուց» այն կողմ չէր անցնում: Իսկ որոշ ժամանակ անց, մոռացած հեղափոխական գործունեության ամեն մի ծրագիր, նրանք վերադառնում էին հայրենիք, ներում խնդրում «ամենաողորմած սուլթանից» և «լեցուն ամսականով մը» որևէ պաշտոն ստանալով՝ դառնում «ջերմ պահպանողական մը, Համիտի հավատարիմ բանակին մեջ»: «Գրեթե ամենքն ալ իրարու կը նմանին,- վերհիշում է Օտյանը,- և իրենցմե մին կրնա իբրև տիպար ծառայել ամենուն (4, 406):

Ահա, այս հեղափոխականներն էին, որ նախարարական աթոռներ էին գրավել նոր կառավարության կազմում: Ուստի Օտյանին բոլորովին էլ չէր զարմացնում այն իրողությունը, որ նրանք, դավաճանելով հեղափոխությանը, հաշտվողական դիրք էին գրավել սուլթանական կարգերի նկատմամբ:

Երգիծաբանը ծաղրի հուրն ուղղում է երիտթուրքերի դեմ, իր թերթերի էջերից ծանակում իթթիհատի պարագլուխներին, դատապարտում սուլթանական կարգերի

[1] **Օտյան Եր.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 463 :

(Օտյանի վեցհատորյակից կատարվող մեջբերման էջն այսուհետև կնշվի համապատասխան տեղում):

նկատմամբ նրանց հաշտվողական դիրքորոշումը, դիմակազերծում սահմանադրական կառավարության ռեակցիոն էությունը: Երիտթուրքերի դեմ ուղղված Օտյանի առաջին ամենաուժեղ ելույթներից են «Ահմե՛տ, Ահմե՛տ...» և «Քեմալ փաշայի հայտնությունները և Այիշե հանըմի գուշակությունները» ֆելիետոնները:

Համիդի գահընկեցությունից հետո Ահմեդ Ռիզան ընտրվում է օսմանյան խորհրդարանի նախագահ, և ինչպես վերն արդեն նշեցինք, շտապում է հայտարարել, որ ինքը դավաճանություն է համարում սուլթանական կարգերի անհրաժեշտությունը կասկածի ենթարկելը: Դատապարտելով Ռիզայի հաշտվողականությունը՝ Օտյանը զայրույթով գրում է, որ նրա՝ «երբեմն՝ թուրք հեղափոխության փառքերեն մեկը ըլլալը պատճառ մը չէ եղած որ այսօր ալ թուրք հեղափոխության արատներեն մեկը չդառնա»[2]:

Նշավակելով երիտթուրքերի ռեակցիոն, հետադիմական քայլերը՝ երգիծաբանը սիրով ու գուրգուրանքով է խոսում ժողովրդի ծոցից ելած այն երիտասարդ հեղափոխականների մասին, որոնք, անարատ պահելով ճշմարիտ հեղափոխության սրբազան հուրը, տարիների ընթացքում «ձուկերու կեր եղան օսմանյան ջուրերուն մեջ», անգթորեն գլխատվեցին Համիդի կողմից: Սուլթանի այդ սև գործն այսօր շարունակում էին երիտթուրքերը, որոնց առաջին զոհը եղավ «Սերպեսթի» թերթի խմբագիր Հասան Ֆեհմին («Թուրք ազատական մամուլի առաջին զոհը»[3]):

Երիտթուրքերի քաղաքական վարքագիծը շատ կողմերով հիշեցնում էր Համիդին: Տարբերությունը միայն այն էր, որ սուլթանը գործում էր բացահայտ, արևելյան բռնապետի անսքող դաժանությամբ, մինչդեռ նրա «դպրոցին մեջ իրենց դաստիարակությունը ստացած կարգ մը պզտիկ կարմիր սուլթանները» իրենց ռեակցիոն էությունը քողարկում էին ազատամտության կեղծ ֆրազներով: Ահա թե ինչու Օտյանը էական տարբերություն չէր տեսնում Համիդի ու երիտասարդ թուրքերի միջև և գտնում էր, որ երիտթուրքն ու հեղափոխությունն անհամատեղելի հասկացություններ են: «Բաներ կան,- գրում է երգիծաբանը,- որոնք որքան ալ իրարու մոտ գտնվին, երբեք իրարու չպտի զոդվին: Այս կարգեն են «թուրք» և «հեղափոխություն» բառերը: Իսկ կան բաներ ալ՝ որոնք որքան ալ իրարմե հեռու մնան, միշտ հեշտիվ կը զոդվին իրարու, ինչպես օրինակի համար «Ահմետ Րիզա» և «Սուլթան Համիտ» անունները»[4]:

Սահմանադրական Թուրքիայի քաղաքական կացությունը զավեշտական գույներով է պատկերված «Քեմալ փաշայի հայտնությունները և Այիշե հանըմի գուշակությունները» ֆելիետոնում: Իր ծաղրն ավելի դիպուկ ու նպատակասլաց դարձնելու համար Օտյանը դիմում է սրամիտ հնարանքի՝ միմյանց հակադրելով քաղաքական գործչի հայտարարություններն ու «ֆալ նայող» կնոջ գուշակությունները: Իր հայտարարություններում Քեմալ փաշան բավարարվում է միայն ճաշկերույթների նկարագրությամբ՝ անուշադրության մատնելով երկրում տիրող քաոսային իրավիճակը: Վարչապետի հայտարարություններին հակադրելով Այիշե հանըմի գուշակությունները՝ երգիծաբանը մի կողմից սարկաստիկ ծաղրի է ենթարկում նրա քաղաքական կուրությունը, մյուս կողմից՝ բացահայտում սահմանադրական Թուրքիայի հասարա-

[2] «Խարազան», Կ. Պոլիս, 1909, թիվ 1:

[3] «Խարազան», Կ. Պոլիս, 1909, թիվ 10:

[4] Նույն տեղում, թիվ 1:

կական կյանքի իրական պատկերը։ «Շատ մը խոսող մարդիկներ կը տեսնեմ,- ասում է գուշակը,- և շատ մըն ալ գրող մարդիկ կը տեսնեմ, խոսողները աղեկ բաներ կը խոսին, չխոսողները գեշ բաներ կը մտածեն, գրողները խելքներուն փչածը կը գրեն։ Թուխ մարդ մը կա՝ գեշություն ընել կուզե, շեկ մարդ մը կա, որ ո՛չ աղեկություն և ո՛չ գեշություն ընել կուզե...»[5]։

Վերոհիշյալ ֆելիետոնի տրամաբանական շարունակությունն է կազմում «‹‹Թանին››-ի խելքը գլուխը կուգա հետզհետե» պամֆլետը։

Այստեղ Օտյանը երգիծանքի հուրն ուղղում է սահմանադրական կառավարության ու հանձին «Թանին» թերթի՝ նրա պաշտոնական օրգանների դեմ, որոնք իդեալական գույներով էին ներկայացնում Թուրքիայի հասարակական կյանքը, հիացական գովեստներ շռայլում երիտթուրքերի հասցեին։ Մինչդեռ երկիրը հոգեվարքի մեջ էր։ Ժողովուրդը կոտորվում էր սովից ու համաճարակից։ Թուրք պաշտոնյաների կամայականությունները շարունակվում էին նույն դաժանությամբ, ինչ Համիդի ժամանակներում։ Բռնության ու սովի ճիրաններում հեծում էին ոչ միայն այլազգիները, այլև թուրք ժողովուրդը։

Հանդես գալով Թուրքիայի բոլոր ժողովուրդների անունից, պաշտպանելով նրանց բռնադատված իրավունքները՝ Օտյանը թունոտ սարկազմով պսակազերծում ու անարգանքի սյունին է գամում սահմանադրական ծախու մամուլն ու թավշապատ թիկնաթոռներին բազմած երիտթուրք նախարարներին։ «Սով կա, ահռելի, աղետալի սով կա գավառը, ո՛վ կառավարություն, ո՛վ Թալեաթ պեյ,- բուռն զայրույթով գրում է երգիծաբանը,- սով գիտե՞ք ինչ է. ձմեռը, ահավոր ձմեռը կը մոտենա և գյուղացին, ինչպես համիտյան բռնակալության օրով, այսօր սահմանադրական ռեժիմին մեջ ալ պիտի մեռնի անոթութենե։

...Ի՞նչ ըսին սահմանադրութենեն ի վեր եկող գացող ներքին գործերու նախարարները, ի՞նչ ըրին, ո՛ր կողմ գործ մը տեսան, ո՛ր ցավին դարման տարին, ո՛ր արցունքը սրբեցին, որո՛ւն հաց տվին։ ...Եվ արդեն այդ մարդոցմեն ի՛նչ կը հուսացվեր,- որպես մեղադրական եզրակացություն հնչում է երգիծաբանի խոսքը,- ովքե՞ր էին, ուրկե՞ եկած էին, որո՞ւ դպրոցե էին. չէ՞ որ Համիտի դպրոցին մեջ ստացած էին իրենց դաստիարակությունը»[6]։

Օտյանն անվստահությամբ էր համակված նաև երիտթուրքերի ազգային քաղաքականության նկատմամբ։ Նա զգում էր, որ կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարության ու քաղաքական ազատության մասին թուրք սահմանադրականների բոլոր հայտարարությունները կեղծ էին, ժամանակավոր խաղ, որով նրանք ձգտում էին հանգստացնել ոչ մուսուլման ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը և պատեհ առիթից օգտվելով՝ դաժան հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ Երգիծաբանի կասկածները շուտով իրականացան։

Սահմանադրության «մեղրամիսը» դեռևս չէր վերջացել, Պոլսի փողոցներում տեղի ունեցող միտինգների ու ցույցերի ժամանակ դեռ եղբայրաբար ողջագուրվում էին հայերն ու թուրքերը, երբ Կիլիկիայից տագնապալի լուրեր են հասնում մայրաքաղաք։ Կանոնավոր զորքերն ու թուրք խուժանը 1909 թ. ապրիլին հուր ու մոխրի են վե-

[5] Նույն տեղում, թիվ 8։

[6] «Խարազան», Կ. Պոլիս, 1909, թիվ 16։

րածում Ադանա քաղաքն ու շրջակա հայկական գյուղերը՝ կոտորելով շուրջ 30 հազար հայեր։

Հարվածն անակնկալ էր։ Ոչ ոք չէր կարող մտածել, որ երիտթուրքերի «եղբայրական» հավաստիացումներից հետո հնարավոր էր այդպիսի ուխտադրժություն։ «Սահմանադրութենեն ետքը գոնե ջարդը անկարելի կը կարծեինք,- վերհիշում է Օտյանը,- մանավանդ որ մեր թուրք հայրենակիցները քանի մը ամիս առաջ, զղջումի արցունքներ թափած էին հայ նահատակներու գերեզմաններուն վրա» /4, 505/։

Ադանայի ջարդը մեկ անգամ ևս ապացուցեց, որ ազգային հարցում երիտթուրքերը հավատարմորեն որդեգրել էին Համիդի հայատյաց քաղաքականությունը։ Պարզ դարձավ, որ արյունռուշտ սուլթանին փոխարինելու էին եկել հայատյացությամբ նրան գերազանցող թուրք բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք ավելի մեծ աղետներ էին բերելու հայության գլխին։

Ադանայի ջարդի ցնցող տպավորության տակ Օտյանը գրում է «Ջայլեղբայրներ» և «Մարդախոշոշ թաքթիք» պամֆլետները, որոնցում բուռն զայրութով ու ատելությամբ դիմակազերծում է այդ արյունալի սպանդի գլխավոր հանցավորներին՝ երիտթուրքերին։

Սահմանադրության առաջին օրերին նրանք եղբայրական սիրո ու համերաշխության զգայացունց խոստումներ էին տալիս հայերին, նրանց համարում իրենց հավատարիմ դաշնակիցը, որոնց անձնվեր աջակցությամբ միայն կարողացան գործադրության մեջ դնել սահմանադրությունը։ Երիտթուրքերն այցելում են նաև Գր. Օտյանի գերեզմանին՝ հարգանքի տուրք մատուցելով թուրքական սահմանադրության հիմնադիրներից մեկին, արցունք թափում նահատակված հազարավոր հայ զոհերի հողակույտերին։ «Խղճի խայթի ու ապաշավի այս ինքնաբուխ պոռթկումը մեզ հավատացուց,- դառը հեգնանքով գրում է Օտյանը,- թե սիրո և եղբայրության այդ աննախընթաց ցույցը բնական և անդիմադրելի դրդումի մը արդյունք էր և ոևէ առնչություն չուներ փարավոնյան հինավուրց ժամանակի ջայլամայրերու կամ եղերամայրերու ընկերակցություններուն հետ, որոնք ինչպես հայտնի է, իբրև գործ կը կատարեին լալկանի դերը»[7]։

Ծաղրելով երիտթուրքերի «եղերամայրությունը»՝ երգիծաբանն առաջարկում է ստեղծել «թուրք ջայլեղբայրներու ակումբ մը», որ սրտազեղ արցունքներ թափի նոր նահատակների հողակույտերի վրա՝ իբրև վկայություն «թուրք և հայ համերաշխության»։ «Ու քանի որ մենք, այսպես, համիտական բռնակալության տակ կամ սահմանադրական ռեժիմով, հանուն մոլեռանդության կամ հանուն ազգերու համերաշխության, Շերիաթի սիրույն կամ վալիի մը քեյֆին համար, շարունակաբար ու հավիտենապես պիտի ջարդվինք, շնորհակալ ըլլանք մեր ջայլեղբայրներուն,- հեգնում է Օտյանը,- որոնք կուլան մեր հողակույտերուն վրա»[8]։

Զայրացուցիչն ու քստմնելին այն էր, որ Ադանայի ջարդի համար ոչ մի թուրք պաշտոնյա պատասխանատվության չենթարկվեց։ Երիտթուրքական կառավարությունը ոչ միայն թաքցրեց ջարդի հանցավորներին, այլև լրբենի անպատկառությամբ պաշտպանեց թուրքերի անմեղությունը։ «Մարդախոշոշ թաքթիք» պամֆլետում «ա-

[7] «Շիրակ», Կ. Պոլիս, 1909, թիվ 12-13, էջ 293։

[8] «Շիրակ», Կ. Պոլիս, 1909, թիվ 12-13, էջ 294։

նարատ մարդասպանի» երիտթուրքական այդ գիշատչային բարոյականությունն է պսակազերծում Օտյանը։ «Իթթիհատը թուրք ցեղին վատթարացումը մշտնջենավորած ու ծանրացուցած կըլլա, երբ կը պահանջե, որ Դահլիճին հայտարարության մեջ խոսք մըն ալ ավելցվի թե՝ թուրքերն ալ անմեղ էին»[9]։

Սահմանադրական կառավարության նման դիրքորոշումից խրախուսված՝ Ադանայի իթթիհատական տեղական կոմիտեները, որոնք սանձազերծել ու գլխավորել էին նախճիրը, ցինիկաբար պահանջում էին պաշտոնապես ճանաչել իրենց անմեղությունը։ «Այս մարդախոշոշները,- զայրույթով գրում է երգիծաբանը,- որոնց ձեռվըները դեռ արյունով ներկած կը մնան, անարատության վկայական մը ուզելու չափ աներեսություն ունեցան։

... Մարդախոշոշները կը պոռան այնուամենայնիվ.- անարա՛տ ենք, անարա՛տ։

Գռեհիկ բայց դժոխային ու արդյունավոր թաքթիք»[10]։

Իթթիհատական պետության հակահայկական քաղաքականությունն Օտյանը սարկաստիկ ծաղրի է ենթարկել նաև «Ճանճերեն ետքը տզրուկները» ֆելիետոնում։ Վկայակոչելով քաղաքապետության որոշումը, թե դատական պատասխանատվության կենթարկվեն բոլոր այն քաղաքացիները, ովքեր կհամարձակվեն առանց բժշկի խորհրդի «արյուն առնել» տզրուկներով, երգիծաբանը քաղաքական խոր ընդհանրացման է հասնում։ Առօրեական փաստը առիթ դարձնելով՝ նա ծաղրն ուղղում է «մեծ տզրուկներու դեմ», որոնց թողտվությունից քաջալերված՝ թուրք մոլեռանդ ամբոխը անմեղ հայերի արյունն էր հեղում անպատիժ կերպով։ «Լավագույն չէ՞ր ըլլար,- հեգնանքով խորհուրդ է տալիս Օտյանը,- քանի որ խնդիրը արյուն առնելու կամ թափելու վրա է, մեր ուշադրությունը ուրիշ կողմ դարձնել և «օրինական հետապնդում» կատարել այն առնողներուն դեմ, որոնք ասդին անդին, ոչ միայն գարնան՝ այլ տարվա տասներկու ամիսը իրենց դրացիներուն արյունը կառնեն անպատիժ կերպով։ Միթե այդ ալ վնասակար սովորություն մը չէ՞, այնքա՛ն խորապես արմատացած դարերե ի վեր։

Նախ մեծ տզրուկներու դեմ միջոցներ ձեռք առնենք»[11]։

Հայ ժողովրդի նկատմամբ իթթիհատականների ատելությունն ավելի է բորբոքվում Տրիպոլիտանական (1911-1912) և Բալկանյան (1912-1913) պատերազմներից հետո, երբ Թուրքիան, ծանր պարտություններ կրելով, զրկվեց իր եվրոպական վիլայեթներից։ Եվրոպական տիրույթներից նրան մնացին միայն Ստամբուլը և Արևելյան Թրակիայի մի մասը։ Օսմանյան կայսրությունը հայտնվեց փլուզման եզրին։ Թուրք ազգային բուրժուազիան ստեղծված ծանր դրությունից դուրս գալու ելք էր փնտրում։ Եվրոպական տիրույթները կորցնելուց հետո նա իր հայացքն ուղղեց դեպի արևելք։ Կայսրության գոյությունը պահպանելու համար առանձնահատուկ արժեք ձեռք բերեցին Անատոլիան ու արևելյան մյուս շրջանները։ Երիտթուրքերը Անատոլիան հռչակեցին թուրքերի «սուրբ հայրենիք»՝ նրա տարածքի մեջ մտցնելով ողջ Արևմտյան Հայաստանը։

Բայց ապագա կայսրության տարածքային ամբողջության հռչակումը հարցի մի

[9] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, թիվ 1452։

[10] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, թիվ 1452։

[11] «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, թիվ 1422։

կողմն էր միայն: Իրենց քաղաքական ծրագրերն իրականացնելու համար երիտթուրքերին հարկավոր էր նաև Թուրքիայում ստեղծել էթնիկական-ազգային միատարրություն, այսինքն՝ բոլոր այլազգիներին ձուլել և այդ ճանապարհով վերջնականապես լուծել գորդյան հանգույց դարձած ազգային հարցը:

Առաջադրված խնդիրն իրագործելու ճանապարհին գլխավոր խոչընդոտը հայերն էին: Ուստի երիտթուրքերը վճռում են «պատեհ առիթով արմատապես բնաջնջել հայկական բարձրավանդակի հայությանը»[12] և վերջնականապես փակել հայկական հարցը:

Համաթուրքականության գաղափարի իրականացման այդ մարդատյաց ու բարբարոս ծրագիրն էին որոճում իթթիհատական պանթուրքականները, երբ 1912 թ. նորից հրապարակ նետվեց հայկական բարենորոգումների հարցը, որն առաջադրեցին Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան: Եռյակ տերությունների այդ քայլը, ինչ խոսք, մարդասիրությունից չէր բխում: Բարենորոգումների պատրվակով նրանք ձգտում էին իրենց քաղաքական ազդեցությունը տարածել Թուրքիայում և հարվածել նրա գլխավոր դաշնակցին՝ Գերմանիային:

Եվ նորից Օտյանն առաջիններից մեկն էր, որ ծաղրուծանակի ենթարկեց եվրոպական տերությունների կեղծ մարդասիրությունը, դիմակազերծեց նրանց դիվանագիտական փարիսեցիությունը: Կյանքի դառը փորձով երգիծաբանը համոզվել էր, որ «Եվրոպական դիվանագիտության չվանովը հոր իջնողը անպատճառ հորին մեջ կը մնա, որովհետև անգամ մը որ մարդը հորը իջեցուցին, մեջը կը ձգեն և կսկսին խնդալ՝ հորին գլուխը կեցած»[13]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին նրանք այդպես վարվեցին նաև հայերի հետ: Բարձրացնելով բարենորոգումների հարցը և գործնական ոչ մի քայլ չկատարելով այդ ուղղությամբ՝ ավարի մոլուցքով բռնված եվրոպական տերությունները բորբոքեցին «վիրավոր գազանի» քինախնդրությունը՝ անզեն հայությանն անօգնական թողնելով նրա բաց երախի առաջ: Նման բարեգործությունը հղի էր մահացու հետևանքներով: Ահա թե ինչու հանդես գալով հայ ժողովրդի անունից՝ Օտյանը «Չափազանց բարեկարգություն չենք ուզեր» ֆելիետոնում գրում էր. «Այս օրերս, ամեն կողմ, շա՛տ կը զբաղին հայերով: Հայերը ի՞նչ պետք ուզեն, հայերը ո՞րը պետք է ընտրեն, հայերը պետք է անկախությո՞ւն պահանջեն, ռուսական տիրապետությունը նախընտրե՞ն, թե Թուրքիո գերիշխանության և եվրոպական հակակշռի տակ բարենորոգումներով գոհանան:

...Ես, իբրև անգո Հայաստանի մը անգո մեկ անդամը սա պատասխանը պիտի տայի:

- Տիարք եվրոպական պետությունք և բարեխնամ թուրք կառավարություն, մենք հայերս մեկ բան մը կուզենք... այսինքն չափազանց բարեկարգություն չենք ուզեր»[14]:

Օտյանն համոզված էր, որ մեծ տերություններին բնավ էլ չէր հետաքրքրում փոքրաթիվ ժողովուրդների ճակատագիրը, իսկ այն «մարդասիրական» ձեռնարկները, որոնցով նրանք երբեմն հանդես էին գալիս, թելադրված էին նրանց քաղաքական-

[12] Տե՛ս **Ամուրեան Ա.,** Հայ դատ, Թեհրան, 1977, էջ 23:

[13] «Խարազան», Կ. Պոլիս, 1909, թիվ 16:

[14] «Սև կատու», Կ. Պոլիս, 1913, թիվ 6:

տնտեսական շահերից:

Ամեն պատեհ առիթով հրապարակ նետելով հայկական վիլայեթներում բարենորոգումներ կատարելու անիրագործելի ծրագրեր՝ եվրոպական տերությունները հետապնդում էին Մերձավոր արևելքում իրենց քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու և Թուրքիայից տարածքային զիջումներ կորզելու նպատակ: Դիվանագիտական այս փարիսեցիության ակնհայտ վկայությունն էր այն, որ բարենորոգումներ պահանջելով հանդերձ՝ եվրոպական տերությունները խուսափում էին հայկական հարցը քաղաքական ճանապարհով լուծելուց և ջանադրաբար պաշտպանում էին Թուրքիայի տարածքային անբաժանելի ամբողջության ստատուս քվոն՝ դրանով հավերժացնելով քրիստոնյա ժողովուրդների ստրկական վիճակն ու ապահովելով կաթվածահար բռնապետության հետագա գոյությունը: Մեծ տերությունների դիվանագիտական այս քստմնելի խաղը դիպուկ է երգիծում Օտյանը «Թուրքիո անբաժանելի ամբողջության վարդապետությունը» ֆելիետոնում: «Թուրքիո ամբողջության անբաժանելիությունը քաղաքական վարդապետություն մըն է, որ շատ ջուր կը վերցնե,- գրում է երգիծաբանը:

- Առաջին անգամ կարծեմ Խրիմի պատերազմի ատեն վճռվեցավ ատիկա, և շիտակը ըսելու համար, անկեց ի վեր միշտ կը հարգվի:

- Բայց ինչպե՞ս կը հարգվի, քանի որ Թուրքիա հետզհետե կը պզտիկնա, պիտի առարկեք թերևս:

Ատիկա ցույց կուտա, թե վարդապետության բուն ոգին չեք ըմբռնած: Մեծ տերությունները հանձն առած են պահպանելու ամեն մեկ նոր մասնակի բաժանումե ետքը մնացած Թուրքիո հողային ամբողջությունը: Դիվանագիտական վարդապետությունները ասանկ նրբություններ ունին երբեմն»[15]:

Խորությամբ ըմբռնելով դիվանագիտական այդ վարդապետությունների ներքին կեղծիքը՝ Օտյանը քաղաքական իրատեսության է կոչում հայ ժողովրդին ու նրա քաղաքական գործիչներին, խորհուրդ տալիս շատ չխանդավառվել դեսպանական ժողովներով, որոնք անիրական ոգևորություն էին առաջացնում ազգային շրջաններում, և քաղաքական սթափ խորաթափանցությամբ ազդարարում էր, որ «Հայաբնակ գավառներու բարենորոգմանց ծրագիրը Սինոպի թիարանին մեջ հարյուր մեկ տարի մնալու դատապարտված է»[16]:

Այս համոզումից ելնելով՝ նա դատապարտում է նաև հայ ազգային այն գործիչներին, որոնք պատմության դասերից չխրատվելով՝ դեռևս շարունակում էին հավատ տածել եվրոպական դիվանագիտության հանդեպ: Քաղաքագետների այդ մոլորությունն ու մեծ տերությունների ավարառությունը սարկաստիկ ծաղրի է ենթարկված «Կատուներու վեհաժողովը» այլաբանական ֆելիետոնում: Ուշագրավ է, որ այս հարցում ևս Օտյանը հետևում է Մ. Նալբանդյանի և Հակոբ Պարոնյանի ավանդներին: Զարգացնելով Նալբանդյանի այն միտքը, թե մեծ տերությունները իրենց փորի համար մուկ բռնող կատուներ են, Լոնդոնում հրավիրվելիք կոնֆերանսը, որ պիտի քննարկեր Բալկանյան առաջին պատերազմի հարցը, Օտյանը բնութագրում է որպես «Կատուներու վեհաժողով»:

---

[15] «Ժամանակ», Կ. Պոլիս, 1912, թիվ 1315:

[16] «Սև կատու», Կ. Պոլիս, 1913, թիվ 7:

«Այս միջոցիս կատուներու աշխարհը մեծ իրարանցումի մեջ է։

Մեկ քանի փոքրիկ ու սովալլուկ կատուններ էնկյուրի խոշոր ու աղվոր կատվի մը ճանկերուն մեջեն հափշտակած են թոքի մեծկակ կտոր մը, մինչ այս վերջինը ինքնավստահ հանդարտությամբ մը մշիկմշիկ կը քնանար։

Այս անսովոր դեպքը,- ակնարկելով բալկանյան ժողովուրդների նվաճած անկախությունը, գրում է Օտյանը,- մեծ զարմանք ու ապշություն հառաջ բերած է ընդհանրապես ամեն տեսակի ու մեծության կատուներու մեջ»։

Եվ ահա, մեծ կատուները, այսինքն՝ եվրոպական տերությունները, օգտվելով այն հանգամանքից, որ պատերազմից քայքայված Թուրքիան ու Բալկանյան երկրներն այլևս անկարող են որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ, որոշում են «կատուներու վեհաժողով մը գումարել» և «խնդիրը ուզածներուն պես կարգադրել»։ «Անոնք, իրենց այս վիճակին մեջ,- խորհուրդ է տալիս Խոհեմ ու փորձառու մի կատու (Անգլիան),- ստիպված են կամա ակամա մեր խոսքը մտիկ ընելու»[17]։

Հայկական վեց վիլայեթների համար եվրոպական երաշխավորությամբ ինքնավարություն ձեռք բերելու հույսով կատուների վեհաժողովին է ներկայանում նաև Վանի կատուն, հանձին որի Օտյանը նկատի է ունեցել հայկական պատվիրակությունը։ Բայց ժողովասրահի դռներից ներս մտնելու համար «երկաթյա շերեփ» էր հարկավոր, մինչդեռ «խեղճուկրակ, ոսկորները դուրս ցցված, գրեթե կիսամեռ» Վանի կատուն ձեռքին միայն աղերսագիր ուներ։ Դրա համար էլ մեծ կատուները մոռանում են նրա գոյությունը։

Ավարտվում է վեհաժողովը, և «կյանքի, ինչքի ու ապահովության» աղերսով հայոց պատվիրակության խնդրանքը մնում է անպատասխան մինչև ցնոր տնօրինություն։ «Եթե նոր վեհաժողով մը գումարենք, միտքերնիս մնա տե բան մը ընենք»,- Վանի կատվին հուսադրում են ժողովականները։

Ինչպես այս, այնպես էլ «Բարենորոգմանց ծրագիրը», «Լայն իրավասություն», «Թուրքիո անբաժանելի ամբողջության վարդապետությունը», «Հայկական խնդիրը և առջի գիշերվան պարահանդեսը», «Պոլսո դեսպաններուն համաժողովը», «Հայկական խնդիրը կը պարե» և բազմաթիվ այլ ֆելիետոններում ու պամֆլետներում Օտյանը մի կողմից դիմակազերծում է մեծ տերությունների հայադավ քաղաքականությունը, մյուս կողմից ծաղրում ու դատապարտում է ազգային որոշ գործիչների քաղաքական կարճատեսությունը, որոնք, անցյալի փորձից չխրատվելով, շարունակում էին հավատ տածել «բարեգութ» Եվրոպայի նկատմամբ։

Երիտթուրքերի ազգային քաղաքականության դեմ ուղղված Օտյանի գրական ելույթների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Պատերազմ և խաղաղություն» վիպակը, ուր երգիծաբանը գեղարվեստական ինքնատիպ հորինվածքով բացահայտում է թուրք բուրժուազիայի ազգային ռեակցիոն քաղաքականությունը, պսակազերծում իթթիհատի առաջադրած «օսմանյան ընդհանուր հայրենիքի» և «օսմանյան հայրենասիրության» նենգապատիր գաղափարը։

[17] «Սև կատու», Կ. Պոլիս, 1912, թիվ 2։

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1864-1929)

Հոյակապ կրթություն ստացած մի անձնավորություն, որն իր ճաշակը ձևավորել է համաշխարհային գրականության դասական նմուշներով, Հովհաննիսյանը բոլոր տեսակետներով հանդիսացավ հայ նոր բանաստեղծության նորագույն փուլի ստեղծողը: Հայ բանաստեղծության շատ ներկայացուցիչներ կա՛մ հանդիսանում են Հ. Հովհաննիսյանի ուղղակի աշակերտները, կա՛մ կապված են նրա հետ բարեկամական սերտ կապերով և չեն խուսափել նրա բարերար ազդեցությունից:

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ

Գևորգյան ճեմարանի այս երախտավորը ավելի սերտ ու երկարատև կյանքով է կապված եղել իր ծննդավայրի ու հայրենակիցների հետ: Հ. Հովհաննիսյանը մեծ հարգանք էր վայելում ճեմարանի ինչպես ուսուցչության, այնպես էլ աշակերտության և ուսանողության կողմից: Այդ հարգանքը նա վաստակել էր թե՛ որպես բանաստեղծ, թե՛ որպես ուսուցիչ-մանկավարժ և թե՛ որպես մարդ-անհատականություն: Նա խոր հարգանք էր վայելում նաև իր համագյուղացիների մեջ: Էջմիածնում բոլորն էին ճանաչում ու հարգում Մոսկվայում բարձրագույն կրթություն ստացած ու հայրենի գյուղ վերադարձած իրենց հայրենակցին: Նրան սիրում ու հարգում էին ոչ միայն որպես տեղացու ու մեծ բանաստեղծի, այլև այն բանի համար, որ նա գյուղացիների հետ իրեն պահում էր շատ պարզ ու հասարակ. ամենքի հետ փողոցում կանգնում, խոսում էր, խորհուրդներ տալիս և աշխատում էր օգտակար լինել ամեն մեկին՝ ինչով կարող էր:

Հովհաննիսյանը բնավորությամբ հանգիստ ու մեղմ մարդ էր, վիճաբանություն չէր սիրում. երբ տրամադրությունը լավ էր լինում, հաճելի խոսակից էր, սիրում էր ընկերական մտերիմ շրջանում ուրախ ժամանակ անցկացնել, սիրում էր նաև որսի գնալ: Հաճախ էր իր տանը հավաքույթներ կազմակերպում: Կինը և երեխաները նույնպես մարդամոտ էին ու հյուրասեր: Ընտանիքում նա օրինակելի հայր էր. շատ էր սիրում կնոջն ու երեխաներին (ուներ 3 տղա և 4 աղջիկ), երբեք չէր վիճում կնոջ ու երեխաների հետ. բացի խորհուրդներ ու խրատներ տալուց, լսում էր նաև նրանց կարծիքը:

Հովհաննիսյանը հարուստ գիտելիքների տեր մարդ էր. հրաշալի գիտեր պատմություն, արվեստ ու գրականություն, գիտեր մի քանի լեզուներ. հրաշալի տիրապե-

տում էր հայերեն հին ու նոր լեզուներին, ռուսերենը գիտեր մայրենի լեզվի պես, լավ գիտեր լատիներեն ու հին հունարեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ինչ-որ չափով նաև՝ անգլերեն ու գերմաներեն: Ճեմարանում ռուսաց լեզվից բացի դասավանդում էր նաև հունարեն:

Հովհաննես Հովհաննիսյանը ծնվել է Էջմիածնում 1864 թվի մայիսի 8-ին:

Հայրը՝ Մկրտիչ Հովհաննիսյանը, բնիկ էջմիածնեցի էր՝ հողագործ գյուղացի, գրագետ էր և լավ գիտեր ուսման հարգը: Մայրը՝ Անուշ Տեր-Մեսրոպյանը, նահապետական հայ կնոջ կատարյալ տիպար էր: Բանաստեղծի հորեղբայրը՝ վաղամեռիկ Հովհաննեսը, գրագետ երիտասարդ էր՝ օժտված բանաստեղծական շնորհքով:

Հոր օգնությամբ գրագետ դառնալուց հետո Հովհաննեսին հայրը ընդունել է տալիս Էջմիածնի ծխական ուսումնարան, ապա՝ Բաստամյանի մասնավոր դպրոց, այնուհետև՝ Երևանի պրոգիմնազիա: Այստեղ տղան սովորում է մեկ տարի. դպրոցի տնօրինությունը, գնահատելով երեխայի գիտելիքների պաշարը, երաշխավորում է նրան սովորել Մոսկվայի Լազարյան ճեմարանում:

1877-ին տասներեք տարեկան Հովհաննեսը Լազարյան ճեմարանի 5-րդ դասարանի գիշերօթիկ սան էր. նրա սիրելի ուսուցիչն էր նույն ճեմարանի շրջանավարտ և անվանի բանաստեղծ Երվանդ Շահազիզը, որը մեծ դեր է խաղում ապագա բանաստեղծի կյանքում: 1883 թվին Տիգրան Նազարյանի խմբագրած «Աղբյուր» հանդեսում լույս է տեսնում պատանու առաջին բանաստեղծությունը՝ «Ջինջ երկնքից ոսկի արև»: Այդ նույն թվին էլ Հովհաննիսյանն արծաթե մեդալով ավարտում է ճեմարանը և անմիջապես ընդունվում Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը:

Այստեղ արդեն ռուսաց լեզուն կատարելապես տիրապետած երիտասարդ բանաստեղծի համար բացվում են լայն հորիզոններ. ռուսերենի լավ իմացության շնորհիվ նա եռանդագին մասնակցում է համալսարանի ուսանողների գրական ու հասարակական կյանքին, կազմակերպում է գրական խմբակ, որին մասնակցում են նաև տարբեր ազգերի ուսանողներ, իր շուրջն է հավաքում հատկապես բանաստեղծական ձիրք ունեցող ուսանողներին, կազմակերպում է գրական ասուլիսներ: Հաճախում են համերգների ու ներկայացումների, լինում են թանգարաններում ու ցուցահանդեսներում, բարեկամական կապեր են հաստատում անվանի գրողների ու արվեստագետների հետ:

1885-ին Հովհաննիսյանը գրական խմբակի անունից ցավակցական նամակ է գրում հանգուցյալ Վիկտոր Հյուգոյի ընտանիքին, ստանում է շնորհակալական պատասխան:

1887 թվին գրական այս խմբակի հավաքած դրամական միջոցներով Մոսկվայում հրատարակվում է Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, որն անմիջապես իր վրա է հրավիրում արևելահայ և արևմտահայ գրական հասարակայնության ուշադրությունը: Ապագա խոստացող շնորհալի բանաստեղծին շնորհավորում են Ղևոնդ Ալիշանը, Ղազարոս Աղայանը, իր առաջին ուսուցիչ Սմբատ Շահազիզը և էլի շատերը: Հովհաննես Թումանյանը տարիներ անց գրելու էր. «Ռափայել Պատկանյանից 30 տարի հետո՝ 1877 թվականին, ուսանող Հ. Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին գիրքը, ու արևելահայ գրականության մեջ սկիզբ առավ 2-րդ շրջանի բանաստեղծությունը: Ողջունում եմ ձեզ,

իմ նոր ընկերներ, որ նոր ոգևորությամբ ու նոր երգերով հայտնվում ենք հայոց գրական աշխարհքում»[1]:

Փաստորեն Հովհաննիսյանը առաջիններից էր, ով թարմություն ու նորություն բերեց արևելահայ բանաստեղծության մեջ՝ լեզվական նոր որակով ու բարձր արվեստով հնչեցնելով բնության ու սիրո երգեր, հարազատ մնաց նաև ժողովրդական բանաստեղծությանը, ինչպես նաև դիցաբանությանը՝ «Վահագնի ծնունդը» և «Արտավազդ»: Նա իր բանաստեղծական բարձր արվեստով անդրադարձել է նաև մեր ժողովրդի պատմական անցյալին՝ «Վարդանանց օրը», «Տղմուտ», «Սյունյաց իշխանը», «Զինվորի մահը»: Ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ պրոֆ. Հ. Ղանալանյանը՝ «Առասպելի ոսկյա կեղևը բացելով՝ Հովհաննիսյանը համահնչյուն է դարձնում այն՝ ժամանակակից դեպքերին, ներկայի շնչով ջերմացնում մեռած պատմական անցյալը»[2]:

Ահա թե ինչու Հ. Հովհաննիսյանին այնքան բարձր էր գնահատում նաև հայ ժողովրդի մեծ բարեկամ Վալերի Բրյուսովը (1873-1924). նա իր “Поэзия Армении” անթալոգիայում թարգմանել է նաև Հովհաննիսյանի «Արտավազդը» և «Սարն ի վեր» ստեղծագործությունները, և երբ նա 1916 թ. եկավ Անդրկովկաս, Թիֆլիսում և Էջմիածնում զեկուցում կարդաց հայ բանաստեղծության հին ու նոր շրջանների մասին, հատուկ անդրադարձավ նաև Հ. Հովհաննիսյանին: Ասենք նաև, որ Վ. Բրյուսովը իր թարգմանական անթալոգիան կազմելուց առաջ խորապես ուսումնասիրել ու մշակել էր հայոց պատմությունն ու մշակույթը, սովորել էր նաև հայոց լեզուն: Նա անկեղծորեն խոստովանում է. «Հայաստանը ուսումնասիրելու մեջ գտա վեհ, հոգևոր հրճվանքների անսպառ աղբյուր, որպես պատմաբան, որպես գիտության մարդ՝ ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ամբողջ ինքնատիպ աշխարհ, իսկ որպես բանաստեղծ, որպես արվեստագետ՝ հայ պոեզիայի մեջ տեսա գեղեցկություն, մինչև այդ ինձ համար անհայտ տիեզերք»[3]:

Հ. Հովհաննիսյանի տաղանդը գնահատելուց բացի Բրյուսովը հատուկ ընդգծում է նաև նրա սերը ռուսաց լեզվի նկատմամբ, որը գերազանցում է նույնիսկ շատ ռուսների. «Ռուսների մեջ էլ շատ չեն ռուսաց գրական լեզու իմացողները, ինչպես Հովհաննես Հովհաննիսյանը»:

Տեղին է նշել նաև, որ Հովհաննիսյանի և Բրյուսովի ընտանիքները նույնպես մտերիմ են եղել իրար հետ, և Հովհաննիսյանի մահվան կապակցությամբ (1929) Վ. Բրյուսովի այրին՝ Իրաննա Մատվեևնան, ցավակցական հեռագիր է ուղարկել բանաստեղծի ընտանիքին, նամակում միաժամանակ ասված է, թե Բրյուսովը ինչպիսի քնքուշ սիրով է կապված եղել Հովհաննիսյանի հետ[4]:

1888-ին 24 տարեկան Հովհաննիսյանն ավարտում է Մոսկվայի համալսարանը և, գրականագիտական ու լեզվական մեծ գիտելիքներով զինված, բանասեր-բանաստեղծը վերադառնում է հայրենիք-Էջմիածին՝ իր ժողովրդին ծառայելու: Աշխատան-

---

[1] **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, Եր., 1969, հատոր 4, էջ 278-279:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Հ.,** Բանաստեղծություններ, Եր., 1949, Հ. Ղանալանյանի առաջաբանից:

[3] Տե՛ս “Армянская поэзия в переводах В. Я. Брюсова” գրքի Վ. Բրյուսովի ընդարձակ առաջաբանից, Երևան, 1956:

[4] Տե՛ս **Զարյան Ռ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում, հուշեր), Երևան 1988, էջ 474:

քի անցնելուց առաջ նա 3 ամիս շրջագայում է Եվրոպայում, լինում է Փարիզում, Լոնդոնում, Վիեննայում, լինում է նաև Պոլսում, ծանոթանում է դրսի գրական կյանքին ու արվեստին, վերադառնում է Էջմիածին ու հրավիրվում Գևորգյան Հոգևոր Ճեմարանում աշխատելու: Նա այստեղ դասավանդում է ռուսաց լեզու և գրականություն, հունարեն ու ընդհանուր գրականություն:

Հովհաննիսյանը Ճեմարանի ամենաերկարակյաց ուսուցիչն էր. նա այստեղ դասավանդեց 20 տարի: Այդ ընթացքում նա երկու անգամ, կարճ ժամանակով, հրավիրվել է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում ռուսաց լեզու և գրականություն դասավանդելու: Այստեղ նա միաժամանակ վարել է «Արձագանք» թերթի գրականության և թատրոնի բաժինների աշխատանքները:

Հովհաննիսյանը պաշտոնավարեց Գևորգյան Ճեմարանում՝ շրջապատված լինելով անվանի մանկավարժ-գիտնականներով, երաժիշտներով ու նկարիչներով: Նրա մտերիմ ընկերներն էին Հրաչյա Աճառյանն ու Մանուկ Աբեղյանը, Գարեգին Լևոնյանն ու Ստեփան Կանայանը, Հակոբ Մանանդյանն ու Նիկողայոս Մառը, Կոմիտասն ու Սպիրիդոն Մելիքյանը, նկարիչներ Վարդգես Սուրենյանցն ու Եղիշե Թադևոսյանը:

Վարդգես Սուրենյանցի ու Հովհաննիսյանի հետ առնչվող մի հետաքրքիր իրողության մասին է պատմում արվեստաբան-գրականագետ Ռուբեն Զարյանը, որը շատ մտերիմ է եղել Հովհաննիսյանների բազմանդամ ընտանիքի հետ: Իրողությունը նրան պատմել են բանաստեղծի կինը՝ Զարուհին, և աղջիկը՝ Էվելինան: Պատմել են, որ օրիորդ Զարուհին Թիֆլիսի հայերից էր, ավարտել էր տեղի ռուսական գիմնազիան, նրա քրոջ ամուսինը՝ Մելիք-Ադամովը, Էջմիածնում չինովնիկ էր, որի 7 տարեկան տղան հանկարծամահ է լինում: Օրիորդ Զարուհուն մայրը ուղարկում է Էջմիածին՝ քրոջը սփոփելու և խնամելու: Էջմիածնում մի առիթով Վ. Սուրենյանցը տեսնում է 18-ամյա կենսուրախ, զվարճախոս ու լավ երգող Զարուհուն և սիրահարվում է, բայց քաշվում է առաջարկություն անել:

Որոշ ժամանակ անց մի հյուրասիրության ժամանակ, որին ներկա էր նաև Զարուհին, Հովհաննիսյանը լսելով նրա ընտիր ռուսերենը, ֆրանսերեն մեջբերումները, սրամտություններն ու անուշ երգելը, նույնպես սիրահարվում է՝ միանգամայն անտեղյակ իր ընկերոջ հրապուրանքին: «Կարճ ժամանակից հետո հայրիկն առաջարկություն է անում Զարուհուն, մի օր հետո առաջարկություն է անում նաև Սուրենյանցը,- պատմել է Էվելինան,- մաման որոշել է ամուսնանալ հայրիկի հետ: Սուրենյանցը նեղացել է հայրիկից ու խզել է կապերը... ու այլևս չի ամուսնացել»[5]:

Ամուսնանալուց հետո Հովհաննիսյանը կնոջ հետ ներկայանում է Խրիմյանին՝ նրա օրհնությունը ստանալու: Վեհափառը, որ շատ հումորով մարդ էր, ասում է.

-Հովհաննե՛ս, բախտդ բերել է՝ ընտրել ես չարյաց փոքրագույնը[6] (Զարուհին կարճահասակ էր):

Ճեմարանում աշխատելու հենց առաջին տարում տեսչությունը Հովհաննիսյանին հանձնարարում է լրացուցիչ պարապմունքներ անցկացնել ռուսաց լեզվից ետ մնացող ուսանողների հետ: Դրանց մեջ էր նաև Եղիշե անունով մի ուսանող, նա ամենա-

[5] Հ. Հովհաննիսյանի ընտանիքի մասին մանրամասնությունները տե՛ս Ռուբեն Զարյանի «Մայրամուտից առաջ» գրքում, Եր., 1988, էջ 469-485:

[6] Նույն տեղում:

թույլերից էր: Ուսուցիչ Հովհաննիսյանը նրա հետ պարապում է նաև հանրակացարանում: Բայց Եղիշեի ուշք ու միտքը ուրիշ տեղ էր. նրա ընկերները տեղյակ են պահում ուսուցչին և տեսչությանը, որ Եղիշեն տարված է միայն նկարչությամբ: Տեսչությունը ուսումնասիրում է նրա նկարներն ու զգում, որ նրա տարերքը իսկապես նկարչությունն է, որը նրա մեջ բնատուր տաղանդ էր: Նրան գործուղում են Մոսկվայի Գեղարվեստի ակադեմիայում ուսանելու: Հետո է միայն պարզվում, որ դա ապագայի տաղանդավոր նկարիչ Եղիշե Թադևոսյանն էր:

Ճեմարանում Հովհաննիսյանի ուսանողներից էր նաև Սողոմոն եղբայրը (Կոմիտասը): Ուսուցիչը շատ ուշադիր էր իր երաժիշտ ուսանողի նկատմամբ, նրան խորհուրդ էր տալիս սիրել և լավ սովորել ռուսաց լեզուն, որը հնարավորություն կտա ծանոթանալու նաև ռուսական դասական ու ժողովրդական երաժշտությանը: Ուսուցիչը իր երաժիշտ ուսանողի համար Մոսկվայից ու Պետերբուրգից ռուսական երաշժտական գրականություն ու նոտաներ է պատվիրում ու ստանում, որոնց միջոցով Կոմիտասը ծանոթանում է Մուսորգսկուն, Չայկովսկուն, Ռիմսկի-Կորսակովին, Ռախմանինովին, սովորում է նաև նրանց երգերը և իր համերգների ժամանակ կատարում է նաև նրանց ստեղծագործություններից: Հովհաննիսյանը այնքան էր սիրում իր երաժիշտ աշակերտին, որ նրան մեկ-մեկ էլ «քաչալ» մականունով էր դիմում:

Կոմիտասի դասընկերներից մեկն իր հուշերում պատմում է հետևյալ հիշարժան դեպքը. «Ճեմարանամերձ գեղատեսիլ այգում հաճախ էին իրենց ազատ ժամանակն անցկացնում դասախոսներն ու ուսանողները: Եվ ահա մի արևոտ օր ուսանողները շրջում էին այգում. նրանք նկատում են լճափին՝ մի ծառի տակի նստարանին նստած, Հ. Հովհաննիսյանին ու Վ. Սուրենյանցին: Ուսանողների հետ էին նաև Եղիշե Թադևոսյանը և Սողոմոնը (Կոմիտասը): Եղիշեի ուշադրությունը վաղուց էր գրավել իրենց ռուսաց լեզվի ուսուցչի բարեձև տեսքը, գեղեցիկ արտաքինը՝ սև ու խիտ մազերով, նա միշտ հարմար առիթ էր փնտրում իր ուսուցչին նկարելու, և ահա ամենալավ առիթը՝ գեղեցիկ այգում Մասիսների ֆոնի վրա նա նկարում է Հովհաննիսյանին, և ուսանողները շրջապատում են նրան, ցույց են տալիս իր աշակերտի նկարած նկարը և խնդրում են արտասանել իր նոր բանաստեղծություններից: Սողոմոնը ամաչկոտ երկյուղածությամբ կանգնում է մի ծառի ետևում, Հովհաննիսյանը նկատում է նրան.

-Քաչա՛լ, մոտ արի, ես շատ եմ լսել քո գեղեցիկ երգերը, դու մի երկու երգ երգիր, ու նոր ես կարտասանեմ:

Սողոմոնը, որ քիչ առաջ էր ծոցագրպանից հանել մոր նկարը, որին բոլորովին չէր հիշում (մեկ տարեկան էլ չկար, որ մայրը մահացել էր), այն համբուրել ու նորից ծոցն էր դրել, մեղմ ու սիրտ մղկտացնող ձայնով սկսում է.

Ես լսեցի մի անուշ ձայն՝
Իմ ծերացած մոր մոտ էր...

Եվ խոր հոգոց քաշելով ու չտեսած մորը պատկերացնելով՝ շարունակում է՝

Մորս համբույրն ես զգացի,
Բայց ափսո՛ս, որ երազ էր...

Վերջին բառերը խեղդվեցին նրա կոկորդում, և նա գլուխը կախեց՝ մայրաբաղձ ընկերների աչքերից արցունքներ քամելով:

Ոչ պակաս հուզված ու զգացմունքային բանաստեղծը թաշկինակը աչքերից չէր հեռացնում»:

Այս սրտառուչ դեպքը ավելի մտերմացրեց ուսուցչին ու աշակերտին: Ժողովրդական երգի ու խոսքարվեստի սիրահար բանաստեղծը իր սիրելի սան Կոմիտասի հետ հաճախ էր շրջում հայկական գյուղերում, լսում էր գյուղացիների ձայնը, թարգման դառնում նրանց սրտերին ու հոգիներին. դրանք նրա գրչով դառնում էին հրաշալի բանաստեղծություններ՝ «Աշուղ», «Ա՛խ, տվեք ինձ քաղցր մի քուն», «Գյուղի ժամը», «Հատիկ», «Արազն եկավ», «Ալագյազ բարձր սարին» և այլն, իսկ Կոմիտասը նոտագրում էր ժողովրդական այդ գոհարները: Նա ձայնագրել է նաև իր ուսուցչի մի քանի բանաստեղծությունները, որոնցից ավելի շատ երգվում է «Ու՞ր ես գալիս, ա՛յ գարուն»-ը:

Գևորգյան Ճեմարանում Հովհաննիսյանի առաջին աշակերտներից էր նաև Ավետիք Իսահակյանը, որը մինչև Ճեմարան գալը գերված էր Հովհաննիսյանի բանաստեղծությունների թարմությամբ, լեզվով ու արվեստով...: «Եվ ահա 1889 թվի սեպտեմբերին՝ իմ սիրելի բանաստեղծը իմ ուսուցիչն է հիմա, իմ վարժապետը. ի՞նչ կար սրանից ավելի նախանձելի վիճակ: Առաջին վայրկյանին ես սիրեցի նրան ու նվիրվեցի նրան... Սրտով սովորում էի նրա դասերը և ուզում էի, որ նա նկատեր ինձ»,- իր հուշերում գրում է Ավետիք Իսահակյանը[7]:

Ավետիքը երկրորդ դասարանի աշակերտ էր, երբ մի օր Ճեմարանի մութ միջանցքում սրտի ուժգին բաբախումով համարձակվել է իր մի բանաստեղծությունը՝ «Երկու համբույր»-ը, տալ ուսուցչին և խնդրել, որ կարդա: Հովհաննիսյանը սիրով վերցրել է պատանու ոտանավորը, բռնել է տղայի ձեռքից, և գնացել են Ճեմարանի պարտեզը. «Գնացինք Ճեմարանի պարտեզի այն ծառուղին, որ «բանաստեղծ» աշակերտներիս մտորումների և երազանքների վայրն էր, ուր հաճախ ջղային քայլվածքով շրջում էր և ինքն իր հետ խոսում անմահ Կոմիտասը՝ եղբայր Սողոմոնը, ինչպես կոչում էինք նրան փոքր աշակերտներս»[8]: Այստեղ Հովհաննիսյանը կարդացել է Իսահակյանի ոտանավորն ու ասել.

«**Սեր** և **մահ**. բանաստեղծության մշտական նյութը... Իհարկե, այս գրածդ երևակայություն է, վաղահաս: Գրի՛ր քո զգացած բաների մասին: Բավական սահուն ես գրել... Երևում է՝ վաղուց ես գրել, վարժ ես... Վանկեր, հանգեր տեղին են, վատ չեն... Շարունակի՛ր գրել, բայց շա՛տ կարդա, զարգացի՛ր և հայերեն լա՛վ սովորիր»:

Դրանից հետո Իսահակյանը հաճախ է իր ոտանավորները ներկայացրել ուսուցչին. «Սիրով կարդում էր, նկատումներ ու ուղղումներ անում և անգնահատելի խորհուրդներ տալիս... Այսպես գնում է ժամանակը դասերի և անուրջների միջով»:

Դրանից անցնում է 2 տարի՝ 1892-ին Ավետիքը ուսուցչին է տալիս մի նոր ոտանավոր.

---

[7] **Իսահակյան Ավ.,** Երկեր, հատոր 4, Եր., 1959, էջ 57-58:

[8] Այս և Իսահակյանի հետ կապված մյուս մեջբերումներն ու վկայությունները վերցված են Ավ. Իսահակյանի երկերի 4-րդ հատորի (Եր. 1959 թ.) Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված հուշագրությունից (էջ 54-62):

Ծաղիկ էի նորաբողբոջ
Մարի լանջում, երկնի տակ...

«Կարդաց ոտանավորս, նորից կարդաց և քաղցր ժպիտով ասաց՝ ուսիս թեթև խփելով. «**Կեցցե՛ս, հիմա բանաստեղծ ես**»:

Ոգևորությանս սահման չկար. ամուր սեղմեցի նրա ձեռքը և թռա ընկերներիս մոտ»,- շարունակում է իր խոսքը ապագայի տաղանդավոր բանաստեղծը:

Անցնում են տասնյակ տարիներ, և աշխարհին ներկայացած բանաստեղծը չի մոռանում իր «կախարդ ուղեցույցին»՝ իր «մեծ մոգպետին»՝ նրան համարելով մեր նոր լիրիկայի փայլուն կերտողներից մեկը: Նա իր խոսքը շարունակում է այսպես. «Բախտորոշ եղավ ինձ համար այդ նվիրական պահը, և ես գտա իմ նվիրական ճանապարհը: Հավերժ երախտապարտ եմ և հավերժ շնորհակալ բանաստեղծության այդ մեծ մոգպետին, իմ կախարդ ուղեցույցին: Եվ ես բոլոր անկեղծությամբ գլուխս խոնարհում եմ նրա սրբազան հիշատակի առաջ, նրա անմահ երգի առաջ»:

Ավ. Իսահակյանի վկայությամբ՝ Հովհաննիսյանին սիրում ու գնահատում էր նաև Խրիմյան Հայրիկը: 1901 թվին, երբ Իսահակյանը Վենետիկից վերադառնում է Էջմիածին, շտապում է Վեհափառ Հայրիկի մոտ՝ նրան հաղորդելու ծերունազարդ Ղևոնդ Ալիշանի «կարոտագին ողջույնը»:

- Վեհափա՛ռ Հայրիկ,- ասացի ես,- մեծ բախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել Նահապետ Ալիշանի կարոտագին ողջույնները Հայոց Հայրիկին:

- Ահ, շատ շնորհակալ եմ: Դուն Վենետի՞կ էիր, ե՞րբ էիր հոն, ինչպե՞ս է Հայր Ղևոնդը, աղե՞կ է... Շատ կսիրեմ զինքը, անուշ գրիչ ունի: Ան շատ է ազդեր իմ գրչին վրա: Ան ինձ շատ բան է ներշնչեր: Ասա՛, ուրիշ ի՞նչ կըներ:

- Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մեծ է, և ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովրդին այցի է ելնում... Հարկավ այդպես է. «ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե»:

Խոսակցության ընթացքում Հայրիկը հարցուփորձ է անում նաև Իսահակյանին և իր կարծիքն է հայտնում հայոց բանաստեղծների մասին:

- Է՛հ, դուն ալ բարով ես եկեր: Ես Կովկասի մեջ երկու բանաստեղծ կճանչնամ անձամբ ու շատ կսիրեմ զանոնք, մեկը մեր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննես Թումանյանն է, ըշտե, մեկն ալ դուն ես, քեզ էլ հիմա տեսա: Դուն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես...»[9]:

1908-1912 թվերին լույս տեսած ժողովածուները ամրապնդեցին Հովհաննիսյանի տեղը հայ պոեզիայի պատմության մեջ: Ինչպես իրավացիորեն նկատել է Ղազարոս Աղայանը՝ «Հովհաննիսյանը մեր գրական լեզվի չորացած երակների մեջ թարմ արյուն ներարկեց ժողովրդական ոճերով, բառերով, դարձվածքներով, փարթամացրեց ու կենդանացրեց բանաստեղծական լեզուն»:

Իրավացի են նաև գրականագետները՝ նշելով, որ նա ստեղծեց արևելահայ բա-

[9] **Իսահակյան Ավ.,** Խրիմյան Հայրիկ (Իսահակյան, Երկեր, հ. 4, 1959, էջ 18-19):

նաստեղծական մի նոր դպրոց, որի ներկայացուցիչները դարձան Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը և շատ ուրիշներ: Այստեղ նորից տեղին է վկայակոչել նրա մեծ բարեկամ Ավետիք Իսահակյանի խոստովանությունը. «Ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր, իսկական աղբյուրից, որովհետև դու ինքդ էիր ոսկեղեն աղբյուր, որ կարկաչում էիր հայոց հին ու նոր երգերի սահմանագլխում»,- գրում է Իսահակյանը՝ Հովհաննիսյանին ուղղված իր նամակում:

Մեկ այլ առիթով Իսահակյանը գրում է. «Հովհաննիսյանի քնարերգությունը հագեցած է բնության սիրով, ռոմանտիկական մեղմությամբ... Նրա պոեզիայի գարնանային թարմությունը, բնականությունը, մարդկայնականը, նրա նոր, չքնաղ պատկերները, հիանալի լեզուն, սրտաբուխ երգը հալուցինացիայի մեջ ձգեցին մեզ, նրա լիրիկան մեզ հոգեփոխեց, և Հովհաննիսյանը դարձավ մեր կուռքը»[10]:

Ճիշտ է, մեծ չէ Հովհաննիսյանի գրական ժառանգությունը, բայց նա դրանով էլ մեծ հետք թողեց հայ նոր գրականության մեջ ոչ միայն որպես քնարերգությանը թարմ շունչ բերող դասական բանաստեղծ, այլ նաև՝ որպես հրաշալի թարգմանիչ: Նա բնագրերից թարգմանություններ է կատարել եվրոպացի և ռուս շատ դասականների ստեղծագործություններից, որոնց մեծ մասը բնագրերի արժեք ունեն (Հոմերոս, Գյոթե, Շիլլեր, Հյուգո, Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով, Հայնե, Պետեֆի և ուրիշներ): Նրա՝ Ուլանդի «Երգչի անեծքը» հայ թարգմանական գրականության ոսկե ֆոնդը մտավ և դարձավ դասագրքային ընթերցանության հրաշալի նյութ:

Հովհաննիսյանը առանց դավաճանելու բնագրերի ոգուն, աշխատում էր միաժամանակ իր ստեղծագործական դրոշմը դնել դրանց վրա, հայացնել իր թարգմանած բանաստեղծներին: Դրա համար էլ Վ. Բրյուսովի նման խստապահանջ բանաստեղծն ու թարգմանիչն անգամ հիացմունքով է խոսել Հովհաննիսյանի բարձրարվեստ թարգմանությունների մասին, որոնք նույնիսկ մրցում են բնագրերի հետ:

1912 թվականին Հովհաննիսյանը աշխատանքի է հրավիրվում Բաքու և նշանակվում քաղաքային դպրոցական հանձնաժողովի նախագահ: Նա այստեղ մի խումբ տեղացի մտավորականների հետ հիմնադրում է Հայ գրասերների ընկերություն: Այստեղ 1913 թվին նշում են բանաստեղծի գրական գործունեության 30-ամյակը, որին քիչ ուշացումով ներկա է լինում նաև արտասահմանից վերադարձած Գարեգին Լևոնյանը, որը նույնպես հրաշալի հուշեր ունի իր մեծ բարեկամ Հովհաննիսյանի մասին, որի տան հարգված ու սիրված այցելուներից մեկն է եղել: Ահա մի հատված այդ օրերին Բաքվում եղած Գարեգին Լևոնյանի հուշերից. «1915 թ. ուշ աշնանը՝ արտասահմանյան ճանապարհորդություններից վերադառնալիս, հանդիպեցի Բաքու, ուր առաջինը այցելության գնացի Հովհաննիսյանին, կարոտել էի. համբուրվեցինք, ողջագուրվեցինք: Ինձ տեսնելիս շատ ուրախացավ. թեև մի քիչ ուշացած՝ շնորհավորեցի նրա 30-ամյա հոբելյանը, որը նույն թվականի ապրիլին հանդիսավոր կերպով կատարել էին Բաքվում»[11]:

Բաքվում Հովհաննիսյանն աշխատում է մինչև 1918 թիվը: Ի դեպ, նա 1915-ին կառավարության հանձնարարությամբ գալիս է Էջմիածին՝ եղեռնից հրաշքով փրկված հայ գաղթականների մի մեծ խումբ Բաքու տեղափոխելու: Բաքվում նա իր հեղինակությամբ միջամտում է համապատասխան մարմինների առաջ՝ տեղավորելու հայ գաղթականներին և հոգալու նրանց կարիքները:

---

[10] **Հովհաննիսյան Հ.,** Բանաստեղծություններ, Եր., 1949, Հ. Ղանալանյանի Առաջաբանից:

[11] **Լևոնյան Գարեգին**, Հուշեր, Եր., 1959, (Հ. Հովհաննիսյան, էջ 49-61):

Այդ գաղթականներն ու նրանց զավակներն էին, որ մինչև 1989-90-ական թվականները ապրում էին Բաքվում, տուն ու տեղ էին դրել, ապրում էին բարեկեցիկ կյանքով, բայց այդ դաժան տարիներին աղրբեջանական կառավարության կողմից դարձյալ տեղահան արվեցին ու, թողած ինչք ու հարստություն, նորից մի կերպ փրկվեցին և Հայաստան հասան:

Այդ հայերի համար փաստորեն կրկնվեց 1915 թվականը...

1918-ին Հովհաննիսյանը թողնում է Բաքուն ու ընտանիքով ժամանակավորապես բնակվում է Էսենտուկիում: Այստեղ նրան է այցելում Պյատիգորսկում հանգստացող Վահան Տերյանը: Երկու ազնիվ բարեկամներն ու գրչակից ընկերները բավականին հաճելի օրեր են անցկացնում: Տերյանը Հովհաննիսյանի հյուրընկալ ընտանիքի հաճելի հյուրն էր:

1919 թ. Հովհաննիսյանը ընտանիքով վերադառնում է հայրենիք: Ճեմարանի փակ լինելու պատճառով որոշ ժամանակ անգործ է մնում:

1920 թ.՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, նշանակվում է Էջմիածնի գավառի ժողովրդական կրթության (Լուսբաժին) վարիչ: Երկու տարի նա ջանադիր զբաղվում է գավառի մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, ինչպես նաև դպրոցների և նախադպրոցական հիմնարկների շինարարության հարցերով:

1922-ին մշտական բնակություն է հաստատում Երևանում: Այստեղ մի քանի տարի գիտական հաստատություններում պաշտոնավարելուց հետո, առողջական վիճակի վատթարացման պատճառով, անցնում է կենսաթոշակի: Կառավարության կողմից բանաստեղծին հատկացվում է հարմարավետ բնակարան՝ իր փոքրիկ այգով: Այստեղ նա իր կնոջ ու 7 երեխաների հետ անցկացնում է իր կյանքի վերջին տարիները: Սպանդարյան փողոցի 18-րդ տունը, որտեղ ապրում էր Երվանդ Տեր-Մինասյանի հարևանությամբ (նրա կինը՝ Սիրանույշը, բանաստեղծի քույրն էր), դարձել էր մի տեսակ հավաքատեղի. այստեղ հաճախ էին լինում Իսահակյանն ու Չարենցը, բանաստեղծի սաներն ու ընկերները:

Ռուբեն Զարյանի վկայությամբ՝ մի օր Հովհաննիսյանը հարցրել է Չարենցին, թե ինչ կարծիք ունի նա մեր պրոլետ գրողների մասին.

- Ես նրանց մասին կարծիք չունեմ,- պատասխանել է Չարենցը:

- Կարծիք չունենալն էլ կարծիք է,- ասել է Հովհաննիսյանը:

1928 թվին Մաքսիմ Գորկին գալիս է Հայաստան. նրա պատվին հայ գրողները հանդիսավոր ճաշկերույթ են պատրաստում. Գորկին նկատել է, որ Հովհաննիսյանը ներկա չէ, հարցրել է պատճառը, պատասխանել են, որ հիվանդ է: Գորկին չի կարողացել հանդիպել իր մտերիմ բարեկամին:

Հ. Հովհաննիսյանը վախճանվեց 1929 թ. սեպտեմբերի 29-ին՝ 65 տարեկան հասակում: Թաղված է գիտության և մշակույթի անվանի գործիչների պանթեոնում, որը 1936 թվականից (Կոմիտասին այստեղ հուղարկավորելուց հետո) կոչվեց հայ երգի անլռելի զանգակատուն Կոմիտասի անունով:

1948-ին իր ծննդավայրում բացվեց և մինչև այժմ գործում է Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը:

1965-ին Հայաստանի կառավարությունը նշեց գրողի 100-ամյակը, իսկ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը 4 հատորով հրատարակեց նրա ամբողջական երկերը:



ԳԻՐՔ ՆՎԻՐՎԱԾ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Ամստերդամի հին եկեղեցու հայկական գերեզմանների (1661-1808 թթ.) մասին, ինչպես նաև Ամստերդամի հայկական եկեղեցու համառոտ պատմություն. Ռենեն Բեկիոս և Վոութ Ուլթեե

Այս գիրքը գրվել ու մտահղացումը ծնվել է 2008 թ. հունվարի 20-ին հին եկեղեցու դամբանատան գերեզմանոցում հայ հոգևորական Հովհաննես Մինաս վարդապետի 1768 թ. հունվարի 23-ին կատարված հուղարկավորության տարեդարձին մատուցված Հոգեհանգստյան կարգի մատուցման ժամանակ:

Արարողությունը կազմակերպվել է Ամստերդամի հայկական եկեղեցու և հին եկեղեցու հոգաբարձուների խորհրդի կողմից. Ամստերդամի Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրամ, 2008 թ.:

Երգեցողությունը կատարվել է հին եկեղեցու Սվիլլինկ երգչախմբի, Հայ Առաքելական Եկեղեցու երգչախմբի և Ամստերդամի Հուֆդստադ երգչախմբի կողմից*:

Այս գրքույկը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը վերաբերվում է հին եկեղեցում հուղարկավորված հայերին, իսկ երկրորդ մասը նվիրված է տարբեր հայ հոգևորականների՝ բարձրաստիճան և պարզ սպասավորներ, ովքեր դարձյալ թաղված են հին եկեղեցում, որոնց գործունեությունը իր կարևոր տեղն ունի Ամստերդամի հայկական եկեղեցու 17-18-րդ դարերի պատմության մեջ:

---

* Հունվարի 20-ին Ամստերդամի Դոմ Քելք եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ այս եկեղեցում թաղված բոլոր հայերի հոգիների խաղաղության համար: Հոգեհանգիստ մատուցվեց Հովհաննես Մինաս վարդապետի մահվան տարեդարձին, ով 30 տարի եղել է հոգևոր հովիվը Ամստերդամի Սուրբ Հոգի հայկական եկեղեցու:

Հոգեհանգստյան կարգը կատարեց Հոլանդիայի հայոց հոգևոր հովիվ S. Տաթև վարդապետ Հակոբյանը: Հոգեհանգստյան արարողությանը ներկա էին Ամստերդամի հայոց եկեղեցու ատենապետ Տիգրան Մագդեսյանը, այս գրքի հեղինակը և հիշյալ եկեղեցուց մի հոլանդացի: Այս արարողության ժամանակ էլ միտք հղացվեց գրելու այս գիրքը:

2008 ԷՋՄԻԱԾԻՆ Ա 115

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1661-1808 թթ.)

Հին եկեղեցու գերեզմանների գրքերից (թաղման մատյաններից) վերցված տվյալները կարևոր տեղեկություններ են պարունակում հանգուցյալներից յուրաքանչյուրի անվան, ծննդյան վայրի կամ երկրի, մասնագիտության, հանգուցյալի տան հասցեի, հուղարկավորության ծախսերի, թաղման ժամանակ եկեղեցու զանգերի զանգահարության համար վճարված գումարի, թաղման ժամանակի մասին, որոնք էլ իրենց հերթին օգնում են պատասխանելու հետևյալ հարցերին. քանի՞ հայ տղամարդ, հայ կանայք և հայկական ամուսնություններից ծնված քանի՞ երեխա են թաղված հին եկեղեցում: Եկեղեցու ո՞ր մասերում են նրանք թաղվել, քանի՞ ժամ են հնչել զանգերը հանգուցյալի համար, օրվա ո՞ր ժամին են նրանք թաղվել:

Համաձայն Ամստերդամի քաղաքային վարչության սահմանած կարգի, տեղաբնակները և ներգաղթածները թաղվում էին ինչպես բողոքական եկեղեցիներում, այնպես էլ լյութերական եկեղեցիների բակերում: Ամստերդամի առաջին եկեղեցին հին եկեղեցին էր, որը թվագրվում է 14-րդ դարով:

1578 թ. հեղաշրջմամբ շատ կաթոլիկ եկեղեցիներ դարձվեցին բողոքական:

Ամստերդամի բնակչության աճին զուգընթաց կառուցվեցին բողոքական նոր եկեղեցիներ՝ հարավային եկեղեցին (1611 թ.), հյուսիսային եկեղեցին (1623 թ.), արևմտյան եկեղեցին (1631 թ.):

Ամստերդամում բնակվող առավել ունևոր հայերը թաղվել են հին եկեղեցում, նոր եկեղեցում, հարավային եկեղեցում, արևմտյան եկեղեցում, իսկ նրանք, ովքեր դարձել են լյութերականներ՝ հին լյութերական եկեղեցում: Մնացյալ հայերը թաղվել են տարբեր գերեզմանոցներում՝ 1640-1866 թթ. գործող Ս. Անտոնիոս, Հայլիգիվեգ (1639-1664 թթ.), Կերթուիզեր (1602-1869 թթ.), Էյդս (1664-1864 թթ.) և արևմտյան (1618-1655 թթ.) գերեզմանոցներում:

17-18-րդ դարերում ներգաղթյալները աստիճանաբար ձեռք էին բերում բուրգմիստրների (քաղաքապետերի) թույլտվությունը՝ պատարագ մատուցելու և եկեղեցական ծեսեր կատարելու մասնավոր տներում, ինչպես նաև հիմնելու իրենց սեփական եկեղեցիները:

Հին եկեղեցու թաղման գրքերում մենք հիշատակություն գտանք 69 հայերի մասին, ովքեր հուղարկավորվել էին 1661 թվականից մինչև 1808 թ.՝ 49 տղամարդ, 11 կին և 9 երեխա:

Առաջին աղյուսակում ներկայացված է մահացած տղամարդկանց, կանանց և երեխաների թիվը ըստ տասնամյակների: Առավելագույն թիվը գրանցվել է 1671-1680 թթ. միջև, երկրորդը՝ 1711-1720 թթ., երրորդը՝ 1731-1740 թթ. և վերջինը՝ 1781-1790 թթ.: Այս տվյալներից յուրաքանչյուրը կապված է դեպի Ամստերդամ հայկական երեք միգրացիոն ալիքների հետ: 1620-1660 թթ. հայ երիտասարդները Ամստերդամ էին այցելում ժամանակավորապես: Առաջին ներգաղթողները հիմնավորվեցին 1660-1665 թթ. միջև՝ գալով և՛ Սևֆյան (Իրան) և՛ Օսմանյան կայսրություններից: Երկրորդ ալիքը տեղի ունեցավ 1700-1715 թթ., իսկ երրորդը՝ 1740-1750 թթ. միջև:

Ամստերդամում հայերի թիվը աստիճանաբար նվազեց խառնամուսնությունների և նոր ներգաղթողների պակասի պատճառով: Ամենաշատ հայ ներգաղթողները՝ 800-900 անձինք, ժամանակավորապես հաստատվեցին Ամստերդամում:

Երկրորդ աղյուսակը ցույց է տալիս հայկական գերեզմանների տեղադրությունը հին եկեղեցում:

1731-1810 թթ. շատ հայեր թաղվել են հարավային և հյուսիսային եկեղեցիների կողային շինություններում: 1731-1740 թթ. առանձին թաղումներ են կատարվել տարբեր մատուռներում: 1767 թվականից հետո հայերը հուղարկավորվել են հարավային եկեղեցու կողաշենքում՝ 443, 444, 445 գերեզմաններում:

Երկրորդ աղյուսակը ցույց է տալիս, թե որքան ժամանակ և ինչ զանգեր (փոքր, միջին և մեծ) են հնչել այդ անձանց թաղման ժամանակ: Այս աղյուսակը ցույց է տալիս, որ զանգերը ղողանջել են մահացած 60 մեծահասակներից 17-ի համար: 1729-1762 թթ. միջին չափի զանգի զանգահարության մեկ ժամը արժեր 1,16 գուլդեն և երկու ժամը՝ 3,12 գուլդեն: Մեծ զանգի մեկ ժամը արժեր 3,10 գուլդեն և երեք ժամը՝ 10,10 գուլդեն: Պարզվում է, որ զանգահարությունները հաշվվում էին ոչ այնքան որևէ մեկի եկամտով, որքան տվյալ անձի՝ հայկական եկեղեցում ունեցած դիրքով: Ասվածը ևրևում է 1742 թ. զանգահարությունից գանձված գումարից:

Չորրորդ աղյուսակը ցույց է տալիս մահերի թիվը հին եկեղեցում՝ ըստ տարվա եղանակների: 1668-1808 թթ. թաղվել է 69 հոգի, որոնցից 24-ը մահացել են գարնանը և 18-ը՝ ձմռանը: Ամռանն ու աշնանը գրեթե հավասար թվով մահեր են արձանագրվել:

Հինգերորդ աղյուսակը ցույց է տալիս, թե մահացածների բնակարանները որ փողոցներում են գտնվել, իսկ առաջին հավելվածում ներկայացվում են Ամստերդամի կենտրոնի փողոցների անվանումները, որոնցում հայերը հաստատվել են 17-18-րդ դարերում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժինը նվիրված է Ամստերդամի հայկական եկեղեցում սպասավորած հոգևորականներին:

Այստեղ պատասխանել ենք հետևյալ հարցերին՝ Ամստերդամում որտե՞ղ են ապրել հոգևորականները և եկեղեցու ծառայողները, ո՞րն էր նրանց գլխավոր պարտականությունը և ծագումով որտեղի՞ց էին նրանք: Արդյո՞ք նրանք ստանում էին քաղաքացիություն բուրգմիստրից, ինչպիսի՞ շինություններում էին հայերը կատարում իրենց պաշտամունքը: Ամստերդամի հայկական եկեղեցու պատմության ո՞ր շրջանը կարող ենք առանձնացնել: Ի՞նչ վայրերում են նրանք ժամերգություն կատարել, ե՞րբ է հայկական համայնքը պաշտոնապես ստացել Ամստերդամի բուրգմիստրի թույլտվությունը հայկական եկեղեցի կառուցելու: Ովքե՞ր են եղել եկեղեցու կառուցումը ֆինանսավորողները: Արդյո՞ք այդ եկեղեցու արտաքին և ներքին հարդարանքը շատ էր տարբերվում նրանց ծննդավայրերի եկեղեցիների ընդունված ձևավորումից:

Այս հարցերի պատասխանները գտնում ենք նոտարական արձանագրությունների, օրագրությունների ու ճանապարհորդների ուղեգրությունների պարունակած տվյալների համադրական քննությամբ:

Հայոց դավանանքի և ծեսի մասին փոքր ներածականից հետո ակնարկային ձևով ներկայացվում է Ամստերդամի Հայոց Եկեղեցու պատմությունը՝ բաժանված ժամանակային որոշակի շրջափուլերի:

Առաջին շրջանում՝ 1658-1714 թթ., ծառայությունը կատարվում էր մասնավոր տներում: Առաջին հայը հին եկեղեցում թաղվել է 1661 թ. փետրվարի 3-ին և եղել է Մատթեոս դպիր Ծարեցին, ով Ամստերդամում տպագրել է նաև հայկական առաջին գիրքը՝ Ներսես Շնորհալու «Հիսուս Որդի» չափածո ստեղծագործությունը:

Ամստերդամում առաջին հայկական պատարագը, ամենայն հավնականությամբ, մատուցել է Ոսկան եպիսկոպոս Վանանդեցին, որը Ամստերդամում է գտնվել 1664-1669 թթ.:

Նրան հաջորդող քահանաներից Հովհաննես քահանա Օեջերլուն 1707 թ. դիմել է նոտարին՝ իր անձնական ունեցվածքին մաս կազմող իրերը առանձնացնելու եկեղեցուն պատկանողներից:

Յոթերորդ աղյուսակում թվարկվում են Կենինգսվարս փողոցում գտնվող այդ եկեղեցուն պատկանող ցուցակում նշված իրերը: Այդ իրերից շատերը տեսանելի են 1767 թ. արված մի փորագրանկարի վրա, որը պատկերում է 1714 թ. հետո կառուցված հայկական եկեղեցու ներսը:

Եկեղեցու պատմության երկրորդ շրջանը սկսվում է 1717 թ. հունվարի 30-ից, երբ հայ համայնքը ստանում է Ամստերդամի քաղաքապետի 52 էջ կազմող պաշտոնական թույլտվությունը ապրանքապահեստ գնելու և այն ձևափոխելով՝ գործող եկեղեցի դարձնելու մասին: Ի տարբերություն Ամստերդամի կաթոլիկների, ովքեր պարտավոր էին իրենց արարողությունները կատարել շինություններում, որոնց արտաքին տեսքը դրսից եկեղեցու չպետք է նմանվեր, հայերին թույլատրվեց ունենալ այնպիսի կառույց, որը դրսից ևս համապատասխանում էր եկեղեցու տեսքին: Մեծահարուստները, որոնց մեծ մասը եկել էր Պարսկաստանից, Ամստերդամում հայկական եկեղեցի հիմնելու ծրագիրը նոտարական հաստատման ներկայացրել էին այն ձևակերպմամբ, որ այն կգործի միայն որպես Աստծո տուն Ամստերդամի հայ բնակիչների համար: Սահմանվել էին միայն երկու կետեր, որոնց դեպքում քաղաքի իշխանությունները իրավունք ունեին վերանայելու հաստատված պայմանները: Առաջին՝ եթե Ամստերդամի քաղաքապետը ինչ-որ մի ժամանակ հայերին թույլ չտար կատարելու իրենց պաշտամունքը և կամ երբ հայ համայնքը կորոշեր ցրվել և հավաքաբար փոխադրվել որևէ այլ երկիր: Այս դեպքում Հայոց կաթողիկոսը պետք է առանձնացներ և պահեր շենքի վաճառքից ստացված գումարը և այն տրամադրեր եկեղեցական նոր շենքի կառուցմանը, եթե հետագայում վերստին նոր հայեր կհաստատվեին Ամստերդամում:

Աղյուսակ ութը ներկայացնում է Ամստերդամում գործած հայ հոգևորականների նախնական ցուցակը: Նրանք, ովքեր թաղված են հին եկեղեցում, նշված են վերջին սյունակում:

Հիմնվելով գույքային ունեցվածքի ուսումնասիրության վրա՝ ներկայացված է Հովհաննես քահանա Մինասենցի (էջ 66-67) անձնական տնային իրերի ցանկը և նրա դերը եկեղեցու 1749 թ. գեղարվեստական բարեզարդման գործում (եկեղեցու արտաքին տեսքը ներկայացնող նկարը գտնվում է գրքի 60-րդ էջում):

Իր կյանքի վերջին շրջանում Հովհաննես Մինասենցը ապրել է այն շինության առաջին հարկում, ուր և գտնվել է հայկական եկեղեցին: Նրա օգնականն է եղել եկեղեցու պահակ Առաքել Պողոսը, որն ապրում էր եկեղեցուն մոտ գտնվող Քյոնիինգստրիտ փողոցի հմ. 27 տանը, որը պահպանվում է մինչև հիմա և ունի քարե եռանկյունաձև վերնաճակատ, որի վրա կառք է պատկերված:

Իններորդ աղյուսակը ներկայացնում է Ամստերդամի հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և մյուս սպասավորների ցուցակը՝ նրանց բնակարանների հասցեներով և ծննդավայրերի մատնանշմամբ:

Տասներորդ աղյուսակը ցույց է տալիս այն գումարների չափը, որ Հայ Եկեղեցու վարդապետ Հովհաննես Հակոբի Գալդերը իր կտակով թողել է հայկական և հոլանդական տարբեր եկեղեցիների և նրանց հովանու ներքո գործող հաստատություններին (հիմնականում Հոլանդիայում և Պարսկաստանում): Ամստերդամի հայկական եկեղեցու վերջին քահանա Հովհաննես Մարգար Պակրտատոնը ծառայել է 1788-1798 թթ.: Ծանոթանալով Լանջ Քյոնիինգստրիտ փողոցում գտնվող նրա սեփական բնակարանի (նույն շենքում է բնակվել և Առաքել Պողոսը) և իր ծննդավայրի տան տնտեսության գույքացուցակին, մենք պատկերացում ենք կազմում, թե ինչ ունեցվածքի տեր է եղել և ինչ կյանքով է նա ապրել:

Ամստերդամի հայկական եկեղեցու վերջին ներկայացուցիչը Ստեփան Գաբրիելն էր: Նա եկեղեցու խնամատարն էր եկեղեցու վերջին խնամակալ Ալեքսանդր Մասեի մահից հետո (1826թ.) մինչև իր մահը՝ 1835 թ. օգոստոսի վեցը: Իր խնամակալության սկզբում Ստեփան Գաբրիելը նոտարական գրանցման և գույքագրման ենթարկեց եկեղեցու ունեցվածքը՝ կատարելով և վերջինիս ֆինանսական հաշվարկը: Այս փաստաթղթերի կրկնօրինակները նա ուղարկում է Զմյուռնիայի Հայոց թեմի առաջնորդին, որը, սակայն, չարձագանքեց նրա գրությանը, որից Ստեփաննոս Գաբրիելի համար պարզ դարձավ, որ Ամստերդամի հայոց եկեղեցին չի գտնվում Զմյուռնիայի հայոց թեմի իրավասության ներքո:

Իր գաղտնի կտակում նա հիշում է Առաքել Պողոսի կտակը, որում Ամստերդամի հայոց եկեղեցու բոլոր անդամների համաձայնությամբ եկեղեցու կառավարման առաջին հոդվածի երկրորդ ենթակետում նշվում է (ընդունված 1788 թ. հունիսի մեկին), որ Հայոց Պատրիարքը (կաթողիկոսը) ընդունվում է որպես հոգևոր առաջնորդ, բայց ոչ երբեք որպես Ամստերդամի հայկական եկեղեցու և վերջինիս հոգևոր առարկաների ու սպասքի բարձրագույն տնօրինող:

Տեղի հայ համայնքը ամուր կառչեց այն դրույթից, որ կաթողիկոսը լոելյայն վավերացրել է, որ Ամստերդամի հայկական եկեղեցին գործելու և առաջնորդվելու է արևելքում գտնվող Հայոց Եկեղեցու հոգևոր կենտրոնից անկախ:

Ստեփան Գաբրիելի այս փոփոխությամբ հայոց եկեղեցու տնօրինման իրավունքը ի չիք դարձավ եկեղեցու վերջին խնամակալ Ալեքսանդր Մասեի վատ ղեկավարման պատճառով: Ստեփան Գաբրիելը իր կտակում կարգադրում էր, որ իր կնոջը՝ Քրիստինե Բիրմերին թույլատրվում է շարունակել բնակվել եկեղեցում՝ հոգևոր իրերի վա-

ճառքից ստացված գումարից տարեկան 200 գուլդենի տրամադրմամբ: Հետագայում եկեղեցու հանդեպ իրենց իրավունքը ներկայացրին Զմյուռնիայի հայոց առաջնորդը և կաթողիկոսը՝ ձեռնարկելով համապատասխան գործողություններ, որոնք ձգվեցին 1835-ից մինչև 1837 թթ. և կաթողիկոսին հաջողվեց հաստատել Հայոց Եկեղեցու իրավունքը այս հարցում:

Ամստերդամի հայկական եկեղեցու երրորդ շրջանը՝ 1835-1877 թթ., բնորոշվում է տարբեր դանիացի կառավարիչներով կամ հոգաբարձուներով: Գևորգ Դ կաթողիկոսը Զ. Վերթեյմին նշանակում է կառավարիչ: Նամակով նոտար Բլաուզինգին թույլատրվում է հրապարակայնորեն վաճառել հայկական եկեղեցու շենքը 1874 թ. մարտի իննին՝ մոտակա աճուրդի սրահում: Դանիացի կառավարիչը կաթողիկոսին է ուղարկում 70 փաստաթղթերի և մնացյալ եկեղեցական առարկաների ցուցակը (հավելված 2, էջ 100-101):

Չորրորդ շրջանը վերաբերվում է հայկական եկեղեցու շինարարության սեփականատերերին (1890-1989 թթ.):

Հինգերորդ շրջանում Ամստերդամի հայկական համայնքը ետ գնեց և վերականգնեց 1714 թ. եկեղեցին: Այստեղ բերվում է նաև ցանկը այն հոգևորականների, ովքեր սպասավորել են հայկական համայնքում:

Վերջապես, մենք ավարտում ենք մեր ակնարկը հետևյալ հարցադրումներով: Ինչպես է, որ 17-18-րդ դարերում, այնպես էլ հիմա, հայկական փոքրիկ համայնքը ի վիճակի եղավ պահպանելու իր ինքնությունը: Այդ ինքնությունը կանհետանար մի քանի սերունդ անց՝ տնտեսական բարգավաճման և խառը ամուսնությունների արդյունքում: Այժմյան հայ համայնքը կլուծվի՞ հոլանդական հասարակության մեջ: Արդյոք կապ կա՞ Մերձավոր Արևելքից Հոլանդիա եկած հայերի անցյալի և ներկայի միջև: Հայ Եկեղեցու համար արդյո՞ք մարտահրավեր է դարձել երիտասարդությանը հայոց հավատին, պատմությանը և մշակույթին կապված պահելը:

Ամստերդամի հայկական եկեղեցու վերանորոգումից հետո եկեղեցին կգործի որպես եկեղեցի և Հայ տուն: Որպես մոտ ապագայում վստահաբար իրականացվելիք ծրագիր կլինե՞ն արդյոք համապատասխան միջոցներ Ամստերդամի հայ համայնքի անցյալին և ներկային նվիրված թանգարան հիմնելու համար, որը կունենա կից գրադարան և փաստաթղթերի կենտրոն, և որը կսպասարկի ինչպես Դանիայի հայերին, այնպես էլ հայկական մշակույթով հետաքրքրվող հայերին:

Անգլերենից թարգմանեց՝
Գայանե Պողոսյանը

120 Ա ԷՋՄԻԱԾԻՆ 2008

ԱՍՏՂԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅ ԳՐՔԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՀԱՏՈՐՅԱԿԸ

Հայ գրքի մատենագիտությունը վերջերս հարստացավ ևս մի կարևոր հատորով՝ «Հայ գիրքը 1901-1920 թվականներին», որը կազմվել է երկար տարիների ընթացքում[1]: Ազգային գրադարանի ղեկավարության ջանքերով և ժամանակի հրամայականով այն եկավ լրացնելու Հայ գրքի մատենագիտության նախորդ 3 հատորները: Այս ստվարածավալ քառահատորյակը ներկայացնում է հայ տպագիր գրքի անցած ուղին՝ սկսած հայ տպագիր առաջին գրքից (1512 թ.) մինչև 1920 թվականը, որով ամփոփվում է հայ տպագրության պատմության նախախորհրդային շրջանը:

Գրեթե 500 տարվա պատմություն ունի հայկական տպագրության պատմությունը, որի ընթացքում հրատարակվել է մոտավորապես հարյուր հազար անուն գիրք, որն այն հրատարակող ժողովրդի նման սփռված է աշխարհով մեկ և իրենից ներկայացնում է համաշխարհային մշակույթի և հայագիտության անգնահատելի արժեքներ: Տպագիր հսկայական այս ժառանգությունը համակարգված ու մատենագիտական նկարագրությամբ և թվարկմամբ ներկայացնելու համար 1958 թ. ՀԽՍՀ Նախարարների խորհրդի և Մշակույթի նախարարության որոշմամբ Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական գրադարանում (այժմ Ազգային գրադարան) ստեղծվեց «Հայ գրքի մատենագիտության» բաժին, որը պետք է կազմեր հայ գրքի ամբողջական մատենագիտությունը: Այսպիսով տպագրության պատմությունը պայմանականորեն բաժանվեց 3 փուլերի՝ ընդգրկելով առաջին երեք հատորները հետևյալ ժամանակահատվածով. հատոր առաջին՝ Հայ գիրքը 1512-1800 թթ., հատոր երկրորդ՝ Հայ գիրքը 1801-1850 թթ., հատոր երրորդ՝ Հայ գիրքը 1851-1900 թթ. և հատոր չորրորդ՝ Հայ գիրքը 1901-1920 թթ.:

Հայ գրքի ընդհանուր մատենագիտություն կազմելու փորձեր անցյալում արվել են, և այս բնագավառում ամենամեծ վաստակն ունեն Գարեգին Զարբհանալյանը և Արսեն Ղազիկյանը, որոնց կազմած մատենագիտությունների աղբյուրը Վենետիկի Մխիթարյան մատենադարանի գրքային հավաքածուներն են եղել: Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտությունը», որը լույս է տեսել 1883 թվականին Վենետիկում, հայ գրքի մատենագիտության առաջին փորձն էր, որն ուներ որոշ թերություններ և անճշտություններ, բայց խթան հանդիսացավ հետագա մատենագիտական ցանկի ստեղծման համար: 1910-1913 թթ. Վենետիկում լույս տեսավ Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» աշխատությունը: Ա. Ղազիկյանը նպատակ էր դրել մատենագիտական նկարագրությամբ ներկայացնել

[1] Տե՛ս Հայ գիրքը 1901-1920 թվականներին, հտ. 4-րդ, կազմեցին՝ Գյուլումյան Օ., Ադամյան Ա., Թադևոսյան Ս., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Սահակյան Ա., խմբ.՝ Սարգսյան Դ., Ղազարյան Հ., Երևան, 2007, էջ 818:

1512 թ. սկսած հայերեն տպագիր բոլոր գրքերը, ինչպես նաև պարբերական մամուլում հրատարակված բոլոր հոդվածները, որոնք առնչվում էին հայ մշակույթին և պատմությանը: Սակայն այն էլ մնաց անավարտ (մինչև "Ն" տառը):

Հայերը առաջիններից էին աշխարհում, որ Գուտենբերգի տպագրության գյուտից հետո (1448-1450) 1512 թվականից սկսած աշխարհի տարբեր ծայրերում, որտեղ կային հայկական գաղթավայրեր, հիմնադրեցին հայկական տպարաններ: Մեզ հայտնի առաջին տպագրիչը Հակոբ Մեղապարտն է, իսկ առաջին հայ տպագիր գիրքը «Ուրբաթագիրքն» է, որը տպագրվել է Իտալիայում:

Ինչպես հայտնի է, տպագրության պատմությունը բաժանվում է 3 շրջանի՝

ա) Գուտենբերգյան տպագրությունից (1448-1450 թթ.) մինչև 1500 թ., բ) 1501-ից մինչև 1800 թվականը կոչվում է տպագրության հնատիպ շրջան, իսկ գրքերը կոչվում են հնատիպ գրքեր, գ)1801 թվականից սկսած՝ նոր շրջան, նոր շրջանի գրքեր:

Մատենագիտության առաջին հատորը՝ «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» աշխատությունը, ընդգրկում է աշխարհում լույս տեսած առաջին հայերեն գիրքը, քարտեզը, օրացույցը, կոնդակը, հմայիլը և այլն:

Այս շրջանում հայ տպագրիչները շարունակում էին միջնադարյան գրիչների ավանդները: Ընդ որում նրանց մի մասը նախապես գրիչ է եղել, բայց տպագրիչ դառնալով՝ շարունակում է ձեռագիր մատյանների ավանդույթը: Չնայած նրանց մենք տպագրիչ անունն ենք տալիս, բայց իրականում նրանք շատ ավելին էին: Հայ հնատիպ գրքի պատմությունը տառապանքների, զրկանքների և սխրագործությունների մի շղթա է՝ լի ողբերգական դրվագներով, որի գլխավոր անձինք հայ տպագրիչներն էին, որոնք հայրենի երկրից հեռու, նյութական ծանր պայմաններում մեկ նպատակ ունեին՝ տպագրության նորագյուտ արվեստի օգնությամբ շարունակել սահակ-մեսրոպյան դպրությունը, մեսրոպատառ գիրքը: Եվ այս շրջանի տպագիր գիրքն է իր մեջ ընդկրկում մատենագիտության այս հատորը՝ առատ նյութ տալով հայագիտությամբ, հայ գրքի և տպագրության պատմությամբ, գրքագիտությամբ զբաղվողներին: Մատենագիտության կազմման երկար ու ձիգ տարիների ընթացքում (շուրջ 20 տարի), երբ ընթանում էին համալրման աշխատանքները, հեղինակներին հաջողվել է հայտնաբերել 131 նոր անուն հնատիպ գրքեր՝ «Շարակնոց երաժշտական» (Ամստերդամ 1712 թ.), «Տետրակ ամենասուրբ Ռօզարին, այսինքն Վարդարանին» (Վենետիկ 1794 թ.), «Գործք առաքելոց» (Վենետիկ 1789 թ.), «Դպրության գիրք և տաղարան» (Կ. Պոլիս 1709 թ.), Հակոբ Ջուղայեցու «Երկրաչափությունը» (Մադրաս 1792 թ.) և այլն… Այս մատենագիտությունը հանդիսանում է հայ հնատիպ գրքի համահավաք քարտարան, քանի որ իր մեջ ներառում է աշխարհի խոշոր գրադարանների, մասնավոր գրքային հավաքածուներում եղած հայերեն գրքերի տվյալները: Եվ այս հատորը հանդիսանում է հայ հնատիպ գրքի լիարժեք ցուցակը, որից դուրս չի մնացել գրեթե ոչ մի հնատիպ գիրք: 1095 անուն գիրքը ընթերցողին ներկայացված է բովանդակությամբ, ծանոթագրություններով, հիշատակարաններով և գտնվելու վայրերով:

Մատենագիտության երկրորդ հատորը՝ «Հայ գիքը 1801-1850 թվականներին» աշխատությունը լույս տեսավ 1967 թ., որը շարունակությունն էր 1963 թ. լույս տեսած

«Հայ հնատիպ գիրքը 1512-1800 թթ.» ցուցակի: 1801-1850 թթ. ընդգրկող հատորի կազմման համար հիմք են ծառայել Ազգային գրադարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Մայր Աթոռի Ճեմարանի գրադարանի, ինչպես նաև Մոսկվայի Լենինի անվան գրադարանի, Լենինգրադի Սալտիկով-Շեդրինի անվան հանրային գրադարանի, Թբիլիսիի հանրային գրադարանի պատմության թանգարանի ֆոնդերը:

Մատենագիտության երրորդ հատորը «Հայ գիքը 1851-1900 թթ.» աշխատությունը լույս տեսավ 1999-ին: Այն ընդգրկում է այդ ժամանակաշրջանում լույս տեսած հայերեն տպագիր գրքերը, ինչպես նաև հայերեն բնագրեր պարունակող այլալեզու և հայատառ հրատարակությունները՝ շուրջ 8535 անուն գիրք: Մատենագիտության մեջ ներգրավվել են նախկին ԽՍՀՄ-ի խոշոր գրադարանների, Հայաստանի բոլոր գրադարանների և մասնավոր հավաքածուների գրքերը: Այն ունի, նախորդ հատորների նման, անձնանունների, վերնագրերի, առարկայական և տպարանների ցանկ:

Եվ այսպես, հայ գրքի մատենագիտության չորրորդ հատորը «Հայ գիքը 1901-1920 թթ.», լույս տեսավ 2007 թ.: Այս հատորը նախորդների նման նույնպես կազմվել է երկար տարիների ընթացքում՝ ընդգրկելով 1901-1920 թվականներին հայերեն լեզվով տպագրված գրքերի համահավաք ցանկը: Հատորի կազմման աշխատանքներն ընթանում էին 1990-ական թթ.՝ Հայաստանի Հանրապետության համար ծանր ժամանակաշրջանում, ուստի ներգրավված են միայն Հայաստանի խոշոր գրադարանների և մասնավոր հավաքածուների գրքային ֆոնդերը: Բայց այսքանով էլ հանդերձ այն չի զիջում նախորդ հատորներին իր ընդգրկունությամբ: Այս հատորը նույնպես ունի ցանկեր՝ վերնագրային, անձնանունների, տպարանների և առարկայական:

Եվ այսպես 4 ստվարածավալ հատորներ դրված են սեղանին: Այս հատորներում հավաքված է աշխարհասփյուռ հայ ժողովրդի աշխարհասփյուռ գիրքը, որն աշխարհին կպատմի հայ գրքի, հայ տպագրիչների, հայ գրողների մասին և անսպառ նյութ կլինի հայագիտությամբ զբաղվողների համար:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՆՈՐ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

«Մեր աշխարհի կենտրոնից հեռու, մահմեդական հոծ զանգվածներով շրջապատված Ագուլիսը, այնուամենայնիվ, մի անդիմադրելի թափով մեր ազգային քաղաքակրթական ու ազատագրական ճիգերի մեջ առաջին շարքերում եղավ միշտ: Գողթանը ասես մեր հայրենի գետի, Արաքսի ալիքներով զգաց միշտ Հայոց աշխարհի սրտի՝ Այրարատի թրթիռն ու հույզերը և նրա կյանքն ու փոթորիկներն ապրեց»:

Ա. Ահարոնյան

Նախիջևանի տարածքի պատմամշակութային ուսումնասիրությունների սկզբնաղբյուրների հրատարակության ասպարեզում նշանակալից ավանդ է ներդրել պատմաբան, նախիջևանագետ Արգամ Այվազյանը՝ տասնյակ գիտական ուսումնասիրությունների արդյունքում լույս ընծայելով նախիջևանյան պատմաճարտարապետական հուշարձաններին նվիրված սկզբնաղբյուր հանդիսացող աշխատություններ՝ վիմագիր արձանագրություններ, մատենագրական սկզբնաղբյուրներ, միջնադարյան ուղեգրություններ, ձեռագրերի հիշատակարաններ, ինչպես նաև բազմիցս անդրադարձել է Նախիջևանի երկրամասին նվիրված ձեռագիր վկայություններին, որոնք Նախիջևանի պատմությունն ուսումնասիրողների համար կարող են սկզբնաղբյուր հանդիսանալ*:

Ա. Այվազյանի իրականացրած ուսումնասիրություն-հրատարակություններից հիշարժան է Նախիջևանի Գողթն գավառին նվիրված «Գինեվետ Գողթն» պատմազգագրական, լուսանկարչային պատկերագիրքը:

«Նախաբանի փոխարեն» առաջաբանում Ա. Այվազյանը համառոտ ներկայացնում է պատմական Հայաստանի գինեվետ Գողթն գավառի 19-20 դդ. ազգագրական մշակույթը՝ անդրադառնալով Գողթնում սկզբնավորված և ձևավորված նյութական մշակույթին, հատկապես ազգային կամ ժողովրդական տարազին, սովորույթներին, պատմաճարտարապետական կոթողներին, որոնք ճիշտ ներկայացնելու համար սկզբնաղբյուր են հանդիսացել 1860-ական թվականներից մինչև 1910-ական թվականներին կատարված տպավորիչ եզակի լուսանկարները:

Ա. Այվազյանի «Գինեվետ Գողթն» պատկերագրքի գաղափարային նպատակաուղղվածությունը հետաքրքրահարույց բաժիններում պատմական նշանառությունն է, որը հաճախ սերնդագիտակցման համար առանցքային նշանակություն ունի:

Ուշագրավ են բազմաթիվ կարևոր դիտարկումները, որոնք կարող են ուղեցույց հանդիսանալ: Ժողովածուում ընդգրկված արխիվային փաստերը հնարավորություն

* Տե՛ս **Արգամ Այվազյան**, Գինեվետ Գողթն, Երևան, 2006:

են տալիս մատնանշելու Գողթնի և՛ բնակավայրերը, և՛ նրա զարգացվածության աստիճանը: Ագուլիսցի մի շարք մտավորականներ ևս ժամանակին ձեռնամուխ են եղել համահավաքելու և պահպանելու Գողթնի պատմությանը վերաբերող փաստերը, սակայն ինչպես ընդգծում է Ա. Այվազյանը. «19 դ. վերջերից Թիֆլիսում հաստատված գողթնեցի մի խումբ մտավորականներ, ժամանակի աչքի ընկնող հասարակական գործիչ, բժիշկ Արիստակես Ռոստամ Զարգարյանի գլխավորությամբ, ձեռնամուխ էին եղել Գողթնի ազգագրական-մշակութային, գրական, բարբառային մշակույթի մասունքների արժեվորման և փրկման գործին: Այդ նպատակով էլ Թիֆլիսում դեռևս 1911 թվին ստեղծվել էին զոկական թատրոն, 1912 թ՝. Հայոց ազգագրական ընկերության Գողթան բաժանմունքը, 1919 թ՝. «Զօկի ճրօյգ» թերթը: Գողթնի մտավորականության 1912 թ. մարտի 20-ին կայացած հիմնադիր ժողովում նիստի մասնակիցները, հրատապ համարելով Գողթնի ազգագրական մշակույթի մասունքների ի մի հավաքումը, որոշել են ստեղծել նաև Զոկական թանգարան:

Սակայն հեղինակի հետագա դիտարկումներից պարզ է դառնում, որ հայտնի չէ, թե թիֆլիսաբնակ գողթնեցի մտավորականների այս նախաձեռնությամբ Զոկական թանգարանում ինչքան ցուցանմուշներ են հավաքվել և այդ նյութերը հետագայում ինչ ճակատագիր են ունեցել: Ըստ Ա. Այվազյանի՝ «Թիֆլիսաբնակ ագուլիսցի բանաստեղծ, դրամատուրգ, հասարակական գործիչ Պետրոս Պետրոսյանը 1935 թվականի դեկտեմբերի 11-ի նամակում, պատասխանելով իրեն ուղղված Ստեփան Լիսիցյանի հարցումներին, նշել է. «…մտադիր էինք (թիֆլիսաբնակ գողթնեցի մտավորականների, մասնավորապես Ա. Զարգարյանի հետ-Ա. Ա.) նույնպես ժողովել հին և նոր Զօկերի հետաքրքիր լուսանկարները և դրանցից մի ալբոմ կազմել, որը կհեշտացներ Գողթանի ազգագրական գործը ուսումնասիրող անձանց աշխատանքը: Այս մտադրութիւնն էլ մնաց անկատար» (էջ 6):

Հետաքրքրահարույց է այն, որ Պ. Պետրոսյանի մահից հետո լուսանկարները այս ու այն կողմ են ցրվել, սակայն Ա. Այվազյանի շնորհիվ, որը բարեբախտաբար ծանոթ էր երևանաբնակ ագուլիսցիներից Ստեփան Մնացկանյանի որդուն՝ ճարտարապետ Գուրգեն Մնացականյանին, ձեռք է բերել արժեքավոր նյութեր և լուսանկարներ տպագրության համար: Այս հատորյակը հարստացել է Պ. Պետրոսյանի և Ա. Զարգարյանի անձնական թողոնների և Ս. Մնացականյանի գողթնեցիներից ձեռք բերված շուրջ 60 լուսանկարներով:

Ընդգրկված լուսանկարների շքերթը առանցքային նշանակություն ունի: Բանն այն է, որ այսօրինակ լուսանկարները հնարավորություն են տալիս ավելի տեսանելի պատկերացում կազմել ագուլիսցի և ցղնեցի ազգաբնակչության մշակույթի մասին: Ակնառու են հատկապես եկեղեցական ամենատարբեր համալիրների շարքերը՝ որպես ճարտարապետական բացառիկ արժեքներ:

Ուշարժան են Գողթնի մի քանի բնակավայրերի նկարագրությունները. Ագուլիս, Ցղնա, Քաղքիկ (Քղկունիս), Տանակերտ, Ռամիս: Ընդ որում նյութերի մեծ մասը վերաբերում է Ագուլիսին և Ցղնային: Թեմատիկ բազմազանությամբ բերված են նաև Լեոյի, Ս. Լիսիցյանի, Հր. Աճառյանի, Ս. Սարգսյանի գիտական օրինակումները՝ նվիրված Գողթնի այս կամ այն հիմնախնդրին: Այսպես, Հր. Աճառյանը զոկական լեզվամտածողության մասին գրում է. «Ագուլիսի բարբառի ձայնական տարբերութեանց հիմնական կողմը կազմում են ձայնաւորները, որ իրոք շատ փոփոխուած են, մինչ դեռ ընդհակառակը բաղաձայները բացարձակապես հաւատարիմ են հին հայերենին եւ այս կողմից գերազանցում են բոլոր բարբառներից» (էջ 8):

Ըստ Այվազյանի «…հնդեվրոպականից ժառանգած Գողթն բառը նշանակել է

պատմություն, երգ, վիպասանություն, որով եւ ՝ Գողթան երգք պետք է հասկանալ՝ պատմության, վիպասանության երգողները, ասացողները›› (էջ 9): Մ. Աբեղյանն էլ ենթադրում է, որ ‹‹թուելյաց երգերը›› հորինվել են հենց Գողթան գավառում (էջ 9):

Բացի ինքնատիպ լեզվամտածողությունից, Ագուլիսը աչքի է ընկնում նաև բարձրարժեք նյութական մշակույթով: Ա. Այվազյանը մասնագիտական վերլուծություններով ներկայացնում է Գողթնի կանացի ազգային-ավանդական տարազը իր ողջ արտահայտչականությամբ: Այս տեսակ տարազները զուգահեռվում են Սյունիքի և Արցախի տարազախմբերի հետ: Կանացի առօրեական և տոնական տարազները կարվում էին Գողթնում մետաքսի արտադրանքի կտորեղենից ու կտավից: Ինչպես նշում է Ա. Այվազյանը. ‹‹17-19-րդ դդ. Գողթնի համարյա բոլոր հայաբնակ գյուղերի քիչ թե շատ ունևոր ընտանիքները ունեին իրենց սեփական գորգագործական դազգահները: Ամեն տուն զարդարված էր նաև առնվազն 3-7 գորգերով, կարպետներով ու ջեջիմներով: Գորգաթելերի ներկատներ կային Ագուլիսում, Օրդուբադում, Ցղնայում, Վանանդում և այլ բնակավայրերում››:

Նմանապես նշվում է, որ Ագուլիսի շուկաները ‹‹լիքն›› էին նաև եվրոպական և ռուսական գործարաններում պատրաստված բրդե, բամբակե, մետաքսե լավագույն կերպասեղենով: Ինչպես նաև կարելի էր գտնել ռուսական Տուլա քաղաքի ամեն տեսակի և ամեն մեծության ինքնաեռներ ու այլ տնտեսական ապրանքներ: Այվազյանի նկարագրությամբ գողթնուհիների արդուզարդը հիշեցնում էր ժամանակի զարգացած երկրների կանանց հագուկապն ու նիստուկացը: Այդ են վկայում նաև տների ճարտարապետական կառուցվածքները, որոնք, ըստ գրառումների, ընդարձակ ու ճաշակով են:

Հատկանշական է Ագուլիսի աղբյուրների նկարագրությունը: Ա. Այվազյանը գրում է. ‹‹…Ագուլիսում աղբյուրն ու աղբյուրաշինությունն առանձնահատուկ հարգանքի են արժանացել: Ագուլիսի բարբառով աղբյուրը կոչել են Կհով, Կհավ, որի ծագումը անհայտ է›› (էջ16):

Հայտնի են հատկապես Վանքի թաղի, Նուրունց, Ս. Թովմա վանքի, Ս. Քրիստափոր, Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցիների, Մնասենց, մահտեսի Մելքումի և այլ աղբյուրները:

Պատկերագիրքը բովանդակում է Գողթնի նշանավոր տոհմեր և գերդաստաններ բաժինը, ուր ընդգրկված տոհմերը ներկայանում են կենսունակ և շարունակվող սերնդափոխությամբ: Հատկանշական են Արասխանյան, Մանարյան գերդաստանները (էջ 35-68):

Ինչպես նշում է Ա. Այվազյանը. ‹‹… Գողթնի պատմազգագրական մշակույթի խնդիրներին նվիրված այս հատորն, անշուշտ, շարունակություն ունի: Սակայն ‹‹Ագուլիս›› և ‹‹Գինեվետ Գողթն›› հատորյակները, անտարակույս, ինչ-որ չափով իրականացնում են և՛ թիֆլիսաբնակ, և՛ թեհրանաբնակ գողթնեցի մտավորականների վաղեմի երազանքները›› (էջ34):

Այս պարագայում Ա. Այվազյանի ‹‹Գինեվետ Գողթն›› հատորյակը անգնահատելի արժեք է ազգային ինքնությունն ու կորուսյալ հայրենիքի հիշատակը ոգեկոչելու՝ ի հեճուկս պատմությունը նենգափոխողների:



ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանություն։

Վեց ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Խաղբակյան-Պռոշյան իշխանական ընտանիքի եկեղեցաշեն գործունեությունը 13-14-րդ դարերում» (Վազգեն սրկ. Մովսիսյան), «Ներսես արքեպս. Վարժապետյանի կյանքն ու գործունեությունը» (Տիգրան սրկ. Հակոբյան), «Ղուկաս Ա Կարնեցի Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը» (Արմեն սրկ. Նազարյան), «ԺԲ դարի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունները և Ներսես Լամբրոնացու դեսպանագնացությունը» (Գևորգ սրկ. Ալավերդյան), «Մեծացուսցէ շարականները (գրականագիտական հետազոտության փորձ)» (Սեյրան սրկ. Ղազարյան), «Երգ-երգոցի» բույսերը» (Գոռ սրկ. Նազարյան)։

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2008 ԷՋՄԻԱԾԻՆ Ա 127

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 15-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ Սուրբ Ծննդյանը նվիրված միջոցառում: Հանդիսությունը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երիտասարդական կենտրոնի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և մի շարք այլ համալսարանների ուսանողական խորհուրդների և ուսանողների համատեղ ջանքերով ու միջոցներով:

Միջոցառումն իր բովանդակությամբ ու բնույթով առաջինն էր Երևանում: Այն կազմակերպած ուսանողները որոշեցին նմանատիպ միջոցառումները դարձնել ավանդական:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺ Է

Գուգարաց թեմի առաջնորդարանը և Վանաձորի Պետական Մանկավարժական ինստիտուտը հունվարի 19-ին կազմակերպեցին «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի նահատակության տարելիցին նվիրված ոգեկոչման արարողություն:

Այս առթիվ ժամը 11.^{00}-ին Մանկավարժական ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ հիշատակության հանդիսավոր նիստ: «Թուրքիայում 1915 թ. մինչև մեր օրերը հայության վիճակի մասին» զեկուցմամբ հանդես եկավ «Ակօս» թերթի հայաստանյան ներկայացուցիչ Տիրան Լոքմագյոզյանը: Դասախոսներն ու լրագրության բաժնի ուսանողներն իրենց խոսքում ոգեկոչեցին ազատ խոսքի ու արդարության համար նահատակված հայազգի լրագրողի գործունեությունը և մեկ անգամ ևս դատապարտեցին ոճրագործությունը:

Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, ողջունելով ՎՊՄԻ-ի դասախոսներին և ուսանողներին և ընդգծելով մասնավորապես ուսումնական հաստատության կողմից նման կարևոր միջոցառման կազմակերպման կարևորությունը՝ ի մասնավորի ասաց. *«Հրանտ Դինքը որպես Թուրքիայի Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացի, իր հայացքներով ու մեկնաբանություններով առաջինն էր, որ բարձրաձայնեց իր մտքերը հենց Թուրքիայում»:*

Նիստից հետո՝ ժամը 12.^{00}-ին, հարյուրավոր վանաձորցիներ՝ ուսանողներ ու դասախոսներ, մտավորականներ ու արվեստագետներ, մասնակցեցին Մանկավարժական ինստիտուտից դեպի Ս. Աստվածածին եկեղեցի ընթացող խաղաղ երթին՝ ձեռքներին պահած հայոց եռագույնը, Հրանտ Դինքի նկարները և տեղի ունեցած ոճրագործությունը դատապարտող լոզունգներ:

Ժամը 13.00-ին Ս. Աստվածածին եկեղեցու Նահատակաց Պուրակում՝ Մեծ եղեռնի հուշակոթողի առջև, նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, թեմի հոգևոր դասը կատարեց հոգեհանգստյան պաշտոն Հրանտ Դինքի հոգու հանգստության համար:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՋՐՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ

Աբխազիայի հայոց հոգևոր հովվությունում հին տոմարով հունվարի 19-ին, ձեռամբ Աբխազիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Տարոն աբեղա Ղուլիկյանի, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն: Արարողությունը տեղի ունեցավ Գագրա քաղաքի Ս. Հռիփսիմե մատուռում, որը Աբխազիայում գործող միակ հայկական եկեղեցին է: Երրորդ տարին է, որ այնտեղ տեղի է ունենում Ջրօրհնեքի արարողություն: Խաչքավորն էր ծնունդով գագրացի Էդիկ Հակոբյանը:

Արարողությանը ներկա էին բազմաթիվ հավատացյալ հայորդիներ, ի թիվս որոնց Սուխումից և Օչամչիրից եկած հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿ ՔԱՂԱՔՈՒՄ ՕԾՎԵՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սույն թվականի հունվարի 18-ին Ռուսահայոց թեմի Կրասնոյարսկ քաղաքում, ձեռամբ թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, առընթերակայությամբ Կրասնոյարսկի հոգևոր հովիվ Տ. Շահան քհն. Մովսիսյանի և Բառնաուլի հայոց հոգևոր հովիվ Տ. Մաշտոց քհն. Հակոբյանի, մեծ հանդիսավորությամբ կատարվեց նորակառույց Սուրբ Հարություն եկեղեցու օծումը: Հատկանշական է, որ սույն եկեղեցին Կրասնոյարսկի հայ համայնքի կյանքում գործող երկրորդ եկեղեցին կլինի, որը կառուցվել է «Ս. Գրիգոր Լուսավորչի» շքանշանակիր տիար Սարգիս Մուրադյանի բարերարությամբ:

Հընթացս եկեղեցու օծման հոգեպարար արարողության հավաքված ներկաներին հայրական օրհնության իր խոսքն ուղղեց Եզրաս Սրբազանը՝ մասնավորապես պատգամելով հավատարիմ մնալ ազգային նվիրական այն արժեքներին, որ ավանդել են մեզ սրբազան մեր հայրերը: Հորդորեց ամուր կառչած մնալ Հայոց Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որ գրավականն է մեր ժողովրդի հարատևության:

Դեռևս նախորդ օրը, ձեռամբ Սրբազան Հոր, գործող Սուրբ Սարգիս եկեղեցու բակում օծվեց ապրիլյան Մեծ եղեռնի բյուր նահատակների և դեկտեմբերյան երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին կանգնեցված հայկական տուֆե խաչքարը: Հավարտ օծման արարողության առաջնորդ Սրբազան Հոր գլխավորած պատվիրակությունը մեծ հանդիսավորությամբ հյուրընկալվեց քաղաքապետ Պյոտոր Պիմաշկովի կողմից:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵՑ ՎԱՀԷ ՍԱՐԿԱՒԱԳ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ

Պատմական օրեր ապրեցան Ռիչմընտի (Վըրճինիա) Ս. Յակոբ եկեղեցւոյ հաւատացեալները՝ երկրորդ անգամն ըլլալով ծուխին մէջ քահանայական ձեռնադրութիւն տեղի ունեցաւ: Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան քահանայ ձեռնադրեց Բրշ. Վահէ սրկ. Յովսէփեանը:



Շաբաթ Յունուար 19-ի երեկոյեան տեղի ունեցաւ Կոչման արարողութիւնը, իսկ ձեռնադրութիւնը՝ Կիրակի Յունուար 20-ին՝ Ս. Պատարագի ընթացքին: Երկու օրերն ալ Ս. Յակոբ եկեղեցի փութացած էին հոծ թիւով հաւատացեալներ, որոնց խանդավառութիւնը անսահման էր եւ երբ ձեռնադրութեան ընթացքին Սրբազան Հայր հարցուց թէ Վահէ սարկաւագ արժանի՞ է ձեռնադրութեան՝ բոլորը միաբերան կոչեցին. «Ան արժանի է»:

Քահանայական ձեռնադրութեան խարտաւիլակն էր Ս. Յակոբ եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւ եւ այժմու Ուաշինկթըն Տի.Սի.ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Արժշ. Տ. Յովսէփ քհնյ. Կարապետեան: Ձեռնադրութեան կնքահայրն էր Արնըլտ Քորէսեան (Շիգակոյէն): Ներկայ էին նաեւ Արժշ. Տ. Ստեփանոս քհնյ. Տուտուքճեան, Արժշ.

Տ. Արսէն Ա. քհնյ. Պարսամեան եւ Ս. Ներսէս Ընծայարանի ուսանողները: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց տեղւոյն դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի:

Պատարագիչ եւ ձեռնադրող Սրբազան Հայրը՝ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան նորընծան վերանուանեց Տէր Մեսրոպ քահանայ, եւ իր յորդորականին մէջ ըսաւ. «Ձեռնադրութեան խորհուրդը մեզ կը կապէ մեր անցեալին, մեր դարաւոր արմատներուն, կը կապէ մեզ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի եւ Անոր աշակերտներուն: Եւ այսօր քահանայական ձեռնադրութեամբ նորընծային կը փոխանցենք սերունդէ սերունդ ժառանգուած հոգեւորականի հեղինակութիւնը: Տէր Մեսրոպ մէկ օղակն է Հայ Եկեղեցւոյ հոգեւոր սպասաւորներու կազմած մնայուն շղթային»:

Նորընծայ Տէր Մեսրոպ քահանայ իր խօսքին մէջ ըսաւ. «Իմ որդիական սէրս, հաւատարմութիւնս եւ գնահատանքս կը յայտնեմ իմ հոգեւոր հօրս՝ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին: Իր օծումով եւ Ս. Միւռոնի հրաշագործ ուժով ինծի փոխանցուեցաւ Ս. Հոգին: Շնորհակալութիւն կը յայտնեմ Սրբազան Հօր, որ առիթը ընծայեց ինծի իմ ուսումս շարունակելու Միացեալ Նահանգաց մէջ եւ զիս արժանի նկատեց քահանայ ձեռնադրելու՝ որպէս զի ծառայեմ Արեւելեան թեմին մէջ:» Իսկ խօսքը ուղղելով Ս. Յակոբ եկեղեցւոյ ծուխին՝ ըսաւ որ աղօթեն իրեն համար՝ որպէս զի ամենակարողն Աստուած աւելի զօրացնէ իր հաւատքը, ներշնչէ զինք եւ իմաստութիւն շնորհէ՝ որպէս զի համբերութեամբ եւ սիրով դիմագրաւէ բոլոր մարտահրաւէրները:

«Շատ երկար ժամանակ պիտի յիշեմ այս շաբաթավերջը՝ որպէս անմոռանալի մէկ միջոցառումը իմ կեանքիս: Ես պատուաւած կը զգամ կնքահայրը ըլլալուս Տէր Մեսրոպի ձեռնադրութեան» ըսաւ կնքահայր տիար Քորէսեան, որ ծանօթացած էր Տէր Հօր երբ ան Շիկակոյի մէջ անգլերէն լեզուի դասընթացքներու կը հետեւէր: Այն օրերէն սկսեալ տէր եւ տիկին Քորէսեաններ իրենց ընտանիքի անդամը նկատած էին Տէր Հայրը:

Ներկայ հաւատացեալները, որոնցմէ շատեր առաջին անգամն է որ ներկայ կը գտնուէին քահանայի ձեռնադրութեան՝ հոգեպէս լիացան խորհուրդի ներգործութեամբ եւ արարողութեան ազդեցութեամբ:

Ս. Պատարագի աւարտին՝ ներկայ հաւատացեալները մօտենալով նորընծայ Տէր Մեսրոպ քահանային համբուրեցին անոր օծուած ձեռքերը:

Տ. ՄԵՍՐՈՊ ՔՀՆՅ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Տ. Մեսրոպ քհնյ. Յովսէփեան ծնած է Երեւան 1976 թուականին: Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցը աւարտելէ ետք՝ իր ուսումը շարունակած է Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին մէջ եւ 1999 թուականին սարկաւագ ձեռնադրուած է Գերշ. Տ. Ոսկան արքեպս. Գալփաքեանի կողմէ: Շրջանաւարտ ըլլալէ ետք նշանակուած է քարտուղար «Էջմիածին» պաշտօնաթերթի գրասենեակին: Այս շրջանին ան

հետեւած է Հայաստանի Ամերիկեան համալսարանի դասընթացքներուն: 2004 թուականին եկած է Միացեալ Նահանգաց Արեւելեան թեմը իր ուսումը շարունակելու եւ իր ծառայութիւնը ի սպաս դնելու Արեւելեան թեմէն ներս: Անգլերէն լեզուի դասընթացքներու հետեւած է Շիգակոյի Նորթ Փարք համալսարանին մէջ, ինչպէս նաեւ դասընթացքներու հետեւած է Ս. Ներսէս Ընծայարանի, Ս. Վլատիմիր Ընծայարանի եւ Ճէնէրալ Թէոլոճիգըլ Դպրեվանքին մէջ: Պատասխանատու նշանակուած է Պրուքլինի «Միշըն» ծուխին եւ կրօնք դասաւանդած է Կիրակնօրեայ Վարժարանին մէջ: 2006 թ. ընթացքին ան աւարտած է հիւանդանոցային հովուական ծառայութեան շրջանը եւ նշանակուած է օգնական հովիւ Ուայթ Փլէյնզի (Նիւ Եորք) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ: Նոյն շրջանին լման ժամանակով ան հետեւած է Ֆորտհըմ Համալսարանի դասընթացքներուն եւ ստացած մագիստրոսի աստիճան: 2005 թուականին ամուսնացած է Ռուզան Կարապետեանի հետ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

ԼՈՒՐԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հունվարի 13-ին, Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնին, արդեն իսկ երկար տարիներ ամրագրված ավանդույթի համաձայն, ուխտի Ս. Պատարագ մատուցվեց Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցում: Այն Արևմտյան Բենգալիա նահանգի երկրորդ ամենահին քրիստոնեական եկեղեցին է՝ կառուցված 1695 թ.: Ցավոք, այսօր այլևս հայեր չեն ապրում Չինսուրայում, և նմանատիպ ուխտագնացությունների միջոցով փորձ է արվում հայկական եկեղեցում կրկին աղոթք հնչեցնելու և ազդարարելու հայ քրիստոնյայի ներկայության մասին:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հարություն սրկ. Համբարձումյանը: Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ընդգծելով Հնդկաստանում մեր նախնյաց թողած ժառանգության պահպանման և հնդկահայ գաղութի վերածննդի անհրաժեշտության մասին:

«Այսօր կրկին մեր նախնյաց օրինակով ուխտի ենք եկել հոյակերտ այս եկեղեցին՝ ևս մեկ անգամ հաղորդ դառնալու Սուրբ Պատարագին, աղոթելու մեր Եկեղեցու անսասանության և հնդկահայ գաղութի սակավաթիվ անդամների համար, քանզի այդ անդադրում աղոթքով են ապրել և զորացել հնդկահայերն իրենց հայրենիքից այդքան հեռու, և նույն աղոթք հրաշքն է, որ պահում է մեզ այս հյուրընկալ հողի վրա՝ դեռևս կառչած մեր արմատներին»,- նշեց Օշական վարդապետը:

Այս ուրախալի առիթով Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցուց դուրս էր բերվել նաև Ս. Հովհաննես Մկրտչի մասունքով Ս. Աջը, որով և Ս. Պատարագի ընթացքում կատարվեց անդաստան:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ եկեղեցու բակում թաղված հայորդիների հոգիների հանգստության համար, որից հետո ներկաները մոտեցան և համբուրեցին սրբազան մասունքը:

Ուխտագնացությանը մասնակցում էին Կալկաթայի եկեղեցական վարչության անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԳԱԼԻԱՅԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻ ՄՈՏ

Հունվարի 26-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորությամբ նշվեց Հնդկաստանի Հանրապետության օրը: Ճեմարանի հանդիսությունների դահլիճում ճեմարանականները կատարեցին Հնդկաստանի օրհներգը: Այնուհետև օրվա խորհրդի նշանակությանն անդրադարձավ հնդկահայոց հոգևոր հովիվ և Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա շնորհավորեց բոլորին օրվա կապակցությամբ՝ նշելով, որ անկախության վսեմ գաղափարն արժևորվում է ամեն մեկի տքնաջան աշխատանքի և իր երկրի նկատմամբ տածած իրական սիրո շնորհիվ:

Հանդիսությանը մասնակցում էին ճեմարանի ողջ պաշտոնեությունն ու բոլոր ճեմարանականները:

Հնդկաստանի Հանրապետության տոնի կապակցությամբ օրեր առաջ տեղի ունեցավ նաև պաշտոնական ընդունելություն, որը կազմակերպել էր Բենգալիայի նահանգապետ տիար Գոպալկրիշնա Գանդին, որին հրավիրվել էր նաև Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը՝ որպես հայ համայնքի ներկայացուցիչ: Ընդունելությունը լուսաբանվեց Կալկաթայի առաջատար հեռուստակայանների և տպագիր մամուլի կողմից:

Նահանգապետն իր խոսքում անդրադարձավ օրվա խորհրդի նշանակությանը՝ ընդգծելով նաև ազգային փոքրամասնությունների դերը Հնդկաստանի կյանքում: Բենգալիայի նահանգապետը հրավիրեց հնդկահայոց հոգևոր հովվին՝ իր խոսքն ուղղելու ներկաներին: Հայր Սուրբը շնորհավորեց բոլորին և մասնավորապես անդրադարձավ հայ-հնդկական դարավոր բարեկամական կապերին:

«Դարերի պատմություն ունեն հայ-հնդկական կապերը, որի ակնհայտ վկայություններն են ցայսօր կանգուն հայոց եկեղեցիները, Մարդասիրական ճեմարանը և աբարող հայ մարդու կողմից կառուցված բազում շինությունները Հնդկաստանի հյուրընկալ հողում: Չնայած այսօր նոսրացել են հայ համայնքի շարքերը, բայց ավելի են սերտացել Հնդկաստանի և Հայաստանի եղբայրական կապերը, քանզի դրանցում միշտ իշխել է փոխադարձ սերն ու վստահությունը միմյանց նկատմամբ, ինչպես նաև ամուր է եղել իրար օգնելու և զորակցելու իրական ոգին»,- նշեց Օշական վարդապետն իր խոսքում:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 31-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորությամբ նշվեց Ս. Վարդանանց տոնը: Միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ճեմարանականները կատարեցին Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» շարականը: Օրվա խորհրդի մասին բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գրետա Անդրեասյանը: Ճեմարանականները հանդես եկան զեկուցումներով, ասմունքով, ինչպես նաև Վարդանանց նվիրված թատերական բեմականացմամբ, որն ուղեկցվում էր օրվա խորհրդին նվիրված շարականների երգեցողությամբ:

Հանդիսության ավարտին կազմակերպիչներին և մասնակիցներին իր գնահատանքը հայտնեց ճեմարանի տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանը:

Այնուհետև ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև հնդկահայոց հոգևոր հովիվ և ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբը շնորհավորեց բոլորին օրվա կապակցությամբ՝ շեշտելով, որ Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդույթի համաձայն՝ Ս. Վարդանանց տոնը նաև Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնն է, ուստի նաև պիտի աղոթենք Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության համար: Նա ճեմարանականներին հորդորեց, որ իրենց սրտերում միշտ հպարտությամբ արթուն պահեն Ս. Վարդանանց անպարտելի ոգին՝ քաջ գիտակցելով, որ հավատքից, Մայր Եկեղեցուց, ազգային արժեքներից և արմատներից հեռացած հայը հեշտությամբ կարող է օտարանալ:

«Իրավունք չունենք մոռանալու, որ մեզ միացնող միակ կապը, որի պաշտպանության համար դարեր շարունակ պայքարի էին ելել Ս. Վարդանանք, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ իր քրիստոնեական և ազգային բովանդակությամբ»,- նշեց Հայր Սուրբն իր խոսքում:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական և «Պահպանիչ» աղոթքներով:

ԴԻՎԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հունվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Էնթոնի Քենթորին:

«Ուրախ ենք, որ առիթն ունեցանք ճանաչելու Ձեզ, առիթներ ունեցանք համագործակցության, որ ավելի զորացրեց մեր կապերն ու հարաբերությունները»,- գոհունակությամբ նշեց Նորին Սրբությունը՝ իր բարեմաղթանքներն ուղղելով դեսպանին:

Միացյալ Թագավորության դեսպանն իր հերթին նշեց, որ պիտի կարոտի Հայաստանին և Սուրբ Էջմիածնին:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Անգլիական Եկեղեցիների միջև առկա կապերի և համագործակցության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երեքշաբթի. - Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ աբեղա Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, շաբաթ. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Մայրավանքի ողջ միաբանությունը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, Ս. Ծննդյան շարականների երգեցողությամբ ուղղվեց դեպի Վեհարան, որտեղ Տնօրհնեքի արարողություն կատարելուց հետո շարժվեց սեղանատուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը խնդությամբ տոնելու:

Հունվարի 6-ին, կիրակի. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան Հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Հունվարի 7-ին, երկուշաբթի. - Բ. օր Ծննդեան: Մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ աբեղա Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 13-ին, կիրակի. - Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 28):

Հունվարի 19-ին, շաբաթ. - Տօն Ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 20-ին, կիրակի. - Ա կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 27-ին, կիրակի. - Բ կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 31-ին, հինգշաբթի. - Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2008)

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Святого Рождества и Богоявления, 6 января 2008 г. (с. 3-5).
2. Новогоднее поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2007 г. (с. 6-7).
3. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами церквей сестер, с иерархами Патриарших престолов Армянской Церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Рождества Спасителя (с. 8-11).
4. Празднества по случаю праздника Святого Рождества и Богоявления в Первопрестольном Святом Эчмиадзине, 6 января 2008 г. (с. 12-13).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян г-ну и г-же Грегу и Эмме Меликянам по случаю их награждения орденом “Святой Григорий Просветитель”, 24 января 2008 г., № 455 (с. 14-15).
6. Патриаршие награды (пожалование в течение января 2008 г. энциклик, орденов “Св. Нерсес Шнорали”, благословений, прав ношения Цветастой фелони и нагрудного креста Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 16-17).
7. Послание соболезнования Его Святейшества Католикоса всех армян Синоду Греческой Церкви и греческому народу по случаю кончины Архиепископа Христодулоса, 29 января 2008 г. (с. 18).
8. Святая Литургия и Молебен в Первопрестольном Святом Эчмиадзине по случаю дня Армянской армии (вручение орденов “Св. Нерсес Шнорали” группе армянских военнослужащих), 27 января 2008 г. (с. 19-20).
9. Праздник Св. Гевондянских мученников в Первопрестольном Святом Эчмиадзине, 29 января 2008 г. (с. 21-23).
10. Праздник Св. Вартанидов в Первопрестольном Святом Эчмиадзине, 31 января 2008 г. (с. 23-24).
11. Вручение ордена “Святой Григорий Просветитель” г-ну Карлосу Петросяну, 13 января 2008 г. (с. 25-26).

12. Панихида в Первопрестольном Святом Эчмиадзине (за упокой души главного редактора еженедельника “Акос” Гранта Динка)-(с. 27).

ПРОПОВЕДИ

13. Проповедь архимандрита Егише Аветисяна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина на праздник наречения имени Спасителя, 13 января 2008 г. (с. 28-30).

ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

14. **СВЯТОЙ ГРИГОР НАРЕКАЦИ** – Ода Пресвятой Деве (перевод из древнеармянского Марты Арабян)-(с. 31-42).
15. **ИЕРОМОНАХ ОВНАН АКОПЯН** – Сущность и толкование книги “Ключ к истине” (религиозно-научное исследование)-(с. 43-63).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

16. **АГАВНИ ЖАМКОЧЯН** – Использование печатей и клейм со знаком креста в Армении в раннем средневековье (историковедческое исследование)-(с. 64-70).
17. **АСМИК БАДАЛЯН** – Переписанный Геворком Скевраци сборник “Тонапатчар” (кодикологическое исследование)-(с. 71-79).
18. **АРАМ ОГАНИСЯН** – Из истории отношений Сисского Католикосата и Римского Папского престола (первое десятилетие 14-го века), (историковедческое исследование)-(с. 80-86).
19. **КАЗАРЯН ДАВИД ГЕГАМОВИЧ** – Памятник Барекамавана - архитектурная композиция, внешнее и внутреннее убранство до и после реконструкции (археологическое исследование)-(с. 87-95).
20. **РУБИК ЭЛОЯН** – Против “Ряда мелких красных султанов” (литературоведческое исследование)-(с. 96-104).

Заслуженные деятели Геворкянской Семинарии

21. **ХАЧИК БАДИКЯН** – Оганес Оганисян (филологическое исследование)-(с. 105-113).

РЕЦЕНЗИИ

22. Книга, посвященная армянской колонии Амстердама (перевод с английского Гаяне Погосян)-(с. 114-119).

23. **АСТХИК СААКЯН** – Четырехтомник библиографии армянской книги (с. 120-122).
24. **ГАЯНЕ ОГАНИСЯН** – Новый ценный первоисточник о Нахичеване (с. 123-125).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

25. Защита дипломных работ в Геворкянской Духовной Семинарии, 24 января 2008 г. (с. 126).
26. Торжественное мероприятие, посвященное празднику Св. Рождества в Американском университете Армении, 15 января 2008 г. (с. 127).

Известия из Гугарской епархии

27. Мероприятие поминовения в Гугаркской епархии по случаю годовщины убийства Гранта Динка, 19 января 2008 г. (с. 128).

28. Церемония Водосвящения в Абхазии, 19 января 2008 г. (с. 129).
29. Освящение церкви Св. Воскресения в городе Красноярске Ново-Нахичеванской и Российской Армянской епархии, 18 января 2008 г. (с. 130).
30. Его Высокопреосвященство архиепископ Хажак Парсамян рукоположил в иереи дьякона Ваге Овсепяна, 20 января 2008 г. (с. 131-133).

Известия из армянской общины Индии

31. Традиционное поломничество в армянскую церковь Св. Оганеса в Чинсуре, 14 января 2008 г. (с. 134).
32. День Республики Индия в Армянской филантропической семинарии (официальный прием у губернатора Бенгалии), 26 января 2008 г. (с. 135).
33. Праздник Св. Варданидов в Армянской филантропической семинарии Калькутты, 31 января 2008 г. (с. 136).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

34. Посол Великобритании в Армении попращался с Его Святейшеством Католикосом всех армян, 24 января 2008 г. (с. 137).

35. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе в Первопрестольном Святом Эчмиадзине в течение августа 2008 г. (с. 138-139).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(January 2008)

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the feast of Nativity and Theophany, 6 January, 2008 (p. 3-5).
2. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of New Year, 31 December, 2008 (p. 6-7).
3. Letters of Greeting and Telegrams on the Holy and Miraculous Nativity of the Savior exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of Sister Churches, the Incumbents of the Hierarchal Sees of the Armenian Church and State officials (p. 8-11).
4. The feast of Nativity and Theophany in the Mother See of Holy Etchmiadzin, (p. 12-13).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Greg and Mrs. Emma Melikian, on the occasion of their decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", 24 January, 2008, no. 455 (p. 14-15).
6. Pontifical Awards (Order of "St. Nerses the Graceful", Letters of Blessing, right of wearing pectoral crosses and floral brocade chasubles and titles of archpriest granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during January 2008 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 16-17).

7. Letter of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Holy Synod of the Greek Orthodox Church and the Greek nation on the occasion of the passing away of Archbishop Christodoulos, 29 January, 2008 (p. 18).
8. Divine Liturgy and service for the Republic of Armenia in the Mother See of Holy Etchmiadzin on the occasion of the Day of the Armenian Army /medals of "St. Nerses the Graceful" were granted to some Army officials/, 27 January, 2008 (p. 19-20).
9. The feast of Sts. Ghevondiants in the Mother See of Holy Etchmiadzin, 29 January, 2008 (p. 21-23).
10. The feast of Sts. Vardanants in the Mother See of Holy Etchmiadzin, 31 January, 2008 (p. 23-24).
11. Mr. Carlos Petrossian was granted Medal of "Saint Gregory the Illuminator" 13 January, 2008, (p. 25-26).
12. Requiem service in the Mother See of Holy Etchmiadzin for the repose of soul of Hrant Dink, chief editor of "Agos" weekly magazine/ - (p. 27).

SERMONS

13. Sermon delivered by Rev. Fr. Yeghishe Avetissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of Naming of our Lord Jesus Christ, 13 January, 2008 (p. 28-30).

RELIGIOUS STUDIES

14. **ST. GREGORY OF NAREK** – Ode dedicated to Holy Virgin Mary (religious research), prepared for publication by Martha Arabian - (p. 31-42).
15. **REV. FR. HOVNAN HAKOBIAN** – The nature and commentary of the book “Key of Truth” (religious research) – (p. 43-63).

HISTORICAL AND PEDAGOGICAL REVIEW

16. **AGHAVNY ZHAMKOCHIAN** – The Use of Cruciform Seals and Stamps of Armenia in Early Middle Ages (historical research) – (p. 64-70).
17. **HASMIK BADALIAN** – “Tonapatjar” collection copied by Kevork of Skevra (manuscript research), (p. 71-79).
18. **ARAM HOVHANNISSIAN** – An Episode from the History of Relations between the Catholicossate of Sis and Pontifical See of Rome /1st decade of the 14th century/ (historical research) – (p. 80-86).
19. **DAVID GEGHAM GHAZARIAN** – The Monument of Barekamavan: Its Architecture, Exterior and Interior before and after Reconstruction (architectural research) – (p. 87-95).
20. **ROUBIK ELOYAN** – Against “a Series of Little Red Sultans” (literary research) – (p. 96-104).

Famous Graduates Of Gevorkian Spiritual Seminary

21. **KHACHIK BADIKIAN** – Hovhannes Hovhannissian (philological research) – (p. 105-113).

CRITICAL REVIEW

22. Book dedicated to the Armenian community of Amsterdam (translated from English by Gayane Poghossian) – (p. 114-119).
23. **ASTGHIK SAHAKIAN** – Four Volumes of Armenian Church Literature (p. 120-122).
24. **GAYANE HOVHANNISSIAN** – A New Precious Source from Nakhijevan (p. 123-125).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

25. Defense of theses at the Gevorkian Theological Seminary, 24 January, 2008 (p. 126).
26. Celebration dedicated to the feast of Nativity in the American University of Armenia, 15 January, 2008 (p. 127).

In the Diocese of Gougark

27. Requiem service in the Diocese of Gougark on the occasion of death anniversary of Hrant Dink, 19 January, 2008 - (p. 128).

28. Ceremony of water blessing in Abkhazia, 19 January, 2008 (p. 129).
29. Consecration of St. Haroutiun Church of Krasnoyarsk in the Armenian Diocese of New Nakhijevan and Russia, 18 January, 2008 (p. 130).
30. His Eminence Archbishop Khajag Barsamian ordained Deacon Vahe Hovsepian, 20 January, 2008 (p. 131-133).

In The Armenian Community Of India

31. Traditional pilgrimage to St. Hovhannes Armenian Church of Chinsura, 13 January, 2008 (p. 134).
32. The Day of the Republic of India at the Armenian Philanthropic Academy (official reception by the governor of Bengalia) 26 January, 2008 (p. 135).
33. The feast of Sts. Vardanants at the Armenian Philanthropic Academy of Calcutta, 31 January, 2008 (p. 136).

AUDIENCES AT THE MOTHER SEE

34. Ambassador of the United Kingdom of Great Britain and Northern Ireland bade farewell to His Holiness Karekin II, Catholicos of All Armenians; 24 January, 2008 (p. 137).

35. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January 2008 (p. 138-139).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով 6
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը 8
Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 12

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գրեգ և Էմմա Մելիքյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 14
Հայրապետական գնահատություն 16

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հույն Եկեղեցու Սինոդին և Հույն ժողովրդին Քրիստոդուլոս Արքեպիսկոպոսի մահվան առիթով 18
Սուրբ Պատարագ և հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայոց բանակի օրվա առիթով 19
Սրբոց Ղևոնդյանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 21
Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 23
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան Կառլոս Պետրոսյանին 25
Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 27

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Փրկչի անվանակոչության տոնին մատուցված Ս. Պատարագին 28

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ - Ներբող ի Սուրբ Կոյսն (հրատարակության պատրաստեց Մարթա Արաբյանը) 31
ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆ - «Բանալի ճշմարտութեան» գրքի բնույթը և մեկնությունը 43

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ - Հայաստանի խաչանշան պատկերով կնիքների և կնքադրոշմների կիրառությունը վաղ միջնադարում 64
ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ - Գևորգ Սկևռացու օրինակած «Տօնապատճառ» ժողովածուն 71
ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆՍԻՅԱՆ - Մի դրվագ Սսի կաթողիկոսության և Հռոմի պապական աթոռի հարաբերությունների պատմությունից (XIV դարի առաջին տասնամյակ) 80
ՂԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ - Բարեկամավանի հուշարձանը. ճարտարապետական հորինվածքը, արտաքին ու ներքին հարդարանքը մինչև վերակառուցումը և վերակառուցումից հետո 87
ՌՈՒԲԻԿ ԷԼՈՅԱՆ - Ընդդեմ «Կարգ մը պզտիկ կարմիր սուլթաններու» 96

Գևորգյան Ճեմարանի երախտավորները

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ - Հովհաննես Հովհաննիսյան 105

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիրք նվիրված Ամստերդամի հայ գաղութին 114
ԱՍՏՂԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ - Հայ գրքի մատենագիտության քառահատորյակը 120
ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Նախիջևանյան նոր արժեքավոր սկզբնաղբյուր 123

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում . 126
Սուրբ Ծննդյանը նվիրված հանդիսություն Հայաստանի Ամերիկյան Համալսարանում 127

Գուգարաց թեմում

Արդարության և ազատ խոսքի համար նահատակված Հրանտ Դինքի հիշատակը հավերժ է 128

Ջրօրհնեքի արարողություն Աբխազիայում 129
Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի Կրասնոյարսկ քաղաքում օծվեց Սուրբ Հարություն եկեղեցին 130
S. Խաժակ արքեպս. Պարսամեան քահանայ ձեռնադրեց Վահէ սարկաւագ Յովսէփեանը 131

Լուրեր Հնդկաստանի հայ համայնքից

Ավանդական ուխտագնացություն Չինսուրայի Ս. Հովհաննես Հայկական եկեղեցի 134
Հնդկաստանի Հանրապետության օրը Հայոց Մարդասիրական ճեմարանում 135
Ս. Վարդանանց տոնը Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում 136

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մեծ Բրիտանիայի դեսպանը հրաժեշտ տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին 137

Եկեղեցական բեմ. լուրեր 138

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата 140
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 143